

«ՀՈՒՄԱՅԻՆ» Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆՅԱ ՎԱճԱՐՈՒՄ ԵՆ

ԳԻՒՏ Ա. ՔԱՅ. ԱՊԱՆԵՍՆԵՑԻ

աշխատութիւնները.

1	Աղօթառեար և ապ. 1903.	— 10
2	Արօնի դասագիրք ա. 1889 (ապառած)	— 15
3	" " բ. ա. զ. ապ. 1891	— 25
4	" " զ. ա. զ. ապ.	— 25
5	Տօմար և տանացոց Հայոց եկա. ապ. 1894	— 50
6	Կամոյ դադլը. պատմական տեսութիւն. 1891	— 10
7	Դիւնչ Հայոց պատմութեան. զիրք Ա. — Բ. 1780—1834 Ս-հակ- Մետաքսան մրցանակին արժանացած 1893.	2 —
8	Դիւնչ Հայոց պատմ. զիրք Գ. Արթուր կաթողիկոսի յիշասակարա- նը. իննադասիթեամբ. յակելուաներով ու ծանօթութիւննե- րով. Սահմակ Մետաքսան մրցանակին արժանացած. 1894.	7 —
9	Դիւնչ Հայոց պատմ. զիրք Գ. Դավիթ կամաց. 1780—1800 I (Հու- անձկար պատկերով և միմանից կոնցեկով) 1899.	4 —
10	Դիւնչ Հայոց պատմ. զիրք Ե. Դանիել կամ. 1800—1808. (մի միմանից կոնցեկով) 1902	4 —
11	Դիւնչ Հայոց պատմ. զիրք Զ. Դաւիթ կամ. մ. L1801—2 մի միմանից կոնցեկով. 1904	4 —
12	Կարդ. աստուածաշնութեան Հայաստանուց և եկեղեցւոյ 35 նկարնի. Ե. ապ. 1904	— 50
13	Ծիցնորից. Շնանա ուղեր. պրակ Ա. 1900	— 30
14	Պատմ. օրոցոց 1902 ամի. Ժամանակագր. Ձ.Դ. տարի.	— 50
15	Կամակագիրք. 1902.	— 50
16	Կողի օրոցոց 1902 ամի. և յանելուած. — Առաջնապահական խո- հարարութիւն (ապառած)	— 15
17	Զարդ Պարցևեանցի կուտէ և Աշակի զառանցաները (ապ.)	— 5

Թարգմանութիւններ.

18	Հաւասարմութիւնը ամեն արգելքների յազմում է Ֆ. Հովհաննի 1877	— 40
19	Խաւարեց գեղի լոյ. Ֆ. Հովհ. 18. 8. (ապառ.)	— 40
20	Դաշտ Բամանչցի. Ա. Արք. 1878 (ապառ.)	— 70
21	Գեղարդ Ռուլլուսոն. 1879 (ապառած)	— 60
22	Երրորդ -սկի. առակ. Լակիսի բ. ապ. 1893.	— 10
23	Ոսքորդն (Հրաս. թիֆլ. տպագր ը նկերութ.) (ապառ.)	— 60
24	Հետաքրամի ժամանցը. պատկերացար. 1882 (ապառ.)	1 —
25	Վետեա. ա. Արքականի. 1885 (ապառած)	— 50
26	Եան Լընսու Սմուկար. Կ. Առաջուկի. 1885 (ապ.)	— 20
27	Սրծուի մասամանը. պրաֆ. Ա. Բարդան. 1892.	— 5
28	Գի.զի սուրբը. Ամեասուպուկ Հեկի. 1892	— 10
29	Կեանքի դարցը. Դեկենեա. 1892	1 —
30	Դեկի Աթենք. Հ. Անկեսիշի բ. ապ. 1901.	— 15
31	Մի կուր հաց. Պատմապէնկոփ բ. ապ. 1901.	— 10
32	Որսորդ. Օ. Շրայելի	— 10
33	Մատուռի աւերտիկներում. Օ. Շրայելի	— 10
34	Կարս	— 5
35	Անուանական Ֆրեդերիկ. Լըկման Շատրիանի. 1903.	— 40
36	Տեսային թշշկարան. պրակ Ղ. (Բարգմ. ընկերութեամբ իս. Յար. և Հրատ. թշշկ. Գ. Բարեկանի)	1 —
37	» պրակ Բ. Բարգմ. և Հրատ. այցն	1 60

891.99 (092) [Առաջնային]

Ե - 16

V

ԵՐՈՒԱՆԴ ԸՆԿԱԶԻՉ

ԽՈՐԵՆ ԱՐՔԵՊ. ԳԱԼՖԱՅԵԱՆԸ

Եղ

ՆԵՐԱՆԴԵՍԻ ԱՊՅՄԻՔ

3629

(Արքանապուած - Համայնք - Հանովեսից)

Հ/Հ
Հ-238


ԹԻՎԻՆ

Արքանապուած տակարձ Ա. Ջութաթեսածէի, Նիկ. 21.


1903



24X16



Дозволено Цензурою, Тифлисъ, 21-го Марта, 1903 г.



ՏՈՒՐԻԿԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԻԹԵՅԵԱՆԻ ԵՒ ՆԵՐԲԸՆԴԻԵՄՆՅԻ «ԱՊՅՄԻՔԸ»

ԳԼՈՒԽ Ա.

Մեր նորագոյն գրականութեան և պատմութեան տեղեակ անձանց լաւ լայտնի են ալն կրօնական խլըրտումները, որոնք տեղի են ունեցել Վենետիկի Միփթարեան վանքում անցեալ գարի լիսնական թուականներին, որոնց հետեանքն եղել է չորս տչրի ընկնող միաբանների հրաժարուելն իւրեանց ուխտից և մտնելն իւրեանց նախկին հարազատ եկեղեցու գիրկը:

Ուդ երրորդ խլըրտումն էր, որ Ռիխտի հաստատութեան օրից մինչև այդ ժամանակները պատահում էր Սերաստացու վանքում: Առաջինն եղել էր հէնց սկզբներում ներքին պատճառաներից և առաջ էր բերել Միփթարեանց երկու առանձին միարանութեան բաժանուելը — «Վենետիկի և Վենետիկի Միփթարեանք»¹). Երկրորդը տեղի էր ունեցել անցեալ գարի առաջին քառորդում և հետեանքն եղել էր «սիրոյ հրաւերք»ի անլաշող փորձը Միփթարեանց ձգտումը վերադառնալու Հայոց եկեղեցու գիրկը²): Միփթարի չորս ականաւոր աշակերտները, որոնք երրորդ խլըրտումի ժամանակ վերագարձան Հայոց եկեղեցու գիրկը, էին՝ Սարգիս Թէոդորեանը,

1) Այդ առաջին խլըրտումի մասին տես Ա. Թէոդորեանի «Պատմութիւն Մուրատեան վարժարանի» վերջին կցած Միփթարեան վանքի ընդհանրական արբաների համառօտ պատմութիւնը—Ա. Մելքոնեանի, երկրորդ արբայի պատմութիւնը:

2) Սերաստացու վանքում պատահած այդ երկրորդ խլըրտումի մասին տես «Պատմութիւն Հայոց» Աւետիս վարժապետ Թէրքերեանի, էջ 112—171.

Գաբրիէլ Ալվագեանը և Ամբրոսիոս ու Խորէն Գալֆալեանները — Գոքա չորսն էլ միաժամանակ չվերտարձան, այլ առաջ, 56 թուին, վերագարձան առաջին երեքը, յետոյ արգէն, 57-ին — չորրորդը: Ալդ չորս միաբանների ալգափէս բաժան-բաժան վերագառնալը պէտք է մեկնել այն հանգամանքով, որ թէ էլ լիշեալ խլրառումները սկսուել էին վանքում, բայց բաժանման բուն գործողութիւններ պատահեց Պարիզում, որտեղ այդ ժամանակները գտնուում էր Սամուէլ-Մուրատի տիրահաչալակի հիմնուած Մուրատեան վարժարանը, որի մէջ և ուսուցչութեան, գաստիարակչութեան և վերահսկողութեան պաշտօններ էին կատարում վերոիշեալ վարդապետներից Թէոդորեանը, Ալվագեանը և Ամբրոսիոս Գալֆալեանը:

Վիեննացի, կոլլեջեան և լիբանանցի հայ պատամու վարդապեանների անընդհատ գրպարտութիւնները Միխիթարեանց մասին, վերջապէս, հասել էին իւրեանց նպատակին: Հոռվմք սկսել էր կասկածանքով նաև Միխիթարի աշակերտաների գործողութիւնների վերայ, իսկ ժամանակի ընդհանրական Արքան-Գէորգ Հիւրմիւզեանը ոչ թէ միայն չունէր ալնքան քաջութիւն ու սրբի արիութիւն, որ կարողանան պարզերես ասպարեզ գուրս զալ, յարտնել ճշմարտութիւնը և ցրել գոռող Հոռվմի կասկածները, այլ և իւր մեղմենի ընթացքով ու բնաւորութեամբ տակի էր դարձել մինչեւ անգամ իւր սեփական միաբաններին: Նա շշատանալով նորմեավ, որ մի դաւանութեան թուղթ է հրատարակում, որի մէջ Հայոց եկեղեցին կոչում էր հերձուածողական և «արտաքոյ եկեղեցւոյն» Հոռվմալ չիք փրկութիւն» դաւանութիւնն էր ընդունում, անձամբ ևս գալիս է Պարիզ և բռնակալական զործողութեամբ արտաքում է վարժարանից երեք աշխատաւորներին, որոնք համակիր չէին Արքայի Հրատարակած դաւանութեան թղթին և որոնցից մէկի — Սարգիս Թէոդորեանի անձնական աշխատանքով ձեռք էր բերուած Սամուէլ Մուրատի հրիտակավ թողած գումարը և հիմնուած էր վարժարանը:

Պարիզում Մուրատեան վարժարանում պատահած անցքերը կամ ամենենին չէին հասնում և կամ իւեղա-

թթիւրուած կերպով էին հասնուած Վենետիկի Հալոց վանքը, որտեղ գտնուում էր այդ ժամանակները Խորէն Գալֆայեանը, Հալածանքի ենթարկուած Այբբոսիոսի եղբայրը, իսկ եզրօր այդ անցքերի մասին գրած նամակները չեին ընկնում նորա ձեռքը, որովհետեւ Արքայի հրամանով պատուիրած էր իսխտ հսկողութիւն ունենալ նորա վերալ և Պարիզից նորա հասցէին եկած նամակները բանել և չհասցնել նորա ձեռքը: Ամբոսիսը, վերջապէս, կարողանում է կողմնակի միջոցով հասցնել եզրօր ձեռքն իւր նամակներից մէկը, որի մէջ մանրամասնարար և ճշմարտօրէն նկարագրուած էին Պարիզում անցած անցքերը և լուսոնկարչական պատկերի պարզութեամբ ներկալացրած Արքայի կեղտու պատկերը, նորա բոնակալական գործողութիւնները, նորա ձգուումն արտաքսելու հայագաւան աշակերտներին վարժարանից և իւրեանց մայրենի եկեղեցու գիրկը վերադառնուուր ստորդ պատմութիւնը:

Խորէն Գալֆայեանը, որ Գալֆայեան հալկաթութիկ ընտանիքից էր և ծնուել էր Կ. Պօլսի Բերա և բոպական թաղում և ուղարկուել էր ուսում առնելու Ա. Ղազարու վանքը, որտեղ արդէն կրօնաւորութեան սքեմ էր ընդունել նորա աւագ եղբայր Այբբոսիոսը, այդ ժամանակներն արդէն 16—17 տարի էր ինչ վանքումն էր: ³⁾ Նա եկած լինելով վանք իւր մանկութեան ամենամատաղ հասակում, այնտեղ էր սնուել ու մեծացել, այնտեղ էր ստացել իւր մտաւոր և բարոյական կրթութիւնը, մի հսուքով ալնտեղ էր նա կազմակերպուել ու մարդ դարձել: Նա եղել էր ընդունակ, յառաջադէմ ա-

²⁾ Մենք մեր ձեռքի տակ ունեցած նիւթերի մէջ թէե, չը կարողացնը գտնել Խորէն Գալֆայեանի ծննդեան ստոյգ թուականը, բայց ի նկատի առնելով, որ նա 1857 թուին, երբ կատարուում է նորա վերադարձը մայրենի եկեղեցու գիրկը, արդէն 16 տարի էր ինչ ս. Ղազարու վանքումն էր և ընդունելով, որ նա ուղարկուած էր վանք իւր ամենամատաղ 8—9 տարեկան հասակում, շատ էլ սիալուած չինք լինի, եթէ ասենք, որ նա ծնուած պէտք է լինի մոտաւորապէս 1831—32 թուին:

շակերտ, հնագանդ, մեղմ վարքի տէր, որով և զրառ էր ոչ թէ միայն իւր մեծաւորների, այլ և բոլոր միարանութեան սէրն ու լարգանքը և ձեռնադրուել էր վարդապետ։ Նորա առաջ բաց էին բոյս այն ասպարէջները, որոնց մէջ միայն կարող էր Միիթարեան ուխտի մի միարան հռչակուել, որովհետեւ պերճախօս քարոզիչ լինելու լատկութիւն ունէր, կրօնական գիտութիւնների մէջ ներհուն էր, լաւ հայկարան էր, զրականութեամբ զբաղուելու հակումն ունէր և բանատեղծական աւելն։

Սատան ալով իւր հարազատի նամակը, կարդալով ու երկար ու բարակ խոկալով ու վերահասու լինելով ճշշմարտութեան, նա գալիս է այն եղրակացութեան, որ ինքը մաքուր խղճով այլ ևս չի կարող մնալ վանքում և նոյն հոգու անդուրութեամբ ծառայել ուխտի շահերին, քանի որ այդ ուխտը, հակառակ իւր համոզման ու խղճմտանքին, հակառակ մեծն Միիթարի թողած նուիրական աւանդութեան, ստորագրել էր այն գաւանութեան թուղթը, որի մէջ, ինչպէս վերն ասացինք, հայ եկեղեցին հերձուածողական էր կոչուած, «արտաքոյ եկեղեցւոյն Հոռովմայ չիք Փլի կութիւն» դաւանութիւն էր ընդունած, չէր կարող այլ ևս որդիական հնագանդութեամբ համբուրել այն Աքբայի ձեռքը, որ այնքան անդժութեամբ, անազորոյնութեամբ և ասորինի գործողութեամբ այնպիսի հարուածներ էր հասցրել իւր եղրօրը և ուսուցիչներին, վանքի անխարժախարեկամներին։

Մէկ անգամ այս բոլորն իւր մտքում խոկալով ու որոշելով, նա այլ ևս ոչ մի արգելիքի առաջ չի կանգնուած։ Նա ուղղակի գնուած է Աքբայի սենեակը և պարզութեամբ ու համարձակութեամբ խնդրուած է արձակել իրեն ուխտից և ընդունել իւր հրաժարականը, առելով, թէ ի նկատի առնելով անցած-գնացած հանգումանքները, իւր խիզճն այլ ևս չի թող տալիս իրան մնալ միաբանութեան մէջ։ Աքբան այս բանի վերայ թէեւ սաստիկ զալրանում է, բայց միառամանսկ բըռնելով իւր բարկութիւնը, սկսում է մեղմօրէն համոզել նորան, որ նա թողնէ իւր մտագրութիւնը։ բայց լետոյ

տեսնելով, որ նա հաստատ է մնում իւր որոշման վերալ և որ ոչ մի կերպով չի կարելի կասեցնել նորան, ասպարէզ է տալիս իւր զայրոլթին և այլ ևս թուք ու մուր, հալհորանք չի մնում, որ չժափէ նորա գլխին։ Նա իւր բարկութիւնն ու զայրոլթն այն տեղն է հասցնում, որ մինչև անգամ թող է տալիս իրան ասելու նորան այնպիսի խօսքեր, որ ամենեւին պատիւ չէին կարող ըերել մի հոգեռականի, մի ամբողջ միաբանութեան ընդհանրական արբանի։ Նա նկատելով, որ Խորէնը նորա բոլոր համոզիչ խօսքերին, բոլոր լանդիմանութիւններին միայն մի կարճ նախագասութեամբ է պատասխանում, թէ իմ խիզնս, խղճմասնքս այլ ևս չի ներում ինձ մնալ վանքում, համարձակում է մինչև անգամ անպատուել և նորա այդ ներքին սուրբ զգացմունքը, որ ամեն մի անհատի ներքին դատաւորն է։ Նա ծովեգնարար գոշում է. «Փախեմ քո այդ խղճմասնքիդ վերայ։»

Ալ այնուհետեւ ամեն բան արգէն վճռուում է։ Հրամայում են տանել նորան մի առանձին խուց և զգուշութեամբ պահէլ, մինչև որ գնալու համար ամեն բան պատրաստուի։ Դէ հ. շատ պատրաստութեան բան էլ չի լինում, որովհետեւ խլում են նորանից ամեն բան, մինչև իսկ նորա անձնական գոլքը, չորերը, զրքերը, թղթերը և թողնում են գատարկածեռն, կարծես թէ նա մի տնանկ, կարօտեալ և չքաւոր ոք լինէր և ոչ միաբանութեան սիրած սանը, տասնկեօթ տարուալ աշխատաւորը։ Հապճեսով պատրաստուում է վանքի գոնդոլը և միաբաններից երկուսի— մի վարդապետի և մի աշխատաւոր եղբօր ուղեկցութեամբ նորան հանում են խցից և գաղտագողի, որպէս զի ոչ ոք միաբաններից չտեսնէ ու չգայթակղուի, նստեցնում են նաւակը և տանում են քալաք։ Ալդաեղ նորան առաջնորդում են վանքի կազմարարի կրպակը և, Արքայից ստացած հրամանագրի հիման վերայ, աշխատում են ձեռքից մի թուղթ առնել, որով նա վկայէր, թէ ինքն իւր յօժար կամքով է թողնում վանքը և որ միաբանութիւնն ամենայն պատուով ու վայելլութեամբ է ճանապարհ ձգել նորան։ Բայց նա, ի հարկէ, հրաժարուում է դո-

բանից, ասելով, թէ ինքը չի կարող մի ալդպիսի վկա-
լութեան թուղթ ստորագրել, քանի որ այդ համաձայն
չէ ճշմարտութեան և քանի որ ինքն արդէն իսկ տուել
էր Աբբային մի թուղթ, որի մէջ իւր մեծաւորի այն
հարցին, թէ ինչու է ուզում գնալ վանքից, գրել էր
«Առ խորհի մտաց անդուրութիւն», որին վկալ էին ե-
ղել և Եղուարդ Հիւրմիւզեանը, Արսէն Բագրատունին և
Պետրոս Մինասեանը»:

Այսուհետեւ ուղեկից վարդապետը, որ Աբբայի
գտղոտնի խորհրդակիցներից մէկն է եղել, տեսնելով, որ
խորամանկութեամբ չլաջողուեց նորա ձեռքից ցանկա-
ցած թուղթը կօրդել, շտապում է շուտով ճանապարհ
ձգել նորան, որ Խորէնի Վենետիկի բարեկամները չի-
մանան և շնուր չբարձրանալ, որովհետեւ նա յալունի էր
մինչև անգամ շատերին և խոտացիներից: Մինչև իսկ
անցաթուղթ հանելու համար էլ վարդապետը Խորէնին իւր
հետ Տաճկաց Հիւրմատոսի մօտ չի տանում, որովհետեւ
վախոնում է, որ չլինի թէ Հիւրմատոսը հետաքրքրուի
պատճառն իմանալու, այլ թօղնում է նորան վանքի
պտղավաճառի խանութում աշխատաւոր եղբօր հսկո-
ղութեան ներքոյ և ինքն անձամբ վագում է Հիւրմա-
տոսարան և ստանում անցաթուղթը: Այդ միջոցում
Խորէնը պատահելով խանութի մօտ իւր խոտացի բա-
րեկամներից մէկին, ինդրում է նորանից ճանապար-
հածախ և ստանում է, որովհետեւ չի կամենում միա-
բանութեան փողով կատարել իւր ճանապարհորդու-
թիւնը. նա հագնում է և պտղավաճառի հին շապիկնե-
րից մէկը և մի բարակ փերարկու, որ նորա համար բե-
րել էին վանքից, և պատրաստուում է ճանապարհ ընկ-
նելու: Նուտով վերադառնում է վարդապետը և հապ-
ճեպով առնում է Խորէնին, տանում է կայարան և
տալով նորա ձեռքն անցաթուղթը, ճանապարհ է ձգում
նորան դէպի Վենետիկի սահմանագլուխը:

Համարեա մերկ, քաղցած և ծարաւ Միսիթարեան
վանքի այս պարծանք վարդապետը, որի քերթողութեան
համբաւը այնքան տարածուած էր, որ մինչև իսկ ո-
տար ճանապարհորդները ևս, որոնք հետաքրքրուում
էին տեսնել Հայոց վանքը, հասնելով վանքի դուռը,

նախապէս հարցնում էին. «Կարող ենք տեսնել հայ բանաստեղծին», որ Վենետիկի պատրիարքի և իւր, զերապատիւ Հիւրմիւգեանի առաջ ամենալազող կերպով տատուածարանութեան քննութիւն էր տուել և գովասանական վկայական ստացել, որ իւր զիտութեամբ, կըթութեամբ միաբանների մէջ առաջիններից մէկն էր, որ իւր վարքի քաղցրութեամբ գրաւել էր ոչ թէ միայն իւր միաբանների. այլ և օտարների սէրն ու համակրութիւնը, հասնում է Վենետիկի սահմանագրութիւնը վրշտից ու կրած տանջանքներից այնպիսի հիւանդ զրութեան մէջ, որ երեք օր ստիպուած է լինում պառկած մնալ և բժիշկներն արգելում են նորան շարունակել ճանապարհորդութիւնը գեպի Պարիզ: Բժիշկները խորհուրդ են տալիս նորան մի առ ժամանակ գնալու Աէ. կարոյի հանքային ջրերը հանգստանալու, կազզուրուելու և յետոյ արգելն շարունակելու իւր ճանապարհը: Նա ստիպուած է լինում լսելու նոցա խորհրդներին և մի շարաթ մնալու առողջարար ջրերում, որից յետոյ արգելն ճանապարհ է դուրս գալիս և հասնում է Պարիզ 1857 թուի Օգոստոսի 21-ին:

Պարիզում Խորէն վարդապետն իշխանում է իւր եղբօր Ամբրոսիոսի մօտ, Հոլիկազեան վարժարանում, որ Սարգիս Թէոդօրեանը, Գոբրիէլ Ալվազեանը և ինքն Ամբրոսիոս վարդապետն իւրեանց Միփթարեան ուխտից զատուելուց և Մուրատեան վարժարանից դուրս գալուց յետոյ, հաստատել էին քաղաքի Գրէնէլ արուարձանում, ընդունելով նորա մէջ Մուրատեան վարժարանից դուրս եկած 20 հայադաւան աշակերտներին և Պօլսից նոր ևս ժամանած աշակերտներ թուով ընդամենն եօթանասուն: Ալդտեղ իսկուն և եթ իւր եղբօր և միւս երկու աւագ ընկերների խորհրդակցութեամբ նա կազմում է հպատակութեան թուղթ և ուզարկում է Պօլսի այդ ժամանակուայ Յակովը պատրիարքին և նոյն 57 թուին ստանալով պատրիարքից օրհնութեան թուղթ և վկայական, մտնում է հայ եկեղեցու գիրկը և դասւումէ հայ հոգևորականութեան շարքն իւր վարդապետական ստիճանով⁴⁾. Գրում է նա թուղթ և Հայ-

⁴⁾ Խորէնն իւր «միերադարձի» մասին շատանում է միայն

կազեան վարժարանի Պօլսի խնամակալութեան և պատրիարքի ու գերագուն ժողովի հաճութեամբ կարգւում է ուսուցիչ և գաստիարակ վարժարանում, գործակից իւր եղբօրը և Ս. Թէոդորեանին ու Գ. Ալվագեանին:

Խորէն Գալֆալեանը, որ դեռ իւր վանքում եղած ժամանակ գրաւել էր թէ Հայերի և թէ Վենետիկի զիտական իտայացիների ուշադրութիւնների, մատենագրութեան և լեզուազիտութեան հմտութեամբ, նա, որ գեռ Վենետիկում իւր տաղաչափական գրուածներով «Հայկական քերթողին անուն էր ստացել, Պարիզում ևս ձեռնիթափ չի լինում իւր զիտական և գրական պարապմունքից և իւր պաշտօնից մնացած բոլոր ազատ ժամանակը նուիրում է գրականութեան քերթողական ճիւղին, կարգալով և ուսումնասիրելով Փրանսիական բանաստեղծութեան գաստական օրինակները—Վիկոր Հիւզօլի, Լամարտինի և միւսների գրուածները, որոնք հէնց շարագրում, երգում էին ալդ ժամանակները: Պարիզի կեանքը, ըստ ամենալինի, ունենում է նորա վերայ բարերար ազգեցութիւն, զարգացնելով նորա գրական ճաշակը, ընդլայնելով նորա մտքի հորիզոնը և աւելի ազատ թռիչք տալով նորա բանաստեղծական երևակայութեան, մի բան, որ անկարելի էր Վենետիկի վանքում, սահմանափակ վանական մժնողորառում և միաբանական կեանքի միավաղաղ, ձևապաշտութեամբ կաշկանդուած կեանքում:

Ճիւտ է, նորա վանքում գրած չափարերականներում էլ արդէն երկում էր այն վշտահար կայձն ու աւիւնը, որ բանում է մարդուս սրտի ամենափափուկ թելերից, որ շարժում, արտաքունք է քամում մեր աշքերից և համակ զգացմունք է դարձնուած մարդուս, մի խօսքով այն բոլորը, ինչ որ լատուկ է մի քնարերգա-

Պօլսի սրբազան Պատրիարքին գրելով և նորա հաւանութիւնն ու օրհնութիւնը ստանալով, որովհետեւ դորանից մի բանի ամիս առաջ—1857 թուի Փետրուարի 13-ին վախճանել էր ներսէս Եւ կաթուղիկոսը և դեռ չէր ընտրուել երջանկայիշատակ Մատթէոսը:

կի, ճիշտ է, նորա վանքում գրած «Յիշատակ սիրելեաց»-ը, «Յառաջին մանուշակն» և միւսներն այնքան արդէն սիրելի էին գարձել հասարակութեան գրաբառագէտ գասին, որ քերանէ-քերան էին անցնում, սիրով կարդացում ու արտասանուում, բայց նորա քնարերգական քանքարը լիովին զարգացաւ միալն Պարիզում Հիւգօլի և Լամարտինի ազգեցութեան ներքոյ, նամանաւանդ վերջինի, որի հետ անձամբ մօտ ծանօթ էր նա և որի հետևաղն ու խոնարհ աշակերտն եղաւ նախւր գրական կեանքի բոլոր ընթացքում:

Խորէն փարդապետը մնում է Պարիզում միայն մինչև 1859 թուականը, որովհետեւ Հայկազեան վարժարանը, որ բնակսրան և ապրելու մինոց էր տալիս նորան, ալդ թուականին փակւում է: Այնքան մեծ գոլուարութեամբ բացուած և երեք տարի մեծ՝ զոհաբերութեամբ պահպանուած զպրոցը զոհ է գնում Մխիթարեանց տաելութեան և նիւթական անտպահով դրութեան:

Մխիթարեանք, որոնք Հայկազեան վարժարանի գոլութիւնը մեծ վնաս էին համարում իւրեանց շահերին, մի կողմից աշխատում են ձգել զտառուած, կաթոլիկութեան գրիկց գուրս եկած փարդապետների, վարժարանի զլխաւոր զեկափարների, վարկը հայ ժողովրդի տռաջ, համբաւ հանելով, թէ նորա իւրեանց վատ վարքի համար արտաքսուած են վանքից, թէ նորա կեղծում են, ձեւանում են միայն հայկաւան՝ միամիտներին խարելու և կաթոլիկութեան թակարդը ձգելու համար, միւս կողմից էլ գործ են զնում ամեն մինոց զինելու վատիկանը և պտպի գլխաւոր ծիրանաւոր Բառնաբոյին վարժարանի և նորա զեկափարների դէմ և նոցա միջոցով ֆրանուիտական կառավարութիւնը դրդելու փակել գպրոցը, ճիշտ է, ալդ կողմից նոցա գործ գրած բոլոր հնարքները հւասեանք չեն ունենում և զպրոցը հաստատուն է մնում, առաջ գրուելով մի ոմն ֆրանսիացի Դիւֆլոլի հսկողութեան ներքոյ, լետոյ ազգային պատրիարքարանի միջնորդութեամբ և Օոմանեան գետպանի ձեռքով ճանաչել տալով տէրութեան զպրոցի, իբրև հայ հաստատութեան, զոլութիւնը, բայց միւս

կողմից այդ բոլորը մեծ ազգեցութիւն է ունենում դպրոցի նիւթական գրութեան վերայ, զրկելով նորան ժողովրդի առատ նուիրաբերութիւնից և համակրութիւնից: Առանց այն էլ հայ հարուստները, որոնք առաջին ժամանակները շտագել էին իւրեանց զաւակներին վարժարան ուղարկել, առատ-առատ թոշակներ էին կապել և դպրոցի պահպանութեան համար մի խնամակալութիւն հաստատել Պօլսում, ըստ իւրեանց բնատուր լատկութեան շուտ ոգևորուելու և սկզբից մի բանի տաք-տաք կալելու և շուտ էլ սառելու ու ձեռնար, կած գործից ձեռնիթափ լինելու, սկսել էին թուրանալ, թոշակները ճշատպահութեամբ չուղարկել, իւրեանց զաւակներին հետզհետէ առնել դպրոցից, Մխիթարեանց վերոիշեալ գործոցութիւններն էլ վերջին հարուածնեն հասցնում վարժարանին:

Վարդապետներն իւրեանց ձեռքից եկած ամեն միջոցները գործ են գնում վարժարանը պահպանելու, նորա նիւթականն ապահովելու: Գ. Ալվագեան գեռ 1857 թուի Մալիսին գնում է Թուսաստան այնտեղ մի դպրոց հիմնելու նպատակով, որ պիտի ծառայէր իրեւ նախակրթարան Հայկագեան վարժարանի համար և միշտ թոշակաւոր աշակերտների մի որոշեալ կոնտինգենտ տար նորան, և ճանապարհին հանդիպում է Պօլիս և համոզում է ամիրաներին, Էֆենդիներին օգնելու զըպրոցին և տպառիկ թոշակներն ուղարկելու. Ս Թէոդորեանն անձամբ գնում է Պօլիս և այնտեղից էլ նորընտիր Մատթէոս կաթուղիկոսի հետ ճանապարհորդում է Ս. Էջմիածին, յուսալով, որ երջանկայիշատակ վեհափառը միջոց կտայ գպրոցը պահելու: Ամբողովս վարդապետն ուժ աշակերտ հետն առած գնում է Պօլիս նոյն նպատակով, Բայց ոչինչ չի օգնում, Պատրիարքարարանը կարգադրութիւն է անում Պարիզարնակ Կոճիկեանին աշակերտներին որձակելու, գպրոցը փակելու, շենքը և կահ-կարասիքը ծախելու և դպրոցի անհրաժեշտ պարտքերը հոգալու:

Խորէն Գալֆայեանը տեղափոխում է Թէոդոսիա, որտեղ այդ ժամանակները Գ. Ալվագեանը Թուսաց տէրութեան հաճութեամբ, Նոր Մատիթիանցի Յարութիւն

աղա Խալիբեկանի նիւթական ձեռնտուութեամբ և Նոր-
Նախիջևանի եկեղեցիների փողերով բաց էր արել լայտ-
նի «Խալիբեկան գպրոց»-ը, տպարան էր հաստատել և
ձեռնարկել շարունակելու Պարիզի «Մասեաց տղաւնի»
ամսագիրն երեք զատ զատ հրաս արակութեամբ— Հայե-
լէն, Ռուսերէն և Հայերէն-Ռուսերէն։ Ազգագեանին
գպրոցի ուսումնական մասը և «Մասեաց տղաւնի» թեր-
թի հրատարակութեան գործն առաջ տանելու համար
բնականապէս հարկաւոր էին օգնականներ իրրե հայ-
կական և կրօնական առարկաների դասաւուներ և
ամսագրի աշխատակիցներ։ Եւ ահա հէնց ալդ պաշտօն-
ների համար նա, նախ, պահում է իւր մօս Ամբրո-
սիոսին, որ 1857 թուին Պոլսից հանդիպել էր Թէոդո-
սիա, և, երկրորդ, Պարիզից հրաւիրում է Խորէնին։
Ալտեղ Թէոդոսիայում ևս, ինչպէս Պարիզում, Խորէնը
դաստիարակութեան պաշտօն է վարում գպրոցում,
գրականութեամբ է պարապում և առհաստակ ալն-
պիսի ազատ կեանք է վարում, ինչպիսին վարում էր
Պարիզում, առանց ի նկատի առներու, որ Պարիզի ու
Թէոդոսիայի մէջ մեծ տարբերութիւն կայ և կեանքի
այն եղանակը, որին նա ընտելացել էր Ֆրանսիոյ մու-
րաքաղաքում, չէր համապատասխանիլ Պ.թիմի թերա-
կլզու մի լետ ընկած քաղաքի կեանքին։

Պէտք է առ հասարակ նկատել, որ Պարիզն ունե-
նալով Խորէնի գրական ճաշակի ու զարգացման վերայ
բարերար ազգեցութիւն, նոյն ժամանակ ունեցել էր
նորա կեանքի, իրբու վարդապետի կեանքի վերայ կո-
րստական ազգեցութիւն։ Նա ընտելացել էր աշխար-
հային կեանքին և կրօնաւորական կեանքին յատուկ խըս-
տակեցութիւնը, ժուժիկալութիւնը մի կողմ գրել։ Նա
ալտեղ և աշխարհականի շոր էր հագնում, և նուա-
գում էր, և սալոններում լինում, և կանանց ու օրիորդ-
ների շըշաններում պատասմ և թատրոն լաճախում։
Յայտնի բան է, քանի որ նա Պարիզումն էր, ալդ բո-
լորը նորան ալնպէս շէր վնասում, ալնտեղ չկար հայ
ծուխ, որ գայթակղուէր իւր վարդապետի վարած կեան-
քից։ Սակայն այլ բան էր Թէոդոսիան, որտեղ թէև
փոքրաթիւ, բայց անուամենայնիւ կար հայ ծուխ հայ-

կական հին նահապետական, պահպանողական ուղղութեամբ, պահանջող, խօսող և իւր հոգևորականների բարի օրինակներից խրատուող, չար օրինակներից գայթակղուոզ: Կուսակրօնութիւնը մեր գարում որքան և փոխած լինի իւր բնաւորութիւնը, իւր կեանքի տարագը, ժողովրդի հայեացքն էլ մեր օրերում որքան և փոփոխուած, մեղմացած լինի կուսակրօնների վերաբերմամբ, այնուամենայնիւնն. այսինքն կուսակրօն կեանքը գարձեալ մեր ժաղովրդի համար հին ճգնաւորական կեանքի շարունակութիւնն է, և մեր վարդապետները բոլորովին զատուել, անջատուել նորանից չեն կարող: Մեր ժողովուրդն այժմ չի պահանջում, որ վարդապետը միշտ վանքում փակուած մնալ, բոլոր ժամանակ աղօթք անէ և կանանց երես չտեսնէ, հասարակութեան մէջ չլինի, բայց պահանջում է, որ նա աշխարհական վայելքների յետեից չընկնի, եկեղեցի յաճախէ, պառը, առանց յարգելի պատճառի, չլուծէ, թատրոն չերթալ, ազմուկից հեռու կենալ, ժուժկալութեան ուխտը հաստատ պահէ, և այլն և այլն: Խորէնի համար դժուար էր այդ տեսակ պայմանների հնագանգել, այդպիսի կեանք վարել, և թէսդոսիոլ հայ ժողովուրդն ու Խալիբեան դպրոցի աշակերտները գայթակղուում էին:

Խորէն վարդապետը շատ առաւելութիւններ ունէր: Նա ընդհանրապէս շատ ընդունակ մարդ էր, նա լաւ հայկաբան էր, յեզուներ գիտէր, պերճախօս էր, տաղաջափական քանքար ունէր, նուրբ ճաշակի տէր էր, երաժշտասէր էր, բայց կուսակրօն հոգևորական չէր բառիս անձուկ մտքով, նա ծնուած էր աշխարհի համար, բայց հոգևորականութեան սքեմ էր ընդունել, կուսակրօնութեան ասպարէզն ընտրել իւր համար: Այդ մի մեծ սխալ էր, որ նորա ամբողջ կեանքը թունաւորեց և, գուցէ, հենց արգելք եղաւ նորան անելու այն, զործելու այնպէս, ինչպէս զօրում էր նորա ընատուր ձիրքը: Սակայն զորանում նա մեղաւոր չէր. նորա հայրը, Գէորգ Գալֆայեանը իւր որդուն նորա ամենամատաղ հասակում ուղարկել էր Մխիթարեան վանք, որ նորան գաստիարակել, կրթել էր կրօնական ուղղութեամբ. ութիւնը տարեկան մանուկն ինչ գիտէ, ինչ

է ճանաչում, որ կարողանալ հաշիւ տեսնել իւր ներքին զգացմունքների հետ, որ կարողանալ իւր ներքին կոչումին, իւր ներքին հակումներին համապատասխան կեանքի ճանապարհ ընտրել: Մեզ կարող են, ի հարկէ, տսել, թէ ճիշտ է, նա քանի որ մանուկ էր, չէր կարսղ այդ անել, բայց երբ որ մեծացաւ և հասկացաւ կետնքի չարն ու բարին, ուն ու սպիտակը, ալդ արդէն հեշտ էր նորան անել, ալդ արդէն պէտք է նա անէր: Այս, բայց չպէտք է մոռանալ այն, որ մարգուս կեանքում սովորութիւնը, գաստիարակութիւնը և ստացած կրթութիւնը չատ ու չատ մեծ գեր են խաղում: Մինչև որ մարգս խելքի է գալիս, ինքն իրեն կատարելուպէս ճանաչում է արդէն, ստացած գաստիարակութեան ու կրթութեան ազգեցութեան ներքոյ, երկար տարիների ընթացքում վարած կեանքի եղանակին ընսերացած ինսելու հանգամանքում, շատ զժուար է լինում կոտրել իրեն, թօժափել ոտից փոշին և ուրիշ ասպարէզ ընտրել: Թող ընութիւնը բողոքէ, երկարամեալ սովորութիւնը ընութիւն է դառնում. թող մարմինը, անձն ապատամբէ, — նա պատրաստ է ծածուկ, գաղտագողի իւր հաճուքները կատարել, քան թէ կեանքը փոխել. չէ որ նա արդէն պատրաստուել է ալդ կեանքի համար, միթէ հեշտ է հինը թողնելը և մի ուրիշ նոր ասպարիզի համար պատրաստուել:

Խորէնը վափուկ, վերին աստիճանի մեզմ, կանացի ընաւորութիւն է ունեցել: Նորա գէմքի զծագրութիւնն էլ նուրբ ու գեղեցիկ է եղել, նա զեռ մանկութիւնից հակումն է ցոյց տալիս եղել կանանց պէս պճնուելու, զարգարուելու. Ն ունեցել է նազելի շարժմունք, քաղցր ելեէջներով խօսելու յատկութիւնն, ամենքի մէջ երեւլու, ամենքի ուշագրութիւնն իւր վերալ դարձնելու ձգուումն իգուը չէ, որ մեր տաղանդաւոր երգիծարան Յակովի Պարոնեանն իւր «Ազգային ջոջեր»-ի մէջ մի տեղ խօսելով մտնուկ Խորէնի Վենետիկ գնալու մասին ասում է, ևԵրբ Վենետիկ հասաւ Խորէն և վանահօր ներկայացաւ, վանահալրն, անոր շարժումները դիտելով, լալտնեց թէ անկարելի էր զայն դպրոցի մէջ առնել. որովհետեւ, աւելցուց, վանքին տրամադրած օրէնք-


ներուն հակառակ էր իգական սեռէն աշակերտ ընդունելը, Մեծ գժուարութիւն կրեցին համոզելու համար վանահայրն թէ աղջիկ չէր իրեն ներկալացողը:

Խորէնի Թէսդոսիայում վարած կեանքի մասին Խալիբեան գպրոցի ժամանակակից տշակերտներից մէկը մեզ հետեւեալն է պատմել, «Խորէնը, որ ընդհանուր դաստիարակի կամ տեսչի պաշտօն էր վարում դըպրոցում, երկու հազարի չափ ոռոճիկ էր ստանաւմ և փառաւոր կեանք վարում, ցերեկները միշտ զբաղուած էր լինում զպրոցում, իսկ զիշերներն ուշ ժամանակ անպատճառ իջնում էր քաղաքու Ալդ զիտէին զպրոցում շատերը, զիտէին մեծ աշակերտները, զիտէին և քաղաքացիք, Գարրիէլ վարդապետը, որ տեսչի կատարած ի թիւս ուրիշ շատ գալթակղեցուցիչ գործողութիւնների, լսել էր և արդ հանգամանքի մասին, կամենալով անձամբ հաւաստիտնալ վարդապետի յաճախ գպրոցից զիշերները բացակալելու մասին, հրամալում է իրան իմաց տալ, երբ Խորէնը մէկ անգամ էլ զիշերը քաղաք երթայ: Պատուէր ընդունողները ճշտութեամբ կատարում են վերատեսչի հրամանը և ժամանակին ամեն բան տեղն ու տեղը յայնում են նորան: Նա զալիս է զպրոց, սառուղում է իրողութիւնը և վճռում է մէկ անգամ ընդ միշտ վերջ դնել ալդ գալթակղութիւններին: Առաւոտը շատ կանուխ, երբ Խորէնը վերադառնում է քաղաքից, արդէն կառքը զպրոցի զրան տառջ պատրաստ կանգնած է լինում և նորան իւր իրեղէններով տեղափոխում է նաւահանգիստը, որտեղից ալդ օրը շողենաւ է մեկնելիս լինում գէափի Աև ծովի նաւահանգիստները և Բոսֆոր:

Գլուխ Բ.

Պօլիսը Խորէնի ծննդավայրն էր, ալնտեղ էին ապրում նորա ընտանիքը, ազգականները, ալնտեղ էր ապրում և նորա սիրելի Վարդուհի քոլը, որ ամուսնացած էր Պետրոս ըէլ Մարկոսանի հետ Բնական էր, ուրեմն, այն սէրը, որ նա տաճում էր զէպի Բոսֆորի գեղածիծաղ ափունքը, բնական էր, որ նա ամեն մի լարմար միջացում ալցելում էր իւր ալդ երկրորդ հայրենիքը, երկար միջոցներով ապրում էր ալնտեղ և առանց հարկեցուցիչ պատճառի չէր ուզում բաժանուել նորանից, բնական էր, որ նա իւր բանստեղծութիւնների մէջ իրան «Նէդ պանդուխտ» և իւր քնարը «պանդիստի քնար» էր կոչում, բնական էր, վերջապէս, որ նա 64 թուին թողնելով կամ ստիպուած լինելով թողնել Թէոդոսիան, մեկնում է Պօլիս և ալնտեղ է հաստատում իւր մշտական բնակութեան տեղը, մտնելով Տաճկահալոց կուսակրօն հոգևորականութեան շարքն, ազգալին պատրիարքարանի իրաւասութեան ներքոյ:

Թոնդ տարօրինակ չժուկի այն հանգամանքը, որ մենք ալստեղ խօսում ենք մի հայ վարդապէտի, մի որ և իցէ տեղ մշտական բնակութիւն հաստատելու մասին, մի հայ վարդապէտի, որ բնականապէս մշտական բնակութեան տեղ էլ չպէտք է ունենալ, որ իւր բնակութեան տեղ պէտք է համարէ ամեն մի տեղ, որտեղ միայն հայ եկեղեցի, հայ ժողովուրդ և հայ վանք կար Քաջ Տաճկահալոց կեանքի պատմական հանգամանքներն այնպէս են կազմակերպուել, այնպէս են լարմարուել, որ հոգևոր կենդրունական վարչութեան տեղը դարձել է բուն հայրենիքից հեռու մի քաղաք, և, որ զիսաւորն է, հայ վարդապէտների ու եպիսկոպոսների



մէջ առաջ է եկել մալրաքաղաքում, թէ գտւառներում պաշտօն վարելու ցաւալի խնդիրը, Մի տեղ — գաւառներում խառնիճաղանձ տգէտ ամբոխ, բազմաթիւ տգդալին կնճուտ խնդիրներ, տգէտ, անսանձ, վայրենի հակումներով ղեկավարուող տէրութենական պաշտօնեաների հետ լարաբերութիւն, նիւթական անսապահով դրաւթիւն, անշուք, լի նեղութեամբ և տանջանքով կետնք և մի տեսակ անձնազոհութիւն, միւս տեղ — Պօլսում համեմատաբար աւելի քաղաքակրթուած ժողովուրդ, մալրաքաղաքներին լատուկ լարմարութիւններ, շքեղ, փալլուն և նիւթականապէս աւելի ապահովուած կետնք, առանց տանջանքի, առանց նեղութեան և, ի հարկէ, առանց անձնազոհութեան:

Պօլսում ապրելը հայ վարդապետների ու եպիսկոպոսների համար, բացի վերոլիշեալ լարմարութիւններից, ունի և մի մեծ առաւելու թիւն. նոցա գործունէութիւնն ու պաշտօնավարութիւնն ալդտեղ միշտ հրապարակի վերալ է, միշտ լրագրութեան քննադտառութեան և գովարանութեան նիւթ է լինում, հռչակուած, միշտ ազգային վարչութեան, պատրիարքարանի և ժողովրդի ազգեցիկ մասի աչքի առաջն է, ուրեմն, և աւելի շանս կայ ալդտեղ տռաջադիմելու; գնահատուելու և հետզհետէ եկեղեցական նուիրական ամենաբարձր աստիճաններին՝ եպիսկոպոսութեան, արքեպիսկոպոսութեան, պատրիարքութեան և մինչև իսկ կաթողիկոսութեան հասնելու, ազգային եկեղեցական վարչութեան մէջ էր մեծամեծ պաշտօնների՝ կրօնական ժողովի անդամութեան, պատրիարքի փոխանորդութեան, թաղական եկեղեցիների քարոզութեան, զանազան կրօնական ազգային հաստատութիւնների նախագահութեան և միւս բարձր պաշտօններին տիրանալու: Այն ինչ գտւառներում նոցա գործունէութիւնը չի նկատուում և յաճախ նոցա առաւելութիւնները ծածկուում են, իսկ պակասութիւնները չափազանցրած ծաւալով ու ձեռքով նոցա հակառակորդների ձեռքով դրուած ամբաստանագրերի միջոցավ հասնում, լցնում են պատրիարքարանի դիւնը, չենք ասում արդէն այն, որ շատ անգամ արժա-

նաւոր հոգեորականները հենց նոյն տէրութեան ձեռքով հենք հեռացուում են գաւառներից և պատժի ենթարկուում, որով և արգելք է դրուում, նոցա յառաջադիմելու առաջն առնում:

Մենք հեռու ենք այն մտքից, որ կարծենք, թէ գաւառներից խուսափող և Պօլսում պաշտօնավարող մեր կուսակրօնները միայն իւլեանց անձնական շահի վերայ են մտածում, թէ նոքա միայն կարիեր անելու նպատակով ու մտքով են հոգեորական դարձել, ոչ նոցա մէջ էլ եղել են և կան շատերը, որոնք սրտացաւ են եղել և են ընդհանուր շահերին, որոնք մեծամեծ ծառալութիւններ են մատուցել և մատուցանում եկեղեցուն և ազգին, բայց չենք կարող այստեղ մատնացոյց չանել այն մեծ տարբերութեան վերայ, որ կա դոցա և գաւառներում պաշտօն վարողների մէջ նոյն եկեղեցուն ու ազգին ծառալութիւն անելու տեսակետից: Այնտեղ այն հեռաւոր անկիւններում փոխանորդն ու առաջնորդը, վանահայրն ու գործակալը նոյն վիճակին են ենթարկուած, որին և ժողովուրդը. նոքա ամեն բանում իւրեանց ժողովրդի հետ են, նոցա վշտերին վշտակից են, նոցա ուրախութիւններին ուրախակից, չենք ասում արդէն այն, որ նոքա իբրև ժողովրդի առաջնորդ ու ներկալացուցիչ և ազգային գործերի կառավարիչ յաճախ նոյն իսկ աւելի են տանջուում, չարչարուում, քան թէ նոյն իսկ ժողովուրդը, մի հանգամանք, որ մալրաքաղաքում չկայ և չի էլ կոր դինել:

Պօլսում բաւական է, որ հոգեորականն իւր սանին յատուկ բարոյականն ունենալ, չափաւոր ընդունակութեան տէր լինի, չափաւոր գիտութիւն ձեռք բերած լինի և մի յայտնի աստիճանի եռանդ ու ձգտումն ցոյց տայ գործելու, հասարակաց շահերին ծառալելու, — և ահա համբաւը պատրաստ է, հոչակը շատ անգամ մին. չե իսկ չափազանցրած ձեռվ ընդհանրացել է և, ուրեմն, կարիերն արուած է և հոգեորականն առաջացած ու առաջանալու շատղի վերայ է: Մի ընդհանուր ճշմարտութիւն է, որ տատասկոտ գաշտում, առապարներում ու

խորտ ու բորտ տեղերում առաջ գնալն աւելի դժուար է, քան թէ ծաղկաւէտ մարգերում, լիութեան ու առատութեան մէջ։ Հասկանալի է, ուրեմն, որ այսպիսի հանգամանքներում մեր տաճկահայ կուսակրօն հոգեւորականութիւնը հետզհետէ պիտի հաւաքուէր պատրիարք արանի չորս կողմը, կենդրոնանար Պօլսում և սակաւ լինէլ նոցա թիւը, որոնք ցանկանալին գաւառներն երթալու եկեղեցական վարչական պաշտօն վարելու։ Ամեն ժամանակ, ամեն տեղ և ամեն ազգի ու հասարակութեան մէջ անձնուէր ու անշահասէր մարգկանց թիւը շատ սահմանափակ է եղել։ Հայ ազգն էլ իւր հոգեւորականութեամբ ալդ ընդհանուր կանոնից բացառութիւն չկազմել։

Խորէն հայր սուրբն իւր խառնուածքի ու ընաւոր թեան յատկութեամբ, բաս ամենալինի, պատկանում էր Պօլսաբնակ հոգեւորականների շարքին, ուստի հէնց սկզբից, թէսդոսիալից գալուն պէս, նա անցնում է նոցա կարգ, որոշելով ընդ միշտ մնալ Պօլսում։ Նոգու մեղք է ասել, թէ նա ազգասէր չէր չէր սիրում իւր ազգալին եկեղեցին և փախչում էր հայութեան համար աշխատելու գործից, ոչ, նա չերմ կերպով սիրում էր իւր հայրենիքը, իւր եկեղեցին, իւր լեզուն ու գրականութիւնը, բայց նորա ալդ սէրը մի բողոքովին վերացական, պղատոնական բան էր, նա ոչ մի շօշափելի բանով չէր արտալայտում իւր ալդ սէրը, նա բուն գործը, աշխատանքը թողնում էր, կամ, լաւ է ասել, ուզում էր, որ ուրիշներն անեն, իսկ ինքը միայն սիրում էր երկել, գրաւատել, արտասուք թափել, սրտառուչ գամբանականներ խօսել, ազգալին հանգէտների մասնակցել, գեղեցիկ, ոգևորիչ քարոզներ խօսել, և այն և այն Այս պատճառով էլ ահա նորա գրուածները մեծ մասով վերացական են, մեծ մասով սրտի, զգացմունքի գեղմունքով այն աստիճան յորդուած բաներ են, որ կարծես, ինքը հեղինակն էլ խեղդւում է իւր ալդ գեղմունքի մէջ։ Բայց ափսոս, ալդ բոլորը խօսքեր են, ճիշտ է, գեղեցիկ, սիրուն խօսքեր, բայց ապարդիւն, աննպատակ և միայն գատարկ խօսքեր, Ալդ-

Նորա մանկութեան թեժե ու անտարբել դաստիարակութեան և վանական կաթոլիկ կրթութեան հետևանքն էր. Ալգալէս են եղել Մխիթարեաններից շատ շատերը. նոքա իւրեանց ամբողջ կեսն քում հայրենիքի անունով են երգուել, հայրենիքի հողն ու ջուրն երգել ու գովարանել, բայց իւրեանց մտքով ել չեն անցկացրել մէկ օր իւրեանց ասածները, զբաժները և քարոզածները գործով ել արգիւնաւորել, Ալգալէս են եղել Զախարիանները, Բագրատունիները, Հիւրմիւգեանները, Ալտընեանները և, ցաւ է ասել, մինչև իսկ Հայոց նահապետ պատկառելի Ալիշանը, որ իւր երկար կեանիքի ընթացքում մէկ անգամ էլ չկարողացաւ ալցելել, ուսոնել իւր ալնքան սիրած հայրենիքը և մօտից շօշափել նորա վէրքերը: Մկրտիչ Պէշիկթաշլեանի սէրն էլ գէպի հայրենիքը բոլորովին վերացական էր, չէ որ նա էլ Մխիթարեանց աշակերտաներից էր. Սրբուհի Տիւսարն էլ ալգարքին էր պատկանում, վերջապէս, ալգ մի մեծ գըպըոց էր, որի զլուխ կանգնած էին Մխիթարեանք, իսկ միւսները նոցա մերձաւոր աշակերտները և հեռաւոր հետևալողներն էին:

Ճիշտ է, ալգ գալրոցը տուել է մեր զբականութեան բազմաթիւ քանքարաւոր և հայրենասէր հեղինակներ, բայց նոքա բոլորեքեան էլ իւրեանց գրուածներում վերացական հայրենասէրներ են եղել, գործնական կեանքից խուսափող, ախ ու վախով, վիշտ ու հառաջանքով բաւականացող: Մեզ կարող են ասել, թէ ամեն տեղ, ամեն ազգի ու հասարակութեան մէջ էլ եղել է մի ալնորիսի ժամանակամիջոց, երբ խօսելու, ոգեսորելու կարեսրութիւն է եղել միայն, իսկ գործելու համար հողը տակաւին պատրաստ չի եղել. Մխիթարեանց դըպրոցը մեր կետն քում նախապատրաստողի գեր է կատարել: Ալն, ալգ ալգալէս է և լու է, եթէ միայն նոցախօսքերին հետևէր և գործն ու քարոզածը գործնականապէս արգիւնաւորելու հանգամանքը. բայց գժրաղ-դարար երբ խօսելու միջոցն անցել է, երբ հասել է գործելու ժամանակը, նոքա մնացել են գարձեալ նոյն ախ ու վախ քաշողը: Շատ մօտ անցեալում, երբ մեզ

Համար մահուան և կեանքի խնդիր էր վճռուում, երբ շատերը նոյն իսկ Միիթարեանց հեռաւոր հետեղներից թողին իւրեանց հառաջանքները և նետուեցին կեանքի գործունէութեան առպարէզը, Միիթարեանք իւրեանց մերձաւոր աշակերտներով մնացին և մնում են լոկ հանդիսատես և շարունակում են իւրեանց «երեմիականները»⁵⁾: Արդարութիւնը պահանջում է ասել,

⁵⁾ Աւշադրութեան արժանի հանդամանքն այն է որ Միիթարեանք իւրեանց հայրենակիցներին և հայրենիրին հասած ամենամեծ աղէտների ժամանակ միշտ անտարրեր են մնացել: Նորա միշտ «ժամանակնիս չար է» ասելով՝ ձայն չեն հանել յօդուտ իւրեանց թշուան եղբայրակիցների. Նորա իւրեանց տպագրական օրգաններով չեն բողոքել, չեն պաշտպանել իւրեանց հայրենիքի շահերն Եւրոպից առաջ, թէև ինքեանք Եւրոպայի սրտում ապրելով և կաթոլիկ լինելով, զուցէ, կարողանացին աղդել կաթոլիկ աշխարհի կարծիքների վերայ, Այս մասին տես հանգուցեալ Գ. Արծրունու «Միիթարեան միարանութիւնը և Հայերը» Խորագրով առաջնորդողը «Ցակի» 1878 թուի 81 համարում:

Ներկայումս մի փոքրիկ փոփոխութիւն է նկատուում Միիթարեանների գործողութիւնների մէջ, թէև ջնդոյեանները շարունակում են իւրեանց կորստարեր առաքելութիւնները, բայց և նոյն ժամանակ Միիթարեան երիտասարդ սերնդի մէջ կարծես, երեան է զալիս ձգտումն գուրս զալու աւանդական բուժինայից և ծառայելու ընդհանրութեան շահերին, Միիթարեանները սկսել են հրատարակել «Գեղունի» անունով «Քաղաքավէպի» պատկերազարդ յաւելուածը, որի վաճառումից դյացած գումարը յատկացրել են Հայոց որդերի օգտին առանց կրօնի խորութեան, և Ս. Երեմեանը «Քաղմակէպի» ներկայ խմբագիրը, կարծես, աշխատում է Հայոց այդ Շօրեայ ամսագիրը դարձնել հասարակութեան բերան, թարմութիւն ու կենացնութիւն ներշնչել նորա մէջ և ծառայեզնել ազդի շահերին: Ենք ի օրու ողջունում ենք Միիթարեան հայրերի այդ բայլը և ցանկանում ենք նոցա այդ գործունէութեան յարատնութիւն: Ժամանակ է հասկանալու, որ կրօնը մարդու հոգու, սրտի և համոզմունքի խնդիր է և այս կամ այն գաւառ նութեան ճշմարիտ կամ թիւր լինելու զատաւորը մենք մահ-

որ Խորէնն իւր կետնքի վերջին տարիներում շատ էր փոխուել. Ուսւ-Տաճկական պատերազմը և դորա ազգեցութեան ներքոյ Տաճկահալոց մէջ առաջ եկած շարժումները, ձգտումները և ազգային հոսանքը նորան ևս ոգեսորեցին, նորան ևս տարան: Ամենքին լայտնի է, թէ նա ի՞նչ մեծ գեր խաղաց վերոլիշեալ պատերազմի վերջանալու և բերլինի վեհաժողովի ժամանակները. թէ գործելով, թէ քարոզելով և թէ զրելով; Եւ զարմանալին այն է, որ արդապիսի կենդանի գործունէութեան ազգեցութեան ներքոյ նորա խօսքերն էլ, գրածներն էլ արգէն ուրիշ բնաւորութիւն, ուրիշ գործ էին կրում, ուրիշ համ ու հոա ունէին: Բայց գժբաղդաբար արգէն ուշ էր, նա արգէն կազմակերպուել էր, ամբացել էր լիշեալ ուղղութեան մէջ և կարճ ժամանակում միջոցում գժուար էր նորան խսպառ փոխուել, նամանաւոնդ որ կարճատու ոգեսորութեան ժամանակներին էլ լաշորդեց մեր կեանքում հիմաժափումն և մի տեսակ ապատիա:

Խորէն վարդապետը լամառութեամբ մերժում էր այն գաւառների խնդիրքը, որոնք ընտրում և կամենում էին նորան իրանց առաջնորդ տեսնելի նորան ընտրում և հրաւիրում է առաջնորդ նզիթը, բայց նա նոցա ընտրութիւնը չի ընդունում և եկած հրաւիրակներին քաղաքավարութեամբ ճանապարհ է զնում. նա մերժում է Տիգրանակերտցւոց, նոյն նպատակով նորան արած առաջարկութիւնը, իսկ Ուօղոստացւոց, որոնք հետևելով

կանացուներս չենք, այլ Անդին-Դատաւարը: Այն էլ բաւական է, որ մենք կարողանանք պահպանել մեր հոյրենական նուիրական աւանդները և ջարամատենք մեր միութեան միակ ցանկը—ազգային եկեղեցին: Կրկն և կրկն շեշտում ենք, որ հասարակ ժողովուրդը, տղէս ամրութը միայն դաւանութեամբ է հասկանում, գաւանութեամբ է ջոկում ազգութիւնները: Հայադաւան, Հայ-կաթոլիկ, Հայ-բողոքական, Հայ-Հոռոմ նոր հասկացողութիւններ են, զարգացած դասից գործածութեան մէջ մըտցրած, ամրութ միայն Հայադաւաններին է հայ համարում, իսկ միւսներին—ոչ, այլ կաթոլիկ, ֆռանկ, լեմսէ, ֆառմասօն, և այլն և այլն:

իզմիրցւոց և Տիգրանակերտցւոց օրինակին, նոյնպէս կամենում են նորան իրանց առաջնորդ ունենալ, այնպիսի պարմաններ է առաջարկում, որ համահաւասար է լինում մերժման: Խորէնին ձեռք չէր տալ թողնել Պօլիսը և զաւառներն երթալ, որովհետև նա միտք էր գընել կարիեր անելու, հասնելու այն մեծամեծ պաշտօններին և հոգեբորականնութիրական աստիճաններին, որ միայն կարող էր տալ նորան Հայոց եկեղեցին, իսկ այդ նախառակին կարելի էր միտան հասնել, մնալով մալրաքաղաքում և ամենքի աշքի առաջ գործելով: Խորա համար չէր պակասում նորան ոչ ջանք ու աշխատանք և ոչ գիտութիւն: Նա գորա համար, կարծես, բոլոր պահանջուած լարմարութիւններն ունէր, նա և՛ պերճախօս քարոզիչ էր, և՛ օտար լեզուներ գիտէր, և կրօնական ու արտաքին գիտութիւններին հմուտ էր, և բարձր հոգևոր պաշտօններին լատուկապիտական նըրութիւնները գիտէր և, վերջապէս, ամեն մի վարչական անձի համար հարկաւոր քաղաքավարական կանոններին ծանօթ ու տեղեակ էր: Բայց, զարմանալի բան, նորան այդ չլածողեց: Նա միշտ իւր բոլոր կեանքի ընթացքում աշխատեց վեր բարձրանալ և այնտեղ բարձրութիւնից հրամայել, իշխել, զեկավարել, բայց միշտ էլ ցած իշաւ, ինչպէս այդ պատահում է ամեն մէկի հետ, որ թեք մակերեւոյթի վերալ է կանգնած լինում, որ իւր ոտքի տակ հաստատուն յենաբան ու հող չի ունենում, որ, վերջապէս, աւազով ու խճով ծածկուած սարի վերալ բարձրացող մարդու պէս անդադար վերելակում, բայց և անդադար աւազի ու խճի հետ միասին սահում, վայր է ընկնում և երրէք զագաթին չի հասնում:

Պօլսու մ հաստատուելուն պէս, Խորէնը 1864 թուին կարգուեց Բերալի քարոզիչ, բայց մի քանի ժամանակից յետոյ, թաղականների մէջ նորա առթիւ ծագուծ խոռվութիւնների պատճառով ստիպուեց հրաժարուել. 1867 թուին նա Պէշիկթաշի քարոզիչ անուանուեց և դորա հետ միասին նոյն թաղի գպրոցների վերատեսչութեան պաշտօնն ստանձնեց, բայց մի քանի ամսից նա հարկադրուեց և այդ պաշտօնները թողնել, որովհետև թաղեց-

ւոց խռովութիւններն այնքան սաստկացան, ալնքան սուր բնաւորութիւն ստացան, որ անբաւականները մինչեւ անգամ քարոզչի և վերատեսչի պաշտպան «Մասիս»-ի խմբագրի տան պատուհանների ապակիները կոտրեցին. 1876 թուին հակախրիմեանական կուսակցութեան շնորհիւ և օգնութեամբ կրօնական ժողովի առենապետ ընտրուեց, բայց այդ պաշտօնն էլ երկար չկարողացաւ վարել, որովհետեւ, ինչպէս հեգնօրէն ասում է հանգուցեալ Պարոննեանը, այնպիսի հակասական վճիռներ տրամակեց, որ ամենքին գարմացրեց:

Ի՞նչ էր գորա պատճառը: Դորա պատճառը, մեր կարծիքով, նորա անձի այն երկուորութիւնն էր, որ ամեն մի սուր դիտողի աչքին էր ընկնում: Նորա մէջ կանացի մեղկութիւն կար, նորա բնաւորութեան մէջ մի տեսակ թեթեւութիւն, մի տեսակ, եթէ կարելի է ալսպէս ասել, մակեռնեոյթականութիւն էր երեսում. նա վերին աստիճանի փառասէր էր, գուցամոլ էր, և, որ գլխաւորն է, նորա մէջ գոքառ, այդ լատկութիւններն այնքան զարգացած էին, որ չէին կարողանում ծածկուել, թաքնուել նորա արտաքին կեղելի, հոգեորականութեան լրջութեան, ծանրակշռութեան դիմակի և կրօնաւորի սքեմի տակ: Նու պճնուում, զարդարուում էր, առատութեամբ գործ էր ածում զանազան հոտաւէտ օծանելքներ և ջրեր, ինչպէս մի պչրոտ կին, նա հասարակութեան մէջ հարուստների սալօններում իրան այնպէս էր պահում, որ, կարծես, նազանք ծախոզ մեծաշուր օրինորդներից մէկը լինէր և ոչ մի համեստ հայ վարդապետ: Պատմում են, որ Խալիբեան դպրոցում, երբ նա իւր սենեակում իւր արդ ու զարդն էր անում և մազերի սանրուածքն էր յարդարում, աշակերտներից մէկը միշտ ներկայ էր գտնուում և երկար ու բարակ նորա միրութի ձարերն էր կարգի բերում. պատմում են նոյնպէս, որ նորա սպիտակեղէնը, վերարկուները և զգեստի միւս մասերը, որ նուրբ կտաւից ու մետաքսեղէնից է եղել կարուած-պատրաստուած, այնքան շատ, այնքան բազմատեսուկ է եղել, որ նորա թէղողոսիալից այնպէս անակնկալ կերպով մեկնելուց յետոյ, արգէն արկդարկդ նորա յետելից են ուղարկել: Նորա աշխար-

Հասիրութեան ցանկութիւնները, հակումները, որոնք նորա անձի մեզկութեան հետևանքն էին, նորա մէջ այնքան վառ են եղել, որ չի կարողացել ծածկել նոցա ոչ թէ միայն արև շրջանից, որի մէջ նա միշտ լինում էր, հասարակութիւնից, որի մէջ նա գործում էր, այլ և Նալիկացեան և Խալիբեան դպրոցների սաներից, որոնց ուսուցիչն ու դաստիարակն է եղել: Թէոդոսիայում, ինչպէս ասացինք, նա յաճախ գիշերները դպրոցում չէր անցկացնում, որտեղ գտնուում էր նորա բնտկարանը, այլ քաղաքում. նա ստէսլ-ստէլ դպրոցի կառքով զրօսանքի էր դուրս գալիս քաղաքի շրջակայքը զանազան շատ էլ բարի համբաւ չվալելով ընկերութիւնների հետ, և այլն և այլն: Այս բոլորը, ի հարկէ, այնպիսի յատկութիւններ էին, որ չէին կարող չխրունեցնել և չստուցնել հասարակութիւնը նորանից, բայց ամենագլխաւորը, որ ստիպում էր ամենքին երես դարձնել նորանից,— այդ այն էր, որ նորա խօսքերի ու գործերի մէջ ամեննեին նմանութիւնն չկար: Նա իբրև դաստիարակ աշակերտներին յաճախ հայրական խրատներ էր տալիս, բարոյականի դասեր էր կարգում, բայց ինքը նոյն իսկ աշակերտների աչքի առաջ ոչ մէկն էլ իւր ասածներից գործով չէր արդարացնում. նա իբրև վարդապետ և եպիսկոպոս յաճախ քարոզում էր եկեղեցիներում և, պէտք է ասել, լաւ էր բարոզում, զրաւիչ կերպով էր խօսում, զգացմունքով էր վարդապետում, բայց կեանքի մէջ իւր անձնական կենդանի օրինակով իւր այդ քարոզները չէր իրազործում:

Խորէնն իւր ամբողջ կեանքում միայն երկու անգամ իւր բնաւորութեան ու խառնուածքին յարմար պաշտօն ստանձնեց և յաջողութեամբ կատարեց: Առաջինը Դէորդ Գ. կաթուղիկոսի ընտրութեան ժամանակն էր, երբ նա 1867 թուին եկեղեցական պատգամաւոր կարգուելով, ուղեկցեց նորընտիր կաթուղիկոսին Վ. Եջմիածին: Այդ ժամանակն էլ հէնց նա երջանկալիշատակ ուսումնատէր կաթուղիկոսից եպիսկոպոս ձեռնադրուեց, ճանապարհորդեց նորա հետ Թուսաստանի հայրանակ քաղաքները և վերադարձաւ Պօլիս: Երկրորդը Ռուսաճանական պատերազմի վերջանալու միջոցումն էր, երբ

նա 1878 թուին ուղարկուեց իբրև ազգային նուիրակ Բերլինի վեհաժողովը և այնտեղից էլ նոյն պատուիրակութեան պաշտօնով այցելեց Պետերբուրգն ու Մոսկուան։ Մենք հենց այդ ժամանակ առիթ ունեցանք նորան տեսնելու, Մի կիւրակի օր էր, լուր էր տարածուել, թէ Խորէն Նարապէլը Պետերբուրգից եկել է Մոսկուա և պիտի պատարագ մատուցանէ եկեղեցում, ուստի և մայրաքաղաքի համարեա ամբողջ հայ զաղութը շտագել էր եկեղեցի, լցուել, խոնուել էր եկեղեցու գաւիթն ու ընդարձակ բակը։ Ամեղ ձգելու տեղ չկար. պատարագը հանդիսաւոր էր և պատուիրակ սրբազնը եպիսկոպոսական ճոխ զգեստներով պաճուճուած և երկնղի խորլը գլխին դրած կատարում էր ս. Խորհուրդը տաճկահայ Հոգեւորականներին լատուկ ձեռվ ու եղանակով։ Սեղանի վերայ դրուած էր մի զարդարուն բազկաթոռ, որի վերայ երբեմն բազմում էր եպիսկոպոսը։ Պատարագի վերջում սրբազնը մի խորհրդաւոր քարոզ խոսեց, բնաբան ընտրելով «Օն արիք գնացուք աստին խոսքելը»⁶⁾։

⁵⁾ Խորէն սրբազնը Մոսկուայում եղած միջոցում, այցելեց եկեղեցիները և Լազարեան ձեմարանը, համուեց հայ զաղութի երեւլիներին հանգանակութիւն բանալու և նիւթականապէս օգնելու Զեյթունցիներին և իրան հանդիսաւոր ճաշտարու համար հաւաքրուած 800 ոռուլի զումարը, փոխանակ ճաշի, ինդրեց յատկացնել Պոսի ազգային մատենադարանին

Պ. Գր. Խաչ Մոսկուայից դրած իւր թղթակցութեան մէջ, որ տպուեց «Մշակի» 1878 թուի 175 համարում, առաջ բերելով նար-Բեյի քարոզից մի ընդարձակ հատուած, չդիտենք, ի՞նչ պատճառով չի յիշել նորա բարողի զլխաւոր ընաբանը, որ չէնց բարողի զլխաւոր աղն էր կաղմում։ «Օ՞՛ն արիք երթիցուք աստիշ խօսքերի իմաստը և զորա զործադրութիւնն այդ ժամանակները Տաճկահայոց զործերի զլուի կանդնած մարդկանց մտածմունքի զլխաւոր առարկան էր։ Տես այդ մասին «Պոլսի ազգային ժողովի նիստը», «Ա. Պատրիարքի նախագահութեան ճառը և յատկապէս «Ա. Պատրիարք հօր ատենախօսութիւնը, որոնցից առաջինը տպադրուած է «Մշակի» 1878 թուի 133 համարում, երկրորդը՝ 141 համարում և երրորդը՝ 159 համարում։

Թէև մի հոգեորականի բերանում, որ իւր բոլոր կեանքն անց էր կացըել հայրենիքից գուրս և նոյն իսկ միշտ հրաժարուել էր պաշտօնով մինչև անգամ գաւառներն երթալու, մի փոքր տարօրինակ էր հնչում «Օն արիք գնացուք աստի՛ խօսքերը հայրենիքից չգաղթելու, հայրենիք վերադառնալու իմաստով, բայց և այնպէս նորա քարոզը մեծ տպաւորութիւն թողեց, նա ազատ էր խօսում, չէր ծամծում բառերը, լաւ էր զար գացնում, ամփոփում իւր խօսքի միտքը և կարողանում էր իշխել իւր ունկնդիրների եթէ ոչ մտքի, գոնէ, նոց սրտի ու երեակալութեան վերայ, այնպէս որ ամեն մի անհատ, որ չէր ճանաչում քարոզչն, որ անձանօթէր նորա կեանքի հանգամանքներին, կյափշտակուէր նորա խօսքերից: Տպաւորութիւնն այնքան զօրեղ էր, որ պատարագը վերջանալուց յետոյ էլ, զեռ ժողովուրդը չէր ցրուում, այլ խոնուած եկեղեցու բակում, սպասում էր եպիսկոպոսի գուրս գալուն, և, երբոր նա գուրս եկաւ, ըուրեքնան յօժարտակամ մերկացրին իւրեանց գլուխները ի պատի. եպիսկոպոսին Յլդակ ալդ գեպքում անկասկած ներգործող գեր կատարեց, բացի եպիսկոպոսի բարեկիրծ ձևերից ու նորա տուած քարոզի ջերմութիւնից, և նորա գիտնականութեան համբաւը, որ ամեն տեղ տարածուած էր, և զլիաւորապէս այն գործը, որի անունով նա ճանապարհորդում էր Եւրոպայում և բազինում հզօրների դռները: Ում լոյտնի չէ, որ 78 թուականը Հայերիս համար լոյսերի, երազների ժամանակ էր, բայց Բիսմարկներն ու Բիկոնսֆիլդները խորտակեցին ալդ լոյսերը և պատճառ դարձան այն արեան հեղեղին, որ 95—96 թուականներին ծածկեց Տաճկահայի գժբաղդ հայրենիքը:

Ալդ ժամանակներից 11—12 տարի անցնելուց յետով, Խորէն եպիսկոպոսը նորից այցելեց Ռուսաստան և պատահեց Ս. Էջմիածնում, Թիֆլիզում և ուրիշ տեղերի նորա ալդ ժամանակները Ռուսաստան գալու պատճառները մեզ համար անյալտ մնացին. լուրեր էին տարածուած, թէ նար պէտք ալդ անգամ եկել է ընդ միշտ մնալու Ռուսաստանում, թէ նա պէտք է նշանակուի Թիֆլիզի թեմի առաջնորդ և այլ ուրիշ շատ ալսպիսի

բաներ, բայց դոցանից և ոչ մէկն արդարացաւ, իրագործուեց, և նա նորից վերադարձաւ Պօլիս: Մեր ձեռքին գտնուում է Հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանցի Թիֆլիսից իր Նախիջևանի բարեկամներից մէկին զրած նամակներից մէկը, որի մէջ մենք տեղեկութիւն ենք գրանում և Խորէնի մասին, որին Հանգուցեալ բանտառեղծը պատահէլ էր 1890 թուի օգոստոսին Թիֆլիսում: «Ճեսնուեցալ, զրում է նա այդ նամակում, Խորէն Նարպէլի հետ: Ուրիշ անգամ կպատմեմ նորամէն լսածներս, գաղտնաբար խօսեցանք, պայմանաւ որ ծածուկ պահեմ Հաղորդած տեղեկութիւնները»⁷):

⁷⁾ Աւելորդ և անշահեկան չենք համարում գնել այստեղ Հանգուցեալ բանատեղծի այդ նամակն ամբողջութեամբ, բացի մի փորբիկ հատուածից, որի տապարութիւնը ներկայում դեռ անժամանակ ենք համարում: «Օգոստոսի 6-ին (1890 թ.) երեկոյեան ժամը 6-ին հասայ Թիֆլիս բաւականին թուլացած ճանապարհի ցրտերից (սարերի վրայ), տօմերից (հովհաններում) և խցուկ փոշից (ճանապարհի վրայ): Քյոյս Սովիտն և նորա երգուէի դուստրը Մագդաղինան ինձանից մէկ օր առաջ հասել էին Թիֆլիս և իշել էին նոյն իսկ հիւրանոցում (Ըեւերին հոմերա), ուր որ ևս սովորութիւն ունիմ միշտ իշնելու: Այն երեկոյ բաւական զուարթ և ուրաք անցուցի, վասն զի շրջապատճ էի իմ արենակիցներով որոնց իմ այստեղ գալը ովեարեց և սիրտ տուաւ: Հետևեալ օրը (7-ին) ինչ ասես մարդիկ եկան, ես ևս զնացի մէկ-երկու տեղ, Թիֆլիզը ամբողջը տեղափոխուած է կօճու (մէծաւ մասամբ), Պօրժում (նշանաւոր բանակով) և Մանղիս և այլ զով տեղեր—մասամբ իսկը: Թիֆլիզի տօմերը մերերի հետ համեմատութիւն չունին: մերերը բարեխառնուում են բամիներով: իսկ Թիֆլիսում տաք օրերը օգը միշտ անշարժ է, ճրազի բոցը (զիշերները) անգամ չի տատանում: Տեսնուեցայ Խորէն Նարպէյի հետ (ուրիշ անգամ կպատմեմ նորամէն լսածներս, զաղտնաբար խօսեցանք, պայմանաւ որ ծածուկ պահեմ հաղորդած տեղեկութիւնները): Յետք մասյ Մամրէ Ա. սենեակը (սորա երկուսն էլ կենում են առաջնորդարանուում): Վերջինը կուզէր Աիրեղի անոնը տալու: Ես սարսափելի ըիմ ու պոռունգ արի: մարդու խօսքը պաղեցաւ բերանում և ըոլոր մնացած ժամանակը ակնածութեամբ էր խօսում:

Եւր կեանքի վերջին տասնեակը Խորէն եպիսկոպո-
պոսը համեմատաբար խաղաղութեամբ անցկացրեց, Նո-
րա անունն ալդ ժամանակները շատ էլ չէր լուսում, նա
քաշուած կեանք էր վարում, աշխատում էր հրապա-
րակում շատ չերեւել, շատ աչքի չընկնել, Պօլսի պար-
բերականներն էլ, կարծես, ուզում էին նորան հանգիստ
թողնել, այնպէս չէին քաշքում նորա անունը, ինչպէս
առաջ: Երբեմն միալն Պօլսից գրած թղթակցութիւննե-
րի մէջ պատահում էին ակնարկութիւններ հանգուցեալի
ալս կամ ալն արածի մասին, ալս կամ ալն քարոզի,
դամբանականի առթիւ: Խորէնն ալդ ժամտնակները
քարոզի պաշտօն էր կատարում Քէշիկթաշում, նախա-
գահում էր զանազան հանգէսները, մասնակցում էր
հայ մեծատուն, վսեմաշուք, վսեմափայլ հանգուցեալ-
ների լուղարկաւորութեան, դամբանականներ էր խօ-

Ա. Երջինից ինչ ասես միմիթարական բաներ իմացայ. ի միջի
այլոց և այս, որ մեր Ա. գողոցը չի ընկնում ծխականների քա-
թեկորայի տակ: Սուրբ Աթոռում ինձ սպասում են և այյն-
ճաշերէ բացէ ի բաց հրաժարուցացայ. ես տեղով գիտեմ, որ
չէնց կուշտոքուր ուտեմ ու 2—3 զաւաթ խմեմ, չէնց տեղն ի
տեղ շնչառապար պիտի ընկնեմ մեռնեմ. Այս նամակը աւարտած
չաւարտած պիտի կօծու չուեմ, որ Թիֆլիզէն $2\frac{1}{2}$ ժամուայ
ճանապարհ է, Քրոջ դատեր բոցէոթները, կարծում եմ, իմ
ճանապարհորդութիւնս պիտի ժանրացնէ. իսկ անտէր թողնել
այդ որբերին սասատիկ խղճահարում եմ.— Արզումի կոտորածը՝
այստեղ հասած չէ. ճանապարհին կորել է, Խոզը եմ Պապասի-
նեանէն կամ Զիլինկիրեանէն առնուս և կայծակի արագութեամբ
ուղարկես: Այժմ պիտի երթամ ինչպէս վերը ասազի, կօծու
իսկ յետոյ Ելիսավեթապօլ (Թեմուրեանին), Պաքու և այյն-
իշմիածին կմնայ ամենավերջը. Այդ մտնում է իմ հաշուի մէջ:
Ա. անունը պյստեղ ոչ որին յայտնի չէ. իսկ եթէ յայտնի է՝
այն էլ սաստանայի օջլէն: Մի բանի բարեպաշտներ նորա հա-
մար կողկողազին ոաշադ խնդրում են ինձանից, ասելով որ
«Թող ոգորմելին մի կտոր հաց ուտէ», ևս ոչ որի չի սպասնա-
ցայ ոչ վրէժ և ոչ խոստացայ գումար. մեռելային լուսթիւն պա-
հացի և ամեն հարց թողի անպատասխան. Ծտապում եմ, ձիերը
եկել սպասում են:

սում, ճառեր արտասանում, լոգուածներ էր զբում այս
կամ այն լրագրում, և այլն և ալլու, Սակայն նորա
կեանքի այդ համեմատական խաղաղութիւնը նմանում
էր այն անհանգիստ անդորրաւթեան, որ սովորաբար
տեղի է ունենում բնութեան մէջ խոռովայուզ ալէկոծու-
թիւններից առաջ: Նորա կեանքում այդ խաղաղութեան
օրերին պատրաստում էր մի ահոելի փոմորիկ, որ պի-
տի բարձրանար, մըրկէր նորա կեանքի և գործունէու-
թեան հորիզոնը և չարաչար խորտակէր նորան իւր զօ-
քաւոր հարուածների տակ:

Ժամանակները չար էին, կացութիւնը դժուար.
Ժոտենում էին 95—96 թուականների ահոելի օրերը,
հանգամանքներն որոշ կերպով և ուղղութեամբ փըր-
թուելիք փոմորիկի նշաններ էին ցոյց տալիս: Պէտք էր
զգոյշ լինել, շատ զգոյշ: Բայց Խորէն եպիսկոպոսն այդ
զգուշութիւնը չունեցաւ, մի անզգոյշ թղթակցութիւն
արտասահմանի լրագրներից մէկում, որի մէջ քննադա-
տում էր Թուրքիոյ և նոյն իսկ փագիշահի պալատա-
կան կարգերը, և ահա սպասելիք փոմորիկը փրթեց:
Պատրիարքը Աշըրկեանը խստութեամբ վարուեց. նա
զրկեց Խորէնին բոլոր պաշտօններից, բանագրեց
նորան և պատուաւոր բանտարկութեան ենթարկեց,
թէև մեղաւորն արդէն մեղալական տալով, քա-
ւել էր իւր լանցանքը նորա առաջ, որի ա-
ռաջ նա մեղանչել էր Եւ զարմանալին այն է, որ այս
դէպքում հայ պատրիարք Աշըրկեանն աւելի խիստ,
գտնուեց, քան թէ նոյն իսկ թուրք վեհապետը ⁸⁾:

8) Խորէնի արտասահմանի լրագրներին թղթակցելու շար-
ժառիթը պէտք է օրոնել այն նիւթական միջցների սղութեան
մէջ, որից այդ ժամանակները նա նեղուու է եղել. Պէտք է
առհասարակ նկատել որ Բէշիկթաշի բարզչութեան պաշտօ-
նը շատ բան չէր տալիս նորան, որովհետեւ հաստատ ոռմիկ
չկար, այլ միայն պատահական եկամուտներ, որ նա ստանում
էր այս կամ այն մեծատան ընտանիքի մէջ կատարուող կրօնա-
կան ծիսակատարութիւններին մասնակցելուց. Հասկանալի է,
որ Խորէնի պէտ մարդուն, որ սովոր էր լաւ ապրել, այդ եր-

Ալս ողբերգութեամբ վախճան է դրւում Խորէնի
ոչ միայն գործունէութեան, այլ և նոյն իսկ նորա կեան-
քին, ճիշտ է, դորանից յետոյ էլ նա մի քանի ամիս

բեմական եկամուտները բաւականութիւն չեն տալիս, ուստի
և նա աշխատում էր իւր նիւթականի պակասը լրացնել կող-
մակի եկամուտներով։ Նորա հայկական գրական վաստակները
և հայ լրագրներին աշխատակցելը, յայտնի բան է, նորան ոչ մի
շահ չեն տալիս, մնում էր նորան աշխատակցել արտասահմանի
լրագրներին, որոնք և լիտկատար կերպով վարձատրում էին նորա
աշխատանքը։ Դորա համար նա ունէր ամեն յարմարութիւն և
չեզուների գիտութիւն, և հետաքրքրական նիւթի առատու-
թիւն, օրովհետև ծանօթ էր մայրաքաղաքի բոլոր ազգեցիկ
շրջաններին և նոյն իսկ պայտառում ունէր շատ ծանօթներ ու
բարեկամներ, որոնք առան և հետաքրքրական նիւթ էին հա-
զորդում նորան արքունիքի ներքին կեանքից և կառավարչա-
կան շրջաններից։ Աչա այդ տեսակ թղթակցութիւններից մէկն
է լինում, որ բանում է և պատճառ է լինում նորա անկման
Պատճում են, որ առաջին նուազ Խորէնն աշխատում է արդա-
րանալ Սուլթանի առաջ, ուրանալով ու լընդունելով յօդուածի
իւր զբածը լինելը, ըսց երբոր ցոյց ևն տալիս նորան յօդուա-
ծի բնազիրը նորա խօսկան ստորագրութեամբ, նաև ստիպուած
է լինում խոստովանել Ճշմարտութիւնը և ներս մն է խոնդրում
վեհապետից։ Սուլթանը, որ մասնաւոր համակրութիւն է տա-
ծում եղել գէպի Խորէնը, ներում է նորան, ասելով. «Ես նե-
րեցի, Ըստուած թող դատէ։ Դատաւորի գերը, սակայն, չզի-
տենք, ի՞նչ իրաւունքով, իւր վերայ է առնում Աշըկեան պատ-
րիարքը, որ իւր «Հոչակաւոր կոնդակով» դրկում է նորան բո-
լոր պաշտօններից և մինչև իսկ եկեղեցու մէջ հրապարակով
ազօթելու ու պատարագելու իրաւունքից։ Զի կարելի առանց
զայրցյմի յիշել Աշըկեանի բանած զիրը Խորէնի վերաբերու-
թեամբ և այն ժամանակ, երբ բարդապէս և նիւթականապէս
ընկճուած արքեպիսկոպոսը վճռում է պատրիարքից ներում
խնդրելու, իսոստովանելով իւր կատարած յանցանըի ծանրու-
թիւնը. Ասում են, որ Խորէնն իմաց է տալիս, թէ կամենում
է այդ նպատակով ներկայանալ պատրիարքին, ըսց Աշըկեանը
չի ուզում առանձին ընդունել նորան և ստիպում է նորան զալ
խառն ժողովը և իւր ասելիքն այդտեղ ամենքի առաջ ասել

գեռ ապրում է, բայց նորա ալդ կարճատե կետնքն ինքն ըստ ինքեան արգէն մի կենդանի մահ է լինում։ Միայնութեան դատապարտուած, աշխարհից կորուած, ամենքից մոռացուած, շրջապատուած լրտեսների մի ամբողջ ոհմակով, ապրում էր նա Բանկալթիում իւր քրոջ տանը, և կարելի է տսել, կամաց-կամաց, օրէցօր մեռնում էր Նետզհետէ փլատակում էին նորա լուսերը, բաղձանքները և գորա հետ միասին կազմալուծում, քայլալում էր և նորա ֆիզիքական կարողութիւնը։ Անկումն շտա տնակնկալ էր և նա չկարողացաւ դիմանալ նորա հարուածներին։ Նա շտա էր սիրում աշխարհը, որ կարողանար երկար ժամանակ նո-

Խորէնը կատարում է նորա և այդ ցանկութիւնը և խառն ժողովում ամենքի առաջ ներկայանում է նորան և աղաջում, Խընդրում ներում չնորչէլ իրան, բաւական չամարելով իւր կրած բարշյական և նիւթական տանջանքը։ «Դժացէք, սրբազն հայր, աւելացնում է նա, անօմի եմ...» Այս անապատ գնա՞՛, Կոուց անապատ գնա՞՛, պատասխանում է պատրիարքը—Սըրբացն հայր, կը պազտեմ, անապատ չեմ կրնարեթալ... Եւ պատրիարքը կատաղութեամբ հրամայում է վանդել նորան, որ և ձշութեամբ կատարում են պատրիարքարանի բարապանները։

Զենը կարող ասել թէ ո՞րքան ճիշտ է, բայց մենք լսել ենք, որ Խորէնի եղբայր իշխան Դուիդոն Լուսինեանը իւր ժամանակին բողոքել է երջանկայիշատակ Մակար կաթուղիկոսին Աշըկեանի զործողութիւնների մասին։ Եւ ճշմարիտ, ի՞նչպէս և ի՞նչ իրաւունքով Աշըկեան պատրիարքը ինքը միայն արքեպիսկոպոս լինելով, գործ է դնում մի ուրիշ արք-եպիսկոպոսի վերաբերմամբ այնպիսի Փօւնկիցիաներ, որ ինքը չէր կարող ունենալ նա իրբն պատրիարք միայն իւր վարչական իրաւունք-ներով բարձր էր միւս բարձրաստիճան հոգեորականներից, ուստի և նա կարող էր զրկել Խորէնին միայն նորա ունեղած զանազան վարչական պաշտօններից, բայց որ նա զուտ կրօնականին վերաբերեալ իրաւունքներ էլ բանեցնէր—զրկէր հրապարակով ազօմթերու և մինչև իսկ պատարագելու իրաւունքից, այդ նորա իշխանութիւնից վեր էր Այդ միայն և միայն ամենայն Հայոց կաթուղիկոսի իրաւունքն է։

բանից անջատուած տպրել. նա խիստ փառասէր ու պատուասէր էր, որ կարող լինէր երկար ժամանակ փառագուրկ մնալ. միակ ելքը մահն էր և նա շուտով հասաւ և ազատեց, հանեց նորան անելանելի գրութիւնից:

Հանգուցեալն ինքն էլ զգացել է, որ օրէցօր մօտենում է գերեզմանին, ինքն էլ մարգարէաբար գուշակել է, որ իւր օրհասը հեռու չէ: Պորան ապացոյց կարող է լինէլ «Հիւանդին մրմունջը»⁹⁾ խորագիր կրող ոտանաւորը, որ նա այդ ժամանակները զբել է Յակովը Պուրդէնի խնդիրքով և որ նորա վերջին գրուածքն է: Պորա մէջ նա նկարագրելով գարնան վերջանալը, ամառուալ շոգ օրերի ժամանելը, խորշակից գարնան ծաղիկների՝ մօտենշակի, վարդի ու շուշանի թառամելը, աշնան մօտենալը և ծաղիկների իւրեանց բոլը կորցնելը և համեմատելով այդ բոլը իւր կեանքի հետ, հարցնում է թռաշնիկին, թէ ահա մօտեցաւ աշունը, իսկ երբ որ հասնի ձմեռը, նա իրան արդեօք կենդանի կգտնի: Եւ հասկանալով, որ այդ չի կարող լինել, թէ նա կուզէր մի անգամ էլ անցկացնել ձմեռը և Ապրիլը տեսնել, նա իսկոյն և եթ աւելացնում է, թէ սիրուն թռաշնիկն երբ գարնանը գայ, մարդիկ արդէն իւր տապանն էլ մոռացած կլինեն: Բայց արժէ կարդալ ամբողջ ոտանաւորը, որ մի կողմից մեզ լիսկատար գաղափար է տալիս հանգուցեալի վերջին մտածմունքների մասին, միւս կողմից էլ իւր մէջ պարունակած զգացմունքի տաքութեամբ ու թարմութեամբ, գրութեան ձեր համեմատարար անարուեստ պարզութեամբ, բանաստեղծական պատկերների ու նմանութիւնների գեղեցկութեամբ մի ամենաալնտիր նմուշ կարելի է համարել նորա աշխարհառով գրուած ոտանաւորների:

⁹⁾ «Հիւանդին մրմունջը» ոտանաւորը, որ Խորէնը զբել է Յակովը Պուրդէնի «Պատկեր աշխարհիկ զրականութեան» գրքի երկրորդ հատորի համար, յիշեցնում է մեզ Millevoye-ի (1782—1816) „La chute des feuilles“ ոտանաւորը, որ թարգմանուած է և հայերէն: Տես այդ մասին և առհասարակ Խորէնի երկասիրութիւնների մասին չ8. Խորէն Արքեպիսկոպոս նարակը, յօդուածը որ տպագրուած է «Արարտ» հանդիսի 1893 թուի Բ. գրքում:

Գարնանային սիւք ցօղաթեւ
 Ահա վերջին տուաւ բարեւ,
 Զերոտ աւուրց հասաւ խորշակ,
 Թառամեցոյց խեղճ մանիշակ.
 Վարդ և չուշանն լուսաթոյը
 Ահա զանոլշ կորուսին բոյը,
 Եւ իմ աչքեր արտասուագին
 Հետզհետէ կը նրւազին...:
 Թռչնիկ իմ սիրուն,
 Մօտեցաւ աշուն.
 Երբ հասնի ձմեռ,
 Ողջ զիս գըտնես դեռ:
 Ո՛հ, ալ չունի սիրտս ո՞չ մի լոլս,
 Մարի ճըրագ թըշուառ հոգւոյս,
 Եւ տերեսց մէն մ'ի թօթափ
 Կարծեմ տւուրց իմ պակսի չափ.
 Իմ կարճ կենաց մէն մի վայրկեան
 Քայլ մ'ալ վարէ զիս ի տապան...:
 Կըզամ նորէն տեսնել զԱպըիլ,
 Բայց, ո՛հ, կուզեմ ես գեռ ապըիլ,
 Թըռչնիկ իմ սիրուն,
 Մօտեցաւ աշուն
 Երբ հասնի ձըմեռ,
 Ողջ զիս գըտնես դեռ:
 Երբ նորաբուս գարուն զուարթ
 Գայ ի ճակատ պըսակազարդ,
 Պիտի կըրկնես գու հըրճուագին
 Ըզճըռուողիւն քո զառաջին.
 Պիտի տեսնես բլուրն ու անտառ
 Եւ ոստոստես ծառէ ի ծառ.
 Բայց ես տի ո՞չ տեսնեմ, աւաղ,
 Ոչ վարդ, առուակ և ոչ քո խաղ....
 Թըռչնիկ իմ սիրուն,
 Մօտեցաւ աշուն.
 Երբ հասնի ձըմեռ,
 Ողջ զիս գըտնես դեռ:
 Սիրուն թռչնիկ, քիչ օրէն, ահա,
 Յիմ սիրելեաց կը բաժնէ մահ...

Վերջին անգամ քո դալլալիկ
Ես կը լրսեմ մելամաղձիկ...
Գուցէ քընած հոզուս վերեւ
Ուրուր ւագռաւ սաւառնեն թեւ.
Լրսուին ըուին գուցէ եղերք,
Ալ սըրտառուց, ահ, ոչ քո երգ...:
Թըռչնիկ իմ սիրուն,
Երբ գաս ի գարուն,
Մարդիկ զիս մոռնան...
Ցիշէ զիմ տապան:

Խորէնի գուշակութիւնն արդարացաւ. նու ոչ թէ
միայն չհասաւ գարնան և չկարողացաւ նորից տեսնել
Ապրիլը, ինչակէս ցանկանում էր, ալ ձմեռուան էլ չհա-
սաւ. նա մեռաւ 1892 թուի աշնանը և թաղուեցաւ
Նիշլի գերեզմանոցում:

Հանգուցետիլի յուղարկաւորութիւնը համեմատարար
շատ անշուք է լինում. Ականատեսներից մենք լսել
ենք, որ կողմնակի դիտումներ չճանաչող և միայն զգաց-
մունքով զեկավարուող հասարակ ժողովուրդն է գլխա-
ւորապէս խոնուած զնացել նորա դազազի յետեկից և
շուք տուել թաղման տիտուր հանգիսին; Խոկ նորա բազ-
մաթիւ բարեկամներից, որոնց հետ նա ալնքան տարի
հաց էր կերել, հայ փեմաշուքներից, էֆենդիներից,
որոնց սալօնների զարդն էր եղելնա երկար ժամանակ,
ազգային հաստատութիւնների ներկայացուցիչներից, ո-
րոնց հետ նա գործել էր նոյն ասպարիզում, բարձր
եկեղեցական գասից, որոնց հետ նա իրը հոգեւոր եղ-
բայր միշտ յարաբերութեան մէջ էր եղել, նորա բազ-
մաթիւ աշակերտներից քչերը, շատ քչերն են գտնուել,
որ հոգու այնքան արիութիւն են ունեցել, որ մի կողմ
թողնելով բոլոր կողմնակի դիտումները, մասնակցել են
լուզարկաւորութեան և այդպիսով իւրեանց բարոյական
պարտքն են հատուցել հանգուցեալի լիշատակին: Պատ-
րում են, որ գոքա, ալդ քչերն էլ, որ համարձակու-
թիւն են ունեցել ուղեկցելու հանգուցեալին մինչև
գերեզմանոցը, այնպէս են պահում եղել իրանց, որ
կարծես, ուզում են եղել, թաքնուել, պահուել, որ
ոչ ոք նոցա շտեսնէ ու չիմանայ, որ նորա ընդհանուր

Հոսանքին հակառակ են գնացել։ Այդ գէպօւմ, ի հարկէ, ոչ պակաս գեր են խաղացել և ժամանակի ու տեղի քաղաքական հանգամանքները. չէ որ ով որ մասնակցէր կամ մի որ և իցէ բանով իւր համակրութիւնը ցոյց տար հանգուցեալին, կարող էր անբարեմիտ համարուել թիւրք կուափարութեան առաջ¹⁰⁾։

Ո՞հ, Ասուուած մի արացէ, որ մեր մէջ մէկն իւր բարձրութիւնից վալլ ընկնի - հարստականն ազգատանալ, բարուական համարուածը մի որ է բանում անբարուական նկատուի, պատիւ ու լարգանք վայելողը մի որ և իցէ սխալ բայլով լանկարծ զրկուի պատուից ու լարգանքից։ Սմենքը, ամենքը, մինչև անգամ և նոքա, որոնք ընկածի ոտքին չարժեն, այդ ժամանակ դլուխ կրաքարացնեն, կաշխատեն ինքեանք էլ աքացի տալ, ցեխի մէջ թամթախել, հողին հաւասարեցնել Հաւանական է, որ հէնց արդպիսիներին է ի նկատի ունեցել իւր վերոլիշեալ մահագուշակ բանաստեղութեան մէջ հանգուցեալը, երբ տսել է թռչնիկին,

Սիրուն թռչնիկ, քիչ օրէն, ա՞հ,

Յիմ սիրելեաց կը բաժնէ մահ...

Աերջին անգամ քո գալլալիկ

Ես կը լրսեմ մելամաղձիկ...

Գուցէ քընած հողոյն վերեւ

¹⁰⁾ Նար-թէյի դագաղի վերայ չի դրուում ոչ մի պսակ, չի կարգացուում ոչ մի ժամբանական, մինչև խոկ նորա մահուան և յուղարկաւորութեան ժամանակի մասին ծանուցում ևս չի լինում լրագրուերու, այնպէս որ ժողովրդի մեծ մասն այդ բուլոն իմանում է միայն այն ժամանակ, երբ ամեն բան վերջառած է լինում և երբ Շիշլիի գերեզմանոցի մի անշան անկիւնում հասարակ փայտէ խաչով մի նոր թռումը էլ է աւելացած լինում։ Յուղարկաւորութեան մասնակցում են զինաւորապէս Բերայի թաղեցիք, որոնց մատուում հանգուցեալն իրաւունք էր ստացել մասնաւոր կերպով աղօթելու իւր ընկանօրերում։ Խորէնի անկման, դատապարտութեան և մահուան մասին տես Քահան Տ. Խորէն Նար-պէյ արք-եպիսկոպոսին խորագորդ թղթակցութիւնը Պոլսից, որ տպուեց Անրաբու-ի 1892 թուի երկրորդ գրքում։

Ուրուր ւագուաւ սաւառնեն թե.

Լըսուին բուին գուցէ եղերք,

Ալ սըրտառուչ, ահ, ոչ քո երգ....

Նա, որ իւր այդ ընկած օրերին լաւ էր տեսնում
պատրիարքի և միւսների—Ուրուրների, ագռաւների և
բուերի գէպի ինքը բռնած դիրքը, հաւանական է, որ
հեշտութեամբ էլ կարողանար զուշակել և նոցա բռնե-
լք դիրքը և վերաբերումը գէպի իւր լիշտակը և իւր
ժահից լետոյ ։¹¹⁾

Դլուին Պ.

Մենք ասացինք, որ Խորէն Գալֆայեանն իւր գրա-
կան կեանքի բոլոր ընթացքում Վկիտօր Հիւգօլի և գըլ-
խաւորապէս Լամարտինի հետեւող և խոնարհ աշակերտն
եղաւ: Արդ, ով էր Լամարտինը, ինչ ուզգութեան
էր հետեւում և ինչ ազգեցութիւն ունեցաւ նա իւր
հայ աշակեւտի վերալ:

(1) Գրելով այս կենսագրական ակնարկը, մենք յաւակ-
նութիւն չենք ունեցել ներփայացնելու Խորէն Գալֆայեանի
կեանքի ամբաղջ պատկերն իւր բոլոր մանրամասնութեամբ:
Եյդ ոչ մեր նպատակն է եղել ոչ էլ դորա համար մենք մեր
ձեռքի տակ ունեցել ենք հարկաւոր նիւթերը: Մենք միշտն
կամցել ենք դորանով մէջ բերած լինել հանգուցեալի կեանքի
զիթաւոր կէտերն իբրև բացատրական կամ օժանդակ հանգա-
մանք, որպէսուե առանց բորան նորա հասարակական և զրա-
կան գործաւնեութիւնից շատ բար անհամարալի կմնար մեր
ընթերցադների համար: Այդ համառա կենսագրական ակնարկը
կազմելու համար, մենք ի միջի այլոց, օգտուել ենք, աւա-
ելուած ի վերադարձն: Վերադարձ և զրբորդին՝ Տ.—Խորենաց
Խ. Գալֆայեան բերմող վարդապետի: Փարիզ 1858 թ. զըս-
րցից, երկրորդ, «Արբեկպիսկոպոս Խորէն Խարբէ» Հայոց
պատգամաւոր Պետերբուրգում կենսագրական յօդուածից, որ
տպագրուեց «Մշակ» լրագրի 1878 թուի 92 և 93 համարնե-
րում, թարգմանուելով «Տաֆլիս. Եթունիկ»-ից, և, երրորդ,
«Խորէն Արբեկպիսկոպոս Խարբէ» յօդուածից, որ տպուեց
Արձագանք լրագրի 1893 թուի 6 համարում, թարգմանուե-
լով „Echo Contemporain“-ից:

Ալֆոնս. Մարի-Լուի-Դէ Լամարտինը Ֆրանսիայի բեղմնաւոր հեղինակներից և աշխարհահաշակ բանաստեղծներից մէկն էր։ Նա ծնուել էր 1790 թուի Դեկտեմբերի 21-ին Պարիսում։ Նորա ընտանիքը թէև իշխանական ծագումն չունէր, բայց Ֆրանսիայի պատուաւոր, հին, հարուստ տոհմաներից մէկն էր։ Նորա պապը 1789 թուին բնակութիւն էր Հաստատել Սակոնում, ձեռք էր բերել բազմաթիւ կալուածներ և փարթամ կեանք էր սկսել վարել, շրջապատելով իւր բնտանիքը իշխանական տոհմերին վայել կեանքի յարմարութիւններով, ինամբով ու հօգացորութեամբ։ Երեք որդի ու երեք աղջիկ է ունեցել նաև։ Աղջիկները մտել են կուսանաց, որդիներից անդամնիկը չի ամուսնացել, երկրորդը հոգեոր կոչման է նույիբել իրան, մնացել է կրտսերը, մեր բանաստեղիկ հալլը, որ ամուսնացել է Օրլեանի արքայազնի տան և կալուածքի կառավարչի գսաեր օրիորդ Ալիսա Գերուալի հետ։ Մեծ-Լեզափոխութիւնն ուրիշ շատ ազնուական բնտանիքների հետ միասին հարուածել է և այդ բնտանիքը, բանտարկութեան ենթարկելով նորա բոլոր անդամներին, բացի բանաստեղծի մօրից և ապագալ բանաստեղծից, որ այն ժամանակը փոքրիկ, օրօրցի երեխալ է եղել։ Թէպէտ այդ բանտարկութիւնն երկարատե չի եղել, որովհետև նշանաւոր Ռոբեսպիերի անկումը շուտով ազատել է բանտարկեալներին կապանքներից և վերագրաձերել է նոցա իւրեանց տոհմական յարկի տակ, բայց գորանից լետով բանաստեղծի պապը և տասը շատ չեն ապրել։ Նոքա գորանից մի քանի տարի իւտով մեռել են, թողնելով իւրեանց զաւակներին ահագին կարողութիւն։ Կալուածները բաժանուել են մառանզների մէջ և բանաստեղծի հօրն ընկել է Միլիլ կալուածքը, որի վերալ նորա հալլը Ժամանակի ընթացքում աւելացրել է և մօտը գտնուած Saint-Point կալուածքը, որտեղ և Լամարտինը քաշուած ապրում է եղել իւր ծերութեան ու ընկած ժամանակները, որտեղ և նա 1869 թուի Փետրուարի 28-ին մեռել ու թաղուել է։

Փոքրիկ Լամարտինը, որ անդրանիկը և միակ արուգաւակն է եղել իւր ծնողների, իւր մանկութեան օրերն

անցնում է իւր հայրենի լարկի տակ, շրջապատուած իւր վերին աստիճանի բարոյական նուրբ զգացմունք՝ ներով օժտուած մօր խնամքով ու հոգատարութեամբ և խաղալով իւր հինգ քոլբերի հետ։ Տաս տարեկան հասակում նորան հօրեղբարյների ցանկութեամբ տալիս են Լիոնի պանսիօններից մէկը, լետոյ հանելով այնտեղից, ուղարկում են հէլլէի կոլեգը, որ հիմնել էին ճիզուիտները և որոնք ստիպում էին իւրեանց աշակերտներին և բոլոր շրջապատողներին հոչել իրանց «Հաւատքի հայրեր»։ Այդտեղ նա մնում է չորս տարի և 17 տարեկան հասակում յաջաղութեամբ աւարտելով իւր փոքրածաւալ ուսման ընթացքը, վերագանում է տուն, շիմանալով, թէ կեանքի որ սսպարեզն ընտրէ, ինչ գործի նուրիբէ իրան, ինչով զբաղուի։ Նորու հօրեղբարյները, որոնց պատկանում էր տոհմական կորուգութեան մեծ մասը և որ, ի հարկէ, իւրեանց մահից լետոյ պէտք է ալդ բռնորը թողնէին նորան և ալդ պատճառով էլ հէնց իրանց իրաւունք էին համարում խառնուելու նորա ուսման գործին և զնկափարեխու նորա առաջին քայլերը կեանքում, արգելում են նորան ծառալութեան մտնել և ծառայել բռնապարտին։ Նոքա այն աւանդապահ արքալականներից էին, որոնք ամբողջ հինգ տարի սպասում, չէին կորցնում իւրեանց լուսերը, որ շուտով կանգնեն լեզափոխութեան ժամանակները և նորից կվերահաստատուեն նախկին կարգերը։

Ամբողջ չորս տարի նա մնում է անգործ Մակոնում և Միլիում և ալդ շոլոր ժամանակը նա նուրիրում է ընթերցանութեան, որով և նա կամենում է լրացնել մի կողմից իւր ուսման պակասը, միւս կողմից էլ լցնել իւր պորադ ժամանակը։ Նա թէև կարգում է անկարգ, անսիստեմ, ինչ որ բնկում է ձեռքը, բայց արդէն ալդ ժամանակները հէնց նորա կարգացած ալդ գրքերի ազդեցութեան ներքոյ որոշւում է նորա ուղղութիւնը, պարզում են նորա հակումները, նորա ճաշակը և գլուխում է նորա ապագայ գրական ստեղծագործութեան հիմնաքարը։ Կրօնական գրքերից նու կարգում է Աստուածաշունչը, հին գասական հեղինակներից Վիրագիլիոսը, Օվրատիոսը, Տիբուլլոսը, Պրոկերպիոսը, նոր

Հեղինակներից. Օսմիանը, Արփոստօն և Տաստօն, Փրանսիական Հեղինակներից. Մոլիերը, Բուալոն և մանաւանդ Վոլտերը, Ժան Ժակ-Բուսոսն, Ստալը, Շատորիանը, միով բանիւ այն բուոր Հեղինակները, որոնք մէ գտրի մտաւոր կետնքի պարագլուխներն էին և որոնց մտքի համազումար ոլժով առաջ էր եկել և յեղափոխութիւնը: Բաղդաւոր աստղի տակ էր ծնուել Լամարտինը, բարեկցիկ ընտանիք, որ անկարօտ կերպով, կարելի է ասել, շքեղութեամբ և տւելիքով լրացնում էր նորա կեանքի բոլոր պէտքերը, սիրող, նուրբ զգացմունքներով, զարգացած, կիրթ ճաշակով մալր, որ տուել էր իւր որդուն իւր ալդ ներքին բոլոր լատկութիւնները, և, որ գլխաւորն է, բարեպատեհ դաբագլուխ, լաջով ժամանակներ —ահա այն գործօն ոլժերը, որոնք լառաջ են բերում ստեղծագործող Լամարտինին:

Ֆրանսիական մեծ լեզվագործութեան և գորան անմիջապէս լաջորդող տարիներն էին: Եւրոպայում տարրող մարդկութեան գոյութեան և կեանքի ու կեցութեան գլխաւոր արգելասիթ պալմանները, որոնք մինչև ալդ ժամանակները արգելք էին լինում լառաջազի մութեան և կապում, կաշկանդում էին մարդկութեան ձեռքերը, քանդուել, փլատակուել, վերանորոգուել և լեզվացըուել էին գէպի լուր: Քաղաքական բռնութեան, իշխանութեան կամայականութեան տեղ բռնել էր ազատութիւնը, կրօնական խաւարամտութեան, պապական բռնակալութեան փոխարինել էր մտքի, խղճի և համոզմունքի համարձակ արտայալութիւնը, տոհմական ազնուականութեան նիւթեական և բարուական տիբապետութիւնը տեղի էր տուել բռւն ժողովրդի աշխատանքի, բնական կարողութիւնների և մտաւոր ընդունակութիւնների առաջ, իսկ ալդ բոլորը միասին լառաջ էին բերել մտաւոր լառաջաղիմութիւն, լուսաւորութիւն ամենալցնդարձակ հոսանքներով, մի խօսքով ամուր հիմք էր բռնել և սկսել ծաղկել, բարգտուաճել ու լառաջ գնալ այն երապական քաղաքակրթութիւնը, այն երապական կուլտուրան, որ ալժմ ընդհանրութեան է պատկանում, որով ալժմ պարծենում է բոլոր մարդկութիւնը:

Ֆրանսիական ալդ մեծ յեղափոխութիւնը թէև սկսուելով Ֆրանսիայում, սահմանափակուած չէր մնացել միայն Ֆրանսիայում, թէև ալդ մեծ շարժման հոսանքները դուրս գալով Ֆրանսիայի սահմաններից զանազան շատափաներով տարածուել էին Եւրոպայի զանազան կողմերը և ամեն տեղ սփռել իւրեանց ազգեցութիւնը, բայց բնականապէս նա ամենամեծ զարկը եցնցումը տուել էր բուն Ֆրանսիային: Ալդտեղ ամեն բան տակն ու վերայ էր եղել և հինը հիմնադրամակ եղել, քայլքայուել ու լուծուել Լիւդուիկոսների բոնա կալական իշխանութիւնն անդարձ կերպով վերջացել էր, պապականութեան և հոգեկրականութեան ազգեցութիւնը թուլացել, իշխանութիւնը ջախչախուել, գպրոցներն ու զիտութիւնն աշխարհականացել և դուրս եկել եկեղեցու ինսամակալութեան տակից, ազնուականութիւնը տարրալուծուել և նորա մեծամեծ կալուածները մաս մաս բաժանուել և երկրի հարստութեան հետ միասին ընդհանուր սեփականութիւնն դարձել, ժողովուրդն առաջ եկել և բուրքուազիան կամ, ինչպէս ասում էին Կիլիկիցիք, «բուրքիւս-ը մեծ նշանակութիւն ստացել, պալատական գրականութիւնը, լեզուի չորս թիւնն ու ցամաքութիւնը, գրական երկերի անբօվանդակութիւնը, գրելու ձևի ու եղանակի գրուած-ուռաածութիւնը, արուեստականութիւնը և հին դասականի նմանուղղութիւնը, միավ բանիւ կեղծ-կլասիքական ուղղութիւնը տեղի էր տուել ժողովրդական գրականութեան, հոգու, սրտի և զգացմանքի գրականութեան առաջ, ուսմանտիք կոչուած ուղղութեան առաջ: Ճի՞զ է, լեզափոխութեան տաքութեան, սուր բնաւորութեան ժամանակներն երկար չեն տևում և նոցա շուտով յաջորդում է Ռեստարասիօնը, որի հետևանքը լինում է մի տեսակ ռէալիստիօն, եղափոխական կարգերի դէմ, բայց ալդ ռէստարասիօնը կամ վերականգնումը իւր ընդդիմադարձութեան հետ միասին չպէսք է հասկանալ վատ մտքով, հին կարգերին վերտառնալու, լետաղիմելու մտքով, ոչ, այլ լեզափոխական շափազանցութիւնները, անհարթութիւնները լարգարելու, շափառելու մտքով: Յեղափոխութիւնն այնպիսի զարկ էր տուել, այնպիսի ջախչափիչ

կերպով կործանել էր հինը, որ այլ ևս խօսք չէր կարող լինել հնի նոյն ձևով վերականգնման մասին. նոյն իսկ ռեստաւրասիօնի և ռ. ակսիօնի պարագլուխները, որոնք բոլորքեան ևս մեծացել, սնուել էին լեզափոխութեան ուսմունքով, տոգորուած էին լեզափոխական գաղափարներով, չէին կամենում, չէին կարող այլ ևս հին կեանքով ապրել, հին եղանակով կառավարուել, հին ռեժիմով զեկավարուել, Թագաւորական իշխանութիւնը վերահստատուեց, բայց ալդ արդէն Լիւդուիկոսների ալն թագաւորութիւնը չէր, որ կարողանար ամենքին իրան գերի գարձնել, ամենքին ճնշել և մինչև անգամ հպատակների հոգու, սրտի և մտածութիւնների վերայ թագաւորել. եկեղեցու սրբութիւնը նորից իւր արժանաւոր տեղը բոնեց, բայց այդ արդէն նախկին պապտկան հոգի, միտք և ամեն լուսաւոր գաղափար կաշկանդող կաթոլիկ եկեղեցին չէր, մի խօսքով լեզափոխութեան առաջ բերած գլխաւոր, էական հիմունքը, սկզբունքը հաստատ մնացին և միայն փոխուեցին մանրամասնութիւնները, ոչ էականները, արտաքին ձևերը:

Պատահականութիւնը, բաղդի բերմունքը, թէ ժամանակակից հանգամանքների գաղափարների, ձկտումների համագումարը այդ ժամանակները լառաջ են բերում մի շարք ընդունակ, քանքարաւոր հեղինակներ, որոնք իւրեանց մտքի կորովով, գրչի ուժով ընդհանրացնում, մարմին և արիւն են գարձնում ժողովրդի մէջ չափաւորուած ձևով լեզափոխութեան գլխաւոր սկզբունքները: Ինչ տաել կուզի, որ գոյա ազգեցութիւնը գլխաւորապէս զգալի է լինում զրականութեան զարգացման վերայ, որ սկսում է արագ ու հսկալական քայլերով առաջ գնալ և համաշխարհական հոչակ ստանալ: Քարքարում են կեղծ-կլասիքական ուղղութեան վերջին բեկորները և ռոմանտիզմը հետզետէ այնքան առաջ է գնում ու զարգանում, որ երեսնական թուականներին արդէն իշխող ուղղութիւն է գառնում ֆրանսիայում գրականութեան մէջ: Մաքի ու գաղափարի ալդ քանքարաւոր պարագլուխների շարքը բաղկանում է Վիկտոր Հիւդովից, կոմս Ալֆրեդ-դէ-Անյուից, Ալֆրեդ-դէ-

Միւսէից, Թէոփիլոս Գոտիէից և միւսներից Ալդ նշանաւոր մարգկանց շարքից էր և Ալֆոնս Լամարտինը:

Ի՞նչ էր ռամանտիզմը և ի՞նչով էր տարբերութեան կեղծ գասական ուղղութիւնից: Ուսմանտիզմը գրական ուղղութեան այն տեսակն է, որի մէջ գերիշխող գեր է կատարում քնարերգութիւնը, որ իւր հերթավ ոչ այլ ինչ է, եթէ ոչ անհատականութեան արտադարտիթիւնը: Անհատականութիւնն էլ արտայալուում է ոչ թէ այն գաղտփարներում, որոնք գոյանում են մեր գիտակցութեան մէջ, այլ որ ստեղծագործուում, առաջ է գալիս մեր զգացմունքի, մեր հոգու ու սրտի ելեկջների մէջ: Ալդափիսի, արմինքն մեր հոգու ու սրտի մէջ երեան եկած անհատականութիւնն արտայալուում է կամ մեր զգալարանների մէջ, կամ սիրով, լորի, ատելութեան, թափիծի, լուսոհատութեան և մելամազութեան ձևով: Մեր զգալարաններից մի քանիսն այնպիսի նիւթ են տալիս մեզ, որ նօրանից մեր գիտակցութեան մէջ մտապատճեր է գոյանում արուաքին աշխարհի կամ տիեզերքի մասին, միւսները ալդ նիւթը չեն մտակարարում մեզ, Ուսմանտիք հեղինակներն իւրեանց երկերում նկարագրում են կամ պատկերացնում են զլիսորապէս միայն մարդուս ներքին զգացմունքները և բնութիւնից ստացած տպաւորութիւնները, միւս բոլորը, ինչպէս, օրինակի համար, հոտութիւնքի, ճաշակելիքի և առհասարակ մարդուս մկանունքին վերաբերեալ զգալարանների պատկերացումը, նոքա թողնում են յաջորդ գրական ուղղութեան ներկայացուցիչներին — ստուրիխաններին, որոնք սկսում են իշխող գեր խաղալ Ֆրանսիայում միայն վատսնական թուականներից: Ուսմանտիքների քնարերգութիւնը սանտիմենտալ բնաւորութիւն ունի և հարուստ կամ առատ է նկարչականութեամբ:

Ուսմանտիզմը տարբերում է գասականից գլխաւորապէս նորանով, որ չի ընդունում այն կանոնները, որոնք մի տեսակ սրբագործուած օրէնքների գեր էին կատարում գասականութեան մէջ: Գասականը պահանջում էր, նախ, որ գրական երկերի զանազան տեսակները, որոնք միմեանց հետ ոչ մի կապ, ոչ մի ընդհանուր ա-

զերս չունէին, ճշգիւ սահմանուեն. երկրորդ, նա պահանջում էր, որ գրական երկերի ամեն մի տեսակի օրէնքները, որոնք ձևի կամ տիպի միատեսակութիւնը գերազանում էին բնաւորութիւնների բազմատեսակութիւնից, հաստատ կերպով որոշուած լինեն և, վերջապէս, երրորդ, նա պահանջում էր ճաշակի պալմանականութիւն, որ սահմանափակում էր հեղինակի իւր գրուածքի համար թէ ազատօրէն նիւթ ընտրելու և թէ իւր այդ ընտրած նիւթն արտադարձելու համար զանազան միջոցներ ու եղանակներ որոնելու և գտնելու կամքն ու ձգտումը:

Մոմանտիզմն այդ բոլորը ոչնչացնում է: Ճիշդ է, նա դասականի այդ կանոններն ոչնչացնելով, մի տեսակ խառնիխուռան, քառտիքական գրութիւնն է մտցնում գրականութեան մէջ, բայց այդ լինում է միայն սկզբում. յետոյ հետզիւէտէ ամեն բան որոշուում, սիստեմի է բերուում, նոր, որոյ կարգ ու կանոնի ե օրէնքների տակ է դրւում: Նա սանդուռմ է քնարերգական բանտառեղծութիւնը, նկարչականութիւնն է մտցնում զրական զանազան տեսակ երկերի մէջ և, որ գլխաւորն է, նա ոչնչացնում է դասական գրականութեան մէջ ալնքան մեծ նշանակութիւն ունեցող ձևի ու ոճի յետելից ընկնելը, որ մի տեսակ բովքի միջից անցնելով ամեն մի ոգեւորութիւն, զրկում էր նորան ինքնուրույնութիւնից կամ, լաւ է ասել, ինքնատիպ առանձնալատկութիւնից. Նա ոչնչացնում է արուեստականութիւնը, մեռած ձեւերը, քարացած կանոնները, գրելու ու մասձելու սառած, կեանք ու կենդանութիւն կորցրած եղանակները, ճաշակի պալմանութիւնը, միով բանիւ նա գրականութիւնը հանում է չոր վերացականութիւնից, տալիս է նորան հոգի, կեանք և մեծ ծաւայով բանաստեղծական աւելին. Նա ներմուծում է զրականութեան մէջ գեղարուեստականութիւնը և, ընդհակառակը, գուրս է ձգում նորա միջից մեքենականութիւնը, շինծուութիւնը¹²⁾:

¹²⁾ Առանափակի և Լամարսինի մասին տես „История французской литературы XIX века, Г. Лансона, проф. Ecole Normale въ Парижѣ. Переводъ съ французскаго подъ редакціей П. О. Марозова“ էջ. 93—98 и 77—с4.

Դասականութեան և ռօմանտիզմի մաքառման գործում մեծ դեր է խաղում նամանաւանդ լեզուն, որ իրեւ մտքի արտայալտութեան գործիք մեծ խորհուրդ ուներ ռոմանտիզմի ներկայացուցիչների համար: Խորակելով դասականութեան մէջ ընդունուած բոլոր գըլ խաւոր կանոնները և նոցա տեղը նորը դնելով, դորա հետ միասին պէտք էր մշակել և նոր լեզու, որ հնարաւոր լիներ արտայալտել և նոր ստեղծած ձևերը: Այդ պատճառով էլ աշա վերոլիշեալ հեղինակները, որոնք, ինչպէս ասացինք, նոր ուղղութեան պարտգրաւխն էին, իւրեանց բոլոր ուշագրաւթիւնը գարձնում են լեզուի վերալ և աշխատում են հանել նորան այն անձուկ պարմանական շրջանից, որի մէջ զետեղել, փակել էին նորան դասականները: Ընդհանուր ոյժի, եռանդուն աշխատանքի և աշքի ընկնող տաղանդի և ընդունակութեան առաջ կամաց-կամաց տեղի է տալիս դասականութեան և այդ վերջին ամենակարևոր պատուարը: Լեզուն վերակազմում ու վերանորոգւում է: Հետզհետէ և աստիճանաբար անհետանում են գրտկան ասպարիզից դասական երկերի մէջ ընդունուած խօսքերի ստոր և բարձր, ազնիւ ու անազնիւ բաժանումը: Ընդունուած է, որ լեզուի մէջ բոլոր խօսքերն էլ հաւասար են, բոլորն էլ ազնիւ ու բարձր են և հեղինակն անխտիր բոլորն էլ իւր ցանկութեամբ կարող է գործ տծել իւր գրուածքի մէջ: Դորա հետ միասին անհետանում են այլաբանութիւնների և պատկերական օճերի սովորական դարձած առատ գործածութիւնը, որոնք մթնեցնում, ազտւազում էին գրուածքի միտքը: Աշխատանք է գործ գրուում, որ երկի մէջ խօսքերը, ոճերը և գարձուածները համապատասխանեն ճիշդ այն առարկաներին, որոնց մասին խօսում է հեղինակը, արտայալտեն ճիշդ այն մտապատկերները, այն զազափարները, որ հեղինակն ուզում է արտայալտել: Բացի այս բոլորից, ջանք է լինում հարստացներու լեզուի բառարանը, որ դասականները վերին աստիճանի աղքատացրել էին, հանելով գործածութիւնից ստոր և անազնիւ համարուած օճերը, խօսքերը և գարձուածները: Ռոմանտիզներն ամենայն առատութեամբ ընդունում են լեզուի մէջ բազմաթիւ

ժողովրդական բառեր, ամենեւին հոգ չտանելով, թէ այս մէկը վալելու է, այն մէկն ոչ, այս պատշաճ է, այն անպատշաճ, այս մէկն աղնիւ է, այն մէկը գոեհիկ, ինչպէս անում էին դասականները, միայն որ այդ բառերը ճշգիւ արտայալտէին այն, ինչ որ նոքա ցանկանում էին ասել: Լեզուի վերանորոգուելու, հարստանալու և գեղեցկանալու հետ միասին վերանարոգուում, գեղեցկանում է և ստանաւորը: Ոտանաւորի բազմաթիւ չափերի հետ միասին, որ ուժանտիքները վերանորոգում են կամ նոր ի նորու կազմակերպում ու գործածութեան մէջ են մացնում, նոքա նամանաւանդ ընդունում են ու սկսում գործածել «ազէքսանդրիեան» կոչուած ուժունեան ստանաւորի չափը:

Թէ լեզուի և թէ ստանաւորի վերակազմութեան ու վերանորոգութեան գործում սակայն ուժանտիքմի ներկայացուցիչ ու պարագուխ հեղինակները համահաւասար կերպով մեծ գեր չեն կատարում: Արդարութիւնը պահանջում է ասել, որ այդ ասպարիզում առաջնակարգ գեր են խաղում Վիկտոր Հիւգոն և Գոտիէն, իսկ Լամարտինը և միւսները միայն հետեւում են նոցա, երկրորդական գեր են կատարում: Լամարտինը արդէն շատ անհոգ էր, շատ անտարբեր էր գէպի իւր գրուածների լեզուն, շատ քիչ ուշագրութիւն էր դարձնում իւր լեզուի մաքրութեան, գեղեցկութեան, իւր օճի ու գարձուածների կանոնաւորութեան վերայ, շատ սակաւ ժամանակ էր նուիրում իւր գրուածները կոկելու, ուղղելու կարեսը գործին, որ այդ ասպարիզում կարողանար առաջնատկարգ գեր կատարել:

Մնչ առանձնայատկութեան տէր էր Լամարտինն իրեւ բանաստեղծ, իրեւ հեղինակ և բնչով էր առհասարակ նա տարբերում իւր ժամանակակիցներից:

Լամարտինը նախ և առաջ իւր սրտի, իւր էութեան մէջ թագցնում էր մի անչափ մեծաքանակ վիշտ և թախիծ, բայց նորա այդ թախիծը Շատոբրիանի և միւսների թախիծի նման կծու և դառը չէր. նորա այդ վիշտն ու թախիծն անցնելով նորա մեզմ, նուրբ կանացի հոգու ելեէցներից, փափկանում ու ստանում էր ալն գեղեցկութիւնը, գրաւչականութիւնը, որ բռնում է նո-

բա երկերն ընթերցողների սրտի ու հոգու ամենանուրբ թելերից։ Հոգու ալդ յատկութիւնը նա ժառանգել էր իւր մօրից և զարգացրել իւր մասնկական և պատանեկական կեանքի սարք ու կարգի մէջ, իրան շրջապատող ընտանեկան հանգամանքների մէջ իւր քոլրերի ազգեցութեան ներքոյ, քոլրերի, որոնք, ինչպէս տասցինք, նորա միակ խաղընկերն են եղել և ամարտինն իւր գրական գործունէութեան ասպարիզում շատ բեղմնաւոր է եղել. նա, բացի բանաստեղծութիւններից, գրել է և ուրիշ ամեն տեսակ գրուածներ՝ պատմութիւններ, կենապրութիւններ, ճանապարհորդութիւններ և այլն, բայց նա տիրապէս բանաստեղծ է եղել և մեծ բանաստեղծ և իւր ալդ բանաստեղծական յատկութիւնը պահպանել է և իւր բանաստեղծութեան հետ ոչ մի կապ չունեցող գրուածներում։ Նորա պատմական գրուածքներն այդպիսի գրուածքներին բատուկ դատողութիւնների և պատմափաստերի լուսաբանութեան լրջութիւնը չունին. Նորա ճանապարհորդական տպաւորութիւնները, նկարագրութիւնները զուրկ են պատմական, աշխարհագրական և տեղագրական ճշգութիւնից, և այլն և այլն։

Լամարտինի մեծութիւնն իրքեւ բանաստեղծի պէտք է որոննել այն անարուեստականութեան, այն ընականութեան մէջ, որ միայն նորան յատուկ է. նա չի երգել իւր գուարճութեան, իւր քէֆի համար, բանաստեղծութիւնը նորա գործը, նորա profession de foi-ն չի եղել. նա երգել է, որովհետև այդ նորա հոգու պահնաջնէ եղել, նորա սրտի հառաջանքն է եղել; Նորա բանաստեղծութիւնը, ճիշդ է, մի փոքր մշուշապատ է, մի տեսակ անյալտ, անարոշ բնաւորութիւն ունի, բայց ալդ մշուշը, ալդ մէզն ու մառախուզզը, որոնք ստուերապատում են նորա ներկալացրած բնութեան տեսարանների, կուսական գեղեցկութեան, հոգու պէս-պէս արտալարառութիւնների պատկերները, այնքան թափանցիկ, այնքան շղարշանման են, որ բոլորովին չեն մթնեցնում նոցա, այլ ընդհակառակը, պատկերները շատ գրաւիչ կերպով արտացոլում են նոցա, այսինքն ալդ մշուշը ու մէզի միջից և դորանով, իւրեանց ալդ աղօտութեամբ աւելի ևս հրապուրում, յափշտակում են մեր սիրտն

ու հոգին։ Ալդ անորոշութիւնը, ալդ մթութիւնը, որ մենք տեսնում ենք նորա բանաստեղծութեան մէջ, առաջ է զալիս հէնց այն հանգամանքէց, որ նա արտապայտում է մի մեծաքանակ, մի զօրեղ զգացմունք, առանց գատազութեան և առանց փաստերի։ Նա մտածող, նա պատմաբան, նա հետազոտող չէ։ Նա գուտ, մաքուր բանաստեղծութեան ներկայացուցիչ է միայն։

Լամարտինի բանաստեղծութեան ալդ հիմնական մոտիւր, նորա հոգու տրամագրութեան ալդ էական հանգամանքը զիսաւորապէս երևան է զալիս նորա երկու գրուածքում Premières meditations և Les harmonies, ուղոնք, նախ, նորա բանաստեղծական գրաւածքների մէջ առաջնակարգ տեղ են բանում, երկրորդ, շատ կարևոր են մեզ Հայերին համար, որովհետեւ Խորէն Գալֆայեանն ամենից աւելի բանաստեղծի ալդ երկերն է սիրել, ալդ երկերն է թարգմանել, ալդ երկերի ազգեցութեան ներքու է հեղինակել իւր ինքնուրոյն բանաստեղծութիւններից շատերը։

Premières meditations-ը, որ իւր ամբողջութեամբ լոլո է տեսուել տպագրութեամբ 1820 թուին, սկզբից եղել է միայն մի փոքրիկ հատորիկ, բազկացած 26 կտոր բանաստեղծութիւններից։ Իւսու արդէն նա հաստացել ու ստուարացել է, երբ 1823 թուին հրատարակուել է նորա շարունակութիւնը կամ լրացուցիչ մասը «Nouvelles Meditations» խորագրով։ Սակայն սկզբից հրատարակուածներին էլեմենտները եղել և միշտ մնացել են ամենաընտիրները, իսկ յւսոյ հրատարակուածները թէե ունեցել են իւրեանց մէջ մի քանի ընտիր կտորներ, բայց երբէք չեն կարողացել համեմատուել առաջինների հետ, հասնել առաջիններին։ Meditations ը զգացմունքի մի ամբողջ հեղեղ է, քնարերգութեան բանաստեղծութեան մի ամբողջ ծովակ, փսեմ, գեղեցիկ, թախծալից։ Ալդ բանաստեղծութիւնների մէջ չի կարելի գտնել մէկը, որի մէջ հէնց մի որոշ գաշտանկար պատկերացրած լինի կամ մի ճիշդ, ստուգ փաստ հազորդուած լինի, այնքան դոքա անորոշ, մշուշապատ և անլայտ են։ Առնենք, օրինակի համար, «Le lac» բորհրդագութիւնը, որ ամենաընտիրներից մէկն է համարւում։ Ի՞նչ է պատկերացրած նորա մէջ—մի

նաւակ և երկու մարդ, բայց թէ ոլք են դոքա, ուր են գնում, — ոչինչ յալտնի չէ: Մենք դորա մէջ, բացի բանաստեղծի անհօւն զգացմունքից, ոչինչ չենք տեսնում, ոչինչ չենք իմանում: Այսպէս են նորա բոլոր խորհրդածութիւնները. նոքա խկապէս բովանդակութիւն չունին, ամեն բան նորա մէջ շղարշանման մէզով է պատաժ, ամեն բան նոցա մէջ, ինչոր միայն վերաբերում է իրականութեան, գոյութեան արտաքին ձևերին և հանգամանքներին, աներևութանում է և մնում է միայն իւր, բանաստեղծի հոգու հառաջանքը եւ զարմանալին այն է, որ Լամալ տինը կարողանում է միմիայն և միմիալն խօսքերով հաստատել իւր և իւր անծանօթ ընթերցողի մէջ այն մտերմական կապը, այն միմեանց լոռութեամբ հասկանալու երևոյթը, որ լինում է միայն երկու միմեանց շատ մօտ, շատ ծանօթ անձանց մէջ:

Les harmonies կոչուած երգերը, որոնք առաջին անգամ լոյս են տեսել 1830 թուին, զուտ կրօնական բանաստեղծութիւններ են, որովհետև նոցա մէջ ամեն մի տեղ կրկնուում է Աստուծոյ անունը, ամեն տեղ կրօնական խորհրդածութիւններ են լինում: Սակայն այդ կրօնական խորհրդածութիւնները, ինչպէս երևում է, ամեն տեղ հաւասարապէս չեն ոգեսրել բանաստեղծին: Երբեմն այդ խորհրդածութիւնները քաղել են նորա գրչից ամենաենտիր ոտանաւորները, երբեմն ել նոքա ձգել են նորան ձանձրալի միակերպութեան մէջ և, փոխանակ զգացմունքի տաքութեան և մտքի հակիրճ, կենդանի արտալայտութեան, տուաջ են բերել երկարաբանութիւն ու խօսքերի կուտակումն, այնպէս որ կարելի է ասել, թէ բոլոր գաշնակները միասին առած կազմում են մի ամբողջութիւն կամ հաւաքածու, որի մէջ միջակ, չլաջողուած և շատ լաջողուած բանաստեղծութիւնները խառնուած են միմեանց հետ, լաջորդում են միմեանց: Թէև ինքը Լամարտինը 50 դաշնակներից ընտիր է համարել միայն 15-ը, բայց այդ, ի հարկէ համեստութիւն է. նոցա մէջ ընտիրները, անկասկած, աւելի բազմաթիւ են, քանթէ ոչ ընտիրները և, որ գլւխաւորն է, այդ ընտիրների մէջ կան այնպիսիները, ո-

բոնք իւրեանց մէջ պարունակում են նոր, արտաքոյ կարգի գեղեցկութիւններ, որ և առիթ է տուել շատերին նորա լարգողներից դաշնակները գերագասել նորա միւս բանաստեղծութիւններից։ Նոցա, ալդ ընտիր դաշնակների ոճը պարզ է և գեղեցիկ, իսկ նոցա ոճի ալդ գեղեցկութեան ու պարզութեան համապատասխանում է նոցա մէջ և ամենայն պարզութեամբ, ընականութեամբ և անարուեստականութեամբ արտայտուած զգացմունքը։

Թէև Լամարտինն իրը գրող այնքան հպարտ բնաւորութիւն է ունեցել, որ չի սիրում եղել մի ուրիշին հետևել, մէկին աշակերտ գրուել, թէև նա ինքն իրեն ռոմանտիք չի համարել և հեռու է պահում եղել իրան դասականների և ռոմանտիքների պարարներից, թէև, վերջապէս, նորա հայեցքները քաղաքականապէս և կրօնապէս աւելի պահպանողական են եղել, քան թէ իւր ժամանակակից հեղինակների, ալնուամենայնիւ նա չի կարողացել իրան ազատ պահել, չենթարկուել ժամանակի հոգուն, իրան շրջապատող գրական գործիչների աղդեցութեան, նա կարդալով Հիւգօլի երկերը, ազդուելով ռոմանտիքներից, իւր ներքին աշխարհով, իւր հոգու էութեամբ էլ պատկանելով ռոմանտիքների շարքին, անզիտակցարար ռոմանտիք ուղղութեամբ գրուածներ է արտադրել, որով և ակամայ մասնակցել է դասականութեան և ռոմանտիզմի մրցողութեան և օգնել է վերջինին լազմութիւնը տանելու «Դաշնակները հենց նորա գրուածների այն տեսակին են պատկանում, որի մէջ պարզ երեւում է ռոմանտիզմը Հիւգօլի կողորիավով։ Կարդանք, օրինակի համար, դաշնակներից «Եհովան», «Կաղնին» և «Մարդկութիւնը» —, և մեզ բոլորովին ակնյալու կլինի ալդ ռոմանտիզմը, ալդ, եթէ կարելի է ալսպէս ասել, Հիւգօլական ութիւնը։

Կրօնական տարրի առաւտութիւնն ալդ գրուած քում պէտք է մեկնել, նախ, Լամարտինի ընտանեկան և դպրոցական դաստիարակութեամբ, որ զուտ կրօնական բնաւորութիւն է ունեցել, կրօնական, որ ժամանակի ընթացքում թէև շատ փորձանքների է հանդիպել, քայլ իսպառ երբէք չի անհետացել նորա սրտից, երկ-

ըորդ, նորա ցանկութեամբ տալու նոցա ձեռքը, որոնց սրտից յեղափոխութիւնն իսպառ չէր ջնջել ճշմարիտ Աստուծոյ Երկրապագութիւնը, առարկալի վսեմութեան համապատասխան մի կրօնական բանաստեղծութեան գիրք, Բացի այդ երկու գրուածքից, մեզ համար նշանակութիւն ունի Լամարտինի և մի արձակ գրուածքը — «Արևելքի ճանապարհորդութիւնը», որովհետև նա իւր գէպի արևելք կտատարած ճանապարհորդութեան ժամանակ պատահել է, յարաբերութիւն է ունեցել և Հայերի հետ, որոնք ամեն տեղ սիրով ընդունել ու պատուել են նորան: Նա այդ ճանապարհորդութիւնն արել է 1832 թուին. նա նաւ է մտել Մարսելի նուաշանգստում և անցել է Մալտայից, ալցելք է Աթէնքը, Բէլրութը, Լիբանանը, Գալիլեան, Երուսաղէմը, Դամասկոսը, Մեսել-ծովը, անօրինական տեղերը, Բալբէկի աւերակները և Պօլսի ու Դանութի վերալով 1833 թուին վերադարձել է Մակոն:

«Արևելքան ճանապարհորդութիւնը» թէե իւր հաղորդած տեղեկութիւնների ճշտութեան տեսակէտից նշանակութիւն չունի, թէե նա լցուած է ճանապարհորդութեան հետ ոչ մի կապ չունեցող աւելրոդաբանութեամբ և թէե նա իւր ժամանակակիցներին ծանօթացնում է աւելի իւր, Լամարտինի, քան թէ արևելքի հետ, այնուամենայնիւ շատ հետաքրքրական է: Նորա մէջ Լամարտինը մեծ ոգեսրութեամբ, իրան յատուկ բանաստեղծական աւելնով, կենդանի, աշխալ, ստուն ոճով պատմում է իր անձնական տպաւորութիւնները, մտածմունքները, իւր հայեացքները, ամեն բանի վերայ նայելով իւր անձնական տեսակէտից, ըստոր իւր տեսածներն ու լսածները յարմարեցնելով իւր տրամադրութեան, իւր հասկացողութեան և ամեն բան իւր մէջ մշակելով, բիւրեղացնելով և այնպէս արդէն ներկայացնելով իւր ընթերցողներին: Դա իսկապէս ճանապարհորդութիւն էլ չէ, այլ իւր, Լամարտինի անձնական դատաղութիւնները, փիլիսոփայութիւններն իւր դէպի արևելք կտատարած ճանապարհորդութեան առթիււ:

Որ իւր ճանապարհորդութեան ժամանակ Լամարտինը պատահել է Հայերի, լաւ ընդունելութիւն է գը-

տել նոցանից և լաւ տպաւորութիւն է ստացել, լաւ գաղափար է կազմել ընդհանրապէս նոցա մասին—, այդ երեսում է նորա այն երկու նամակից, որ Խորէն Գալֆայեանը գետեղել է իւր գաշնակների թարգմանութեան սկզբում: «Pendant mes voyages en Orient, ասում է նա այդ մասին իւր երկրորդ նամակում, յ'ai été reçu par les Arméniens comme un hôte et comme un frère»: Նորա այդ լաւ տպաւորութիւնը, այդ լաւ գաղափարը Հայերի վերաբերմամբ աւելի ևս զօրացել է Պարիքում, երբ նա ծանօթացել է Մուրատեան և Հայկացեան դպրոցների գեկավարների՝ Ս. Թէոդորեանի, Գ. Արվացեանի և Ամբրոսիոս ու Խորէն Գալֆայեանների հետ և սկսել է յաճախել այդ երկու հայկական դպրոցները, ներկայ գտնուելով դպրոցական հանդէսներին, անձամբ որոշուած պարգևները բաժանելով առաջադէմ աշակերտներին, անձամբ խրախուսելով և մինչև իսկ ճառեր արտասանելով և գովարաներով Հայերի յառաջադիմութեան ձգտումները: Հենց այդ ծանօթութեան, այդ լարաբերութեան վերայ է ակնարկում նա, երբ իւր առաջին նամակում ասում է իւր բարեկամ Խորէն Գալֆայեանին: «Mes relations fréquentes avec l'Orient m'ont inspiré un grand respect pour la nation Arméniene et sourtout pour la religion la probité et la poésie de ces populations plus rapprochées que nous du berceau et des lumières du monde primitif». ¹³⁾)

¹³⁾ Լամարտինի մասին առանձին տես „Иллюстрированная история новейшей французской литературы А. Пти-де-Жюльвиля. Переводъ съ французскаго подъ редакціей Ю. В. Веселовскаго“. Էջ. 200—267, զլուք V.

ԴՐԱՄԱՆ Դ.

Խորէն Գալֆայեանը գեռ մինչև իւր Պարիզ գալը
տեսած է եղել Լամարտինին, նա գեռ մինչև 1858—59
թուականները ծանօթ է եղել նորա հետ։ Նա տեսած
է եղել նորան դեռ իւր մանկութեան ժամանակ, ներ-
կալ գտնուելով Բոսֆորի նաւահանգստում բազմամբոխ
ժողովրդի հետ միասին, որ խռնուել էր այդտեղ Լա-
մարտինին ճանապարհ ձգելու համար, որ վերագառ-
նում էր այդ ժամանակ իւր արևելեան ճանապարհոր-
դութիւնից։ Այդ մասին մենք տեղեկութիւն ունինք
այն ընծալական ստանաւորից, որ Խորէնը գրել է իւր
գաշնակների թարգմանութեան սկզբում լատաջարտնի,
հօրը նուիրած ստանաւորի և Լամարտինի վերոյիշեալ
երկու նամակի հետ միասին։

Յայգոյն ի ծալըս տալ, էր երբեմն, ես լիշեմ,
Գաղղիադրօշ նաւ ի Պոսփիր գընալը դէմ.
Ոք պարմանի կացեալ ի խելսն անդ ի զեր,
Զաշս ընդ ափունս և ընդ երկին բաժանէր,
Եւ աջն ի լանջ՝ ճընշէր ըգտրովիլս սըրտին.
Նաւն ալն, անժոյժ ի գարձ՝ էր քոյդ, Լամարթինը
Խուռան անդ ամբոխ լեզերսն հօծեալ դալարիս,
Մաղթէր քեզ հօզմն աջող լափունս հալրենիս.
Մանուկ, ես զալն խընդրէի վեհ ուղեւոր,
Զոր եռանգուն ձայն ողջունէր բիւրաւոր...
Մինչև ծածկել տուագաստին իւր լաշաց
Եւ իմ բերան զանուն իւր մեծ թօթովեաց։

Թէև գոյն ընծալականի մէջ Խորէնն տառւմ է, որ հէնց ալդ օրից Լամարտինի երգերը, որոնք ալդ ժամանակները լուզում էին բոլոր կարգացող աշխարհը, ձգել են նորա սրտի խորքը մի տեսակ զմալումն և նա սկսել է «ոգելո» նորա տաղերը, սիրել է նորան, աշխակերտ է գրուել նորան, բայց մենք ալդ միտյն բանաստեղծական չափազանցութիւն ենք համարում: Խորէն մանուկը ներկայ գտնուելով մեծ բանաստեղծին ճանապարհ ձգելու հանդիսին, տեսնելով այն մեծ լարգանքը, որ խանուած ամբոխը մատուցանում էր «պարմանի» ճանապարհորդին, լսելով այն գովասանքները, որոնք ուղղում էին բազմաթիւ ժողովրդի բերանից այն օտարականի հասցէին, անկասկած, ինքն էլ կարող էր հետեւ միւսների օրինակին և իւր մանկական օփաննան էլ խառնել միւսների կեցցէների հետ և ցանկանալ Լամարտինի պէս մեծ մարդ դառնալ և մի օր նմանել նորան, բայց որ նա ալդ գիտակցարար անէք, որ կարողանար զգալ նորա երգերի քաղցրութիւնը և զմալել և, որ զլխաւորն է, «ոգելո» նորա տաղերը և ցանկալ աշակերտ զրուել նորան—, ալդ անկարելի է, որովհետեւ այն ժամանակ նա դօրա համար դեռ շատ մանուկ է եղել:

Գալֆայեանը գիտակցարար ծանօթացել է Լամարտինի հետ իւր Միիթարեան ուխտի մէջ եղած ժամանակ, երբ նա Ուխտի գլորոցում աշխակերտ է եղել, երբ նա աւարտելով իւր ուսման ընթացքը, վարդապետ է ձեռնադրուել և ուխտի միաբանների շարքն անցել, երբ նա, վերջապէս, սկսել է գիտակցարար կարգալ և ինքն էլ բանաստեղծութիւններ լորինել: Թէև Միիթարեան վանքը գտնուելով Վենետիկի ծոցի կղզեակներից մէկի վերալ, կտրուած էր ոչ թէ միայն Եւրոպալից, այլ և մինչև անգամ և Վենետիկի քաղաքից, թէև Միիթարեան ուխտն իրեւ կաթոլիկ վանական միաբանութիւն չէր մասնակցել Եւրոպալում տեղի ունեցած քաղաքական և մատաւրը լեղափոխութիւններին, թէև, վերջապէս, Յ. Ղազարու ուխտի աբբանները խիստ աչալրջութեամբ էին հսկել ու հսկում էին, որ կաթոլիկ եկեղեցու շահերը շօշափող, սրբազն աւտնդութիւնները

խախտող, պասլի իշխանութիւնը նուաստացնող և տռ-
հասարակ մեծ լեզափոխութեան արդիւնքը կազմող ոչ
մի հանգամանք, ոչ մի վտանգաւոր գիրք ու հեղինա-
կութիւն մուտք չգործեն կղզեակը, բայց այնուամենալ-
նիւ կատարուած և կատարուող լեզափոխութեան ար-
ձագանցները հանուած էին, թէև շատ թոյլ կերպով,
և արդ հայ քարդապետների խաղաղ բնակարանը: Յայտ-
նի բան է, միաբանները չէին կարողանում արձակ կար-
դալ լեզափոխութեան հեղինակների ամենալիունդ գը-
րուածները, գժուարութեամբ էին ձեռք բերում Վոլ-
տերի և Խուսոյի գրուածները և շարունակում էին իւ-
րեանց միտքն ու հոգին պարարել միջնադարեան կա-
թոլիկ եկեղեցու հայրերի գրուածներով՝ Ոլբերտի աս-
տուածաբանութեամբ, Թովմա Գեմբացու միտրիքակա-
նութեամբ, Բօսուեմի քարոզներով, բայց նոքա խսպառ-
էլ անմասն չէին մնում Եւրոպայի ժամանակակից հե-
ղինակների գրուածներից, Նոքա կարգում էին ֆրան-
սիական, անգլիական և խոտլական չափաւոր հեղինակ-
ներին, նոցա ձեռքին պտտուում էին գլխաւորապէս
ուստաւուրասիօնի հեղինակների գրուածները, որոնց ըն-
թերցանութիւնը թէև չէր խրախուսուում, բայց չէր
էլ արգելուում: Նոքա մեծ սիրով ու եռանդով կար-
դում էին Հիւգօյի և Լամարտինի գրուածները, որոնք,
մանաւանդ Լամարտինի գրուածները, իւրեանց պահ-
պանողական գաղափարներով և կրօնական զանգուածով
շատ լարմարուում էին նոցա կրօնական կրթութեամբ
տոգորուած գրասիրուկան ճաշակին:

Խորէնը, որ ինչպէս ասել ենք, օժտուած էր նուրբ
զգացմունքով և փափուկ, կանացի բնաւորութեամբ,
որ իւր սրտի խորքերում թագուցանում էր այն վիշտն
ու թափիծը, այն անհատականութիւն արտայալուն
հակումն, որ լատուկ է առմանափ հեղինակներին և
որ, վերջապէս, ինքն էլ արդէն սկսել էր բանաստեղ-
ծութիւններ գրել և նոցա մէջ իւր սրտի զեղմունքն
արտայալուն, լափշտակուում էր Հիւգօյի գրուածներից
և կատարելապէս սիրահար է գառնում Լամարտինին,
որին շատ նմանում էր իւր ինական խառնուածքով,
իւր խոհերով և իւր քնարի վշտահար թելերով, նա

արդէն կարդացել էր Կոստնելլը և թարգմանել էր նորա «Պազիկտոսից» մի կտոր, կարդացել էր լըվավասէօրը և թարգմանել էր նորա «Ժշուառութիւն մարդկան» ոտանաւոր, կարդացել էր Ներսպիրը և թարգմանել էր նորա «Յուլիս Կեսարից» մի հատուած, կարդացել էր Բալլոնը և թարգմանել էր նորա «Զալլոնալարոլից» մի կտոր, վերջապէս, նա արդէն կարդացել էր ժիւբէրը, Անդրէսա Շէնէս, Մէտաստազօ և Գէբարօ և դոցա հետևողութեամբ յօրինել էր իւր «ի սուրբ Պաւէլ Դունեցի» ու «Առ Յորդանան» չոր, արուեստական չափաբերականները, երբ կարդում է Ափկտօլի ոգեգորուած երգերը և Լամարտինի սրտարուխ «Խորհրդածութիւնները» ու քազզը, խորհրդաւոր «գաշնակները», և մի կողմ ժողոննելով միւսները, սկսում է թարգմանել ու ուսումնասիրել միայն դոցա, նամանաւանդ Լամարտինին, որի «Հառմոննեաները» մեծ ազդեցութիւն են անում նորա վշտահար, թափնծալից, կրօնական ուղղութեամբ զարգացած հոգու վերալ, 1854 թուին նա թարգմանում է Հիւգօլի «Մանուկ լորրանի» և «Գերդաստան» երգերը, յաջորդ 55 թուին թարգմանում է Լամարտինի երկու գեղեցիկ գաշնակը՝ «Բնութիւն կամ Մեծութիւն մարդոյ» և «Տաղ գիշերոյ», իսկ 54—57 թուականների ընթացքում նա յօրինում է մի շարք ինքնուրովն տաղեր ու երգեր, որոնք թէև ընդհանրապէս չոր ու ցամաք, արուեստական, հայկական սովորական ախ ու վախով լցուած չափաբերականներ են, բայց արդէն իւրեանց գրութեան եղանակով, բովանդակութեամբ և հիմնական գաղափարով ոսմանափզմի նըշոյներ են պարունակում իւրեանց մէջ և տեղ-տեղ լիշեցնում են կտմ, լաւ է ասել, նմանութիւն են տալիս Հիւգօլի և Լամարտինի քնարի ճօտիւներին: Մի քանիսը, ինչպէս օրինակ, «Յիշատակ սիրելեաց»-ը և «Յառաջին մանուշակն» մինչև իսկ, կարծես, տաք զգացմունքի պէս մի բան են պարունակում իւրեանց մէջ, կարծես թէ ձգտում են սրտառուչ իննել և դուրս գալ հայկական չարլոնականութեան սահմանից, բայց դըժքաղդաբար հեղինակի ալդ դողդոջուն, ալդ անվստահ

սրտի բերմունքն էլ կորչում է գըաբառի Խրթնաբառնութեան մէջ (¹⁴⁾):

Լամարտինի «Հառմոնեաների» ազդեցութիւնն ալնքան մեծ, այնքան զօրեղ է լինում Խորէնի վրայ, որնա, երբ ժամանում է Պարփզ և անձամբ տռիթ է ունենում ծանօթանալու մեծ բանաստեղծի հետ, արդէն չի շատանում իւր նորանից արած հատ ու կտոր թարգմանութեամբ, այլ ձեռնարկում է թարգմանելու ամբողջապէս բոլոր հառմոնեաները Լամարտինի այդ գըրուածքի թարգմանութեան գծուար գործին ձեռնարկելու հանգամանքն ինքը Խորէնն իւր թարգմանութեան լառաջարանում երկու տեսակ է մեկնում: Նա, նախ, կամեցել է գորանով կատարել իւր բարեկամների ցանկութիւնը, իւր բարեկամների, որոնք կարգացած լինելով ֆրանսիացի բանաստեղծի այդ նշանաւոր երկից նորա ձեռ քով արուած մի քանի հառմոնեաների թարգմանութիւնը, քանից խնդրել թախանձել էին, որ նա ձեռնարկէ ամբողջ գործի թարգմանութեան, երկրորդ, նա դորանով կամեցել է իւր երախտագիտութեան պարագը հատուցանել Լամարտինին, որ նորան Պարփզում այնքան սիրով ընդունել, փալփալել և մինչև իսկ իրախուսել էր նորա գրելու, թարգմանելու ձգտումները: Բացի այդ երկու գլխաւոր պատճառներից, Խորէնն ունեցել է, ինչպէս երկում է նորն լառաջարանից, և ուրիշ երկրորդական պատճառներ: Նա կամեցել է արեւելցիներից ինքն առաջինը լինել և իւր միջոցով էլ Հայոց ազգը և լեզուն առաջինը հանդիսացնել բոլոր արեւեան ազգերի մէջ այն հեղինակի գլխաւոր երկերից մէկը թարգմանելու գործում, որ իւր բոլոր կետնքի ընթացքում ալնպիսի բուռն սիրով սիրել էր արեւելքը և անքան եռանդով իւր մեծ հանճարը նուիրել էր նորան, որ հազիւ թէ Արեւելքը մէկ օր կարողանար նորա երախտիքի տակից գուրս գալ:

(14) Խորէնի այդ առաջին երկասիրութիւնները և թարգմանութիւնները բոլորն էլ տպագրուել են Խ. Գ. կամ Խոռոչնի ստորագրութեամբ: «Կազմակեցի» 1852—57 թուական ների համարներում:

Մի քննական հալեացք ձգելը հանգուցեալի մէջ բերած ալդ պատճառների ու շարժառիթների վերալ բաւական է, որ համոզուենք, թէ ալդ բոլոր շարժառիթներից միայն մէկն է իսկապէս գոյութիւն ունեցել —, նորա անձնական սէրը դէպի Լամարտինի երկերն ընդհանրապէս և գէպի նորա «Հառմոննեաները» մասնաւորապէս, իսկ մնացեալ պատճառներն ոչ այլ ինչ են, եթէ ոչ իւր անձնական, իւր անհատական հակումը հասարակաց օգտի պատրուակի տակ ծածկելու ցանկութիւն ու ձգուումն եւ ճշմարիտ, Խորէնն, անկասկած, այնքան միամիտ չէր, որ կարծէր, թէ Հայոց ազգը գեռ 1859 թուին կարօտութիւն ունէր Լամարտինի գրուածներին և թէ գրաբառ թարգմանելով ու տալով ազգի ճեռքը Հառմոննեաների պէս մի, ճիշտ է, գեղեցիկ, բայց բոլորովին վերացական և դժուարամարս գրուածք, համարէր, թէ դորանով ազգին մեծ օգուտ է տալիս, նոյնպէս նա այնքան անգէտ չի եղել իւր հռչակաւոր բարեկամի կեանքի ու գործունէութեան հանգամանքներին, որ չիմանար, թէ Լամարտինն իսկապէս ոչինչ էլ չի արել արևելքի համար և արևելքը ոչնչով իսկ երախտապարտ չէ նորան Լամարտինը, ինչպէս յախնի է, առաջ գեսպանի օգնականի պաշտօն է կատարել նէապօլում, լետոյ մի կարճ ժամանակ Բուրբոնների վերահաստատուելու միջոցում մուշկատիր է եղել, այնուհետեւ նա ամբողջ տաս տարի հռետոր է եղել ու հասարակաց գործերով զբաղուել, մի երկու ամիս էլ ամբողջ ֆրանսիան է կառավարել և, վերջապէս, միւս բալոր իւր ազատ ժամանակը նուիրել է հայրենի գրականութեան, հեղինակել, շարադրել և ծառայել է իւր հալրենիքին ըստ չափու կարողութեան:

Եթէ Խորէնը խօսելով Լամարտինի արևելքի վերալ ունեցած երախտիքի մասին, ակնարկում է նորա դէպի արևելք կտատարած ճանապարհորդութեան և գորա նկարագրութեան վերալ, — մենք արդէն համառօտապէս ցոյց տուինք, թէ ինչ արժէք ունի բռն զիտնական աշխարհի և արևելքի օգտի տեսակէտից նորա ալդ ճանապարհորդութիւնը Կրինում ենք, Լամարտինի «Արևելքան ճանապարհորդութիւնը» ընթերցողներին

ծանօթացնում է աւելի իւր, Լամարտինի անձի հետ, քան թէ արևելքի: Վերջապէս, եթէ Հանգուցեալ եպիսկոպոսը Լամարտինի ճանապարհորդութեան մասին այդքան մեծ համարմունք ունէր, աւելի նպատակարմար չէր լինիլ, որ նա հէնց նորա ալդ «ճանապարհորդութիւնը» թարգմանէր: Մենք կարծում ենք, որ յամենալն գէպս ալդ աւելի հետաքրքրական կլինէր հայերի համար, աւելի շահեկան կլինէր և նոյն իսկ աւելի կծառալիքը Ֆրանսիայի բանաստեղծի անուան հոչակը տարածելու, ընդհանրացնելու արևելքում, քան թէ «Հառմոնեաները», որ եթէ մինչև անգամ իսկ հասկանալի լեզուով թարգմանուած լինէր, գարձեալ հազարից մէկը չէր հասկանալ: Որ հասարակաց օգուտը և Լամարտինի արևելքին մատուցած ծառալութիւններ չեն, որ դրգել են Խորէնին թարգմանելու «Դաշնակները»¹⁵⁾, այլ իւր անձնական սէրն ու համակրութիւնը դէպի նորա անձը և նորա գրուածները, մասնաւորապէս գէպի նորա «Հառմոնեաները» և «Խորէրգածութիւնները», — գորան ապացուց կարող են լինել և նորա թարգմանութեան յառաջաբանի հետեւալ խօսքերը: «Այլ առ Բնչ անձնականս մեր գատաստան զչքնաղագունէն ի գործ Լամարթինեալ, մինչ զարմանք, զոր եր երբեմն ընդ աշխարհ ամենալն սոյն ալս յարուցանէր մատեան, ընդ աճել ժամանակաց, աճեաց առաւել: Իցիւ թէ ի

¹⁵⁾ Ֆրանսիական «l'harmonie» բառը Խորէնը թարգմանել է Հայոց «դաշնակ» բառով — «Դաշնակը Լամարտինեայ» — Les harmonies de Larmartine: Նալլանդեանցը հաւան չէր այդպիսի թարգմանութեան: Նա կարծում էր, որ Հայոց դաշնակ բառը չի համապատասխանում հառմոնի բառի բուն իմաստին ու նշանակութեան: Այդ հանգամանքի վերայ է ակնարկում հանգուցեալը, երբ իւր Աղցմիքի «Հրեշտակն աղօթից» ոտանաւորի մէջ գործածելով դաշնակ բառը տակը հետեւալ ծանօթութիւնն է դնում: «Յայսմ և իսոյն միայն ներեմք մեղ, և այն ոչ անխորհրդաբար, որպէս թէ կամեցիալ տակ քոյդ ցքեղ», կիրառութիւն բառիդ ըստ այդմ առման, զոր այսուը մերժեմք իսպառ, որպէս կամամտածական բռնադրօսութիւն եղուիս:

նոյն իսկ ի գարմանս անդ մեր և ի սէր, զլանդուգն ձեռնարկութեանս գոլը արգեօք զտանել զներողութիւն։ Անդստին յարցուն տիոց արտօսը ընդ արտասուս խառնեալ սիրելագունին ի բերթողս, և հաղորդ եռանդեան նորա լինէաք և յուսոյն նուազութեան, ընդ նմա խորհելով և ընդ նմա անդտանելով։ Ալսու օրինակաւ ընդ Քերթողին հոգւոյ և մտացն զուգակցեալ ընկերէին միտք մեր և հոգի։

Նատ չետաքրքրական է, ի միջի ալլոց, իւր Խորէնի անձնական գատաստանը Հառմոնեաների մասին։ Նա ալդ երկը համարում է ամենաընտիրը Լամարտինի բոլոր բանաստեղծական գործերի մէջ և կոչում է նորան «չքնաղագոյն» ի գործս Լամարթինեայ։ Նա ասում է, որ թէեւ արտաքուստ — «ուս վերին երեսս» Հառմոնեաները զանազանուում են միմեանցից, բայց ի ներքուստ նոցա մէջ կայ մի աեսակ միտութեան օղակ, որ բոլորը միացնելով, շաղկապելով միմեանց հետ, ներկայացնում է մեզ ամբողջապէս քերթողի միտքը և հոգին դոցա, այդ Հառմոնեաները ստեղծաբաննելու ժամանակի. Նա ասում է, որ ինքը Լամարտինն անձամբ խոստովանել է իրան, թէ ալդ հառմոնեաներից ամեն մէկը գրուած է խօրին առանձնութեան մէջ «ի ժամս լուսաբեկ վհատանաց»։ Իսկ ինչ վերաբերում է հառմոնեաների ընդ հանուըր բովանդակութեան, — Խորէնն ու բոշում է նորան միալն հետեւեալ ընդ հանուըր ու անարոշ խօսքերով։ «Երբեմն, ասում է նա, Լամարտինը հրաբորընք երգեր է վերաբակում գէսվի Բարձրեալը, երբեմն էլ մտաբերելով անդարձ անցած-գնացած օրերը, վելանորոգում է իւր լիշողութեան մէջ անցածի լիշտակը և «յանճառուելի իմն յափշտակի զմալլութիւն»։

Յաջողել է արդեօք Խորէնն իւր ձեռնարկութեան մէջ և կարողացնել է հայ ընթերցողին ներկալացնել Հառմոնեաների մի ալնակիսի պատկերը, կամ պատճէնը, որ նա կարողանալ եթէ ոչ լիակատար, գոնէ, մօտաւորապէս մի ամփոփ գտղափար կազմել Ֆրանսիալի բանաստեղծի ալդ, ճիշտ որ, հրաբորընք երգերի մասին։

Թէեւ մեր հեղինակը գորա համար ունեցել է ամեն մի յարմարութիւն — թէեւ նա լաւ ֆրանսագէտ է եղել,

լաւ գրաբառագէտ և օգտուել է իւր, Լամարտինի անձնական ցուցմունքից, թէև իւր ներքին աշխարհով, իւր ընութեան խառնուածքով նա շատ նմանել է Լամարտինին, այնպէս որ նորա միտքն ու հոգին, ինչպէս ինքն ասում է, «զուգակցեալ ընկերէին ընդ Քերթողին հոգւոյ և մտացն», ալնուամենայնիւ մենք վստահանում ենք այստեղ համարձակապէս ասել, որ նա իսպառ յաջողած չէ իւր ձեռնարկութեան մէջ, որ նա չի կարողացել իւր թարգմանութեամբ Դաշնակների բնագրի ոչ թէ միայն մօտաւոր, այլ նոյն իսկ հեռաւոր նմանութիւնը ներկայացնելի Մենք կարծում ենք, որ մեր գրաբառագէտներից շատ քչերն ունեցած կլինին ալնքան քաջութիւն ու համբերութիւն, որ ամբողջապէս գլխէգլուխ կարգացած լինեն 65 գաշնակները, Մենք, որ ունեցանք այդ քաջութիւնն ու համբերութիւնը, հրապարակով խոստավանում ենք, որ չստացանք այն համն ու հոտը, այն մտքի վեհութեան և արտայալութեան վսեմութեան ճաշակը, որ ունի հառմոննեաների բնագիրը: Դաշնակները Լամարտինի գէպի Բարձրեալի աթոռը վերառաքած հրաբորքոք երգերը չեն, այլ միայն նոցաչոր ու ցամաք կմախքը, տեղ-տեղ գժուար հասկանալի, տեղ-տեղ էլ իսպառ անհասկանալի, Եկէք կարգանք «Կաղնի», «Մարգկութիւն», «Յաւիտենականութիւն բնութեան և սպութիւն մարդոյ», «Տրտում է անձնն իմ մինչեւ ի մահ» ընտիր գաշնակները, որոնց մէջ Լամարտինը թէև բանաստեղծական, բայց պարզ ու բնական ձեւով արտայալում է մի մեծ փիլիսոփալական և կրօնական գաղափար: Մենք չենք հաւատում, զո՞նէ, կասկածում ենք, որ մեր գրաբառագէտներից մէկը միայն Խորէնի Հայերէն թարգմանութեամբ, առանց բնագրի կամ առանց մի օտար լաւ թարգմանութեան օգնութեան, կարողացած լինի իրան մէկին կերպով ներկայացնել բնութեան այն լաւիտենականութեան, մարդու կեանքի այն կարճատեսութեան, մահուտն այն անխուսափելիութեան գեղեցիկ վսեմ պատկերները, որ վարպետ բանաստեղծի վրձինով նկարել է մարդուս հոգու ու երևակայութեան մէջ Լամարտինը:

Առնենք, օրինակի համար, «Յաւիտենականութիւն

քնութեան և սղութիւն մարդոյ» գաշնակը, որի մէջ փիլիսոփայական գաղափարի ճշգութիւնը միախառնուած բանաստեղծական ոգեգորութեան հետ զեկավարում է բանաստեղծին: Բնութիւնն անմահ է կամ, գոնէ, մեզ անմահ է թւում, մարդս ապրում է միայն և միայն մի օր, բայց նա դարձեալ շատ բարձր է արտաքին աշխարհից, որովհետև նա հասկանում է, ըմբռնում է նորան, այդ աշխարհու—«Յաղթանակիր, ով անմահ բնութիւն, դու, որին բազմաթիւ օրեր իւր մէջ պարունակող ձեռքը տալիս է անսահման ժամանակի ընթացքում անդադար վերանորոգուող զօրութիւն, մահը զօրավիզ է լինում քո կարողութեան: Աւզարկիր, կորզիր, վերադարձրու գոյութիւնն ամեն բանի, որ քեզանից է ստանում իւր կենդանութիւնը, Ես որդս, որ սկիզբն եմ տռել քո մի ժամի մէջ, ես ծնուել եմ, ես նայում եմ, ես մեռնում եմ... Դնա դու քո ճանապարհով և այլ ևս մի ժամանակի իմ մասին: Զէ որ դու, բնութիւն, չես կարող երկրի երեսից անհետ ոչնչացնել և ոչ մի էտիւ Ես մեռնում եմ. Ինչ փոլթ, չէ որ ես ապրեցի, Աստուած ինձ տեսաւ, կեանքի հայեացքն ընկաւ իմ ոչնչութեանս վերար Ք անընդհատ վերանորոգուող գոյութիւնը տեսում է գարեր, ես միտլն մի վայրկեան ապրեցի... բայց այդ վայրկենական ակնժարթի ընթացքում ժամանակի և տարածութեան անեզրութիւնն արտացոլուեց իմ նայուածքի մէջ, և բռնելով այս աշխարհի միայն մի չնչին մասը, ես տեսալ նոյն իսկ պատկերը, որ դու ինք տեսնում ես քո անբաւութեանդ մէջ: Տիեզերական և եղակի էտիւ ճաճանչը լուսաւորեց իմ ստուերը. ես շշնջացի իմ ուրախութեան և սիրոյ օրհներգը և նորա լուսափայլ միտքն արտացոլուեց իմիս մէջ, Նորա խօսքերը ճանաչեցին ինձ. ես բարձրացալ նորա առաջ... և բնութիւնն ինձ ասաց. Անցիր, քո վիճակը վեհ է,— նա քեզ տեսաւ: Անցկացրէք, ուրեմն, ձեր անծալը, անվերջ օրերը, երկինք և երկիր, արև, լեռներ, ծովեր և դու, բնութիւն, երկար, շատ երկար դեռ ժաման իմ գերեզմանիս սնաբքում: Եթէ իմ անունը ջնջուած է կեանքի դպրութիւնից, թող և չգոյութիւնը մոռանալ ինձ: Ես խոնարհում եմ և չեմ նախանձում. իմ միտքն

ապրում էր գեռ առաջ. նա մեռնում է աւելի հաստատուն լուսով, քան թէ դուք բոլորեքեանդ»։ Արդեօք, այս վեհ, վաեմ, գեղեցիկ ու խորիմաստ պատկերը կարելի է պարզ կերպով վերստեղծել Խորէնի հետևեալ թարգմանութեան մէջ.—

Յաղթանակեա, անմահ բնութիւն,
Դու որում ձեռըն լուսարձակ
Անչափելի տալ գօրութիւն,
Եւ նորածին լար ժամանակ
Մահ գօրութեան քում տալ պլնդանս,
Ելնորհեա, բարձ, դարձն ըզկեանս
Որոց ի քէն ընդունին զէս.
Որդն ես ի քո ծագեալ ժըմիտ,
Ծնանիմ, հալիմ, մեռանիմ ես.
Ընթա, զիս մի ածեր ընդ միտ:
Ալլ քեզ, բնութիւն, չիցէ քեզ մարթ
Զարարած մի եղծել համայն.
Զրաւիմ, զի փոյթ. կեցի ես մարդ.
Ետես զիս Տէր, կենաց քթիթ
Խոնարհեցաւ լիմ անդ ոչէս,
Չեր գոյութիւն նորափըթիթ
Կեցցէ ըզդարս, բոպէ մի ես.
Ալլ ի զայրկեանն անդ վաղազրաւ
Գարք և միջոցք ինքնին անբաւ
Երկրորդեցան լաշացս իմ բիբս,
Եւ դոյն ի կէտ մի գոյութեան
Նոյն ինձ տեսի երևեալ տիպս
Զոր ձեզ ի ձերդ անեզրութեան:
Ընդհանրական և մի էին
Յոյն լաղջամուզդ իմ անդ ծագեաց,
Եւ հըծծեցի հանդէպ նորին
Զիմ երգ սիրոյ և զհըճուանաց.
Եւ անդուստ միտք իւր լուսալիր
Յիմ միտս ետ զիւր նըկարազիր,
Ծանեաւ եւ բանըն նորա զիս,
Եւ համբարձայ հանդէպ ի տես
Եւ բնութիւն՝ «Անց» ասէ զիս,
Վեհ ունիս բախտ, նա զքեզ ետես»։

Կեցչիք, ապա զաւուրսդ անծալը
 Երկիր, երկին, լերինք և ծով,
 Զահդ երկնաճեմ: Իսկ գու յամալը
 Ժըպտեա, բնութեանցն անկեալ կենաց
 Ի դըպրութեանցն անկեալ կենաց
 Մի՛ լոշընչէն ևս լիշեցալց.
 Պը նում այլ չեմ նախանձալով:
 Միտք կեցեալ իսկ է նախուստ,
 Եւ մեռանի նա ի մի լոյս
 Որ քան ըզձեզն է անկորուստ¹⁶⁾:

¹⁶⁾ Համեմատութեան համար աւելորդ չենք համարում
 գնել այսուհեղ այդ հասուածի Փրանսիական բնագիրը—

Triomphe, immortelle Nature,
 A qui la main pleine de jours
 Prête des forces sans mesure,
 Des temps qui Renaissent toujours.
 La mort retrempe ta puissance.
 Donne, ravis, rend l'existence
 A tout ce qui la puise en toi.
 Insecte éclos de ton sourire,
 Le nais, je regarde et j'expire
 Marche et ne pense plus à moi!
 —(Car) vous ne pouvez, ô Nature,
 Effacer une créature.
 Je meurs. Qu'importe? Jai vécu.
 Dien m'a vu! le regard de vie
 S'est abaissé sur mon néant.
 Votre existence rajeunie
 A des siècles. J'eus in instant
 Mais dans la minute qui passe
 L'infini de temps et d'espace
 Dans mon regard s'est répété,
 Et j'ai vu dans ce point de l'être
 La même image m'apparaître
 Que vous dans votre immensité
 De l'être universel, unique,
 La splendeur dans mon ombre à lui,

Առնենք, օրինակի համար, և «Ծրտում է անձն իմ
մինչև ի մահ» գտշնակը, որ Լամարտինը գրել է 1829
թուի սոյեմբերի 3-ին, «Համայն ննջեցելոց» -ի լաջորդ
օրը, իւրսի գղեակում խորին միայնութեան մէջ, մեծա-
տարած անտառի վիթխարի ծառերի հովանու տակ, ծա-
ռերի, որոնց տերեւները թափել էին դառնաշունչ հող-
մից, տեղատարափ անձրեից և որոնք, կարծես, ստի-
պում էին հեծելու անտառը... Ոնխուսափելի մահուան
գաղափարը բանաստեղծի բնակութեան տեղի ալդ թախ-
ծալից դրութեան ու հանգամանքների մէջ պարզ կեր-
պով նկարուում է նորա աչքի առաջ և նա տիսուր ու
տրտում, հառաջելով խորհրդածում է. «Եհ, ինչ փոյժ-
եթէ մահն անխուսափելի է, եթէ մեռնելն անհրաժեշտ
է, գոնէ, մի վերջին անգամ հառաջանք արձակենք,
ինչպէս այն մարդը, որ անդարձ դատապարտուած է,
որ ինքն իւր յօժար կամքով բարձր աշտարակից վալլ
գլորէ իրան, բայց որ ահանելի բոպէին, եղբ նորա ոտ-
քը սալթաքում է բարձրութիւնից, լուսահատ աղաղա-
կով, գոնէ, լցնում է անդունդը: Բայց որքան գեղեցիկ

Et j'ai bourdonné mon cantique
De joie et d'amour devand lui;
Et sa rayonnante pensée
Dans la mienne s'est retracée,
Et sa parole m'a connu;
Et j'ai monté devant sa face,
Et la Nature m'a dit: Pasco,
Ton sort nst sublime. Il t'a vu.
Vivez donc vos jours sans mesure,
Térre et ciel, céleste flambeau,
Montagnes, mers, et toi, Hature,
Souris longtemps sur mon tombeau.
Effacé du livre de vie
Que le Néant même m'oublie!
J'admire et ne suis point ja lout.
Ma pensée a vécu d'avance
Et meurt avec une espérance
Plus impérissable que vous.

Էր ալդ կեանքի առաւօտը, որքան հըճուանք կար առաջին սիրոյ մէջ։ Սակայն սէրը նոյնպէս անմահ չէ, նա մինչև անգամ կեանքից էլ չուտ է հանգչում, և ոչ ուկին, ոչ կիրքը, ոչ փառքը չեն կարող մխիժարել այն մարդուն, որ կորցրել է սէրը։ Ալդպիսի գէպքում արգեօք կափոփէ մեզ, գոնէ, ճշմարտութիւնը։ Հարցրէք իմաստուններից, նոքա մեռնելիս, ըոլորեքեան էլ ասել են. «Քիառութիւն, գու ինչ գիտեսու Բայց եթէ սէրը միայն հրապար է, փառքը—մի գտարկ հնչիւն, ճշմարտութիւնը—խարէութիւն, —եկէք մենք, քանի որ չենք զգուել կեանքից, մեր յօժարակամ մահով կանխենք, շտապէնք մեռնելու։ Ալդպիսի փոքրոգութեամբ սակայն մի բան իմ մէջ վրդովուում է. ալդ խիղճն է բողոքում, որ միակն է, որ մնայել է ընդհանուր աւերածի մէջ։ Խիղճն։ Կարելի է նա էլ միալն մի ուրուական է, մի պատրանք է, ինչպէս միւս ըոլորը. . . Ոչ, որովհետև միայն Աստուած կարող էր նորան ներշնչել իմ մէջ։ Աստուած, բայց արգեօք Աստուած կա՛յ։ Ի՞նչպէս. միթէ կարելի է ենթադրել, որ, երբ մարդն իւր խիղճն ունի, արտաքին աշխարհը զուրկ է գորանից։ Համաշխարհական խիղճն—ալդ էլ հէնց Աստուածն է։ Բանաստեղծի այս երկար խոռվայող խորհրդածութեան արդիւնքը վերջ ի վերջոյ լանգում է հետեւել եզրակացութեան. «Ինչպէս որ առաւօտեան վաղ ճանապարհ ընկած ուղևարը, որ գեռ չի տեսնում իւր ճանապարհի վերջը, գտնում է, որ երկինքը հրատապ է, օրը երկայն, հողը—կոշտ, բայց հպարտ իւր թափած քրտինքով ու լոգնածութեամբ և տեսնելով, թէ ինչպէս նոճինքի ստուերն աճում է, ասում է. Ես այնչափ երկար ընթացոյ, որ, հաւանականարար, արգէն մօտ եմ նպատակիս—, ալդպէս էլ աստուածային լիշտակն իջնում է իմ վերալ, շշնչում է իմ ակոնչին. վեր կաց։

Ահա այս մեծ կրօնական-փիլիսոփայական վարդապետութիւնը, որ Լամարտինը խորհրդածութեան նիւթէ չինել իւր ալդ նշանաւոր գաշնակի մէջ և որ թէւ ճանաչում է, ընդունում է Աստուծոյ գոյութիւնը, բայց վերջնականապէս չի որոշում, թէ արգեօք մենք միայն անզօր էակներ ենք, ընկճուած Աստուծոյ կարո-

զութեան ներքո, թէ նորա աստուածալին չարչարանքի արդիւնքը, չենք կարծում, որ շատ էլ հեշտութեամբ կարողանան հալ ընթերցողները հանել, վերականգնել Խորէնի թարգմանութիւնից, թէև այն էլ պէտք է ասենք, որ ալդ գաշնակի թարգմանութիւնն ամենալազողածներից մէկն է:

Կըրեւ զզմարդ գատապարտ զորմէ կընքեալ է անդարձ Զի գահակէժ հոսեսցի ի կատարաց բարձըրբարձ, Ի սոսկալին այն պահու լոր ոտն ըզսար կորուսին՝ Ի լուսահատ ազազակ լընու ըզխորս գէժ զընին: Զոր օրինսկ ուղևոր ելեալ ի չու լայգս ալգուն, Որ ոչ լակնէ տակաւին ըզկատարած զիւր ուղւոյն, Գտանէ զերկինը հրատապ ըզտիւն երկալն, ըզհող կորդ, Ալլ խըրոխտ լիւրն լոգնութիւն և ի քըրտունս արկեալ լորդ, Ասէ, տեսեալ ըզնոճեաց հանդէպ աճումըն զըստուեց, Ա. նչափ լիրկարս ընթացայ զի արդ անշուշտ իցեմ մերձ.— Ա! ստուածալին լիշտակ զայ իշանէ առ երի,
Եւ լուսկանէ հրձելով ասէ առ իս, «Օ՞ն, արի»:
— Աշխարհս հիւլէ է եւ եթ անբաւութեան յանդիման,
Եւ առ իւրովն լաւիտեամբ դար իսկ է մի լոկ վալրկեան
իսկ հս զոտիւք անդ նորս թէպէտ փոշի ծըլփծըրուն,
Բայց չեմ ընդհատ ինչ լարփից, զի հս խորհուրդ եմ
նորա¹⁷⁾:

¹⁷⁾ Համեմատութեան համար զնումներ պյատեղ այդ համառածի ֆրանսիական բնադիրը.

Comme un homme jugé, condamné sans retour
A ce préceipiter du sommet d'une tour,
Au moment formidable du son pied perd la cime,
D'un cri de desespoir remplit du moins labème.
Comme le voyageur parti dès le matin,
Que ne voit pas encor le terme du chemin,
Trouve le ciel brûlant, le jour long, le sol rude,
Mais fier de ses sueurs et de sa lassitude,
Dit, en voyaut grandir les ambres des cyprès
J'ai marché si longtemps que je dois être près...
Le souvenir de Dieu des cent et vient à moi,
Murmure à mon oreille et me dit: «Leve-toi!».

Եւ թարգմանութեան այդ անլաջողութեան պատճառն այն չէ, որ Խորէնը չի հստկացել բնագիրը, չի քմբոնել նորա հիմնական իմաստը, չի զգացել, չի համակուել բանաստեղծի զգացմունքով, այլ որ նա չի կարողացել հեղինակի հառմոնեաների բանաստեղծական ներդաշնակութիւնը պահպանել և միւնոյն ժամանակ այնպիսի պարզ ու բնական ձևով արտայալտել նոցա վերացական կրօնական փիլիսոփայտական միտքը, որ յատուկ է իրան հեղինակին, որով նա հւնց տարբերւում է միւս բանաստեղծներից: Հմուտ թարգմանը պէտք է ոչ միայն հասկանալ, սիրէ, զգալ թարգմանելիք նիւթը, այլ պէտք է սեփականէ, իւրացնէ և թարգմանելիք բնագրի հեղինակի արտայալտութեան եղանակը: Պաշնակների թարգմանութեան անլաջողութեան, գուցէ, նպաստել է և այն հանգամանքը, որ Խորէնը ցանկացել է բնագրին շատ մօտ թարգմանել, կամ, ինչպէս ինքն տառմ է, բոլորպին զուգակցուել քեզթողի հոգու և մտքի հետ: «Ապաքէն անհրաժեշտ իմն էր այս զուգակցութիւն, ասում է նա այդ մասին իւր թարգմանութեան յառաջարանում, առ բնագրին անվթար հաւատարմութիւն, որ առաջին ի պարմանս է բարոյ թարգմանութեան Մեր ի գոլոն իսկ ջան ի վար արկեալ հաստնել, զամենալ իսկ տողս զաղղիականին ի հաւատարաթիւ ամփոփեցաք անդաման: Եւ լուսամք զի ի լեզու անդ զզգացմունս Քերթողին և զմիտս, աջողեալ իցէ մեզ զգոյշ կալ ի սովորական թերութենէ անտի թարգմանչաց, այլափոխելով ասեմ առատօրէն զձեւ, նա ուրեք զիմաստս ևս զմատենագրին:

Թարգմանիչը, ի հարկէ, չպէտքէ փոխէ հեղինակի իմաստը, բայց չի կարելի պահպանչել, որ նա չփոխէ և բնագրի ձեր, որովհետեւ շատ անդամ մի լեզուի ձեերը լատուկ են միայն այդ լեզուին և նոցա փոխադրեյու, թարգմանելու համար անհրաժեշտ է փոխելը, յարմարեցնելը թարգմանելիք լեզուի ձեերին. նոյնպէս և պէտք է թարգմանելու ժամանակ հաւատարիմ մնայ բնագրին, բայց ծալրալեզ ճշգրիտ և անվթար հաւատարմութիւնը յաճախ կարող է թարգմանութիւնը նիւթական դարձնել և մժնեցնել հեղինակի իմաստը, ինչ-

ալէս որ գաշնակների մէջ շատ տեղ պատահել էլ է:
 Դաշնակների թարգմանութիւնից յետոյ, Խորէ-
 նի և Լամարտինի բարեկամական լարաբերութիւնն ա-
 ւելի մտերմական ընաւորութիւն է ստանում. Նորա
 Լամարտինին հետեւյու, աշակերտ գրուելու հանգա-
 մանքն այդ ժամանակներն ալնպէս ակներեւ է գառնում,
 ալնպէս ամենքի աչքին է զարնում ու ընդհանրանում,
 որ հայ ընթերցողներն այնուհետեւ այլ ևս ուրիշ կերպ
 չեն կոչում Խորէնին, բայց թէ «Լամարտինի որդի» օ-
 տարները — «Հայոց Լամարտին», խոկ ինքը Լամարտինն
 այդ բոլորի փօխարէն իւր հաւատարիմ աշակերտին
 «Հայաստանի լոյս» — l'espérance de l'Arménie մեծ անունն
 է տալի:

Ոսմանտիզմի և Հիւգօյի ազգեցութիւնն ընդհան-
 րապէս և Լամարտինինը մասնաւորապէս երևում է,
 բացի գաշնակների թարգմանութիւնից, և Խորէնի Պա-
 րիզում զրած մի շարք ստանաւորների վերայ, որոնք
 յետոյ նորա Վեննետկում ու Պոլսում զրուածների հետ-
 միասին կազմեցին մի հատոր և հրատարակուեցին Պոլ-
 սում 1868 թուին «Քնար Պանդխանին» խորագրով: Դո-
 քա, Պարիզում զրուած այդ ստանաւորները թէև իւ-
 րեանց արժանաւորութեամբ շատ էլ հեռու չեն գնացել
 վանքում զրուած քններից, թէև դոքա իւրեանց արուես-
 տականութեամբ, փքուածուուածութեամբ, իւրեանց
 անբնականութեամբ, կարելի է ասել, ուղղակի կազմում
 են «Բազմավիպում» տպագրուածների շարունակութիւնը,
 բայց ալնուամիննիւ դոցա մէջ անհատականութեան
 արտադրատութիւնը, քննարերգականի մասը և ընդհան-
 րապէս ուսմանտիզմի տարրն աւելի զօրեղ է, քան թէ
 առաջինների մէջ, Դոցա մէջ, նախ և առաջ, պարզ
 կերպով աչքի է ընկնում այն վիշտը, ալն մեղմ ու նուրբ
 թախիծը, որ Լամարտինին քննարի յատկանիշն է, երկ-
 րորդ, դոցա միծամասնութեան բովանդակութիւնն ընդ-
 հանուրում համարեա թէ միւնոյնն է, ինչ որ Լամար-
 տինի «խորհրդածութիւններինը», երրորդ, դոցա զրու-
 թեան և ստանաւորի կազմութեան արտաքին ձեւն ու
 եղանակը նմանում են Լամարտինի բանաստեղծութիւն-
 ների զրութեան արտաքին ձեւին ու եղանակին և, վեր-

ջապէս, կրօնական տարրի առատութեամբ գոքա համարեան նոյն հառմոնեաներն են: Զանազանութիւնը միայն նիւթի մշակութեան, մտքերի խորհրդաւորութեան և զգացմունքի խորութեան մէջ է:

Լամարտինն իրեւ խոշոր բանաստեղծական տաղանդ, իրեւ վարպետ նկարիչ, իրեւ հարուստ երեւակալութեան տէր կարողացել է իւր նիւթերի մանրամասնութիւններից մի ալնափիսի ամբողջութիւն կազմել, մի ալնափիսի հրաշալի շինուածք յօրինել, որ և՛ գիւրըմբոննելի է, և՛ պարզ, և՛ բնական և՛ գեղեցիկ, իսկ Խորէնը բանաստեղծական միայն մի փոքրիկ քանքարունենալով և խօպառ զրկուած լինելով բնական և անարուեստ լինելու յատկութիւնից, իւր ալդ գրուածներից միայն մի քանիսի մէջ է կարողացել, չե՞նք ասում հասնել, այլ միայն լիշեցնել իւր մեծ ուսուցչին, իսկ մնացեալների, մեծամասնութեան մէջ նա շատ լետ է ընկել. շատ հեռու է մնացել նորանից: Լամարտինը, օրինակի համար, զրել է «Կանգեղն տաճարին», «Ճաղգիշերոյ», «Մարդկութիւն», «Յիշատակ», իսկ Խորէնը — «Առ կանդեղն», «Գիշեր», «Մեծութիւն մարդոյ», «Յիշատակ սիրելեաց» և այլն, ալտինքն երկուսն էլ զըել են մի և նոյն նիւթի վերաբ, բայց որքան տարբերութիւն կալ երկուսի ալդ համարնաբան գրուածների մէջ: Մի տեղ սրտի զեղմունքի, խորհրդաւոր մտքերի և խոր զգացմունքների պարզ, բնական արտայատութիւն, միւս տեղ արուեստականութիւն և միայն արուեստականութիւն: Ալդ տարբերութիւնը, ալդ մեծ զանազանութիւնը մենք կդանենք մինչև անզամ և այն զրուածներում, որոնք ոչ թէ միայն իւրեանց նիւթով ու բնաբանով, այլ և բոյսանդակութեամբ ևս նմանում են Լամարտինի գրուածներին: Առնենք, օրինակի համար, «Թռչունք» ստանաւորը, որի բովանդակութիւնն այնքան նման է Լամարտինի «Ազօթք մանկան զարթուցերոյ» դաշնակին, որ, կտրծես, նորանից առնուած լինի, նորա ընդլայնուածը կամ նմանողութիւնը լինի: Պաշտամկը մի պարզ, սիրուն, զիւրըմբոննելի կաոր է, որ հէնց իւր անմեղ մանկան ազօթքի պարզութեամբ մի գեղեցիկ ներդաշնակութիւն է կազմում, իսկ «Թռչունք»ը

լանգակապութիւն և բառերի կուտակումն է միայն:

Աւելորդ չենք համարում դնել ալստեղ ալգ երկու ոտանաւորներից էլ մի քանի տուն, որից մի կողմից յայտնի կլինի նոցա նմանողութիւնը, միւս կողմից էլ այն բանաստեղծական գերազանցութիւնը, որ ունի գաշնակը Խորէնի երգի վերայ, թէև այն էլ պէտք է ասենք, որ Խորէնի թարգմանութեամբ գժուար է գաղափար կազմել գաշնակի խսկական գեղեցկութեան վերա:

«Ազօթք մանկան զարթուցելոյ». «Թողովնք»

Աստուած իմ, տուր վիժանս
լաղբեւր,
Եւ ճընճըկանց ըզփետուր,
Մանրիկ գառանց գեղմն ըզմա-
քուր,
Զօղ և ըստուեր ի յեղտիւր:
Բժշկութիւն տուր առ հիւանդ,
Առ մուրացիկն՝ հաց յոր լար,
Օրթեւանիկ առ որը տրզար,
Եւ արձակուրդ ոյց ի բանտ:
Տուր բազմածին որդւոց երաստ
Հօր երկիւղած առ ի քէն,
Իմաստ եւ խինդ ինձ տուր աս-
տէն
Զի մայրս իցէ բարեբաստ,
Եւ սըլասցի սիրտ իմ յերկինս,
Հանգոյն խընկոց հեշտավառ,
Զոր քաղցրաբոյր ճօճէ բուրգառ
Ի ձեռս մանկանց իբրև զիս:

Խորէնի Պարիզում գրած ոտանաւորներից իւրեանց բանաստեղծական տարրով, իւրեանց մէջ պարունակուած զգացմունքների տաքութեամբ համեմատաբար արժանի են ուշադրութեան՝ «Օրհնեալ որ սիրեն զհէդ Հայաս-
տան», «Ո՞հ լիշեցէք զՀայաստան», «Տէր, կեցն զՀայաս-
տան», «Հայկազն մօր օրօրք» և «Քնար պանդխտին»
տաղերը, մանաւանդ առաջինը, որ Խորէնը նուիրել է Վիկտոր Հիւզոյին և որ Վիկտոր Լանգլուա հայագէտ

ֆրանսիացին նորա մի քանի ուրիշ երգերի և «Արշակ Բ.» ողբերգութեան հետ միասին թարգմանել է ֆրանսերէն «Benis soient ceux qui aiment la pauvre Arménie» խորագրավ։

Հաչակաւոր Հիւգօյի հետ էլ, ինչպէս Լամարտինի, Խորէնն անձամբ ծանօթացել և մտերմացել է Պարիզում։ Նա նորան էլ, քայի վերոյիշեալ «Օրհնեալ որ սիրեն զհէգ Հայոստան» ստանաւորից, ընծայել է լատկապէս հինգ ընծայականի նպատակով գրուած իւր «Առ Հիւգօ» խորագրով ստանաւորը, որ Պալ իզում գրուած միւս ստանաւորների հետ միասին մտել է «Քնար Պանդխտին» հատորիկի մէջ, ինչպէս որ Լամարտինին ընծայել էր «Առ Լամարտին», որ զետեղուած է դաշնակների թարգմանութեան սկզբում։ Իրեւ ապացոյց ալդպիսի մտերմական յարաբերութեան կարող է ծառայել Հիւգօյի Խորէնին գրած այն նամակը, որ մինչեւ ցայսօր պահպանուել և մեր ձեռքն է հասելու Այդ նշանաւոր նամակը գրուած է Պարիզում 1879 թուի նոյեմբերի 2 ին և, ինչպէս երևում է բովանդակութիւնից, մի պատասխան է Խորէնի նորան ուղղած նամակին։ Հանգուցեալ արքեպիսկոպոսը, ինչպէս երեւում է, 1878 թուին իւր քաղաքական պատուիրակութեան գժուար պաշտօնը կատարելուց յետոյ, հարցրել է իւր ականաւոր բարեկամի կարծիքը «Հայկական խնդրի» կամ Հայոց ազգի մասին և նու էլ պատասխանել է նորան։ «Մենք երկու բանաստեղծ ենք և, ես կուելացնեմ, երկու քահանալ, գրում է տշխարհահոչակ ֆրանսիացին իւր այդ նամակում։ Բայց ձեր բանաստեղծ լինելոն ինձ բաւական է, և մեր երկու ձեռքը կարող են սեղմել միմեանց։ Ձեր նամակը յուզում է ինձ, ձեր եղբարյութիւնը հատուցանում է, փոխարինում է իմս, և ես յայտնում եմ շնորհակալութիւնս։ Այն, ինչ որ գուք հարցնում էք ինձանից Հայաստանի մասին, գուք աւելի քաջ գիտէք, քան թէ ես, բայց ես երջանիկ եմ, որ կարող եմ հաստատել այդ ձեզ։ Այն ազգերը, որոնք իւրեանց աչքերն ուղղած են գէպի անցեալը, պիտի կորչեն, այն ազգերը, որոնք նայում են ապագայն, պէտք է տայրեն։ Հայաստանը թող հետեւ ձեզ, և նա

ոտքը քաղաքակրթութեան ճանապարհի վերալ է գրած։ Իսձ յալտնի է ձեր աշխարհալեցողութեան փամութիւնը։ Ձեր բազդի վսեմութիւնը եւ չափում եմ ձեր մտքի մեծութեամբ։ Դուք հին ցեղերի արիւնը և նոր ցեղերի միտքն ունիք»¹⁸⁾։

Խորէնն իւր Պարիզում գրած բանաստեղծութիւնները տպագրում էր «Մասեաց աղաւնի» ամսագրում, որ սկսել էին Հրատարակել Գ. Ալվազեանը և Ամբրաստիս Գալֆալեանը 1855 թուականից յալտնի ճանիկ Արամեանի տառերով։ Այդ ամսագիրը, որի լիսկատար անունն էր «Մասեաց աղաւնի, աւետարեր Հայերէն-ֆրանսերէն և նպատակ ունէր Հայերին ծանօթացնելու եւրոպացւոց և հաղորդ անելու նոցա եւրոպական քաղաքակրթութեան։ Դա, այդ ամսագիրը շատ նպատառը էր Խորէնի համար, որովհետև լաճախ նորա մէջ թարգմանւում էին ֆրանսերէն և նորա բանաստեղծութիւնները և այդպիսով միջոց էր տրւում ֆրանսիացի գիտ-

¹⁸⁾ Դնում ենք այստեղ այդ հետաքրքրական նամակի բնագիրը, որ տպագրուած է «Արձագանքի» 1893 թուի 6 համարում։

Paris, 20 Novembre 1879

Mon noble confrère, — Nous sommes deux poètes et j'ajoute moi deux prêtres, mais votre qualité de poète me suffit, et nos deux mains peuvent se serrer. Votre lettre m'émeut, votre fraternité éveille la mienne, et je vous remercie.

Ce que vous me demandez sur l'Arménie, vous le savez mieux que moi, mais je suis heureux de vous le confirmer. Les nations, qui regardent le passé doivent disparaître, les nations tournées vers l'avenir doivent vivre. L'Arménie n'a qu'à vous suivre, et elle est dans la voie de la civilisation.

Je connais l'élévation de votre intelligence. Je mesure la grandeur de votre destinée à la grandeur de votre esprit. Vous avez le sang des vieilles races, et l'esprit des races nouvelles.

Նականներին և բանաստեղծներին կարգալ հայ բանաստեղծի գրուածները և իւրեանց կարծիքը յալտնել նոցա մտսին։ Թէև մեզ համար ժամանակակից ֆրանսիացիներից մի քանիսի կարծիքը չի կարող ծառալել իրեւ։ Հիմք Խորէնի բանաստեղծական քանքարը ճշգիւ որոշելու համար, որովհետև նոքա իւրեանց կարծիքը յալտնում էին, հիմնուելով ֆրանսիական թարգմանութեան վերալ և որովհետև այդ կարծիքների մէջ մի մեծ տեղ տրուսծ է, անկասկած, նորութեան, հայասիրութեան ու ֆրանսիական նուրբ քաղաքավարութեան, բայց ալնուամենախիւ դոքա կարող են ծառալել մեզ համար, գո՞նէ, իրեւ մի ընդհանուր չափ, չենք խօսում արդէն այն բանի մասին, որ այդ կարծիքներից մի քանիսն այնքան անկեղծութեան դրոշմ են կրում, որ նորասիրութիւնից և ֆրանսիական նուրբ քաղաքավարութիւնից մի բան աւելի են պարունակում իւրեանց մէջ։ Հայագէտ Դիւլուսիէն Խորէնին «Հայկական Լամարտին» է կոչում, ֆրանսիացի ոչ շատ անլայտ մատենագիր Ռոմէն Կոռնուն Խորէնի ոտանաւորները «Զովաշունչ ու ականակիտ բանաստեղծութիւններ» է անուանում։ Ֆրանսիսցի քերթող Յուլիոս Ռուէտը իւր քերթողական եղբարյակցութիւնն է տուաջարկում նորան։ իտալացի նշանաւոր բանաստեղծ Ալէարդո Ալէարդին նորա հետ մըտերմանալ է ցանկանում, և այլն և այլն։

Մենք շատերից ենք կասկածներ սել և ինքներս էլ կարգալով մեր գրաբառագէտ գրողների քերթուածների հատորիները, շատ անդամ կանգ ենք տոել և մտածել, թէ արդեօք մեր զանազան Զախիջախնեանները, Բագրատունիները, Զիւրմիզները, Խորէնները, Սերովիէ և Տէր-Գարբիէլ Պատկանեանները, Ալամդարեանները և մինչև իսկ Ալիշանները, ճշմարիտ, բանաստեղծ են, թէ զբարառ խրթին ոճեր բանաստեղծութեան դիմակի տակ կուտակող, յանգեր որոնող ու կապող, ախ ու վախելով իւրեանց մտքերի սրօլաստիքականութիւնը ծածկող, առանց սրտի, առանց գաղափարի, առանց խորին զգացմունքի, առանց զօրեղ երևակալութեան, առանց բանաստեղծական պատկերների։ Եւ միշտ եկել ենք այն եղբակացութեան, որ դոցանից ահազին մեծամասնու-

թիւնը, որոնց թւում և վերոլիշեալ Զախջախեանը, Բագրատունին, Եղուարդ Հիւրմիզը, Ալամդարեանցը և Սերովբէ ու Տէր-Գարբիէլ Պատկանեանցները եղել են, եթէ կարելի է այսպէս ասել, միայն գրաբառի բանաստեղծ, այսինքն գրաբառից հնչիւն բառեր, ոճեր քաղող և դոցանից տաղաչափական արուեստով զանազան բովանդակութեամբ տաղեր կազմով, մի խօսքով տաղաչափ և ոչ թէ խկական բանաստեղծ: Ինչ որ վերաբերում է Խորէն Գալֆայեանին և Ղեռնդ Ալիշանին,— արդարութիւնը պահանջում է առել: Որ գոքա այնքան բանաստեղծական աւելն են ունեցել, այնքան սժառած են եղել բանաստեղծական աստուածատուր շնորհքով, որ ուրիշ աւելի նպաստաւոր հանգամանքներում կարող էին կատարեալ բանաստեղծ գուրս գալ և աւելի մեծ արգիւնք ցոլց տալ հայրենի գրտկանութեան քերթողական ճիւղի ասպարիզում, քան թէ որ ցոլց են տուել:

Ցաւն այն է, որ գոքա երկուսն էլ ստացել են վանական սքօլաստիք կրթութիւն, որ սովորաբար կաշկանդում, սահմանափակում է ամեն մի ազատ դատողութիւն, մտքի ազատ արտայալտութիւն, երեակայութեան լայն թռիչք: Սորա վերալ պէտք է աւելացնել և այն, որ գոքա գրել են առհասարակ և մեծ մտավ գրաբառ, որ ոչ պակաս կաշկանդից տարր է եղել մտքի ելեւէջների ազատ արտայալտութեան: Մեզ գորա զէմ կարող են ասել, թէ գոքա եղել են Միիթարեաններ, ուրեմն, և լաւ հայկարան և իւրեանց միտքը գրաբառով ազատ լայտնող: Ոչ, մենք չենք ընդունում, չենք հաւատում գորան: Թող գոքա լաւ հայկարան եղած լինեն, թող գոքա գրաբառն այնքան լաւ իմացած լինեն, որ այդ լեզուով տպատ շարագրելու հարաւորութիւն ունեցած լինեն, այնուամենալինիւ բանաստեղծութիւն գը ընկըու, լորինելու համար հարկաւոր է մի ուրիշ աւելի բան — մտքի սրտաբուխ, ոչ բռնազբօսիկ աբտայալտութիւն, լեզուի կատարելագոյն վարժութիւն, առանց բառեր որոնելու, առանց ոճերի լետելից ընկնելու, առանց բառերի ու ոճերի թանձը կոյտերի մէջ լանգեր որոնելու, որ ձեռք է բերւում միայն մանկական հասակից սովորական խօսակցութեան

վարժութեամբ, առօրեալ կեանքում գործածելի, ականչին ու սրտին ընտել աշխարհիկ կենդանի լեզուի գործածութեամբ։ Դորան ապացուց կարող է լինել հենց այն հանդամանքը, որ Խորէնն ու Ալիշանն իւրեանց աշխարհառով լորինուած բանաստեղծութիւններում միշտ աւելի են բարձրացել ընդհանուր մտկերևութից, աւելի բանաստեղծական քանքոր ու աւելին են ցուց տուել։ Ալիշանի փոքրաթիւ աշխարհարար քերթուածները, ինչպէս, օրինակի համար, «Պատուլն Աւարտլի», «Շուշան Շաւարշանայ», իսկական համով հոտով բանաստեղծութիւն են, Խորէնի «Ստուերք Հայկական»ի շատ կտորները, ինչպէս, օրինակ, «Հուլ մեռնինք», «Հալ ապրինք» մաքուր բանաստեղծական գրուածներ են։

Դեռ Խորէնը մի փոքր բացառութիւն է կազմում, որովհետեւ նա շուտ է թողել վանքը, շուտ է ձգել իւր վրալից կաթողիկ հոգևորականի միտքն ու հոգին կաշկանդող հանդամանքները և ապրել Պարիզի պէս աշխարհահռչակ քաղաքում, որտեղ կեանքն եռ է գալիս իւր բոլոր արտայատութիւններով, որտեղ մեծ ասպարեզ կալ տեսնելու գեղարուեսոր, գեղեցիկը, կենդանի կեանքը, որտեղ միջոց կալ շփուելու իսկական, ազատ գիտութեան ու մտքի ներկայացուցիչների հետ, մտքի փոխանտկութիւն, հաղորդակցութիւն կատարել, ազատ կարդալ, ազատ մտածել, ազատ համակուել։ Նորա ուսուցիչներն էին ֆրանսիացի բանաստեղծները, նորան գեկավարողը, ուղղութիւն տուողը՝ Հրաշալի Լամարտինն իւր «Բաշնակներով», որ մի մմբողջ բանաստեղծական աշխարհ է։ Եւ չնալելով այս բոլորին Խորէնն իսպառ երբէք չանցատուեց իւր վանականութեան յատկութիւններից, երբէք բարձր ի զլուխ չհանդիսացաւ իրքեւ բանաստելծ և որ, զլխաւորն է, երբէք սքոլաստիքականութեան կեղեն իւր վերալից չմերկացաւ, չհանեց։ 16—17 տարուալ վանական կեանքը շատ զօրաւոր կնիք էր գրել նորա թէ մտաւոր և թէ բարուական զարգացման վերալ, նորա ներքին աշխարհը, ըստ ամենալինի, կազմակերպուել էր վանական մթնոլորտում։ Նա, ճիշդ է, երգեց սրտարուխ «Օրհնեալ որ սիրեն զհէգ Հայաստան» և «Հալ մեռնինք», բայց լանգակա-

պեց և շատ չոր ու ցամաք, ախ ու վախով լցուած ու տանաւորներ, նա մինչև անգամ հրատարակեց և մի «Յանգարան», որի մէջ գրաբառի հարուստ գանձերից նա քաղեց, հաւաքեց միայանդ բառեր հեշտութեամբ լանդ գտնելու, հեշտութեամբ ոտանաւոր գրելու համար, Այդ արգէն բանաստեղծութեան կամ բանաստեղծական չափածոյ գրուածների վերալ սխալ հասկացողութիւն ունենալու ամենամեծ նշանն է, քերթուածի վերալ իբրև արուեստական թխուածքի վերալ նայելու պարզ տպացոյցն է:

Գլուխ Ե.

Խորէնի գրական գըսզմունքի արգիւնքը Թէոգոսիալում եղաւ չորս երկի հրատարակութիւն, 1861 թուին նա լոյս ընծալեց «Արշակ Բ.» ողբերգութիւնը, 1863 ին «Արդենիք» կոչուած գրաբառ բանաստեղծութիւնների հաւաքածուն և 1862-ին «Ալաֆրանկա» կատակերգութիւնը և «Յանգարան»-ը կամ «Բառգիրք լանգաց»:

Արշակ Բ.-ի թշուառ թագաւորութեան և եղերական վախճանի նիւթը մեղանում շատերն են եթէ ոչ մշակել, գոնէ, ձգտել մշակել ողբերգութեան համար — Բնշիթաշլեանը, Եմմանուէլ Եսութեանը, Թումբաս Թէրպեանը, բայց, մեր կարծիքով, ոչ մէկը գոցանից այնպիսի լոշողութեամբ չի կատարել այդ գործը, ինչպէս Խորէն Գալֆալեանը: Ողբերգութիւնը, ինչպէս լալտնի է, թատերական գրուածների այն ճիւղն է, որի մէջ հեղինակ՝ պատկերացնում է մեզ մի որեւ է անձի հոգեկան տանհանքը մեր գութը շարժելու համար, մեզ սոխպելու ցաւակցելու, համակրելու նորան: Ամեն մի ողբերգական գործողութիւն առհատարակ մարդու այն չարչարանքը, տանջանքը և մահն է, որ մեր սիրուցնում է արհաւիրքով, սարսափի է ձգում մեր վերալ: Սակայն այդ արհաւիրքը, սարսափը, գութը, համակրութիւնը և ցաւակցութիւնը պէտք է որ լարուցուած

լինի մեր մէջ դէպի չարչարուողն ոչ արտաքին հանգամանքներից, ալ մի գործոզութիւնից կամ շատ գործոզութիւնների ամբողջութիւնից: Դոքա, այդ սարսափնու գումբը յարուցուում են մեր մէջ նա մանաւանդ, երբ որ գործոզութիւնները կատարուում են յանկարծակի և մի գործոզութիւնը լինում է միւսի հետևանքը, արգասիքն անմիջապէս: Ոլլերգական անձի տանջանքն առաջ է գալիս նորա մէջ զլխաւորապէս ներհակ հակումների և պարտականութիւնների մաքառումից—սրտի հակումների և բարոլական պարտականութեան, կամքի և խոհականութեան, կրքերի և խոհականութեան մաքառումներից: Բնական է, որ քանի որ զօրեղ լինի ողբերգական անձի տանջանքի առիթը, որքան խոր հանգամանքներից առաջ եկած լինի նա, ալնքան էլ հետևաբար խոր ու զօրեկ կլինի և մեր ցաւակցութիւնը դէպի նա: Եթէ ողբերգական անձի տանջանքի պատճառուները նորա սեփիհական կրքերից և նորա այդ կրքերի դէմ մաքառելու անկարոզութիւնից կամ թուլութիւնից են առաջ գալիս, մենք, ի հարկէ, աւելի քիչ ենք ցաւակցում, համակրում նորան. եթէ ընդհակառակի, նորա տանջանքի պատճառուները նորա կեանքի ալնպիսի հանգամանքներն են, որոնց դէմ չէր կարող մաքառել նա, չէր կարող կամ լաղթել նազա, կամ խուսափել նոցանից, թէե նա գորա համար ունենար և՝ յօժարութիւն, և՝ կամք, և՝ մաքառելու կարոզութիւն, ալդպիսի մարդուն մենք աւելի ենք համակրում, ցաւակցում: Մեր ցաւակցութիւնն այդ դէպրում նամանաւանդ զօրեղանում է, եթէ հերոսն ի զուր տեղն է տանջուում, չարչարուում, եթէ նա բոլորովին անմեղ է և միայն տանջուում է նախախնամութեան վճռով, կամքով: Յամենայն դէպս ողբերգական անձի մեր մէջ յարուցած համակրութեան տասիճանը սերա կապերով կապուած է տանջանքին, ողբերգական գործոզութեան առիթ եղած հանգամանքների հետ. որքան մէծ և բարձր է այն բարյական օրէնքը, որի համար հերօսը մաքառում է իրան թշնամի և հակառակ բարյական ոլժերի դէմ, ալնքան խոր և զօրեղ է և մեր ցաւակցութիւնը դէպի նա:

Սովորկէսի «Անտիգոնէ» ն ողբերգական անձն է, որովհետև անմահ ողբերգակի ողբերգութեան մէջ նա մեզ ներկալացրած է ինչպէս մի անձն, որ մաքառում է, իւր անձը զոհ է բերում այն բարուական օրէնքի համար, որ հրամայում էր, սուրբ պարտականութիւն էր դնում ամեն մէկի վերայ անթաղ չժողնել իւր արենակցի դիակը, թէև նա գորանով օրինազանց էր գտնուում իւր հալրենիքի առաջ, որ պատուիրում էր հալրենիքի թշնամիների դիակները թաղման, յուզարկաւորութեան շարժանացնել, թէև զորանով նա ներկալանում էր իրեն մի մեծ լանցաւոր, որ չէր կատարում Նրէնսի, թեքացւոց թագաւորի վերոլիշեալ հալրենապաշտպան օրէնքը հրամարակողի հրամանը: Այստեղ, ինչպէս կարելի է տեսնել, երկու մեծ բարուական օրէնք պատահում են միմեւանց և առաջ է գալիս մի սրտաճմիկ ողբերգական գործողութիւն, որի մէջ ողբերգական անձն Անտիգոնէն և՝ մեղաւոր է և անմեղի նա մեղաւոր էր, որ չէլ կատարել իւր հալրենիքի շահները պաշտպանող օրէնքը: Նա թաղել էր իւր սպանուած եղքար դիակը, որ դաւանանել էր հալրենիքին: Նոյն ժամանակ նա և մեղաւոր չէր, որովհետև նա գորանով կատարել էր նոյն հալրենիքի մէջ գորութիւն ունեցող մի ուրիշ սրբազն օրէնք—անպատճառ հողին լանձնելու արենակիցների դիակները: Երկու հակառակ ոյժերի մէջ գրտնուղ, երկու ներհակ ներհակ մների մէջ տանջուող, երկու մեծ ըստոյական օրէնքների ծանրութեան տակ ճնշուող իւր ողբերգական գորութեամբ Անտիգոնէն զօրել կերպով շարժում է մեր գութը, ճմլում է մեր սիրտը և առատ արտասուրք է քամում մեր աչքերից:

«Կորիոլանը»-ը ողբերգական անձն է, որովհետև գտնուում է, տանջուում է երկու հակառակ զգացմունքների, հակառակ հակումների մէջ: մէկը պահանջում էր, որ նա կատարէ իւր վրէժինդրութիւնը Հոսվմից, միւսը ստիպում էր նորան հնազանդել, խոնարհել իւր քաղաքացիական պարտականութիւնների առաջ և տեղի տալ իւր ամուսնու և մօր աղաջանքին, թափանձանքներին: Այստեղ երկու հակառակ սկզբունք բարուապէս մաքառում են միմեանց հետ—ընտանեկան և քաղա-

քացիակտն պարտականութիւնը մաքառում է սեփական անձի արժանաւորութեան դէմ, որ և ստեղծում է մի ողբերգական գրութիւն հերոսի համար, որ նոյնպէս զօրեղ կերպով շարժում է մեր գութը դէպի նա, դէպի հոգեպէս տանջուող, չարչարուող Կորիոլանը:

Եերապիրի Համլէտը նոյնպէս ողբերգական անձն է, որովհետև նորա մէջ գարձեալ մաքառում, մրցում են երկու սկզբունք, երկու զզացմունք-կամքը և գիտակցութիւնը: Դաւաճանութեան զոհ գնացած հօր ձայնը, որ հնչում է նորա ականջին ևանդի աշխարհից» և դրգում, մզում է նորան վրէժինդիր լինելու, մի կողմից ստիպում է նորան սպանել գաւաճանին, միւս կողմից ընդհարւում, կանգ է աւունում մի մեծ արգելքի դէմ: ահ ուելի է թւում նորան գործելիք յանցանքը և միւս կեանքի հատուցումն, որ սպառնում է նորան ապագայում, միշտ կտսեցնում է նորա վճռականութիւնը: Եթէ մենք այս ողբերգութիւնների օրինակով չափելու լինենք Խորէնի «Արշակ» և կամենանք զտնել նորա մէջ մաքուր ողբերգութեան յատուկ բռլոր վերոյիշեալ տարերքը: անկառկած, շատ կողմից պակասաւոր կգտնենք նորան: Ամենազլիսաւոր պակասութիւնը հէնց այն է, որ գորա գլխաւոր հերոսի, Արշակ Բ-ի մէջ, որ ողբերգութեան ողբերգական անձն է, չի երևում սկզբունքների մաքառումն, հակումների, զզացմունքների ներհակաւթիւն, որ ամեն մի մաքուր ողբերգութեան գլխաւոր յատկանիշն է և որից տիրապէս առաջ է զալիս ողբերգական անձի և ողբերգական դրութիւնը: Խորենի ողբերգութեան երկրորդական՝ անձնաւորութիւնների մէջ այդ յատկութիւնը մինչեւ անգամ աւելի շօշափելի է: Շապուհը ստիպուած է լինում լուծանել պարսից այն օրէնքը, որ հրամայում էր Անլուշ-բերգում փակումծներին մինչև մահ մոռանալ, և թուլ է տալիս Պրաստամատափին երթալ տեսնել Արշակին, որ հինգ տարի փակուած էր մահապարտների բերգում, և մինչեւ իսկ կարծ միջոցով ազատել նորան կտպանքներից և հանել բանտից, որովհետև չի կարողանում մերժել այն մարդու խնդիրքը, որ ազատել էր իրան մահից և որին նա խոստացել էր ամեն բան տալու, ինչ որ միայն

նա ցանկանար Շապուհի ալդ գործողութեան մէջ հոգեկան ներհակ զգացմունքների մաքառումն կալ, որովհետեւ մի կողմից նա գժուարանում է քակել Արեաց այն պետական օրէնքը, որ պահանջում էր, որ Անլուշբերդում փակուածներն անսպալման կերպով կտրուած լինեն աշխարհից և կենդանիկնդանի թաղուած ահռելի բանտի խաւարչտին խորքերում, միւս կողմից էլ գրժուարանում է իւր արքայական խօսքը յնտ առնել և ազատցի խնդիրքը մերժել, ճիշտ է ալդ մաքառումը հեղինակը չի մշակել, չի զարգացրել նորա մէջ, որովհետեւ պարսից թագաւորն ոզբերգութեան մէջ միայն երկրորդական անձն է և միայն դուրս է բերուած ողբերգութեան ընդհանուր գործողութինը լրացնելու նպատակով, բայց որ նա հոգեպէս բարուալէս տանչւում, մաքառում է—, ալդ հենց երկում է այն հանգամանքից, որ նա, երբ Քրաստամատն ընկնում է նորա առքերը և թոյլտուութիւն է խնդրում Անլուշերթայու, գժկամակելով, և մինչեւ իսկ բարկանալով առաջ մերժում է, յետոյ արգէն համաձայնում է.—

Ել Քրաստամատ, ինչու զքեզ ալնչափ մոռնաս՝
Որ զանօրին Արշակունին զալդ լիշես.

Թէ չգիտես որ վատն ու պիղծ իւր տնուն

Գատապարտած են ի լաւէժ մոռացօնս

Անլուշ բերգին մէջ մահապարտն որ ընկաւ՝

Այս են օրէնք՝ նա յոշխարհէս է կորած,

Մոռցիր ըզնա և դու, ով քաջ, և խընդըէ

Արժանաւոր շնորհ Արեաց արքալիս:

Քրաստամատ, քեզ ով կուզէ զիմտիալել,

Պէտ չէ ահեղ սըրուդ ելել առաջի.

Եւ ով կուզէ մոզիչ շրիժանց քոց լաղթել,

Թէտ չէ լըսել զառաքինի քո բարբառ:

Պատերազմին մէջ լաղթեցիր թշշնամւոյս,

Եւ արդ ահա և տեսան Արեաց գու լաղթես :

Ա՛ս մատանեոյս հետ և ըզշնորհ զոր խընդըէս

Սա քեզ բանալ Անլուշբերդին փակ գըսներ.

Թող Սասանեանց անլուծելի ալս օրէնք

Ի պատիւ քաջութեան դու ալսօր լուծուի:

Արտի հակումների և բարուական պարտականու-

թեան մաքառումն կայ և Պարսկաստան գերի վարուածու պարսից զօրքի մէջ գտնուած հայ նախարարների. Վահանի, Դրաստամատի և միւսների մէջ, որոնք կոռուում են Պարսից արիւնարբու թշնամի Քուշանաց Արշակունի թագաւորի դէմ: Մի կողմից նոցա անհատական սրտի հակումն մղում է նոցա կատաղարար կոռւելու. Պարսից թշնամիների դէմ և քաջութեան հրաշքներ գործելու, որովհետեւ Շապուհը խոստացել էր ազատել նոցա գերութիւնից և վերագարձնել հայրենիք, եթէ յաղթեն, միւս կողմից նոցա բարոյական պարտականութիւնը դէպի իւրեանց հայրենիքի օգուտները լետ է մղում նոցա ալդ ձեռնարկութիւնից, որովհետեւ նոքա շատ պարզ կերպով զգում են, որ դորանով զօրացնում են հայրել կատաղի թշնամուն Շապուհին և, ընդհակառակը, ինքեանք իւրեանց ձեռքով խորտակում են վերջին Արշակունիներին, Հայոստանի վերջին բարեկամներին ու զօրավիշներին. Քուշաններին: Ալդ հակառակ հակումների բարոյական պարտի և անձնական երջանկութեան զգացմունքի փոխադարձ մաքառումը շատ գեղեցիկ արտաքայտում է վիրաւորուած Վահանի խոսքերի մէջ, որ ի պատասխան Բարգէնին, որ միաթարում էր նորոն, թէ նա իւր քաջութեան համար Շապուհից կվարձատրուի, արտասանում է—.

Եւ ահա, արդ յաղթեցինք իւր թշնամեաց.

Գիտես նա ինչ շահեցաւ ալս յաղթութեամբ—,

Հայոստանի զիսպատրապուա գերութիւն.

Այսօր Շապուհ Քուշաններին կազատի,

Ու անարգել պիտի վազուան որ վազէ

Որ ոտքին տակ առնու բոլոր Հայաստան,

Ու հայրենեաց ազատութեան նշուներ

Համնի մարէ, ու զբազդ հայոց խաւարէ:

— Ո՞վ Տէր, և մենք, հայքու ինքնին եմք ալսօր

Որ պարսկին յաղթող ըրինք ի մեր կորուսու:

Միւս մեծ պակասութիւնը Խորէնի «Արշակ» ի մէջ այն է, որ մենք չենք կարողանում այնպէս համակրել ու ցաւակցել նորա ողբերգական անձին, ինչպէս որ պէտք էր, որովհետեւ զգում ենք, որ նորա, Արշակի ալդ ողբերգական զբութիւնն առաջ է եկել

Նորա սեպհական կըքերից և նորա ալդ կըքերի դէմ մաքառելու անկարողութիւնից ու թուլութիւնից, մենք զգում ենք, որ Արշակը գլխաւորապէս ինքն է մեղաւոր, որ ընկել է ալդ գրութեան մէջ, որ նա ալդ բոլոր պատրաստել է իւր ձեռքերով, իւր սեփական գործողութիւններով եւ, ճշմարիտ, ինչն է իսկապէս ողբերգականն Արշակի գրութեան մէջ—, որ նա զըրկուել է թագից, գահից, բնտանիքից և բերուել շըդթալակալ բանտարկուել է Անյուշ բերդում, որտեղից ազատում չկայ, որտեղ նա ապրում է միւս մահապարտների պէս միայն անասուններին վալել որդում, ուտում է նոցա կերակուրը, հագնում է նոցա շորերը, պառկում է չոր գետնի վերալ, որտեղ ամեն բոպէ անպատճում են նորա մեծութիւնը, փիրաւորում են նորա զգացմունքը, որտեղ մինչև անդամ Ալանողանի պէս մարդիկ համարձակում են խօսիստալ նորա վերայ և որտեղ, վերջապէս, նորան բարոյապէս սպանելու համար, զնում են ի տես նորա սիրելի տիկնոջ Փառանձեմի խրութիւնկը, որին բռնել, սպանել էին պարսիկները, Բայց ովկ է տրել ալդ բոլորը—Նապոհը—ոչ նա միայն օգտուել է ձեռնտու հանգամանքներից, ինքն Արշակը, Արշակն է արել ալդ բոլորը, նա էր, որ իւր մեղմեխ քաղաքականութեամբ կորցրել էր իւր հաւատարմութիւնը թէ պարսից թագաւորի և թէ Բիզանդիոնի կալսեր առաջ:

Ասենք թէ Հայաստանի դրութիւնն Արշակի ժամանակները շատ էլ նպաստաւոր եղած չէ, նորա կացութիւնն երկու մեծ տէրութեան մէջ շատ էլ անվրտանգ չէ եղել նորա թագաւորի համար, բայց և այնպէս Արշակի տեղ ամեն հեռատես, տակտով մարդ կորող էր պատռով գուրս գալ սպառնացող վտանգից, առնուազն չընկնել ալն զրութեան մէջ, որ մեզ պահերացնում է Խորէնի ողբերգութիւնը, նա էր, որ Արշակաւանը շինեց, նա էր, որ խեղդամահ արեց իւր հօրը, նա էր որ Կամսարականների համարեա ամբողջ ցեղը ջնջեց, նա էր, որ սպանել տուեց իւր արենակից Գնէլին, նա էր, որ, հակառակ եկեղեցական օրէնքներին, կութեան առաւ Գնէլի կոնչը Փառանձեմին, որ

թագուհի գառնառու համար, յայտնի բան է ոչ առանց գիտութեան և մասնակցութեան Արշակի, Տէր-Մըջիւնիկի ձեռքով թունաւորեց Ողիմպիադէ թագուհուն: Արշակն էլ, ի հարիէ, ողբերգական անձն է, նա էլ տանջում, չարչարում է հոգեպէս և ֆիզիքապէս և իւր ողբերգական գլուխեամբ շարժում մեր գութը, յարուցանում է մեր մէջ ցաւակցութիւն և համակրութիւն, բայց նորա այդ տանջանքը Անտիգոնէի, Կորիոլանի և Համլէտի տանջանքը չէ, մեր ցաւակցութիւնն ու գութն էլ գէպի չարչարուող, տանջուող Արշակն Անտիգոնէի, Կորիոլանի և Համլէտի ողբերգական դրութեամբ շարժած, յարուցած համակրութեան, ցաւակցութեան և գութի զօրութիւնը չունի:

Մեզ կարող են հականառել, թէ Արշակի գործածները, արածներն ողբերգութեան մէջ չկան, թէ մենք պէտք է գտառղութիւն անենք, քննադատենք միայն այն նիւթը, որ կայ ողբերգութեան մէջ, Ալմ՝ այդ պէս է, բայց միայն ողբերգութեան այն հերոսների զերարերմամբ, որոնց պատմութեան հեղինակն է միայն ինքն ողբերգակը և մենք ամեն բանում միայն նորան պէտք է հաւատանք. իսկ ինչ որ վերարերում է պատմական անձերին, —մենք չենք կարող նոցա կեանքի ու գործունէութեան մասին զատել միայն այն նիւթի հիման վերալ, որ մենք գտնում ենք մէկի գրուածքի մէջ, որովհետեւ այդ անձինք պատմութիւն ունին, որ անտես անել ոչ մի հեղինակ կարար չէ, իրաւոնք չունի: Եւ յետու չի կարելի առել, թէ Խորենի ողբերգութեան մէջ Արշակի Հայաստանում կատարած գործերի մասին ամենսին տեղեկութիւն չկալ: Ճիշգէ, մեր լիշած եղերական գործերը մէկ-մէկ մէջ չեն բերուած, բայց բնդհանուր, շատ ընդհանուր կերպով ակնարկութիւն կալ նոցա մասին: Չորրորդ արարուածում, երբ Դրաստամատը համոզում է Արշակին փոխչելու և իրան թողնելու իւր տեղը բանտում և այդ բանի կարեւորութիւնը մեկնում է նորանով, որ Արշակն աւելի հարկաւոր է Հայաստանին, քան թէ ինքը, Արշակը յուսահատ պատասխանում է. քայլ հարենիք զիս մոռցան»: Աւշագիր ընթերցողը, յայտնի բան է, ինքն իրան կմտածէ թագաւորի այդ խօսքերի վերալ և կհարց-

նէ, թէ բնչու հայրենիքը մոռացաւ Արշակին, և Հետեւապէս նորա մտքում կզարթնեն լիշողութիւններ Արշակի կեանքի ու գործունշութեան մասին Հայաստանում, ուրեմն, և նորա գործած ալն եղերական գործերի մասին, որ մենք վերն լիշեցինք:

Խորէնի «Արշակ»-ը, բայց մեր լիշած այդ գլխաւոր կէտերի պակասութիւնից, որոնք աւելի վերաբերում են ողբերգութեան ներքին բավանգակութեան, Հոգեբանական մասին, պակասաւոր է և իրրե պատմական ողբերգութիւն: Ողբերգակ հեղինակները, ի հարկէ, մինչև անգամ և պատմական նիւթի մշակութեան գործում մի բայտնի աստիճան ազատութիւն են վայելում, բայց այդ ազատութիւնը պէտք է լինի միայն նիւթի մշակութեան մանրամասնութիւններում և ոչ թէ գլխաւոր մասերում կամ կէտերում: Պատմութեան գլխաւոր գէպքերը, պատմական անձանց բնաւորութիւնը, ժամանակակից կեանքի սարք ու կարգը պէտք է ընդհանրապէս ճիշդ լինեն, պէտք է համաձայն լինեն պատմութեան: Զօ չի կարելի պատմական գալլերին գառնուեկներ ձեւացնել և ընդհակառակը, չի կարելի անցեալի պատմական կեանքը ներկայի վերայ չափել, ներկային լարմարեցնել, չի կարելի նոյնպէս անցեալլ ներկայացնել ալնպէս, ինչպէս որ մենք կցանկացինք, որ լինէր, և ոչ թէ այնպէս, որ իսկապէս եղել է Մենք ոչինչ չունինք ասելու, երբ Խորէնը Արշակի և առհամարակ ժամանակակից կեանքի մի քանի մանրամասնութիւններն ալնպէս չի ներկայացնում, ինչպէս որ պատահել կամ եղել է պատմութեան մէջ, ոչինչ չունինք, օրինակի համար, ասելու, երբ նա Գրաստամատին ուղարկում է Անլուշը քերգը ոչ միայն Արշակին տեսնելու և մի օր միայն ուրախացնելու նորան, ինչպէս եղել է իսկապէս, այլ և ազատելու նորան և ինքը նորա տեղ բանտում մնալու, ոչինչ չունինք նոյնպէս, երբ Ալանոզանը գնում է բանտում Վասակի լարգալից խրտուիլակի տեղ Փառանձեմինը, բայց չենք կարող մատնացոյց չանել և սխալ չհամարել այն ընդհանուր ամրաժիրութեան լատկութիւնը, որ Խորէնը վերագրում է հայ իշխաններին: Խորէնն իւր ողբերգութեան մէջ բոլոր հայնախարարներին ներկայացնում է ինչ-

պէտ վերին աստիճանի տիրասէր մարգիկ և մեծ հալբե-
նտսէրնոր. բացի դորանից, նա Նապուհի բերանը դնում
է այնպիսի խօսքեր, որոնք ընդհանրացնելով, այդ տի-
րասիրութեան յատկութիւնը վերադրում են ոչ մէ միայն
ողբերգութեան մէջ գործող հայ իշխաններին, ալլ և
ընդհանրապէս բոլոր հայ իշխաններին։ Առաջին արա-
րուածի վերջում, երբ Նապուհը մինչև անգամ թագ և
ծիրանի խոստանալով Դրաստամատին, չի կարողանում
նորան համոզել, որ նա աւելի վերադրասէ իւր անձնա-
կան շահը, քան թէ իւր թագաւորին մի օրուայ հա-
մար միայն ազատելը շղթալից, հետևեալ խօսքերն է
ուղղում բոլոր հայ իշխանների հասցէին։ —

Երանի՛ ով որ ունի ձեսին ըզնալեր.

Ո՞վ ալսպիսի քաջ ժողովուրդ է տեսեր,

Եւ ուր ալսպէս անձնանուէր իշխաններ:

Հայեր, թէ գուք ինչպէս ըզտէր ձեր սիրէք,

Նոյն սիրով եղալիք գեղբարյ թէ սիրէիք,

Ո՞վ ձեր ահեղ կըրնոր ուժոյն գէմ կենալ,

Ո՞վ կրնար ով լըսել Հայու գոռ անուն,

Եւ ի սըրտին ըըզգալ երկիւղ և սարսուռ։

Մենք ոչինչ չունինք ասելու, որ վերօլիշեալ պատ-
մական անցքերն այնպէս չեն պատմուած, ինչպէս որ
Բուզզանդը ներկայացնում է մեզ իւր արժանի ուշագրու-
թեան պատմութեան մէջ, որովհետև դոքա այնպիսի
պատմական մասնաւոր շեղուժներ են, որոնք չեն վնա-
սում Հայոց պատմութեան էական կէտերին, չեն հա-
կասում նորա ընդհանուր բնաւորութեան — դոքա, այդ
շեղուժները մինչև անգամ հարկաւոր էլ են ողբերգու-
թիւնը զարգաբելու, նորա գործողութիւնը զարգացնե-
լու համար, — բայց չենք կարող թոյլ տալ երկրարդ տե-
սակի շեղուժները, որոնք մասնաւոր չեն, որոնք հա-
կասում են Հայոց պատմութեան ընդհանուր բնաւորու-
թեան։ Հայոց թագաւորներն ունեցել են, ի հարկէ, և
ուրիշ տիրասէր Դրաստամատներ, Վասակ զօրավարներ,
Վահաններ, բայց դոքա անհատներ են միայն եղել, հա-
մեմատելով այն բազմաթիւ ազատների հետ, որոնք ընդ-
հանրապէս տիրասեաց և տիրանենգ են եղել։ Հայոց
բազմաթիւ նախարարութիւնն իւր ամբողջութեամբ իւր

անձնական շահերը միշտ վեր է դասել ընդհանուրից, միշտ փոս է փորել իւր թագաւորի ոտքերի տակ, միշտ ապօտամբել, միշտ զնացել, լարել օտարներին և դորանով մի այնպիսի ցաւալի դրութիւն է ստեղծել, որ Հայոց թագաւորը և դորս հետ միտօին և Հայոց ամբողջ տէրութիւնն երբէք չի ամբացել, կատարելապէտ երբէք չի հաստատուել, ի գուր չեն եղել այն խօսքերը, որ Արշակունեաց վերջին Արտաշիր թագաւորն արտօսաւնել է Վաամի առաջ իւր իշխանների վերաբերութեամբ Շնրաբէս սովոր են ի բնէ թշնամանել գտեարս իւրեանց ըստ նմին օրինակի և ալժմ կամին կատարել զշար կամաց իւրեանց զինդիրս, քանզի միշտ իշխանափոխ լեալ են և տիրատեացք»: Այս, Հայոց իշխանները տիրասէր են եղել, հաւատարիմ են եղել, անշահասէր են եղել, իւրեանց ստացւածքը, իւրեանց բոլոր ազգալին նուիրական աւանդութիւնները, մինչև իսկ իւրեանց կեանքը զոհորերոց են եղել, բայց ոչ իւրեանց հարազատ, բնիկ տէրսը վերաբերմամբ, այլ օտարների: Այդ մեր պատմութեան բնդհանուր բնաւորութիւնն է եղել, այդ մեր մեծամեծների ընդհանուր ազգալին յատկանիչն է եղել և է:

Սակայն եթէ Խորէնի «Արշակուր իւր վերոլիշեալ երեք խոշոր պահասութիւններով չի կարող իսկական ողբերգութիւնների համարուել ու գասուել կլասիքական ողբերգութիւնների շարքը, որոնց ընտիր օրինակների հետ մէնք չենք էլ գտահանում համեմատել նորան, այնուամենայնիւ նա վեր է Հայոց բազմաթիւ թէ նոյն նիւթին վերաբերեալ և թէ առասարակ միւս ողբերգութիւններից շատ շատերից նա աւելի բեմական է, աւելի բանաստեղծական է և, որ գլխաւորն է, նորամէջ պատմական նիւթը համեմատաբար աւելի լաւ է մշակուած, քան թէ մեր միւս ողբերգութիւնների մէջ: Խորէնը, մեր կարծիքով, բաւականին ճիշտ է ըմբռնել Արշակի բնաւորութիւնը. նա նորան ներկայացրել է իրեւ մի գոռող, աննկուն մարդ, որ երբէք չի վհատում, երբէք գուշի չի խոնարհեցնում, որ պատմութիւնը վերագասում է ամեն բանից, որ իւր գործողութիւնների մէջ սխալ, ծուռ բան չի տեսնում, որ ամբողջ

երեսուն տարի իւր փոքրիկ, թոյլ ոյժերով կուռում է՝ Պարսից հզօր թագաւորի դէմ և Շայնքան ինչ աշխատ առնէ զնա» և միայն ընկճուռում, բռնուռում է այն ժամանակ, երբ այլ ևս իսպառ ոյժ չի մնում, երբ ըոլորեքեան թողնում հեռանում են նորանից:

Հոգիւ թէ Արշակն իւր գործած լանցանքների ծանրութեան տակ այնքան մնջուած լինէր, ալնքան տանջուած լինէր հայրասպանութեան խզճի խալթոցից, հազիւ թէ նա այնքան զգացած լինէր իւր Աստուծուց ու եկեղեցուց հեռացած լինելը, որ բոլորովին վհատէր և ինքը սատրաստ լինէր անձամբ իրան մատնել Պարսից ձեւը, ինչպէս նորան ներկալացնում է Բէ շիկթաշլեանը, մասամբ և Էմմանուել Եսայեանը: Անկասկած, նա իւր գործողութիւնների մէջ այնքան ինքնամսուացութեան է հասած եղել, այնքան անձնատուր է եղած եղել իւր կրքերին, որ չի զգացել իւր լանցանքների ծանրութիւնը, չի հասկացել իւր գործողութիւնների ապօրինութիւնը: Նա սպանել է տուել իւր արենակից Գնէլին, իւր հօրը Տիրաննին, որովհետեւ առաջինն եղել ընակութիւն էր հաստատել Ալրարատում, որ Արշակունեաց օրէնքով ապստամբութիւն էր համարւում, իսկ երկրորդը պաշտպանութիւն էր ցոյց տուել նորան. Նա մասնակցել է Ողբմալիադաի թունաւորութեան գործին, որովհետեւ չի սիրում եղել քաղաքական զիտումների շնորհիւ միայն իրան Ծակից եղած ալդ լոյն կոսջը, այլ ընդհակառակը, սիրահարուած է եղել Փառանձեմի վերոյ. նու ջնջել է Կամսարականների ցեղը, որովհետեւ գոքա են եղել ապստամբ նախարարների զլուխը, նախարարների, որոնց ապստամբութիւնն այնքան վնաս հասցրեց տէրութեան և ալին և ալին:

Չպէտք է մռանալ, որ այն ժամանակները բըռնակարութեան դարեր էին և Հայոց թագաւորը միւս բռնակալներից բացառութիւն չէր կազմում. իսկ ըըռնակալների հասկացողութեամբ ամեն բան, որ արգելք էր լինում բանակալի ցանկութեան, կամքին, ալէտք է սրսվ-թրով, թօրոնվ ոչնչանար. աւետարանի քարոզութիւնն էլ Հայաստանում գեռ այնքան ազգեցութիւն չէր արել վարք ու բարքի կոպտութիւնը մեղմացնելու

գործում, որովհետեւ քրիստոնէութիւնն այն ժամանակ-ները դեռ այնքան թոյլ է եղել, այնքան խոր արձատ չէ բռնած եղել Հայերի հոգու ու սրտի մէջ, որ Հայոց թագաւորներն ու մեծամեծները շարունակում են եղել, ըստ ամենալի, հեթանոսական կեանք վարելը:

Որ Ա. շակը խղճի խալթոցներից ընկճում չի եղել, երբ բռնուել է, —այդ երեսում է այն հանգամանքից, որ նա մինչև վերջին բոպէն աշխատել է պաշտպանուել, չընկնել Պարսից ձեռքը, թէ և արդէն ոչ մի լոլու չի մնացած եղել ազատուելու համար. նա մինչև խոկ աշխատել է Ալանոզանին, որ եղել էր նորան բռնելու, իւր կողմը քաշել և այդպէս ազատուել, լիշեցնելով նորան նորան Պարթե լինելը, ուրեմն, և իրան ազգակից և արենակից լինելը. Մեզ կասեն, ապա ինչու համար նա անձնասպանութիւն է գործել, եթէ նա իւր գործած մեզքերի ծանրութիւնից մի տեսակ խելագարութեան հասած չի եղել, և ինչ են նշանակում այն խօսքերը, որ նա սփառցի վերայ գրած հացի գանակն իւր կուրծքը միեւնուց տռաջ արտասանել է — «վայ ինձ Արշա կալ այսպէս և այս և յայտմ շափու և այս ոնցին ընդ իս»: Մենք կասենք, որ այտաեղ խղճի խալթոցը, լանցանքների ծանրութիւնը զործ շունին. Նինդ տարի շարունակ նա փակուած է եղել ահուելի բերգում, հինգ տարի կտրուած է եղել լուս աշխարհից և յանկարծ ազատուել է, ազատ շունչ քաշել, մաքուր օդ ծծել, Բնականապէս Արշակի պէս ազատութիւն սիրող մարդն այլ ևս չէր կարող թոյլ տաք որ նորից զրկեն իրան այդ ազատութիւնից, և աւելի լաւ կհամժամէր վերջ գնել իւր կեանքին և մեանել ազատ, չընկճուած, քան թէ նորից վերադառնալ մուժ Անյուշը, որտեղից այլ ևս ազատութիւն չկար: Խոկ նորա մահից առաջ արտասանած խօսքերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի շատ պարզ լիշողութիւն իւր գլխով անցած գնացած անցքերի, որ սովորաբար մարդիկ լիշում են իւրեանց վերջին, նեզ բուպէներին:

Եթէ մի պակասութիւն կարելի է գտնել ողբերգութեան պատմական նիւթի մշակելու գործում Արշակի բնաւորութիւնն որոշելու վերաբերմամբ, — այդ ան-

կասկած, այն է, որ Խորէն վարդապետը չի օգտուել Բուզանդի պատմած Շապուհի Հողով ու ջրով Արշակին փորձելու դէպքից, որ շատ հետաքրքրական է և կարող է ճշգիւ բնորոշել Արշակի բնաւորութեան մի կարևոր կողմը, որ 'ի նկատի է առել և որից օգտուել է Եսարեանը: Ենապատեհ, գուցէ, չինէր, եթէ ողբերգութեան մէջ տեղ տրուէր և Վասակ Մամիկոնեանին, որ, ինչպէս լայտնի է պատմութիւնից, Արշակի անբաժան բնկերն է եղել նորա բոլոր 34 տարուալ պատերազմներում, նորա աջ թէն է եղել, նորա հետ բռնուել, տարուել է Պարսկաստան և մորթեզերծ լինելով, խըրտուիլակի ձեռվ գրուել է Արշակի բանտում: Այդ փոքրիկ պատմական աւանդական միջնադէպը կըրտցնէր Արշակի բնաւորութեան սահմանը, որովհետեւ Վասակն իւր բնաւորութեամբ շատ նման է եղել Արշակին: Նա նոյնքան գոռոզ, նոյնքան հազար ու աննկուն է եղել, որքան ինքը թագաւորը, և իւր այդ լատկութեամբ միշտ սիրտ է տուել թագաւորին, միշտ վառ է պահել նորա սրտում ազատութեան, անկախութեան հոգին:

Փաւստոս Բաւզանդացին պատմում է, որ երբ Վաստկը ներկայացել է Շապուհին, այս վերջինը սկսել է նախատել նորան, ասելով. «Աղուէս, գու էիր, որ այս չափ լոգնեցրիր մեզ, գու էիր, որ այսքան տարի կոտրեցիր Արեաց քաջերին: Ոյժմ ինչ պատասխան պիտի տաս. աղուէսի մահով պէտք է սպանել տամ քեզ»: Վասակը պատասխանում է, «Ոյժմ գու ինձ անձամբ փոքրիկ ու կարճահասակ անձնելով, չկարողացար իմ անձիս մեծութիւնը ճանաչել, որովհետեւ ես մինչեւ հիմալ քեզ համար առիւծ էի, իսկ այժմ աղուէս եղալու բայց քանի որ ես այն Վասակն էի, ես մի հսկալ էիմէկ ստքս մէկ լերան վերալ էր լինում, միւսը միւս լերան, երբ ընկնում էի աջ ստքիս վերալ, աջ լեառն էր գետինն անցնում, երբ-ձախիս վերալ, ձախն էր գետին անցնում»: Շապուհը հարցնում է, «Չես մեկնիլ արդեօք որոնք են այդ լեռները»: Վասակը պատասխանում է. «Այդ լեռներից մէկը գու էիր, միւսը Յունաց կալորը: Քանի որ ես այժ ունէի, քեզ, կամ Յունաց թագաւորին էի գետին անցնում, որովհետեւ Մեծն ներսիս

օրհնութիւնը մեր վերալ էր և Աստուած մեզ իւր երեսից չէր ձգել. քանի որ մենք նորա խօսքին լսում էինք և ամեն բանում հնագատնդ էինք նորան, գիտէինք քեզ խրատ տալ. այժմ մենք ինքեանքս բաց աչքով ընկանք խորխորատը—, ապա ուրեմն, ինչ ո՞ր կուզես, արա՛:

Եւ Նապուհը հրամալել է մորթեգերծ անել նորան և յարդալից անելով նորա մորթը, տանել գնել նորան Արշակի բանտում ի տես:

Խորէն վարդապետը ձեռնարկելով իւր ողբերգութիւնը զբելու, երկու նպատակ է դրել իրան. նախ, իշեցնել կամ զարթեցնել անցեալի իշշատակն ընթերցողների և ուկեղիրների սրտում, երկրորդ, ներշնչել սէր դէպի հայրենիքը: Եւ ալդ նպատակներին նա կամեցել է հասնել երկու միջոցով՝ իւր հեղինակութեան գրուածքի ձեռով և լեզուով և իւր զրուածքի նիւթի ինքնուրովնութեամբ: Նա իւր ողբերգութեան նիւթն առել է ազգալին պատմութեան հետաքրքրական շրջաններից մէկից, ամբողջ գրուածքն ինքն է ինքնուրովնաբար հեղինակել, առանց մինչև անգամ մի տաղ փոխ առնելու ուրիշներից, գրուածքի մէջ գործ է դրել անլանգ ոտանաւորի մետասանոտեան եռանդամ շափը, թէե մինչև ալդ ժամանակները իւր թարգմանած բազմաթիւ ողբերգութիւնների — Ալֆիէրիի «Սաւուղի», Մասինի «Պօթողիալի», Կոռնէլիի «Պօղիկասոիի», Վալուերի «Զալիքրէի», Առնոլզի «Մարիսուի», Նեքսովիրի «Կեսարի» և Շիլերի «Ստուլարտի» մէջ նա գործ էր զրել Արսէն Բագրատունու տաճարկած քառանդամը, և բոլոր գրուածքը շարագրել է աշխարհաբար լեզուով, որ բոլոր ընթերցողներին էլ հաւասարապէս հասկանալի լինի: Սակայն նա հասել է իւր նպատակին ոչ բոլորամասն և կատարելապէս ձիշզ է, նա իւր առած նիւթի համեմատարար բաւարար մշակութեամբ, ազգասիրական զգացմունքի առատ զեղմունքով, ընտրած ոտանաւորի չափի ներդաշնակութեամբ, գործողութիւնների ողբերգական հանդողցներով ճարտարագրեամբ միմեանց հետ կապտկցելու յատկութեամբ, մտքի, իմաստի ոլորամայ գործածութեամբ, գարձուածների, ոճերի ճարտարամաս-

կան պատկերականութեամբ համակում է մեզ իւր զգացմունքով, իւր խոհերով, իւր մտածողութեամբ, բայց այդ համակումը կատարեալ չէ, բոլորամասն, լիովին չէ, Ընթերցողը, ունկնդիրը համակուելով, նոյն ժամանակ զգում է և մի պահաս, մի թերի կողմ, որ արգելում է նորան բոլորովին անձնատուր լինելու ողբերգութեան տպաւորութեան: Ալդ այն կեղծ-դասականութեան տարրն է, որին Խորէնը հատուցել է իւր պարտքը, որից նո չի կարողացել ազատ մնալ և այդ բուն ժողովրդական, բուն ամբոխի համար գրուած երկում:

Կեղծ-դասականութիւնը Խորէնի ողբերգութեան մէջ արտայալաւում է գործող անձանց ընտրութեամբ և լեզուով: «Արշակ»ի մէջ բոլոր գործող անձինք թագաւորներ, իշխաններ և մեծամիջներ են, կարծես հայերը ժողովուրդ, ամբոխ չեն ունեցել, կամ Հայաստանում միայն իշխաններ են բնակուելիս եղել, իսկ լեզուն կամ, յաւ է առել, լեզուի ոճը բարձր կամ վսեմ կոշուածն է: Թէև, ինչպէս ասացինք, ողբերգութիւնը զրուած է աշխարհաբառ լեզուավ և զործ է ածուած Տաճկահարոց ժամանակի գրական բարբառը, կամ, ինչպէս հեղինակն իւր յառաջարանուած տուում է, Պօլսի լեզուն, բայց նո այնքան խառնուած է գրաբառի հետ, այնքան ինձնողուած է գրաբառ ոճերով, բառերով ու գրածուածներով, զրաբառի հոլովերը, խոնարհմունքը և նախդիրներն այնքան առատութեամբ են զործ զրուած նորա մէջ, որ մի տարօրինակ՝ խառնուրդ է գուրս եկել, որ շատ և շատ ծանրացրել է զրուածքը և, կարելի է առել, միանգամայն անհասկանալի է գարձրել նորան հասարակ ընթերցողների ըմբանողութեան համար:

Խորէնի ողբերգութիւնն եթէ շատ տեղ բանասեղծական չէ, եթէ յաճախ նորա մէջ սին ու սիը. հառաջանքն ու ձայնաբիութիւնները բանում են ջերմ զգացմունքի ու սրտի խոկական բխուածքի տեղ, ալնուամենայնիւ նա իւր ամբողջութեամբ զուրկ չէ մի յայտնի աստիճանի բանսատեղծական զանգուածից ու զգացմունքի տաքութիւնից: Արժանի է ուշադրութեան այդ դէպքում նամանաւանդ չորրորդ արարուածը, որի մէջ մի

քանի կտոր եթէ ոչ բոլորովին բանաստեղծական են, գոնէ, համեմատաբար ազատ են սովորական փքուռծուռածութիւնից, սովորական արուեստականութիւնից: Առնենք, օրինակի համար, այդ արարուածի երրորդ տեսարանի հետևեալ կտորները, որ հեղինակը գրել է Արշակի բերանը.

Դրաստամատ.

Բայց կարեոր խորհուրդ մի, աէր...

Արշակ.

Կարեոր...

Զինչ կարեոր քան ցտնկալին բընութիւն,
Քան ըզպայծառս այս կենսատուր արեգակ...
Քան զայս անբաւ երկնից կամար կապուտակ...
Քան զանպարոյր այս և ազատ հորիզոն...
Քան վեր ու վար այս ծիծաղուն բըլուրներ...
Քան բարձրածայր սաղարթախիտ այս ծառեր...
Քան հեղաճեմ բիւրազափալլ այդ ջըրեր...
Քան զայդ թըռչնոց ուրախաձոյն ճըռուողել...
Քան սուրբ զայս օդ... քան լուսախոտն հովանիս...

Դրաստամատ.

Բայց, աէր արքալ...

Արշակ.

Հինգ տարի է, հինգ տարի
Որ այս աշերս իրբեւ զգկոյր մի թըռուառ,
Կարօտ, կարօտ են արեւուն նշուլից.
Հինգ տարի է այս մաքուր օդ չեմ ծծեր,
Ու սիրտ էմ չէ ընդարձակեր յերկնից տես...
Հինգ տարի է թըռչնոց մի ձայն չեմ լըսեր,
Ու զեփիւռին աերևաշարժ իւըըլտոց,
Ոչ առուակի մի կարկաջիլ հեշտալուր...
Երդթալի՛ ձայն, միայն ահե՛զ շըզթայլի՛
Խառն ընդ ոլլոց և լուսահտոտ արտասուաց
Ականջներս թընդացուցեր են հինգ տարի,
Ու հինգ տարի բիրս իխաւար է բացուեր:

Դրաստամատ.

Կաղաչեմ, Տէր...

Արշակ.

Նայէ, նոյէ լոյդ արծիւ,
Ինչպէս ազատ բացած թևեր ճախրասլաց
Անհռւն երկնից մէջ երջանիկ խոլանալ...
Ալդ իմ հոգին է ազատ լիւր կապանաց.
Սլանալ վակժոլժ լիմ ցանկալին հայտատան...
Արծիւ, բարեւ մի տուր հայոց լեռներուն,
Ասա, Արշակն եմ ես, պըսակըն նոցա.
Թող վերցնեն ըզտիրութեան մըռատլ քօղ.
Հայոց պըսակն և արեգակ կըդառնալ...
Տուր աւետիս, գոչէ Մասիս, ձորք խալտան,
Արշակ ազատ է, թագաւոր է Արշակ...

«Արշակ» ողբերգութիւնն իւր գուրս գալու օրից
մինչև ցալսօր միշտ աւելի է ներկալացուել, քան թէ
մեր միւս բազմաթիւ ժամանակակից ողբերգութիւննե
րը—թէրզեանցի, Հէքիմեանի, Բէշիկթաշլեանի, Դու-
րեանի և միւսներինը: Պորա պատճառը պէտք է որո-
նել այն հանգամանքի մէջ, որ նա աւելի դուրեկան է,
աւելի զեղեցիկ է մի խօսքով նա աւելի բեմական է,
քան թէ միւսները: Մի բան, որ մի առանձին զեղեց-
կութիւն է տալիս նորա գործողութիւններին,— այդ
այն է, որ Խորէնն իւր ողբերգութեան մէջ զետեղել
է երեք երդ, որոնց թէ բառերը և թէ երաժշտութիւնն
ինքն է հեղինակել, երբ առաջին անգամ այդ ողբեր-
գութիւնը ներկայացրել են Խալիքեան գլորոցում աշա-
կերտներն իւր իսկ հեղինակի հսկողութեամբ: Յալտնի
է, որ Խորէնը լաւ երաժիշտ է եղել և իւր երգերից
մի քանիսն նուազն ինքն է լորինել: Նա նուազում է
եղել գաշնամուրի վերայ: Պատմում են, որ երբ երջան-
կալիշատակ Գէօրգ Դ, կաթողիկոսը Պետերուրք գնա-
լիս ժամանել է Մոսկուա, և իջևանել է լալտնի Անա-
նեանի տանը, մի օր հանդիսաւոր ճաշկերովիթ է եղել
ալդտեղ ի պատիւ վեհումանին: Ահա այդ ժամանակ
հանդիսականները շատ խնդրել են Խորէնին: որ, ինչ-
պէս ասել ենք, ուղեկցելիս է եղել կաթուղիկոսին նո-
րա ճանապարհորդութեան ժամանակ, որ նա մի բան
նուազէ, բայց նա հրաժարուել է, պատճառ բերելով

վեհափառի ներկայութիւնը։ Հանգիսականները խնդրել են վեհափառից թուլառութիւն և նա զիջել է, հրամայելով Խորէնին այդ անգամ բացառութիւն անել և կատարել հանգիսականների ցանկութիւնը։ Խորէնը նուագել է և իւր նուագածութեան նրառութեամբ զարմացրել է շատերին, որոնց մէջ և լաւ երաժիշտներ են եղել¹⁹⁾։

¹⁹⁾ Երջանկայիշատակ Գէորգ դ. կաթուղիկոսի Մասկուարաց դաշտու, Անանեանի տանն իջևանելու և առշասարակ մասկուարանակ Հայերի կողմից նորան ցյց տուած կամ արած ընդունելութեան մասին արժէ կարդալ հանգուցեալ Ս. Նազարեանցի մի նամակը, որ նա 1867 թուի հոկտեմբերի 12-ին դրել է իւր նոր նախօնեանցի բարեկամ Գրիգոր Աւալիկիանին։

Աւելորդ չենք համարում բաղուածօրէն՝ մէջ բերել այստեղ պայտ նամակից կաթուղիկոսին վերաբերեալ տողերը։

«Կաթուղիկոսի ընդունելութիւնը ձեր բազարին մեծ արծաթ նստեցաւ, և մեր մոսկուարնակ Հայերիս Մասկուայում ոչ փոքր այսինքն 1000 ման. բայց ընդունելութիւնը շատ հցանապ, զրեմէ կայսերական էր, բոլոր մասնակիցը անխափի, հարուստ և միջակ 25 մանէթ, և բառասուն մարդէ աւելի էր հացկերութեան բազմաթիւնը, որովհետեւ հիւրեր ևս ունենար։ Ճառեր ասուեցան, կաթուղիկոսի կենաց բաժակի վերայ, Եւ ես որոտացի, ի հարկէ ամեններից առաջ իրեւ համարակութեան պատգամաւոր։ Ես ըսլորը մի կողմից եղաւ ի հարկէ մեր ազգային անձը յարգելու, մեր ամօթոցը ծածկելու օտար ռուս ազգի հասարակութեան արջն. բայց թէ կաթուղիկոսը որբան արժանաւոր էր մեր պատուին պայտ պիտոյ չէ ընծութեան տակ ձղել պայտ մասին բոլոր ինելազիների և հասկացողների կարծիքը մի տեսակ է այնպէս, ինչպէս զու զրած ես Եւ մի տղէտ ազգի ընտրածը ինչ պիտի լինի. որպէս ընտրողը, նոյնպէս և նորա ընտրածը Եւ պայտեղ անտեղի է մեր դանցատանը։ Մի անօրինակ անպատշաճ բան պատմեմ ձեղ. կաթուղիկոսը զկնի մեր հաց ու աղով մեծածափ մեծարանընին, հրաւիրած իւր մասքարապահոր, բաղարական զուբեռնառոր և որեր պիլցէյ-մեսորը, բայց մեր հասարակութենէն ոչ մի անձն, ոչ ուսումնական, ոչ վաճառական, ոչ ազնուական և ոչ բահանայ. Ինչպէս հաւանես պյաղիսի ընթացքի. ասես թէ հայոց կաթուղիկոսը մի

Մենք կարծում ենք, որ «Արշակ Բ.» ողբերգութիւնը կարող է տպաւորութիւն թողնել հանդիսական-ների վերալ և յայտնի չափով հասնել այն նպատակին, որ դրեւ է իրան Խորէն վարդապետը, եթէ միայն նա ներկայացուի իւր ամբողջութեամբ, առկաւ յապաւում-ներով ու փոփոխութիւններով միայն Յաւն այն է, որ Հայկական բեմը գորան երրեք չի ներկայացրել ոյնպէս, ինչպէս որ նա գուրու է եկել Հեղինակի զրչի տակից. բեմական արուեստին անհմատ ձեռքեր միշտ, համարեն ամեն ներկայացման ժամանակ այնպէս են նորան ան-դամահատել, փոփոխել, որ բեմի վերալ մնացել է միայն ողբերգութեան խեշերանքը, անկազ տեսարանները, որոնք, ի հարկէ, չէին կարող այն տպաւորութիւնները

Խորհուրդ ունէր առանց Հայոց հասարակութեանը. Կամողիկոսը իւր մարդերով իջևանած էր Յոնանովի տանը և մնաց Պավա-սյուն երկու շարամի բոլոր ծախորերը Յոնանովի բանկից. Կա-մողիկոսի տօնին, որ անցեալ ամսի 30-ին էր, բաւական փա-ռաւոր նախաճաշիկ ունէր նա առ ի Հնորհակալութիւն եկած հասարակութեան համար Նև ես մասնակից էի դորան.

Ամսոյն 3-ին Ճանապարհ ձգեցինք կամողիկոսին գեղի Պետերբուրդ նշյալէս մեծ հանդիսավ. Նա օրշնեց մեզ և մենք նորան. Ելյուրան միայն կարող եմ առել բարեւիրա մարդ է, բայց ուսմանէ ամենաեն զուրկ և հայեացը ըշխարհիս վերաց ամենեն արեւդայական և խաւար. Բայց պահանջել ես կարելի չէ. Շնձել այնուեղ, ուր ոչ որ սերմանած չէ, անդնական է. և մի լուսաւոր կամողիկոս կարող չէ ոչ սունկի պէս ինքն ըստ ինքեան բուսանել երկրից, և ոչ խիկ Ռաստուած պարզի մէջ դրած ուղարկել մեզ երկնրից. մի այցպիսի մարդ պիտի աղջի ձե-ռամբ պատրաստուի. Բայց ո՛ւր է ազդը Աշա թեղ մեր ցաւերի ալդիւրը, կարձ խօսքով. Չայն կայ, որպէս թէ կամողիկոսը ամսուս վերջում կը վերագանայ Պետերբուրդէն դէպի Պառ-կուա և ցամարով ճանապարհ կերանէ գեղի Կովկաս թէ Հայե-րը կամ թէ կայսրը և նախարարը ինչպէս ընդունած են նո-րան և նա ինչ իրաւունքներ իւրեւ կամողիկոս պիտի ստանայ, այդ մասին մինչեւ այս բոպէն ոչինչ տեղեկութիւն չունիմ իմ բարեկամներիցս. ամենայն բերան և զրիչ փակ են որպէս զե-րեզման,

թողնել հանդիսականների վերայ, որ կարող էր անել ողբերգութեան ամբողջութիւնը: Մենք, ի հարկէ, դէմ չենք, որ ներկայացուելիք պիեսների մէջ փոփոխութիւն կամ լապաւումներ արուեն. ամենաընտիր թատերական գրուածների մէջ իսկ նոցա ներկայացնելու ժամանակ անում են այնպիսի փոփոխութիւններ ու լապաւումներ, որոնք այս կամ այն պատճառով անլարմար են համարում տեղին ու հանգամանքին, բայց կարծում ենք, որ այդ փոփոխութիւններն անողները պէտք է լինեն թատերական գրուածներին ու բեմական արուեստին շատ հմուտ մարդիկ, որպէս զի չը մնասուի երկի էական մասը, չսանդարձուի նորա ամբողջութիւնը, չաղաւաղուի նորա իմաստը, որ, ի հարկէ, մեզանում ի նկատի չի տանում:

«Արշակը» հայկական բեմի վերայ միշտ համարեան ներկայացւում է երեք գործողութեամբ. հինգ արտրուածից երկուսը մեծաւ մասամբ յապաւում գուրս են ձգւում, փոքր մասն էլ միացւում է երրորդ արարուածի հետ, որից առաջ է գալիս արարուածների տեղողութեան մէջ անհամաշխափութիւն, տեսարանների մէջ միատեսակութիւն, գործողութիւնների մէջ անհետեականութիւն և միտութիւնն Աւելի ևս ցաւալի է այն հանգամանքը, որ մեր թատերական գործի խեղճութեան պատճառով երբեք չի պատահել, որ «Արշակը» ներկայացնեն, ըստ կարելույն, իւր բոլոր պատմական սարք ու կարգով՝ զգեստներով, զէնքերով. բեմական արդ ու զարգով և առհասարակ ժամանակի հոգուն ու հանգամանքներին վայել հաւատարմութեամբ ու ճշտութեամբ, չենք խօսում արդէն այն բանի մասին, որ մեր մէջ երբեք չի պատահել, որ այդ ողբերգութեան գերերը բաժանուեն, արուեն իսկական արտիստ գերասանների: Փոքր մասով ինսամբ այդ կողմից միայն տարուել է Արշակի գերի վերայ, որ խաղացել են շատ թէ քիչ աչքի ընկնող գերասաններ, իսկ միւս գերերը միշտ համարեան կատարել են նորեկներ, սիրողներ, գերասանական արուեստին՝ անվարժ, անհմուտ մարդիկ, որոնք իւրեանց անհմտութեամբ, շարժուածքի անբնականութեամբ ողբերգութեան ամենալաւ տե-

գերն անգամ վշացրել են, ամենաողբերգական տեսարանների մէջ անգամ շարժել են հանդիսականների ծիծաղը և ողբերգութիւնը կատակերգութեան փոխել:

Յայտնի է, որ մի որևէից թատերական գրուածքից ստանալիք տպաւորութեան չափն ու որակը կախուած է լինում ոչ միայն իւր գրուածքի գրական ու թատերական արժանաւորութիւնից, այլ և նորա ամբողջութիւնից, այսինքն և՝ գրական արժանաւորութիւնից, և՝ բեմական սարք ու կարգից և գրուածքը ներկայացնող կամ սպատկերացնող անսամբլից: Հայոց ողբերգութիւններն ալդ կողմից շատ աննպաստ հանգամանքի մէջ են եղել և են, որովհետեւ նոցա պակասում է վերջին երկու պորմանը և մնում է միայն գրուածքի գրական և թատերական արժանիքը, որից ստացուած տպաւորութեան չափով և որոշում է նորա առաւելութիւնն ու պակասութիւնը:

Գլուխ Զ.

Խորէնի Ակադիանկան» մի հինգ արարուածով կատակերգութիւն է, առնուած Պօլսի Հայոց կեանքից: Այդպիսի խորագրով կատակերգութիւն գըելու միտքը հանգուցեալը լրացել էր տուազին անգամ 1861 մուի երկրորդ կիսում, երբ առիթ էր ունեցել Թէոդոսիալից Պօլսի գնալու և իւր հալրենիք քաղաքում մի քանի ամիս մնալու: Ալդ միջոցում նա տկանատես էր եղել Պօլսի Հայոց բարձր և հարուստ գասակարգի անօրինակ նիստ ու կացին - կոլլ զկուրայն, առանց չարն ու բարին ճանաչելու, Եւրոպացւոց հետևելու վատ սովորութեան, և գուշակել էր դորա վատ հետևանքն ազգային վարք ու բարքի և տառնձնալատկութիւնների վերաբերմամբ: Նա զինուել էր դորա գէմ այն ժամանակ, ըստ կարելուն, ամեն տեղ խօսելով դորա գէմ, հասկացնելով գորանից առաջ գալիք վնասը և մինչև իսկ եկեղեցու բեմից քարոզներ էր խօսել այդ առիթիւ: «Մենք, առում է նա ալդ մասին իւր կատակերգութեան յառաջարանում, որ անցեալ տարւոյն երկրորդ կէսը մեր բնիկ հալրենակցաց, այսինքն Պօլսոյ մէջ

անցնելու բաղդն ունեցանք, աւելի ի մօտով տեսնելով
ու նկատելով այս օտարասիրութեան մեր մէջ ըրած ա-
զետալից ջարգը, մեզի պարուք համարեցանք նոյն որր-
բազան բեմէն զինուիլ այս ազգակործան ախտին գէմ,
նկարագրել նորա հասուցած մեծամեծ վնասները, ու
մեր ազգակից եղբայրները համոզել որ յետո կան ան-
կէց երգուեցնելով զնոսա Անուն աշնորիկ՝ որ զՆայը իբրև
Հայ քրիստոնեայ պիտի գտտէ, և իբր Հայ քրիստոնեալ
պիտի պրոտէ յաւիտենականութեան ամպերուն վրալէնու
Սակայն այդ բոլորը նա բաւական չի համարել, ախտը
շատ վնասագրար է եղել և դորա հասցրած վնասներն
անթիւ ու անհամար, ուստի և նա հարկուոր է հա-
մարել դորա գէմ մաքառելու համար աւելի հատու
սուր գործ ածել, մի կծու կատակերգութեան մէջ ծագ-
րել, խալտառակիել Հայերիս կեանքում առաջ եկած ալդ
վնասակար, այդ անբնական երևոյթը, որովհետև յաւ
է հասկացել, որ յաճախ ծիծաղն ու ծաղրն աւելի մեծ
գեր են կատարում, քան թէ քարոզներն ու լուրջ քըն
նադատութիւնը:

Ալավերդիանկան» իբրև կատակերգական գրուածք
մի առ անձին արժանիք չունի. նորա մէջ զուրս ըերսուած
տիպարները թող և անգոյն զծերով են քաշուած, այն-
պէս որ, կարելի է ասել, նորա մէջ իսկական տիպար-
ներ չկան, այլ անգոյն, անդէմք գործող անձինք, ո-
րոնք մտնում, զուրս են գալիս, խօսում, ծիծաղում,
բարկանում են, բայց բեմից դուրս գալուն պէս մոռաց-
ւում են, անհետանում են մարդու մտքից ու երևա-
կալութիւնից: Պոքա իսկապէս տիպարներ էլ չեն, այլ
տիպարների սիլուետներ: Ալավերդիալի մէջ այն կծու
ծաղը, այն արտառուախառն ծիծաղը չկատ, որ մի ան-
գում կեանքի մի սրելիցէ չար, վնասակար երևոյթ, ի
նկատի առնելով, այնպիսի կնիք է զնում նորտ վերաբ,
որ այլ ևս քերել, հանել նորա վերալից չի կարելի, որ
մի անգում մարդ տեսնելով, լսելով ու կարդալով, այլ
ևս չի մոռանում, մի հանգամանք, որ յատուկ է միայն
զուտ գասական կատակերգութեան: Ալավերդիան բե-
մտկանութիւն էլ չունի. կարճ աեսիլներն անդադար
յաջորդում են միմեանց, աւելի շուտ ոչ թէ լուրջ կա-

տակերգութեան, այլ իբրև Դարսի, զաւշտի տպաւութիւն թողնելով Հանդիսականների վերալ, Գործողութիւնների անբնական կերպով միմեանց հետ կտպակցուելը և գրուածքի նիւթը կազմող Գարսւլաի շինձաւ լինելը, զիտաւորեալ կերպով սարքուած լինելն ամեն բոպէ ընթերցողի աչքին է ընկնում և, որ գլխաւորն է, նորա լարուցած ծիծալլը գործողութիւնների ներքին բովանդակութեան ծիծալելի կերպով սարքուելուց առաջ չի գալիս, այլ արտաքին, պատահական հանգամանքներից, սիսալ շարժմունքներից, խօսակցութեան ձևից, գործածած գաւառաբարբառի լատկութիւնից և այլն, որ և լատուկ է միայն թատերական գրուածների այն տեսակներին, որոնք գրուած են ոչ թէ մի որևէ հասարակական կեանքի վնասակար ախտը ծաղրելու, ոչնչացնելու նպատակով, այլ միայն ընթերցողներին և ունկնդիրներին պարզ, անմեղ, անհոգ զուարճութիւն պատճառելու դիտաւորութեամբ:

Բայց Խորէնի կատակերգութիւնն ունի երկու կարևոր կողմ, որով նա արժանի է լինում մեր Համակրութեան և բռնում է մեր կատակերգութիւնների մէջ իւր արժանաւոր, որոշ տեղոր: Այդ նորա բովանդակութեան այն հետաքրքրական մանրամանութիւնն ու այն Համակրելի գաղափարն է, որ հեղինակը ցօլացնում է իւր երկի մէջ: Ալաֆրանկան, կարելի է ասել, միակ մէծ և փոքր ի շատէ լուրջ կատակերգութիւն է, որ առնուած է Պօլսահայոց մեզ Համար ամեն կողմից շատ հետաքրքրական կեանքից: Մենք ունենք թատերական գրուածներ Թիֆլիսի Հայոց կեանքից, ընդհանուր Խուսահայոց կեանքից և մինչև անգամ այնպիսի գաւառական քաղաքների կեանքից, ինչպիսին են Երևանը, Ալեքսանդրապոլը և միւսները, որոնք շատ թէ քիչ մասով նկարագրում, պատկերտցնում են մեզ մեր զանազան հայաբնակ տեղերի հայկական կեանքի երևոյթները, ներկայացնում են մեզ մեր ներքին ընտանեկան կեանքն իւր սրտամաշ ցաւերով, ախտերով, մեր վիշտն ու ուրախութիւնը, մեր վատ ու լաւ կողմերը, բայց չունենք Պօլսի բազմամբոխ հայութեան ներքին կեան-

քի նկարագիրը գէծ մի որևիցէ տչքի ընկնող թատե-
րական գրուածքի մէջ:

Բնիկ Պօլսեցի հայ, և հարկէ, չկար պօլսաբնակ
Հայերը բոլորեքեան ևս զաղթականներ են մալրերկ-
րից: Տարբերութիւնը միայն նորա մէջ է, որ ոմանք
տուած են գաղթել, ոմանք լետոյ, ոմանք եկել են երկ-
րորդ կամ երրորդ զաղթականութեան տեղերից, ոմանք
էլ անմիջապէս բուն երկրից եւ ալսպէս ահա Տաճկաց
մալրաքաղաքում կազմուել է հայ տարբի երեք տեսակ
համայնք, որսնք բնորոշ գծերով զանազանում են մի-
մեանցից: Հին զաղթականներն արդէն ալնքան ընտե-
լացել են օտար հողին ու ջրին, Հալրենիքից և իւրեանց
Հալրերի ծննդավալրից դուրս ալլրելու հանգամանքնե-
րին, որ մոռացել են իւրեանց զաղթականութեան հան-
գամանքները, նոյն իսկ զաղթական լինելը և սկսել են
իրանց բնիկ Պօլսեցի համարել: Հներից ժամանակով յե-
տոյ եկած զաղթականները թէև զարձեալ բոլորովին
ընտելացել են օտարութեան և ընդունել Հների զարք
ու բարքի շետ և նոցա ալլրելու եղանակը, կեանքի
տարազը, այնուամենայնիւ նոքա գեռ իսպառ կարուած
չեն իւրեանց Հալրենիքից. նոցա հեռաւոր ազգական-
ները գեռ ալլրում են ծովի այն կողմը, այն հեռաւոր
Անատոլում և կամ վիլայէթում. նոքա գեռ լիշում են
իւրեանց Հալրերի գերեզմանները, իւրեանց նուրիսական
տեղերը՝ եկեղեցիները, վանքերը և ուխտատեղիները:
Նոցա լեզուի մէջ գեռ լւում է մալրենի զաւառա-
քարքառը, նոցա սովորութիւնների մէջ գեռ պահպա-
նուել է Հալրենի համեն ու հոտը, մի խօսքով Հալրենիքի
լիշոգութիւնը թէև արգէն կորցրել է նոցա համար
իւր տաքութիւնը, իւր ախոն ու վախը, բայց և ալնպէս
նա գեռ իսպառ չի ջնջուել, չի կորել և չի անհետա-
ցել նոցա մտքից ու երեակալութիւնից: Դոքա զգսե-
ցիներն» են, որոնց վերալ «ներսեցիները» եթէ ոչ թըշ-
նամութեամբ, գոնէ, միշտ խորութիւն անլեռվ են նայ-
ում, միշտ լիշում նոցա դրսեցի լինելը և ընկած տեղը
բանի տեղ չգնում, արհամարհում: Երբորդ համալնքը
բաղկացած է նոր զաղթականներից, որոնց շատերի ըն-
տանիքն էլ գեռ Հալրենիքումն է և որոնց մեծ մասն

եկել է մայրաքաղաք ոչ մշտապէս ալդաեղ ապրելու, առ միայն բազդ որոնելու և ժամանակով նորից վերագառնալու հայրենիք կամ ինչպէս ալժմ սովորութիւն է եղել ասել, «երկիրը», թէև այն էլ պէտք է ասել, որ այդ ժամանակաւոր գրութիւնը շատերի համար դառնում է մշտական և հետզհետէ տեղական մի բան։ Դոքա էլ «խաբա» հայերն են, որոնց մեծամասնութիւնը կազմում են Հայաստանի մշտակները, բեռնակիրները, բանուորները, որոնց, ինչպէս և բոլոր գաւառացի հայերին, ներսեցիները կոչում են «խմբլներ»։

Սլավրանկայի բովանդակութեան ատաղձն առնուած է Պօլսարնակ հայերի երրորդ տեսակի կամ համայնքի այն ընտանիքների կեանքից, որոնք մշտական ընտեկութիւնն են հաստատել մայրաքաղաքում։ Նորա մէջ գուրս էր բերուած երկու Սաղըր-օղլու ազգանունով եղբրոր ընտանիք, որոնցից մէկի անդամները ներկայացրած են իբրև դրական տիպարներ, միւսինը իբրև բացասական։ Առաջին, այսինքն դրական տիպարներ ներկայացնող ընտանիքը, որի գլուխն է Մարգար աղան, ապրում է իւր կնոջ, որդու և աղջկալ հետ Պօլսի բազմահայրացայց գուեհիկ Սամաթիս թագում։ Նա պահել է իւր բոլոր գաւառային առանձնայատկութիւնները — իեզուն, սովորութիւնները, — պարապմունքը, կեանքի տարազը, հագնուել — կապուելու ձեք, մտածմունքը, աշխարհահայտեացքը, պարապմունքը և կեանքի այն բարոյական մաքրութիւնն ու նահապետական պարզութիւնը, որ յատուկ է հայաստանցիներին։ Այդ ընտանիքի անդամները, սկսած ընտանիքի հայր Մարգարից և վերջացրած նորա դստեր փեսացու Եազճ-օղլու Գասպարով, բոլորեքեան էլ այտուրջ, աշխատասեր, բարեպաշտ և խելքը զլսին մարզիկ են։ Մարգար աղման պարապում է ոսկերչութեամբ, հագնում է «եազճ ֆէս, մաշած սէթըի, եամալը խունտուաներ և իւր վերին աստիճանի խնայողութեամբ ու իսելացի անտեսութեամբ կարողանում է անկարօս պահել իւր ընտանիքը։ Գասպար փեսացուն մի աշխատասէր, երկրագործութիւնը մասնագիտօրէն Պարիզում ուսած երիտասարդ է, որ աշխատում է Սան - ստեֆանովի ու Մաքրի գիւղի մէջ գտնուած և Մուհասէպէ-

մի Ալի փաշալին պատկանած մեծ զիֆթիկը վարձել ու մշակել. Մարգարի գուստը Զամբէթան մի համեստ, աշխատասէր և խոնարհ հայ աղջիկ է, որ կապում է «եաշմախ» հագնուում է «դէրաճէ» և պարահանդէսներ ու պարերեկոյթներ լաճախելու փոխարքէն իւր մօր ձեռքի տակ սովորում է տնարարութիւն, ընտելանում է լաւ տուն պահելու տանտիկնութեան արհեստին. որդին Սեթրակը մի այնպիսի ժիր, աչքաբաց հայ տղայ է, որ աւարտել է հայ գալրոցի դասընթացքը, լաւ խօսում է հայերէն, բոլոր շարականները «գոց» գիտէ, սովորել է ճարտասանութիւն, ֆրանսիերէն, լունարէն, անգլիերէն, տաճկերէն, թուարանութիւն, երկրաշափութիւն, հանրահաշշիւ և եռանկիւնաշափութիւն. նա խօսարհ է, մեծերի պատիւը ճանաչում է, հօր արհեստը չի արհամարհում և աշխատում է լաւ մարդ դառնալ. հօրն ու մօրը մխիթարանք լինել և ազգին անարգանք չբերել. նա միտքն է գրել Հասկէօյի գալրոցը մտնել և բժշկականութիւն սովորել և ծնողներին պահել. Սեթրակն արտաքին փալլ չունի, նորտ ձևերը, խօսելու եղանակը կոկուած, լոկուած չեն. նա շատ անգամ փոխանակ բացասական պատասխան տալու, գլուխն է միայն շարժում, խօսելու ժամանակ էլ խօսակցի աչքի մէջն է նայում, որովհետեւ նորտ «պատուելին»—ուսուցիչը սովորեցրել էր նորան. Ըլատուալոր անձի մը հետ խօսելու ժամանակ անոր երեսը նայել .չորս դին նաևելը կոպտութիւն է, վար գետին նայելը կեղծաւորութեան նը շան է։ Երկրորդ, բացասական տիպարներ ներկայացնող ընտանիքը, որի գլուխը Մարգարի աւագ եղբայր Դաւիթ աղան է, առաջնի հակապատկերն է ամեն բանում։ Իտ, այդ ընտանիքը, որ բազկացած է հօրից, որդուց, աղջկանից և ծերունի քեռուց, ապրում է Պօլսի արիստոկրատ Պէլ-օղու թաղում և ծեռքից եկած ամեն միջոցներով աշխատում է հեռանալ հայկական նիստ ու կացից և ամեն բանում հետեւ Եւրոպացոց։ Հայրը, Դաւիթ աղան, որի հանդուցեալ կինը բերել է իբրև հարսնութեան օժիտ իւր մարդուն մեծ կարողութիւն, փոխել է իւր Սաղըր-օղու ազգանունը Սահառունի. նա իւր տունը շինել ու սարքել է երոպական ճաշակով ու ձեռվ.

բազմաթիւ ծառաներ է վարձել, նաև ուստում, խմում է և բոսպացւոց պէս, հագնում և հագնում է իւր զաւակներին եւրոպական տարազով, դաստիարակում է նոցա, իւր զաւակներին Եւրոպացի վարժապետների. զլխաւորապէս Փրանսիացիների ձեռքով և առհասարակ նա իւր արտաքին ու ներքին կենցաղավարութեամբ այն աստիճան ճիզ է թափում նմանել եւրոպացոց, որ, եթէ հնարաւոր լինի, մինչև իսկ օտարքները չ'ճանաչեն էլ, թէ նա հայ է, այլ բնիկ Եւրոպացի ՚Պաւիթ աղան մինչև անգոմ ամբողջ տարրով էլ չի տեսնուում իւր եղբօր և նորա ընտանիքի հետ, որովհետև ամտչում է նորա «խապալութիւնից», իսկ երբ որ եղբայրը և նորա որդին մի անգամ, ամբողջ տարին շտեսնուելուց յետոյ, այցելում են նորան մի կարեւոր գործի համար, նորան ալդ ալնքան գուր չի գալիս, որ վերին աստիճանի սառն ընդունելութիւն է անում նոցա և այդտեղ հէնց տեղն ու տեղը նոցա երեսավն է տալիս նոցա հայկական կոպտութիւնը, նոցա «խապալութիւնը»:

Պաւիթ աղայի որդին, որի Յարութիւն հայ Խապալնունը Սահառունին փոխել է Պասքալ, և գուստը Մասզըսիթը վեց տարի է ինչ դաստիարակուում ու կըթւում են եւրոպացի վարժապետների ձեռքի տակ, բայց բացի Փրանսերէն կատրատելուց՝ պարելուց, լաւ հագնուելուց, ծուռուելուց, պարահանգէները ու երեկոյթները յաճախելուց, դաշնակի վերայ զընդզընդացնելուց, ոչ մի ուրիշ օգտաւէտ գիտութիւն ձեռք չեն բերել Պասքալը մի ինքնասէր արարած է, անընդունակ մի որ և է մտաւոր և Ֆիզիքական աշխատանքի, իսկ Մառգըսիթը մի զարդարուուծ և բարոյալէս արդէն փճացուած պաճուճապատանք, որ Զամբէթայի պէս համարեաթէ չի էլ երեւում բեմի վերայ, այլ միայն նորա ինչ լինելը հասկացւում է ալս կամ այն զսրծող անձի պատմուածքից²⁰⁾:

²⁰⁾ Մառզըսիթի ինչ տեսակ աղջիկ ՚եղածն իմացւում է զլիաւորապէս նորա մի նամակից, որ նա զրում է իւր հօրը Միւսիւ Տիւմալ ֆրանսիացու տանից, ուր հայրն ուղարկել էր նորան մի բանի ժամանակով «ալաֆրանկոյութեան» վարժուածքից²¹⁾:

Բացասական տիպարների հետ միասին ալդ ընտանիքում ապրում է և մի դրական տիպար. գա վերոլի.

Եռ նպատակով, Հետաքրքրական է այդ նամակը, որովհետեւ նորա մէջ արտայցյառուած մոքերը և նկարազրուած ժամանակ անցկացնելու եղանակը մինչեւ ցայսօր էլ գեռ հնացած չեն մեզ համար և մեր արդի բարձր դասակարգի նագելի տիկինների և օրիորդների սովորական աշխարհահայեցրի, ապրելու եղանակի, հազնուելու ու կապուելու տարրազի ձիշտ պատճենն են մի փոքր զանազանութեամբ միայն, որ Մառգորիմն եւր հօքը զըրում է թէ և աղճատ, բայց և այնպէս մայրենի լեզուով, իսկ մեր այժմուայ նազանիները զրում և խօսում են միայն և միայն օտար լեզուով. Fideone! Ինչպէս կարող է հայ կոսկիս լեզուն արտայցյալ նոցա նուրբ զգացմանընթերը...

Եթո հոս առօղջ եմ, աղէկ ըոինա եյլէնմիշ կըլլամ կար Միւսի. Տիւվալին տունը. Րուրոր օրը կիաղանք, կցատկինք, կըպտըտինք. մէկ հօսրով՝ ամէն թիւրիիւ չէնլիք կընենք կոր. զիշերներն ալ զուրս կելլանք ու փիապային վրայ ժուռ կուզանք լուսնկայի լուսով. Ես ալ հոսմի հավաներ, տաճկի թիւրիներ կերգեմ, կամ սորված ֆրանսի ուսմաններս, կամ ժայիսնի օփերայի կտորները կերգեմ կոր, ինչուան կէս զիշերէն երկու երեր սահամ ետքը. Ամէնքը ինձի կհանին ու մէկ բերան իս կդուին կոր. Ամէն օր, ամէն տեղաց Էնվիթասիօններ կուզան կոր ինձի Փրանսըց բավալիէնները կըսեն կոր բի դուն Արմենիէն չիս. Փրանսէց մատմուազէլ մըն ես իս ֆրանսէզի տեղ կդնեն կոր, իմ մանիեռներս պիւթիւնն ալ անշանմէ կնեն կոր. Ես ալ պէտք եղած տեղը բավիրիս կընեմ, պէտք եղած տեղն ալ տէզիէօ տու կընեմ բի պիւթիւն բավալիէններն իրար կանցնին, չեն զիտեր ինչ օմած ընեն ինձի. Անուշ անուշ խօսքերու պիյեէներ շատ, ո՞ր մէկը գրեմ, աղապա, ո՞ր մէկը պատմեմ. Մասկոփի էլ չին, աս իրիկունս Առարէ տանսանտ մը պիտի տայ իր հոս տեղի սարայը՝ պիւթիւն Պէսիիք տէրէյի ու Պէսօզուի մեծ երուն. Ինձի ալ օրերով առաջ չէմ բերնով աղչեց, չէմ տէ մախուս բարթ տէնվիթասին ալ դրկեց լափլամ պիտի երթամ. մախուս տէրօլթէ. Փիսթան մը շինել տուի որ շատ վայլեց ինձի, նոր պըրասուէ և զիւեր բուրօն ալ առի. ինձէ պաշխա բանի մը հայ բիստարի աղջիկներ ալ կան կարծեմ Էնվիթէ եղած. ասոր համար շատ ուրախ եմ, զիրէ անոնք պիւթիւնն ալ փատի կտորի պէս բաներ են. նէ՛ ինձի պէս ցատրել զիտեն, նէ՛ խաղալ, նէ՛ պէտք

շետ ծերունի քեռի Պօղոս աղան է, հանգուցեալ տան-
տիկնոց եղբայրը, որի ձեռքով կատարւում է տան բո-
լոր ծախսը՝ նա շատ է խրատում թէ Սահառունուն և
թէ նորա զաւակներին, որ նոքա ձեռք վեր առնեն ա-
ւելորդ ծախքերից, հասկացնելով, որ իւր քրոջ օժիտն
արգեն վերջացել է և ծախսում է վերջին՝ հանգուցեալի
գոհարեղնի վաճառումից ստացուած 10 հազար դու-
ռուշը, բայց նորան լսող չի լինում և մինչև իսկ նա,
որ համարձակում էր անդադար անհանգիստ անել նոցա
իւր տրաունջներով, իւր «ծերի տուտոցով» խալտառա-
կաբար վանդուամ է տանից, Եւ Սահառունու տան
կեանքը շարունակում է իւր սովորական եղանակով,
փողը ջրի պէս գնում է, տաս հազար դուռուշը շատ
շուտով հալում է... և պարտատէրերը սկսում են դու-
ռը կտրել:

Ի՞նչ պէտք է լինէր գորա վերջը, ուր պէտք է
հասնէր գորա ծալրը: Բնականապէս տունը պէտք է
քալքալուէր և նիւթականապէս, ինչպէս որ նա արգեն
քալքալուէլ էր բարուապէս: Սահառունին տմեն միջոց
գործ է դուռմ վատանգից ազատելու համար իւր անձը,
իւր պատիւր, բայց ոչինչ չի օգնում: Նա դիմում է ի-
րան բարեկամ ձեւացող Յակոբիկ էֆէնդիին, որ միշտ
նորա տանն ուտում, խմում էր և ամեն տեսակ շահ-
ուում էր նորանից, բայց նա փոխանակ օգնելու նո-
րան, սկսում է նորանից պահանջել իւր 27^o դուռուշ
պարտքը, որ նա տարուել էր նորան թղթախաղում:
Նա կամենում է Պասքալին Հասքէօլի բժշկական գլո-
բոցը տար, որ նա կարողանալ իւր աշխատանքով թէ ի-
րան պահել և թէ տունը կառավարել, բայց նա Սեթ-
րակի հետ մրցողական քննութեան ենթարկուելով,
կտրում է և զպրոցից գուրս մնում: Նա աշխատում է
Մառըզուիթին ամուսնացել բժշկական զպրոցի դասա-

եղածին պէս փոլքա, նէ՛ վալս, նէ՛ բանտրըտանս, նէ՛ ուտովա,
նէ՛ մազուրքա, նէ՛ փոլքա մազուրքա, նէ՛ կալօփ, նէ՛ սբոմիլ,
նէ՛ բագրիլ, բոլոր դիտցածնին լանսիէմն է քի բոլոր աշխարհ
պաթալ եղաւ, ասոնք իսէ տահա նոր սորվել են, ան ալ հա-
մալի պէս կիսաղան ու կիսաղան:

տու տօքթօռ Արքար Պէլի հետ, բայց նա նորա կարողութեան «չորսին մէկն» օժիտ է պահանջում, որովհետեւ այն տեսակ պահուած ու դաստիարակուած աղջկան առանց մեծաքանակ օժիտ ստանալու պահելը գժուար է համարում իւր համար. նա մարդ է մէջ ձգում մեծամեծների մօտ, որ մի որ և է պաշտօն տան իրան, բայց ալդ էլ ապարդիւն է լինում և ամենքն երես են դարձնում նորանից:

Ինչ էր մնում անել նորան, եթէ ոչ միայն անձնասպանութիւն գործել և այդպիսով ազատուել այն անուանարկութիւնից և աշխարհի առաջ ծաղը ու ծանսկ, խաղք ու խայտառակ լինելուց, որ սպասում էր նորան, բայց ալդ ևս մասամբ իւր կամքի թուլութեան պատճառով, մասամբ էլ իւր մերձաւորների արթուն հըսկրզութեամբ չի կարողանում իրազործել: Հետաքրքրականն այն է, որ Մարգար աղալի և միւսների հետ միասին Պասքալն էլ աշխատում է հօր անձնասպանութեան առաջն առնել, նորա ձեռքերը բռնել, ատրճանակը ձեռքիցը խլել, բայց ալդ բոլորն անում է նա ոչ նորա համար, որ սիրում է նորան, այլ որովհետեւ այդ անախորժ բան կլինի և, որ զիխաւորն է, ալդ պատճառով նա կարող է զրկուել տեղի ունենալիք «Պալայի» մասնակցութիւնից, որի համար նա մի նոր «ապի» էր պատուիրել ու պատրաստել տուել ֆրանսիացի գերձակ Միրմիդոնին և որ շատ վայելում էր նորան:

Աչա այսպէս սկսում, հետզհետէ առաջ է գնում, զարգանում և կապւում կատակերգութեան գործողութիւնը, որը լուծելու համար ուրիշ ճար չի գտնում հեղինակը, բայց նորանից, որ դիմում է սովորական «Deus ex machina» ներից մէկին: Վիլալէթից զայիս, վրայ է հասնում Սալլը-օղու ընտանիքի ծերունի հայր Մաթոս աղան և Մարգարի ու Պօղոսի հետ միասին վճարելով Սահառունու բոլոր պարտքերը, գուրս է անում Պասքալի խեղկատակ վարժապետներին, վանդում է տան մակարով Յակոբիկ էֆէնդիին և միւսներին, վարում է ձրիտեր խոհարար Մըտոյին. ծառալ Կիրակոսին, Պատքալին էլ հագցնում է Վիլալէթի սարազով հալաւներ

և բոլորին հաւաքում, նորից գտղթում, զնում է «երկիրը»:

Ի՞նչ է այդ բանը, ի՞նչից առաջ եկաւ այդ բոլորը։
Ալաֆրանկան է այդ, Ալաֆրանկայութիւնից տռաջ ե-կաւ այդ բոլորը։ Ի՞նչ է, ուրեմն, Ալաֆրանկան, այս-ֆրանկայութիւնը, որի դէմ զինուում է հեղինակն իւր կատակերգութեամբ։ Ալաֆրանկան Տաճկահալոց պօլսա-րեակ, զմիւոնաբնակ և առհասարակ Թիւքիոյ ծովեզ-րեալ քաղաքներում տպրող հայերի ֆրանկների, ար-սինքն եւրոպացւոց, զլխաւորապէս ֆրանսիացւոց, որոնց ազգեցութիւնը նամանաւանդ զօրեղացել էր Տաճկաս-տանում Պրիմի պատերազմից լետալ, հետևելու, նոցա կեանքով ապրելու, կոլլպկուրայն ընդունելու նոցա կեան-քի ամեն մի մանրամասնութիւնը, առանց յաւի ու վա-տի մէջ խարութիւն անելու, պախարակելի սովորութիւնն էր, որ ոչնչացնելով հայոց կեանքի նահապեատկան պար-զութիւնը։ Նոյն ժամանակ և պատրոստական ուժիւն էլ շատով նոցա եւրոպական կեանքով ապրելու, ձգում էր նոցա մի աներեւակալելի անորոշ, խառնը փնիթոր սթնո-լորտի մէջ և բարոյագէս ու նիւթականապէս սնանկաց-նում էր խեղճ ժողովուրդը։ Ալաֆրանկա Հայլ մոռա-նում էր իւր լեզուն, օրինաւոր կերպով չէր սովորում և օտարինը. Նա փսխում էր իւր զգեստի տարազը, ըն-դունում էր եւրոպական նիստ ու կացը և նոցա տպրե-լու եղանակը և այդ բոլորում ծիծագելի ծալբայեղու-թեան էր հասնում։ Եւ ուրիշ պէս լինել էլ չէր կարող եւրոպայի ազգերը հասել են իւրեանց ներկայ քաղաքա-կրթութեան ոչ մի անդամից, այլ աստիճանաբար, գա-րերի ընթացքում անցնելով զանազան շրջաններից, իսկ Ալաֆրանկա հայերը կամեցել են այդ բանին հասնել միանդամից. Նոքա կամեցել են մի սատիւն անել ու ո-տով-գլխով ընկնել Եւրոպայի գիրկը, որ, ՚ի հարկէ, ան-կարելի բան էր։ Գորս հետևելով ընականապէս եղել է ալն, որ Ալաֆրանկա հայլ մոռացել է իւրը հայկա-կանը, չի կարողացել հասնել և Եւրոպացւուն. Նա, ճիշդ է, ընդունել է եւրոպականութիւնը, բայց այդ ընդու-ներութիւնն եղել է ոչ զիտակցարար, այլ կապկարար-նամանողութեամբ, մի խօսքով հայն ընդունել է եւ բո-

պացու կետնքի միայն արտաքինը, կեղեք և անձեռնշաս
է եղել իւրացնել, սեփականել եւրոպական կեանքի իս-
կական, ներքին խորհուրդը:

Արգեօք Սլավրանկան մեզանում գոյութիւն է ու-
նեցել միայն լիսնական ու վաժմանական թուականնե-
րին Ոչ, Սլավրանկայութիւնը մեր կեանքում միշտ
գոյութիւն է ունեցել, գոյութիւն ունի և ալժմ, գոյ-
ութիւն պիտի ունենալ և ապագայում, եթէ միայն մեր
կեանքի պայմանները չփոխուին: Խնդիրը միայնանուան
ու լոլ ջորջումի մէջ է. լիսնական ու վաժմանականներուա-
կաններին թիւրքիայում նա կոչուել է Սլավրանկա,
Սլավրանկայութիւն, ուրիշ ժամանակներ և ուրիշ
տեղեր նա ուրիշ պէս է կոչուել կամ բոլորովին անուն
չի ունեցել: Մենք յարմար ենք համարում հայերի ալդ
ընդհանուր Սլավրանկայի սովորութիւնը կոչել մի ա-
նունով «կապկարար նմանողութիւն», որովհետեւ դորա
ընդհանուր խորհուրդը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հայերի
անգիտակցաբար, հայերու մէջ արտացոյուող պատկերի
ճշտութեամբ ուրիշի կեանքին հետևելու, նմաններու
ձգուումը, հակամը, որ, ի հարկէ, նոցա պատմական
կեանքի գժրազդ հանգամանքների արգիւնքն է:

Հայն իւր սպատմական կեանքում շատ ազգերի հետ
է գործ ունեցել, շատերի հետ է շփուել, շատերի հետ
քաղաքական, կրօնական և առևտրական յարաբերու-
թիւն ունեցել. բազմաթիւ ազգեր շատ հին ժամանակ-
ներից եկել, բնակութիւն են հաստատել նոյն իսկ Հայ-
աստանում-Ասորեստանցիք, Հրէաներ, Պարթևներ, Բուլ-
ղարներ, Ալաններ, Կասպիացիք, Զինացիք, Խնդիկներ, և
այլն և ալլն: Հայաստանի ալդ բազմատարբութիւնը սա-
կայն, քանի որ գոյութիւն է ունեցել հայոց պետու-
թիւնը, չի վնասել հայն: նա, ընդհակառակը, աւելի
օգուած է բերել, որովհետեւ հայերը թէ իւրեանց թու-
ով և թէ քաղաքական իշխանութեամբ աւելի հզօր են
եղել և ժամանակի ընթացքում կարողացել են տալ նոցա
իրանց լեզուն, կրօնը, սովորութիւնները, կարողացել են
ձուել, միացնել նոցա, օտարազգիներին իւրեանց հետ և
իւրեանց թիւը հետզհետէ ստուարացնել: Բայց երբ որ

Հայը կորցնում է իւր քաղաքական անկատութիւնը և նորա երկիրը դառնում է ասպարէզ բազմաթիւ ազգերի՝ Պարսիկների, Արարացիների, Սելջուկների, Բիւզանդացիների, Թաթարների, Օսմանցիների և միւսների արշաւանքների, նա շատ է վնասում. նա չունենալով քաղաքական զօրութիւն, մի կողմից այլ ևս չի կարողանում այդ տրշաւանքների առաջն առնել, միւս կողմից էլ չի կարողանում մաքառել այդ օտար ազգերի Հայաստանում հաստատուած մասի հետ և ամեն բանում տեղի է տալիս նոցա: Հայերի մի մասը բռնութիւնից և մալր երկրի անապահովութիւնից, թողնում, գաղթում է օտար երկրներ և ենթարկուելով օտարների ազգեցաւթեան, մեծ մասով ժամանակի ընթացքում կորչում, ոչնչանում և ձուլում է ուրիշ ազգերի հետ. մի մասն էլ մնալով իւր երկրում, աշխատում է այնպիսի դիրք բռնել դէպի իշխողները, որ կարողանալ իւր անձը և գոյլքն ազատելի նա աշխատում է այնպէս անել, որ, ըստ կարելոյն, շատ քիչ աչքի ընկնի, և այդ պատճառով էլ սկսում է հոգնուել իշխողների պէս, խօսել իշխողների լեզուով, նիստուկաց անել օտարների եղանակով, օտարների կեանքի տարազով ապրել և մինչև իսկ երբեմն օտարների կրօնական դաւանանքն ընդունել:

Դարերի ընթացքում հայերն այսպէս վարուելով, աչքի ըլսենելու համար իւրեանց ազգալին բոլոր առանձնալատկութիւնները զոհ բերելով, վերջ ի վերջոյ, օտարներին նմանելու այդ սովորութիւնն այնպէս ամբացնում, այնպէս արիւն և մարմին են դարձնում իւրեանց մէջ, որ երբ մի առանձին կարիք էլ չի լինում այդպէս վարուելու, ինչպէս, օրինակի համար, լիսնական և վաթսնական թուականներին Ալաֆրանկա ապրելը, նոքա գարձեալ ձեռք չեն կարողանում քաշել այդ սովորութիւնից, որովհետև դա նոցա մէջ արդէն ազգալին բնորոշ լատկանիշ էր գարձել: Դորս հետևանքը պէտք է համարել այն հանգամանքը, որ հայն ամեն տեղ որ ազգի ու երկրի մէջ և ապրել է, նոյն ազգի ու երկրի ժողովրդի խօսական տիպարն է ներկայացրել: Հայը Պարսիկների մէջ եղել է կատարեալ

Պարսիկ, Տաճկի մէջ—Տաճիկ, Թաթարի մէջ—Թաթար,
Քուրդի մէջ—Քուրդ, Չեքեզի մէջ—Չեքեզ, Հունգա-
րացու մէջ—Հունգարացի, Լեհացու մէջ—Լեհացի, Մալ-
դաւանցուց մէջ—Մալդաւան, Ուլախաց մէջ—Ուլախ,
և ոչ մի տեղ բնիկ հայ իւր բոլոր գոյներով ու տռանձ-
նալատկութիւններով:

Մեր օրերում երը կրթութիւնը բաւականին տա-
րածուել է մեր ազգի մէջ, երբ շատ շատերի աչքերը
բացուել են ճանաչելու չարն ու բարին, երբ ամեն
տարի բազմաթիւ հայ պատանիներ են աւարտում և
մտնում մեր ժողովրդի գոյնազան խաւերի մէջ, ոյտք
էր կարծել, որ այդ դժբաղդ սովորութիւնը, եթէ ոչ
խսպառ վերջացած, գէթ շատ զգալի կերպով պակասած
լինի մեր մէջ: Բայց մենք բոլորովին հակառակն ենք
տեսնում: Կապկարար ուրիշներին նմանելու սովորու-
թիւնը, ընդհակառակը, գնալով զօրանում է և մէծ
ծաւալ է ստանում մեր մէջ, մոռացւում է լեզուն,
հակառակն լաւ, ընտիր սովորութիւնները, ընդունւում
է կոյրգկուրայն, անգիտակցարար ամեն և աւելի
մեծ քանակով վատը, քան թէ լաւը, որ և բարոյապէս
մեծամեծ վնասների պատճառ է լինում մեր հասարա-
կութեան համար: Ու շադրութիւն դարձրէք, հետեւցէք
մեր հարուստ գասակարդի նիստ ու կացին, սովորու-
թիւններին և ապրելու եղանակին, և զուք կարսա-
փէք, տեսնելով վարք ու բարքի այն խառնութիւնը
թիւնը, այն բարեկանեան լեզու ախտունութիւնը, այն
տարօրինակ կոնտրաստները, այն հրէշային աշխարհա-
հայեցողութիւնը, որոնք տիրում են մեր կարագութիւն
ունեցող ընտանիքներում: Ղարաբաղցի «ալեանը», որ
երեկ միայն օլմազով պինդ կապում էր բերանը, այսօր
արդէն իւր զգեստները Ղարիցի ամենալայտնի դերձակի
մօտ է կարել տալիս: Սիսեանի ռէշպէրը, որ նոր միայն
թարաքետմի մորթէ գտակ էր գնում զլիին, այսօր
արդէն ցիլինդր է ծածկում, անզլիական երկար սիւր-
տուկ հազնում, մօնոկլ զնում աչքին, երեկուալ Մշեցի
համալն այսօր արգէն թողած իւր լեզուն, Փրանսերէն
է կոտրատում, և ալին և ալին: Մեր ընակարանները
կրկնալարկ ու եռայարկ են, կարասինները բերել տռած

մալրաքաղաքներից, մեր տներում վիստում են բազմաթիւ սպասաւորներ՝ թուրք, չեղքեզ, իմերէլ, գերմանուհի, ֆրանսուհի, մի խօսքով զանազան ազգութիւնների պատկանեալ «Մրտօներ» և «Կիրակոսներ», մեր երեխաններին գտափարակում են զանազան «Շարըներ», «Ժելասներ», «Պուրիաթօներ», «Ճէրասներ», «Աճքաշներ», — որը պար է սովորեցնում, որը նկարչութիւն, որը ջութակահարութիւն, որը լեզուներ, որոնք բոլորը միասին պատրաստում են մեզ համար մի սերաւնդ, առանց իդէալի, առանց սկզբունքի, ինչպիսին էին «Ալլափրանկալի» Պաուքալը, Մաուզբակթը, Յակոբիկ Լիքնդին և միւսները:

Ի՞նչ գրկութիւն, ի՞նչ ելք կալ մեզ համար դորանից, Մեր մատազ սերնդին հարկաւոր է առողջ, խելացի ընտանեկան գաստիարակութիւն, մեր ծնողներն ինքեանք պէտք է լաճախ փոխարինեն վարձկան ուսուցիչներին, դառնարով իւրեանց զաւակների համար մայրենի լեզուի ու գրականութեան ուսուցիչ, մեզ հարկաւոր է մշտկել, զարգացնել մեր գրականութիւնը, որ նա լրացնէ մեր ընտանեկան գաստիարակութեան պահաը, թերին։ մեզ հարկաւոր է առողջ, լուրջ մամուլ, որ զեկափար հանդիսանալ մեր հասարակութեան կարծիքներին, վերջապէս, մեզ հարկաւոր է հայկական բեմ ինքնուրախն թատերական գրուածների ներկալացումներով։ Մեր երիտասարդները պէտք է անգադար կարդան և իւրեանց մտքում տպաւորնեն այն հրաշալի խօսքերը, որ սորանից շատ տարի առաջ հանգուցեալ Արովեանը քաղցր նուազի պէս հնչեցընել է մեր ականջին։ «Ձեզ եմ ասում, ձեզ՝ Հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անումին մեռնեմ, ձեր արենին զուրբան։ տառը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւասը զալիմ բռնեցէք։» Մեր ծնողները պէտք է զարթեցնեն իւրեանց զաւակների մէջ այն ջերմ սէրը գէպի մալրենի լեզուն, մայրենի գրականութիւնը, գէպի հարազատ լաւ սովորութիւնները, նուիրական աւանդութիւնները, որ մի ժամանակ ստիպել է ոչ բանատեղծ զիտնական հրապարակախօս Ս. Նազարեանցին մի բռոպէ ոգեսորուել, բանաստեղծ դառնալ և քաղցր երգով գրուատել մեր ա-

կանցի և հոգու համար ախարժ և ընտանի մալլենի
խօսքը.—

Մալլենի լեզու, մալլենի բարբառ,
Ախարժ, ընտանի իմ հոգու համար՝
Սուաշիս դու խօսք, ականցիս հասած,
Գու սիրով քաղցրիկ առաջին յօգուտծ,
Մանկական լեզուիս թոթովանոք տկար,
Հընչում ես իմ մէջ դու միշտ անդադար...
— Ոյն տեղ փշում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է, ալո, միւս ալլ ձեւ ու ոճը.
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սըրտի սէրը յալտնել արժան էր,
Իմ երանական մտածութիւնը—
Ապա կը խօսեմ իմ մօրըս խօսքը: ²¹⁾

Եւ երբոր ալս բոլորն ալսպէս լինի, կարճ միջուցում կպատրաստուի մի թէ և փոքրաթիւ, բայց մտքով, մարմնով և ուղղութեամբ մի առազգ սերունդ, որ մեր կեանքում կկատարէ այն «Deus ex machina»-ի զերը, որ «Ալաֆրանկալի» մէջ կատարում է ծերունի Մաթոս աղապան։ Նս խարազանը ձեռքին կմտնէ մեր սուտ եւրոպացի ընտանիքները և գերգասասանները և բացագանչելով «Խէրն անիծեմ էղ ալաֆրանկալին», կ'վանէ կապկարար նմանողութիւնը, անզիտակցարար ընդունած մնասակար խեղկատակութիւնները, միմոսութիւնները։ Նա կմտնէ մեր սուտ ազնուական սալօնները և զարբացած Մաթօսի պէս գոչելով «Չափուխ եխրլըն շուտան» կամ «Հայտէ, քեֆիրեր, եխրլըն շուտան» կ'հայծէ շալլութիւնը, վատնողութիւնը, զեղիսութիւնը, անառակութիւնը, տնբարոյականութիւնը և դոցա սպասաւոր ու ներկայացուցիչ ձրիակեր Մրտօններին, Կիրակոսներին, Միքմիգոններին, Պուավէններին, Շարբիներին, և ժողովելով մեր զանազան և բազմաթիւ Մառդրութիւններին, Պասքալներին ու Սահառունիներին, կը

²¹⁾ Ս. 'Նազարեանցի «Մայրենի լեզու ոտանաւորը, որից մենք հանում ենք այս հատուածը, նմանողութիւն կամ, յաւ է ասել թարգմանութիւն է գերմաներէնից։

Հագցնէ նոցա նախկին տարազը և կտանէ վելայէթը, ալսինքն կմաքրէ, կտարձնէ նոցա նախկին անարատութեան, օրպէս զի նորից նոր, առողջ հիմքի վերալ դնէ նոցա գաստիարակութեան գործը:

ԴԼՈՒԽ Հ.

«Վարդենիք» ը մի փոքրիկ հատորիկ է, որ պարունակում է իւր մէջ **52** հաս ստանաւոր, բաժանուած երեք գրքի և նուիրուած հեղինակից իւր քրոջը նորա հարսանիքի առթիւ: Թէ ինչ խորհուրդ ունի «Վարդենիք» անունը, ինչ բնաւորութիւն ունին նորա մէջ պարունակուած ստանաւորները և առհասարակ ինչպիսի պարագաներում է հրատարակուել ալդ գիրքը, — ալդ բոլորը պարզում է ինքը հեղինակն իւր լառաջսրանում որ կրում է «Առ ընթերցանելիս» խորագիրը: «Վարդենիք» է գրել հեղինակն իւր գրքի անունը, որովհետեւ նա կամեցել է նորան կնքել իւր քրոջ վարդուհի-Աննիկի անունով, որին նա նուիրել է իւր ստանաւորները: Ալդ ստանաւորները, նորա սանելով, գրուած են եղել զանազան ժամանակներում, զանազան գէպքերի առթիւ և բոլորը ևս նուիրուած են եղել հեռուից կամ մօտից պանդուխտ եղքօրից իւր մատազահաս քրոջը: Նոքա ըուլորը ևս ունեցել են զուտ ընտանեկան ընաւորութիւն և յօրինուած են եղել ոչ ընդհանուրի գիտութեան, այլ միայն քրոջ ևս ամենամօտ ազգականների ընթերցանութեան համար, և եթէ հրատարակութեան են յանձնուել և ալդպիսով ընդհանուրի սեփականութիւն գարձել, գորա պատճառն ուրիշ բան չի եղել, եթէ ոչ ուրախալի գէպքը-քրոջ հարսանիքը և բարեկամների թախանձանքը: Ուտանաւորների մէջ երգուած սէրն ոչինչ կապ չունի երկրախին, նիւթական սիրոյ հետ. զա, հեղինակի պարզաբանութեամբ, մի պղտառնական, երկնալին սուրը մէքէ, որ միայն կարող է լինել երկու հարազատի եղքօրը և քրոջ մէջ, որովհետեւ, ինչպէս ասում է ներաշս և ամբողնացին, «Զիք ինչ քաղցր օրպէս զսէր քուեր առ եղբայրն»:

Սակայն մեզ թւում է, որ հեղինակն իւր ալդ մեկ-

նողական յառաջաբանի մէջ շատ էլ անկեղծ չէ։ Մենք
կարծում ենք, որ քրոջ անունն ալդան միայն մի ան-
մեզ դիմակ է, որի տակ ծածկաւելով հոգևորական բա-
նաստեղծը, միջոց է ունեցել արձակ կերպով արտալար-
տելու իւր ներքին հակոմմանը, իւր զգացմունքն իրին
սոսկ մարգ, իրեւ սիրտհար, որ ուրիշ կերպ կարող չէր,
անյարմար էր մի կուսակրօն հոգևորականի։ Հատորիկը
բացւում է մի ստանաւոր ընծայականով, որ կրում է
«Քոյլ իմ» վերնագիրը և որի մէջ հեղինակը գտնում
է իւր քրոջը և նորա միտն է բերում, թէ ինչպէս նա,
երբ զեռ բաժանուած, հեռացած չէին, երբ զեռ միա-
սին էին ապրում, ամեն օր տաւոտեան կանուխ սոյս-
րութիւն ունէր իջնելու պարտէզը և վերադառնալ այն-
տեղից, ծոցը մի վարդի փունջ լեռած։ միտն է բերում
նոյնպէս, թէ ինչպէս նա այդ ժամանակ մօտենալով ի-
րան, սիրու համբուր, էր տալիս և բերած վարդը կախում
էր նորա քնարից։ միտն է բերում, վերջապէս, թէ նա
իւր սպիտակ քողի մէջ այն ժամանակ ալնքան զեղեցիկ
էր, որ նմանում էր ալգի հրեշտակին, լուսը ճակատին,
վարդը ծոցին։ «Ես այն ժամանակ, ասում է նա, չու-
նէի մի այնպիսի բան, որ կարուանալի զօրա փոխարէնը
քեզ վերադարձնել, բացի մի զերմ համբուրից, որ գրոշ-
մում էի քո կուսական ճակտուին, և իմ քնարիս սրաւ-
ուուչ և տիրազգաց զեզգեղանքից, որ հնչեցնում էի
քեզ համար։ Ալմէ, աւելացնում է նա, երբ «Նիմէնը»
պսակում է քեզ, շտապում եմ և ես քեզ մի բան նաևի-
րել. բայց ինչ կարող եմ և ինչ արգեօք աւելի արժան
է, որ տամ քեզ։—

Ի վայր յորմոյն առի զքնար,
Քընար պատեալ ի սուր և ստուեր,
Զփունջ վարդիցդ յեռեալ ի փունջ
Եւ հիւսեցի յոլոր մանեալ,
Եւ առաքեմ քեզ ի պըսակ
Վարդունս ուր զեռ բուրէ քո շունչ
Յօրէ յորմէ քնըր զու զնացիը
Եւ զիմնդ և լուս ընդ քեզ տարար
Պըսակ զօր տալ Նիմէն, ով կուս,
Լուսաբորբօք լակտանց ցոլալ.

Իսկ զոր բերեմ խոնարհ ընծալ
Նողալ և եթ յիմ արտասուս:

Թորան, ալդ ընծալական ստանաւորին հետեւում են մի շաբք զուտ քնարերգական-սիրահարական փոքրիկ սակաւավանկ բանաստեղծութիւններ, սրոնք, պէտք է խօստովոննել, գեղեցիկ են և՝ ձեռով և՝ բովանդակութեամբ և, որ գիտաւորն է, աաք զգացմունք են պարունակում իւրեանց մէջ, զանէ, այն չափով, որ չափով այդ հնար է եղել յայտնել հեղինակին մի մեռած լեզուով: Եւ մենք, հակառակ հեղինակի լույսնած կարծիքին, կասենք, որ գոքա, ալդ բանաստեղծութիւնները չնայելով իւրեանց սաղմոսից առած մակադիրներին, չնայելով նոցա մէջ լաճախ կրկնուող քոյլ և Անիկ բառերին, չնայելով նոցա մէջ վիտոզ կրօնական խորհրդածութիւններին, ոչ մի կապ չօւնին ոչ երկնքի և ոչ Պղաստոնի հետ, որքա արտայալուում են զուտ աշխարհային, մարդկային սերն իւր բոլոր մանրամասնութիւններով, իւր բոլոր ելեէցներով, մարդկալին սրտի բոլոր զգացմունքներով:

Որ ալդ ալդպէս է, որ քոյլ խօսքը միայն մի բարակ շղարշանման դիմակ է, որի տակից ազօտ կերպով երեւում է գրուածքի իսկական գէմքը, որ Անիկ անունը միայն մի թափանցիկ քօղ է, որ իւր միջից զուրս է ցալցնուում իսկականը, էականը, ալդ երեւում է, բացի բանաստեղծութիւնների ընդհանուր ձեից ու բովանդակութիւնից, և այն հանգամանքից, որ հեղինակն ինքն էլ, չնայելով իւր մեկնողական յառաջաբանին, դարձեալ կանկածել է, թէ ընթերցողները կարող են հասկանալ իւր գրուածքի ներքին միտքը և ուրիշ մեկնութիւններ տալ, ուստի և աշխատել է աւելի ևս զարգուրել և հէնց ալդ նախատակով հետեւեալ տողերն է նուիրել ընթերցողներին իւր նոյն յառաջաբանի վերջում, տողեր, որոնք թէե իրեւ սրտի քնարերգական գեղեցիկ զեղմունք շարժում են մեր սիրտը, բայց ամենեին չեն համզում մեզ, - «Ընթերցող զու, - եթէ սուրբ իցէ, ասում է նա, սիրտ քո ի վայրաքարշն կրից, եթէ իցէ և քո քոյլ սիրասուն և վարդափթիթ պարզեեալ քեզ առի լիստուծուլ, քաղցրացուցանել զաւուրց քոյ դառ-

նութիւն, իրրեւ զշուշան ի հովիտս մահու, որպէս առեն գիրք, —և քեզ նուիրէ զաաղքս՝ ոմն համանման քեզ բարեբաստիկ եղբայր, որ զոմտես և եթի ի սրտին զգացմանց ոգեաց աստանօր, և զայն ևս լոլժ տկար քտն զոր զգալին և քան զոր զգալ անշուշտ և քորդ սիրտ եղբայրական: Իսկ և զու, —որոյ առաջի ծաղութուիցի անսուն սուըր և անախտն սիրոյ, և որ՝ զոր ոչն զգաս սրբութեամբ՝ համարես թէ և ալլոց սիրտք անմասն իցեն լերկնատրով բարախմանց անտի եղբայրականն սիրոյ, —թող աղէ և անց, ոչ վասն քո է մտաենիկդ:

Այս էլ գեռ բաւական չհամարելով, վարդապետանաստեղծը, իրրեւ հաստատութիւն և ապացուց իւրասաններին, մէջ է բերում և խտալացի թողմագեցի խօսքերը, որ կամենալով ապացուց տալ, թէ քրոջ և եղբար մէջ եղած սէրը մեծ է և մաքուր, վկալ է բերում Պողոմոնի «Երգ երգոց»-ը, որի մէջ «քուք» և «Հարս» բառերը գործ են ածուած անբաժան միմեանցից:

Սակայն մեզ թւում է, որ ալդ էլ համոզեցուցիչ չէ, որովհետև թէև ճիշդ որ եղբօր և քրոջ մէջ եղած սէրը փոխադարձարար և ջերմ է լինում, բայց ալդ սէրն ոչինչ նմանութիւն, ոչ մի կապ չունի հարսնութեան սիրոյ հետ. դա ազգակցական, արենակցական համակրութիւն է, զա այն փոխադարձ սուըր հակումն է, կամ այն անախտ սիրոյ սուըր կրակն է, որ բնութիւնը վառում է մեր սրաերում դէպի մեր հարազատները մեր ծննդեան հէնց առաջին օրից և, զուցէ, մեր սաղմատին դրութեան սկզբնաւորութիւնից, ինքը Սո. զոմոնի «Երգ երգոց»-ը ևս գեռ մեզ ոճավ ու տեղով լայտնի չէ, թէ իսկապէս ինչ տեսակ գրուածք է: Ճիշտ է, նու մտնում է Աստուածաշնչի կանոնական համարուած գրքերի շարքը և կարդացում եկեղեցում որոշեալ ժամանակներում, ճիշդ է, մեր եկեղեցու հալրերը նորա սիրային բովանդակութիւնը հոգեւոր տեսակէտից, կրօնական մտքով են հասկանում ու մեկնում, բայց գիտականներից շատերը բառացի են հասկանում նորամիտքը և համարում են նորան երբայտական գեղեցիկ վիպասանութիւններից մէկը, ուրիշ ոչինչ:

Ալդ էլ, վերջապէս, բաւական չհամարելով, վարդապէտը գրում է մի ոտանաւոր «Սիրեմ զքեզ» վերնագրով, որի մէջ նա ձգում է բացատրել իւրդէպի քոյրն ունեցած սիրոյ տեսակը, որակը, որպէս զի ալլ ևս ոչ մի կասկած չմնայ, որ իւր քրոջը նուիրած տաղերի մէջ արտայալտուած սէրը սուրբ է, մաքուր է, երկնալին է, և ալլն և ալլն։—

Սիրեմ ոչ ի սէր	Սլլ սիրեմ ի սէր
Որ լոգիս անդ մէր	Որ զհրեշտակս յեթեր
Տենչ և թունդ հրատապ	Վառեալ ընդ միմեանս
Ամբոխ և տագնապ	Սուրբ յաղապատանս,
Յուզէ վեր ի վեր	Կապէ ոգեկեռ
Սիրեմ ոչ ի սէր	Սլլ սիրեմ ի սէր,
Որ կեղեքէ վեր.	Յո զվարդին թերթեր
Որ ըզիսէթ և զահ	Սիրէ սոխակիկ,
Տալ ի սիրս և մահ. —	Եւ յերզս անուշիկ
Ոչ, յայդ ոչ ի սէր.	Մը մընջէ զգիշեր
Սլլ սիրեմ ի սէր,	Սլլ սիրեմ ի սէր,
Զոր փըթթեցոյց Տէր,	Ոչ զաիրտ լընու մէր
Յոր չիք ինչ աչաց	Յըզմալլմունս անճառ.
Ծածկել քօդազդեց	Իբր ըզսուրբ տաճար
Ի խորչ և ըստուեր.	Խընկոց ի ճենճեր:

Թողնելով մի կրոմ այն հանգամանքը, որ ալդ տողերով շատ գժուար է օրոշել, թէ ինչ տեսակ սէր է, որ տածում է հեղինակը դէպի իւր քոյրը, որովհետեւ ալդ ոտանաւորի բառերի կուտակման ընդհանուր իմաստի մէջ կարել է երկնալին և երկրային սիրոյ մէջ եղած սահմանը, մենք մատնացոյց կանենք միալն մի քանի կէտերի վերայ, որոնցից յալտնի կիխնի, որ հեղինակի սէրն էլ հենց այն տեսակին է պատկանում, որով սիրում են հասարակ մահկանացուները, նախ, սիրոյ ամեն տեսակն էլ, լինի դա երկնալին, թէ երկրային, յուզում է մէր մէջ «տենդ և թունդ հրատապ», որովհետեւ եթէ այդպէս չիներ, սէր էլ չէր լինիլ. սիրահարները, որ տեսակին էլ պատկանեն դոքա, ամենքն էլ ցանկանում են իւրեանց սիրոյ առարկային մօտ լինել, միշտ տեսնել նորան, միշտ հրճուել, զմալլել նորա տեսութեամբ, միշտ լսել նորա ձախնը: Բնական է,

ուրեմն, կարծել, որ նոցա, սիրահարների մէջ ալդ ժամանակ մի բան կատարւում է, նոցա հոգին յուզւում է, սիրաը տրոփում և ամրադջ էսով իւնան առլցւում է մի տեսակ քաղցրութեան, հեշտութեան ախորժելի զգացմունքով, որ ոչ այլ ին, և, եթէ, ոչ նոյն իսկ տենչը կոմ հրատապ թունդը Երկրորդ, թէ անախտ և թէ երկրային սովորական ուրբ փթթւեցրել է մարգուս մէջ ինքը Տէրը, որովհետեւ քրիստոնէտական հասկացողութեամբ երկրային սէրն էլ այնքան սուրբ է, որքան երկնադինը, նա օրհնուած է եկեղեցուց և ընութեան անյեղի օրէնքի հիման վերալ օրհնուած ու սրբագործուած է թէ մարգկային և թէ աստուածային օրէնքներով, Երրորդ, եթէ երկնադին, մաքուր, անախտ սէրը կտրիք չունի ծածկուելու, թաքչելու մութ անկիւններում, ստուերներում, նամանաւանդ և աւելի ևս կարիք չունի ամաչելու, մաքչելու մութ խորչերում սովորական սէրը, ոչ պլատանականը: Մէնք չենք հասկանում, օրինուկի համար, թէ ինչու համար պիտի թաքչեն մարգկանցից և իւրեանց սէրը ծածուկ պահեն և միայն արտայալտեն խորչերում երկու սիրահարներ որոնք ուխտել, հաստատ իսուք են կապել, թէ Սսունծոյ և թէ մարգկանց առաջ ամուսնութեան սուրբ կապերով զաւգաւորուելու միմեանց հետ. չէ որ թաքչելու, պահուելու սովորութիւն ունի միայն ապօրինի, միայն պառնկական սէրը, որի մասին, յալտնի բան է, ալսաեղ իսուք չի կարող լինել: Չորրորդ, վարդի և սոխակի սէրը, որին նմանեցնում և որի հետ համեմատում է իւր սէրը հեղինակը, մեր կարծիքով, հէնց ամենապարզ ապացուցն է, որ նա իւր սիրով առարկային սիրում է նոյն իսկ սիրով, որով ամեն մի մահկանացու սիրում և ցանկանում է փոխազարձարար սիրուել, որովհետեւ հէնց ալդ հրաշալի ծաղկի և գերօրինակ երգչի սէրն է, որ մարգկութեան մէջ համարւում է սիրահարների էմբլեմը և որ ալլարանօրէն գովարանում են երկու սիրող սրտի հոգեկան կապակցութիւնն երգող, գրուատող բոլոր ազգերի բանասեղծները: Սիրող պատահին հէնց սիրում է իւր նազելի սիրուհուն, ինչորեւ որ սիրում է վաղորդեան ցօղով փթթած վարդի թեր-

թերը սիրահար սոխակը, նա էլ նուիրում է իւր պաշտելիին իւր սրտի բոլոր զեղմունքը, իւր հոգու ըոլոր զդացմունքը, իւր տենչը, իւր բաղձանքը, իւր խոհերն ու մրմունջներն օր ու գիշեր, ինչպէս օր սոխակը հնչեցնում է ի պատիւ վարդին իւր հրաշալի գայլալիկը վարդ ալդամատն արշալուի ծագելուց մինչև վաղորդալն արեգի ճառագայթելը:

Մենք, ի հարկէ, դէմ չենք, որ եղբօր և քրոջ փոխադարձարար գէպի միմեանց տածած սէրը ջերմագինս արտայտուի, գէմ չենք մինչև անգամ, որ այդ սուրբ եղբայրական սէրը գրուատուի և երգուի բանաստեղծօրէն տաղերի մէջ, եթէ միայն այդ եղբայրը կամ քոյը բանաստեղծական շնորհը ունին, բայց անպատման գէմ ենք և անբնական ենք իսկ համարում, որ այդպիսի սուրբ սիրով գրուատիքը Հեշտասիրութեան, Երոտիքականի հասցրած աստիճանով ու չափով արծարծուի: Որ եղբայրը կհամարձակուի գովարանել և երդի նիւթ շինել իւր պարկեշտասուն «քրոջ քնքուշ իրանը», «վարդագակած այտերը», «սիրակած աշքերը», «պայծալանջը», «ձինամժուր ուլու», «վափիկիկ ծոցը», և այն և այլն, ինչպէս այդ արել է Խորէն վարդապետը: Ով, վերջապէս, կհամարձակուի երանի տալ հայրենի տան և լարկին, որ տեսել է իւր քրոջ մերկ մարմինը, ինչպէս մի տեղ «Քոյրն հրեշտակաց» տալի մէջ թուլ է տուել իրան անել մեր բանաստեղծը: —

Ո՞վ մեր լարկաց երանի
Զի զքեզ զիտեն հոլանի,
Որժոց, ծառոց երանի,
Որ գանգ անոյշդ տան ձայնի:

Զէ, ինչ օր ուզում են, թաղ ասեն: «Վարդենիք»-ը այն չէ, ինչ օր մինչև ցալսօր համարուել է մեր գրականութեան մէջ և ինչպէս օր կամեցել է նորան ներկալացնել Խորէն վարդապետը: Նա զուտ սիրահարական բանաստեղծութիւնների մի հաւաքածու է, իսկ ինքը Խորէնը մի սիրահար երգիշ աշխարհալին մտքով, ուրիշ ոչինչ:

Դէհ, մենք չենք էլ հասկանում ինչ առիթ է ու-

նեցել վարդապետն ամեն տեսակ աշխատելու, ամեն միջոցի գիմելու, կամ, ինչպէս ասւում է, կաշուից գուրս գալու քողարկելու իւր գրուածքի իսկական կերպարանքը. միթէ բանաստեղծօրէն մի բան երգելը, գովարանելը նշանակում է նոյն իսկ կեանքում իրազործելը, նոյնը գործով կատարելը: Դիցուք, նա քաշութէ և իւր վարդապետական աստիճանից և աշխատել է ապացոյց տալ, որ, ինչ որ ինքն երգել է, բոլորը սուրբ է, երկնալին է, անախտ է, հոգեոր մտքով է, բայց զորահամար բաւական էր միայն լուսածարանում բացատրութիւն տալը և ոչ գիմելն այնպիսի միջոցների, որոնց կարմիր գերձանով կարկատած լինելն ընկնում է ամեն մի ուշադիր ընթերցողի աշքին: Խորէնն ալդ գէպքում առողջինը չէ մեր գրականութեան մէջ և վերջինն էլ չի լինելու, որ ինքը հոգեորական լինելով, աշխարհալինի լիսեից է եղել, աշխարհը չի մոռացել, ինչպէս որ պահանջում է գարերի ընթացքում սրբագործուած վարդապետական կեանքի ճգնաւորական խսութիւնը: Ահա և մեր միջնադարեան բանաստեղծութեան պարագլուխներից մէկը - Յովհաննէս Թէկուրանցին, որ կուսակրօն հոգեորական լինելով հանգերձ, գեղեցիկ ժողովական վարդառն լեզուով սիրահարական տաղեր է երգել և թողել մեզ ժառանգութիւն:

Յատանի է, որ մի որ և է գրական երկի մէջ արտացոլում է գոյն իսկ երկի հեղինակի լիակատար պատկերը, այնպէս որ կարդալով մի որ և է երկ, կարելի է բանախ շատ ճիշտ եղբակացութիւն անել նորահեղինակի մտաւոր և հոգեկան կարողութիւնների մասին, կարելի է իմանալ, թէ հեղինակն ինչ հակումների, ինչ ձգտումների, ինչ զգացմունքների տեր է, թէ ինչ խոհեր ու բազանքներ են ոգելորում նորան, ինչ աստղ է առաջնորդում նորան, վերջապէս, կարելի է իմանալ նորա բարուականը, նորա ներքին աշխարհը, և այն և այն: Այս տեսակէտից նայելով «Ա.արդենիք» ի վերայ, մենք կարող ենք համարեա թէ առանց սիսալուելու առել, որ գա Խորէնի ներքին աշխարհի ամենաճիշդ պատկերն է, որի մէջ, ինչպէս ջինջ հալելու մէջ, ցոլում է վարդապետի ամբողջ թաքուն աշխարհը: «Ա.արդե-

նիք»-ը Խորէնի մտքերի, ցանկութիւնների, զգացմաւնք-ների մարմնացումն է, մենք աւելին կասենք, զա հէնց ինքը Խորէնն է իւր բոլոր պակասութիւններով ու առաւելութիւններով, իւր բոլոր սրբութեամբ ու մեզաւորութեամբ, իւր բոլոր մարդկալին թուլութիւններով և իւր մէջ վառուող, բորբոքուող աստուածային կայծով ու կրակով:

Խորէնը, ինչպէս առաջ նկատել ենք, ծնուած շի եղել հօգեսորական լինելու համար, բայց հանգամանք-ների բերմամբ կուակրօն է գարձել Ալդ պատճառով հէնց սկզբից նորա մէջ առաջ է եկել մի տեսակ երկուորութիւնն նորա ներքինը, բնական հակումը միշտ ձգտել է գէպի երկրալինը, միշտ վազել է աշխարհի յետելից, իսկ արտաքինը, հօգեսոր կոչումը ստիպել է նորան սլանալ գէպի երկինք. նորա ներքինը միշտ վարդագոյն է եղել, միշտ սրտի արտիումն, միշտ լոյզ, միշտ սէր է երազել, երգել, ցանկացել, արտաքինը միշտ սաղմօսել, միշտ վաթաթօնել սև վերարկուի մէջ: Եւ գրանից, ալդ երկուորութիւնից նորա մէջ առաջ է եկել երկու ներհակ զգացմունքի մաքառաւմն՝ պարտականութեան և սրտի հակումի, որ ստեղծել է նորա համար մի սրտամաշ ողբերգական զբութիւն, որ նորան տանջել, չարչարել և թունաւորել է նորա ամբողջ կեանքը. գրանից է, որ նորա երգերը բոլորը լաց են լինում, բոլորը հեծում, տիսուր, վշտահար հառաջներ արձակում. չկայ լոյզ, չկայ պայծառ ապագայ, ալ գերեզման, սասը, մութը գերեզման:

Իզուր չէ, որ Խորէնն իւր «բաժին իմ» ստանաւորում ամենատիսուր և սպասոր կերպով է ներկայացնում իւր վիճակը կամ բաժինը, հակադրելով նորան իւր սիրուհու պայծառ և ուրախալից վիճակին ու բաժնին «իմ բաժինն է, ասում է նա, նմանել իւր բունից կրտսուած և ցուրտ հօգմերից ալս ու ալն կողմ, մի վշտից գէպի միւսը վարուած աերեկիկին. իմ բաժինն է նմանել մի եղէցնիկի, որ բանում է մեռեալ լճի տղմօս տիփին և անդադար երերում ու ծըփծըփում է. իմ բաժինն է նմանել մի ամուլ գաշտի, որ միշտ մնում է տրտում, խոպան, օրտեղ չի բանում ոչ մի դալար ա-

րօտ, որ ուրախացնէր ռւզեւորի հոգին. իմ բաժինն է լինել, ինչպէս մէնիկ ըստն, որ անդուշը մ սղում ու ողբում է, որ գիշեր ու ց'րեկ մնան, հեծում է, մահ կրելով սրտում: Եւ յուսո՞հու բառերգի սկը, վերջ ի վերջոյ, ջախջախում, փշրամ է իւր օքու որ և «ստուերապատ» քնարը և դարս հ'ամ ճիս ու մուստուպատառ է անում իւր սիրար, որով հ'ամ ով և ևս յու և միսիթարութիւն չի մնաւմ նորան ալս աշամընմ, ալլ ևս լոյս, ալկես լոյզ չի սպասում նորան ալս կեանքում:

Ալլ ևս ինչու համար ես, ով քնար, սղում է նա իւր «Քնար պանդխտին» ոստանաւորում, եթէ զու խեղճ պանդխտին չես միտիթարում, եթէ զու չես կարգանում անդոյս սրտին մի որ և է յոյս տալի Քո թելերը, որոնք թրթուում էին հրճուանքի ջերմ զեփիւուվ, ալժմ աչքի ցօղով տամկացած սօսիների ոստերի պէս կախուած են լուս. նորա լոկի կախուած են, մինչ իմ սիրտս փախերկում է, ինչ պէս ալէկոծ ծովը, մինչ իմ շրջուուքս սարսաելով, մահաշունչ հառաջանք է արձոկում, մինչ ոչ որ իմ յուսահատ սղրիս սիրավառ սփոփիչ չի լինում: Ապա ինչու համար հաւատարիմ պանդխտուը քեզ ձգեց իւր ուսը, թողեց բոլոր տղեկեղ վալելքները և միայն քո, քո վերալ լոյսը գրեց. ինչու համար, ուրեմն, նա քեզ սիտի գրիէ, եթէ զու բօլորսվին անզգալ ես նորա բորբուած սրտի հանգէալ. ինչու համար նա իւր անսխտ շրթուունքով քեզ սիտի համբուրէ, քանի որ զու նորա դէմ կանգնած ես ցուրտ ու յուս, ինչպէս համը գերեզմանաքարը: Դեռ գերեզմանի քարն ալնպէս լուս չէ, ալնպէս անխիրտ չէ. նորա յուսապատար լուսթիւնը խօսում է յուսահատ սրտի հետ... Ահա ալս պատճառով, ուխտազրուժ քնար, թողնում է քեզ և պանդխտը, ինչպէս վերջին լոյսը. գնա՛, փշրուիք, և զարնուելով քարի, փշի, և արձագանդ տուր նորա սրտին. գնա՛, փշրուիք և ցնդուիք ալն կողմերը, որտեղ ցան ու ցիր են եղել նորա սրտի պատառ ները. գնա՛, փշրուիք և զու մեռիք, ինչպէս հէգ պանդխտի սիրտը:

ծիշդ է, Խորէնն աշխատել է իւր մէջ մաքառող վերոյիշեալ երկու ներհակ զգացմունքը հաշաեցնել մի-

մեանց հետ — թող վառուի կրակը, թող բորբոքուի կայծը, միայն որ նա ուրիշի, օտարի աշքին շընկնի, այլ մոխ-
րի տակ պլալալ, ուեւ վերարկուի տակ ցոլալ, — բայց այդ
նորան չի յաջողել: Առաջ է եկել «Լարդենիք» ը, որ
իւր արտաքին կեզեռով վեղարը դլիսին, ուեւ վերարկուն
հազին սազմոսարանն ու առէր ովորժեանն ձեռքին վար-
դագեա Խորէնն է, իսկ ներքին բովանդակութեամբ աշ-
խարհը սիրող, գեղեցիկն ու վսիմն երգող, ուերը զբուա-
տող բանաստեղծ Խորէնն է:

Գլուխ Ը.

Խորէնի զբական պարագմունքի արդիւնքը Պօլսում
լինում են բազմաթիւ գրուածներ, սրոնցից մի մասը
տպագրուած, ցրուած են 64—92 թուականների ընթաց-
քում Պօլսում հրատարակուած հայ պարբերականների
էջերում, մի մասը մնացել է անտիպ և նորա մահից
յետու բոլոր նորա միւս թղթերի հետ միասին անցել
է նորա եզրօք Գուիդոն Լուսինեանին, որ այժմ տպ-
րում է Պարիզում, երրորդ ժամը զահ է գնացել Ենթայի
մեծ Հրդեհին և, վերջապէս, շարրօրդ մասը հար հրատա-
րակուել է ասունձին գրքովիներով:

Խորէնի հայ պարբերականներում իբրև լրագրական
լոգուածներ հրատարակուած գրուածներից արժանի է
առանձին ուշագրութեան Համերոսի «լիլիականի» տռա-
ջին երդի թարգմանութիւնը, որ նա 1881 թուին պար-
բերաբար հատուած հատուած թարգմանելով, տպագրել
է «Մասիս» լրագրում, որ այն ժամանակներն ամենօ-
րեալ թերթ էր: «Քրաբարեան և աշխարհաբան»
կուլների ամենատաք ժամանակն էր: Խորէնը, որ
գրաբարեան էր թէ իւր նախնական կրթութեամբ և
թէ իւր գրական ճաշակով ու ուղղութեամբ և որ մին-
չեւ այդ ժամանակներն իւր ամենալընտիր երկերը շա-
րագրել էր գրաբառ, իսկ մի երկու բան էլ եթէ աշ-
խարհաբառ էր գրել, այդ մի փոքրիկ զիջումն էր ե-
ղել միայն նորա կողմից նպատակի համար, չի վարանում
այդ պատքարի ժամանակ անցնելու աշխարհաբառեան-
ների կողմը: Նա իբրև խելօք մարդ հասկոնում էր, որ

ալն հիմումքը, որ գրաբարետնները բերում էին լոգուտ գրաբառ լեզուի գործածութեան, սիսալ է: Գրաբառը չէր կարող գործածական լեզու դառնալ, որովհետեւ նորանով չէին խօսում ոչ թէ միայն հայ ժողովուրդը, այլ և նոյն իսկ հայ գիտնականները: Նաև չէր կարող գործածական լեզու դառնալ, որովհետեւ նոյն հասկանալի էր միայն մի բուռն զիտանականների, իսկ հայ ժողովրդի ահագին մեծամասնութիւնն իսպառ չէր հասկանում նորան: Նա չէր կարող գործածական լեզու դառնալ, որովհետեւ նաև մեռած էր և չէր կարող լորութիւն առնել, կենդան ութիւն ստանալ, ինչպէս որ չէր կարող լարութիւն առնել և այն ժողովուրդը, որ մի ժամանակ խօսել էր այդ լեզուով, եթէ միայն ընդունենք, թէ եղել է մի ժամանակ, որ հայ ժողովուրդը խօսել է այդ լեզուով: Նա չէր կարող կենդանանալ և գործածական լեզու դառնալ, ինչպէս որ չեն կարողացել կենդանանալ և կիրառութեան մէջ մտնել իտալացւոց համար լատին լեզուն և Յունաց համար հին լունականը Եթէ վերջապէս, Հնարաւոր էլ լինէր մի օր լարուցանել գրաբառն իւր մեռելութիւնից, պէտք կին նէր նորան մշակել, լարմարեցնել ժողովրդի ներկայ մտածողութեան ձևին, աշխարհահայեացքին, մտաւոր արդինարերութեան եղանակին, որ մի շատ էլ հեշտ բան չէ: Այն ինչ աշխարհաբառն արդէն իսկ պատրաստ էր կենդանի, հասկանալի ամենին, ընդունակ ամեն տեսակ վերացական միուր լայտնելու և լիակատար մտաւոր գործիք լինելու համար, և միայն պահանջում էր զարգացումն, կատարելագործութիւնն, որ միայն ժամանակի խնդիր էր, ուրիշ ոչինչ: Գրաբառն էլ հայի համար հարկաւոր է և պէտք է ուսումնասիրել նորան, որովհետեւ, նախ, նա հայոց հին մատենագրութեան լեզուն է, երկրորդ, նա մեր եկեղեցական գրքերի և ժամասացութեան լեզուն է, երրորդ, նա մի առաստ ազրիւր է, որից աշխարհաբառը կարող է և պէտք է իւր համար բառապաշտոի, հարկաւոր ոճերի, զարձուածների առատ առազգ քաղէ, համբարէ:

Սակայն հանգուցեալն աշխարհաբեանների հետ միասին ալսպէս դատելով, ալսպիսի հիմունքների վերալ

վիճաբանելով գրաբարեանների հետ, նոյն ժամանակ գործնականապէս ինքն իրան մասամբ հակասում էր: Նա իրը և Մխիթարեան ուխտի գպրոցի մարդ, ըստ ամենայնի, հետեւում էր Մխիթարեանց, որոնք գրաբառի և աշխարհաբառի գործածութեան ինդրի վերաբերմամբ թունդ գրաբարեաններից մի փոքր տարբեր եղանակով էին մտածում ու գործում: Նորա ինքեանք գրում էին և առաջարկում էին գրել և աշխարհաբառով, միայն այնպիսի աշխարհաբառով, որ ըստ ամենայնի, մօտենար գրաբառին: Մխիթարեանք կարծում էին, որ հետըզետէ գտելով աշխարհաբառը գուշիկ ոճերից, ձեւերից ու դարձուածներից և տեղը մտցնելով գրաբառը, կարող են նորան մէկ օր այնքան մօտեցնել գրաբառին, որ նա բոլորովին գրաբառ գառնալ: Պորանով, նոցա կարծիքով, կապառուէր երկու կուսակցութեան վիճաբանութեան նիւթը, որովհետեւ մի կողմից գրաբարեանները բաւական կմնալին, որովհետեւ վերջնական նպատակը գրաբառով գրելը կլինէր, միւս կողմից էլ աշխարհաբարեաններն անբաւական չէին լինի, որովհետեւ աշխարհաբառի հետզետէ փոխուելը գրաբառի վերածուելը կլինէր միայն աշխարհաբառի այն կատարելագործումը, որի մասին խօսում էին աշխարհաբարեանները:

Պորա, այդ ուղղութեան հետեւանքը պէտք է համարել Մխիթարեանների աշխարհաբառի այնքան գրաբարախառն լինելը, որ գժուաբհասկանալի է մեծամասնութեան համար, այդ ուղղութեան հետեւանքը պէտք է համարել և Խորէնի աշխարհաբառի այն աստիճանի գրաբառի մօտիկ լինելը, որ համարեան նոյնքան արուեստական և անհասկանալի է ժողովրդի համար, որքան և զրաբառը: Առնենք, օրինակի համար, հէնց Արշակ Բ ողբերգութիւնը, որ լայտնի սկզբունքներ ու գաղափարներ ժողովրդականացնելու նպատակով հանգուցեալը գրել է աշխարհաբառ լեզուով աշխարհաբարեանների ու գրաբարեանների վիճաբանութիւններից գեռքանի տարի առաջ, առնենք «իլիականի» թարգմանութիւնը, որ նա արել է լոյն բնագրից աշխարհաբարեանների և գրաբարեանների վիճաբանութեան ամենատարցած ժամանակ աշխարհաբառի ճկունութիւնը և ամեն

տեսակ վիրացական մտքեր արտալալտելու ընդունակ լինելն ապացոյց տալու դիտաւորութեամբ, առնենք, վերջապէս, «Յառւերք հայկականք»ը, որ նա յօրինելէ իբրև համոզուած աշխարհաբարեան,—և մենք այդ բոլորի մէջ գործածած կտեսնենք մի լեզու, որով ոչ ոք չի խօսել, չի խօսում և չի խօսելու երբէք, մի զուտ արուեստական լեզու, մի զարհութեան խառնուրդ աշխարհաբարեան և գրաբառի, որ չի էլ կարելի իսկապէս կոչել աշխարհաբար, այլ աշխարհաբարառխառն զրաբառ կամ. ընդհակառակը, գրաբառախառն աշխարհաբառ. «Իլիականը», բացի իւր լեզուի խառնուրդ լինելու պակասութիւնից, պակասուոր է և իբրև թարգմանութիւն. նա չունի ոչ այն ճշութիւնն ու ներգաշխակութիւնը, որ ունին հանգուցեալ Եղիսա Թոմանանի և նորա աշակերտ Արքէն Բագրատունու նոյն երկի գրաբառ թարգմանութիւնները, և ոչ մինչեւ անգամ այն ճշութիւնն ու գեղեցկութիւնը, որ ունի Փիլիպպոս Վարդանեանի աշխարհաբառ արձակ թարգմանութիւնը:

Եւ դրա պատճառը լեզուն չէ, որ որքան և խոռնուրդ լինի, այնուամենայնիւ ընդունակ է լիովին արտալամելու հեղինակի միտքը, այլ Խորէնի թարգմանչական արուեստի անլաջողութիւնը կամ նորա թարգմանիչ լինելու ընդունակութեան պակասութիւնը: Խորէնին իբրև թարգմանչի պակասութ էր այն, որ կուռում է թարգմանչական հստատելիք, նա չէր կարստանում թարգմանելիք երկի հեղինակի կաշուի մէջ մտնել, համականել նորա զգացմունքներով, ովքորուել նորա գաղափարներով և ինքն երկրորդ հեղինակ գառնալ, ինչպէս որ արել և եղել են մեր Թոմանանները, Բագրատունինները, Էմիննները, Ստամեանները, Վարդաննեանները և միւսները: Թարգմանիչը, ինչպէս ասում է Բագրատունին, պէտք է անէ իւր թարգմանութիւնը «սեփականելով անձին զնոցա, այսինքն թարգմանելիք, երկերի հեղինակների, ոճն և ի նոցին տագորս ներկեալ տարրացեալ տպա այնուհետ ի լինքենէ իբրև ի ըսուն աղբերէ բղին լինքնուրոյն տիպի կերպարանաց, և ոչ թէ զնացա յօրինուածն և գարաբածն լամենալնի ի փոխ և ի վար-

առեալ՝ իրը ի թատր ինչ զնոցին բերել կերպարանս, հանգոյն իմն կապկաց առնելով հպատանս կամ պէս գունակ առակաւոր ճային աստի անտի փետրովք կցկցելով փերեւետել Զի ալգպիսեօք և ալլ ևս մանր և դիւրագիւտ հալթալթանօք հանգերձ մարթի տակաւին չլինել շարագրի՝ բնիկ հայտգետ և կատարեալ հայտիօս, մոնաւանդ յօտար լեզուէ թարգմանելն, իսկ բարձեալ ի նմանէ ապաւէն ամբարանոցին՝ լոր զակն պիշ ունի անթարթ, մնալ նմա գնչու և քաղթնատ և քան զիսուժն գուժ ևս խաղտալեզու»²²⁾։

Աչա թարգմանելիք երկերի հեղինակների ոճի ալդ անձին սեփականելու և նոցա տողորով ներկուելու, տարրանալու և այնուհետև անկախորէն իրանից, ինչ պէս ըսւն աղբիւրից, սաեղծագործելու ընդունակութիւնը, որ այնքան անգնահատելի է արել Բագրատունու թարգմանութիւնները մեր գրականութեան մէջ, Խորենը չունէր։ Այդ պատճառով էլ նորա թարգմանութիւնները մեր գրականութեան մէջ արժէք չունին, նոքա չոր են, նիւթական են, կամ, ինչպէս ասում է Բագրատունին, «իրը ի թատր ինչ զնոցին բերեն կերպարանս, հանգոյն իմն կապկաց առնելով հպատանս կամ պէս գունակ առակաւոր ճային աստի անտի փետրովք կցկցելոյ փերեւետել։ Նորա «Թաշակները» աեղտեղ ալնքան անհասկանալի են կամ գժուար հասկանալի, որ չեն պատկերացնում մեզ համակ զգացմունք, համակ ողերութիւն Լամբարդինի հրաշալի «Համոննեանները»։ Նորա ողբերգութիւնների թարգմանութիւնները համ ու հօտ չունին, որ հեշտութեամբ կարելի է տեսնել, հաւասարականալ, եթէ մենք, օրինակի համար, համեմատենք նորա «Սաւուզը-ը Բագրատունու «Սաւուզը-ի հետնորա «Իլիականը» աշխարհահաշուակ համերօսի գրչով անձահացած վերին աստիճանի պարզ և նոյն ժամանակ կախարդիչ լոյն ժողովրդի ոտւղծագործութիւնը չէ, ալլ նորա չոր ու ցամաք կմախքը, որ ոչ միայն չի թովում, չի կախարդում ընթերցողներին, ալլ ատառուկ ու ձանձրովին է բերում նոցա վերալ։

22) Տես «Եթերականութիւն ի պէտոս զարգացելոց» էջ 629.

Բայց ափսոս, որովհետեւ հանգուցեալն եթէ ոչ աւելի, գոնէ, յամենալն դէպս, ոչ պակաս բանաստեղծական աւիւն ունէր, քան թէ Բագրատունին, և կարող էր իւր ֆրանսերէն լեզուի հմտութեամբ, գոնէ, ալդ լեզուից արած թարգմանութիւնների մէջ կատարեալ լինելի Միտկ բացառութիւնը կազմում է նորա թարգմանութիւններից Յօվհաննէս Գարդելլու տարեգրութեան թարգմանութիւնը, որ արել է Խորէնը 1877 թուին պլ. Կարապետ Եղեանի խնդրըքով: Դա մի վերին աստիճանի պարզ և գեղեցիկ գրաբառ թարգմանութիւն է, որ, մեր կարծիքով, յաջողել է հանգուցեալին, որովհետեւ ալդան բոլոր գժուարութիւնն եղել է ֆրանսիացի ժամանակագրի միջնադարեան լեզուն հասկանալը, որ Խորէնն իբրև լաւ ֆրանսագէտ կատարելապէս ըմբռնել է:

Մի կողմից մեր ընթերցողներին Խորէնի «Ելիտականի» մասին մի ճաշակ տալու նպատակավ, միւս կողմից էլ նորան լոյն բնագրի և հայ գրաբառ թարգմանութիւնների հետ համեմատելու միջոց տալու գիտաւորութեամբ, աւելորդ չենք համարում դնել ալտեղ ալդ ալժմ գժուար ձեռք բերելիք թարգմանութիւնից մի քանի տող.—

1. Երգէ, աստուածուհիդ, Պելիսածինն Աքիլեսի Կորստարեր քէնն որ նիւթեց Աքալեցւոց բիւր աղէտներ Շատ գիւցազանց վեհ ոգիններ թափեց գժոխսքը տարաժամ, Եւ աւար տուաւ զանոնք բոլոր թռչնոց և շուներու.
5. Եւ ալսպէս Արամազդայ մտքին խորհուրդ կը կատարուէր,

Այն օրէն որ՝ իրարու դէմ մաքտուելով՝ բաժնուեցան Ատրիդէս քաջաց արքայն և Աքիլեսն աստուածալին: Բայց ով արգեօք աստուածներէն գըրգուեց զանոնք լոխ և ի կրիւ.

—Լեզովալ և Զևսի որդին, որ արքալին դէմ բարկացաց՝
10. Զօրքին մէջ ձեզեց ժանտախտ, և ժողովուրդք կը մեռնէին,

Վասրն զի Ատրիդեանն ըզՔրիսէս քուրմ թշնամանեց Որ եկեր էր Աքալեցւոց արագընթաց նաւերուն մէջ, Իւր աղջկանն ազատութեան անբաւ փըրկանք բերելով,

Զեռքն առած նա զվարսակալ կորովաձիգն Ապոլոնի
 15. Եւ գաւաղանն ոսկեձոյլ՝ կը պաղատէր Աքալեցւոց,
 Եւ մանաւանդ՝ Ատրիդեանց՝ զօրաց երկու վեհ պետերուն.
 «Ատրիդեանք, ով բոլոր գեղեցկամոլկ Աքալեցիք,
 Տան ձեզի աստուածներն՝ որ զՈղիմասս ունին կալեան՝
 Պրիամու քանդել քաղաքն, և տուն դառնալ ողջ և
 առողջ.

20. Արձակեցէք սիրուն տղջիկս և փրկանքին առէք զգին,
 Յարգելով Զևսի որդին՝ ըցշեշտաձիգն Ապոլոն»²³⁾։
 —Պատասխանեց կտպուտաչեալ աստուածուՀին Աթենաս
 «Երկընքէն իջաւ ցասումդ մեղմելու, թէ հնազանգես
 Ձիս լուղարկեց Օդոյի՝ սպիտակածղի աստուածուՀին,
 Որ երկուսդ ալ՝ նոյն չափ սըրտովը կը սիրէ ու կը խնամէ.
 210. Օ՞ն տղէ, դադրեցուր վեճդ, ու մի քաշեր ձեռ-
 քովդ թուր,

Սի միալն՝ կըշտամբանաց ըսէ խօսքեր, ինչ և ըլլար
 Եւ ահա՛ կըսեմ քեզի, որ և պիտի իսկ կատարուի,
 Օր մը քեզի տըրուին եռապատիկ չքեղ ընծալք,
 Նախատինքին այն փոխարէն, զըսպէ ինքզինքդ, ու լը-
 սէ մեզ,

215. Առ նէ քաջոտն Աքիլլես պատասխանեց և ըստա.
 «Թէև ստատիկ եմ սըրտմըտած՝ բալց ինձի հարկ է կա-
 տարել.
 Զեր երկուսին իսկ հրամանն, ո դիցուհի, զի՞ ալն է լաւ.
 Ով որ հնազանդ է աստուածոց՝ անոր լաւէտ կը լսեն
 անոնք»։

²³⁾ Հոմերոսի Իլիականի միայն առաջին երգն է թարգ-
 մանել Խորէնը—ընդամէնը 463 տող: Խորագիրն է. «Իլիակա-
 նին Հոմերոսի երդ առաջին. յոյն բնագրէն թարգմանեց Խո-
 րէն Աքբեպիսկոպոս Լուսինեանց»: Տպագրուած է Մասիս լրա-
 զրի 1881 թուի նոյեմբերի 28-ի և գեկտեմբերի 2, 5, 17, 19,
 և 26 համարներում: Օդուում ենը դէպից մեր առ ի սրտէ
 շնորհակարութիւնը յայտնելու սրբազն Յուսիկ եպիսկոպոսին,
 որ իրան յատուկ սիրելութեամբ չմնրժեց մեր խնդիրը և ան-
 ձամբ արտագրելով Ս. Էջմիածնի մատենադարանում պահուած
 «Մասիս» լրագրից 60 տող այդ թարգմանութիւնից, մի համա-
 ռօս տեղեկութիւն հետ միասին ուղարկեց մեզ:

- Ըսաւ, ու իրեն ծանըը ձեռքով հըրեց արձաթ երա-
խակալն,
220. Աւ մեծ թուրը վերըստին իրեն պատեանը ներս
խոթեց,
Մտիկ ընելով Աթենասալ՝ որ Ոլիմպոս սլացաւ ի վեր
Վահանազէն Զևսի կայանն և Համօրէն աստուածներուն,
Իսկ որդին Պելեալ Նորէն նախատալից նետեց խօսքեր
Առ Արդիեանն Ազամեմնոն, և չէր դադիներ բարկու-
թենէն.
225. «Ո՞վ գինեմոլ, որ ունիս շունի՛ աշեր, եղջերուէ՛
սիրտ,
Ոչ երրէք բանակին հետ պատերազմով շահատակիլ,
Ոչ երթալ դարանամուտ՝ Աքայեզւց քաջերուն հետ
Երբէք քու սիրտ չարիացաւ, զի աշքիդ՝ մահ ալդ կերեի.
Զի զիւրագնին է անշուշտ՝ նստել Արգեանց մեծ բա-
նակում,
230. Եւ քեզի դիմագրազին ձեռքէն ընծալքն լափեց-
տակիւ.
Ազգակուլ թագաւոր, որ վատերու ես իշխեցող,
Զի ստուգիւ, Ատրիագէս, վերջին է քու ալս նախատինքն
— «Ո Քրիսէս, արքայն արանց Ազամեմնոն զիս ուղարկեց
Քեզ բերել քու զաւակդ, ու փերեալ զահ նուիրական
Առթել՝ Համար Դանայեանց, որպէս զի մեզ Հաշտի
Արքալն.
445. Որ վերալ Արգեանց ալժմիկ արձակեց ցաւ բաղ-
մահառացաւ
Զալս ըսելով՝ ձեռքը տուաւ, և նա ասաւ ուրախութեամբ
Սիրուն զաւակն, ապա անոնք աստուածոյն զոհը վառաւոր
Գեղեցկաշէն բազնին չորս կողմը շարեցին կարգ ըստ
կարգի.
Եւ ձեռներնին լըւակով՝ տոին տարին նըւիրական:
450. Իսկ Քրիսէս բազկատարած բարձր ձալնով կաղօթէր
Ալսէ ինձ, Արձաթաղեղն, որ զՔրիսէ շուրջ կը պահես
Եւ զկիլլալն դիցալին, և Տենեդի կիշխես հզորդ.
Արդարե զու լըսեցիր յառաջ ըրած աղաչանքիս,
Եւ զիս ինքն պատուելով՝ պատժեցիր շատ զազդն Ա-
քայեան:

455. Աղէ, հիմակ ալ կատարէ՛ գու զալս իմ ուխտ պա-
զատանաց.

Հեռացներ Դանալեանցմէ և ալժմ հարուածս այս գժնդակ:

Զալս ըստ ազօթելով, և Ապոլլոն լլանց Փերոս:

Յետ ազօթքն ընելու և ցանելու զսուրբ դարին,

Նախ ըսպանդից դարձուցին գլուխ, և խողխողեալ՝ քեր-
թեցին մորթ,

460. Եւ զիստերը կըտըրտելավ շուրջ ծածկեցին զանոնք
ճարպով,

Եւ կրկին զալն ընելով գըրին վերալ միսն արիւնոտ:

Ծերը կալրէր զալնս ի փալտի, և կը թափէր շուրջ սև
գինի,

Եւ պատանիք քովը կեցած էին ձեռքուժ տէդ հինգժանի:

Թէ ինչ անտիալ գրուածներ է ունեցել հանգու-
ցեալն առհասարակ,— լու չգիտենք. մենք միալն
գիտենք, որ նա գեռ 1859 մտուին, երբ լորս է ընծալ-
ել իւր «Դաշնակը Լամարթինեար» թարգմանութիւնը,
արդէն թարգմանած պատրաստած է ունեցել հրատա-
րակութեան համար և նոյն ֆրանսիացի հեղինակի միւս
նշանաւոր գրուածքը—«Խորհրդածութիւնք» Ալդ մասին
մենք տեղեկութիւն ունինք դաշնակների լառաջաբա-
նից, որի մէջ Խորէնը խօսելով դաշնակների հրատարա-
կութեան մասին, ի միջի ալլոց, մի քանի խօսք էլ
հարեւանցի ասում է և ալդ «Խորհրդածութիւնների»
թարգմանութեան մասին: «Թէպէտ, ասում է նա, և
զխորհրդածութեանցն ևս լեզեալ է մեր զքերթուածս,
ալլ ընտրեցաք զգաշնակացն նախ հանդիսացուցանել ի
լուս, բանզի ի սոսին վեհագուն իմն օրինակաւ զտիզս
հանճարուն իւրու թողեալ է Քերթողին, որպէս ի քննա-
դատիցն առհասարակ վկալեցաւ»: Մենք զիստեր նոյն-
պէս, որ նա թարգմանած-պատրաստած է եղել և մի
շարք ողբերգութիւններ՝ Ալֆիէրիի «Սաւուդ»-ը, Ռասի-
նի «Գոթողիատն», Կոռնէլիի «Պողիկասու»-ը, Ալտերի
«Ջալիրէ»-ն, Առնոլդի «Մարիոս»-ը, Շեքսպիրի «Յուլիոս
Կեսար»-ը և Շիլլերի «Ստիւարտ»-ը, որոնցից միալն
հրատարակուել են Բազմավէսի մէջ Սաւուդն ամբող-
ջապէս, Պողիկասոսի մի մասը և Յուլիոս Կեսարի մի մա-

սր. իսկ միւսները մնացել են անտիպ։ Ալդ մասին էլ մենք տեղեկանում ենք Արշակ Բ-ի յառաջաբանից, որի մէջ հանգուցեալը խօսելով իւր տաղաչափութեան մասին, ի միջի ալլոց, ասում է. «Գիտեմք որ քաջ տաղաչափ մի առաջարկեց նախնեաց քառանդամը։ Մենք ևս երբեմն նորա խորհրդով՝ նոյն չափով քանի մի երոպական անուանի թատերախաղ փորձու համար թարգմանեցինք, ինչպէս Արքիերի Սաւուղը, Ռասինի Գոթողիան, Քոռնէլի Պողիկտոսը, Վալթերի Զայիրէն, Առնուտի Մարիոսը, Եէքսպիրի Կեսարը ու Եիլերի Սթիւարթը։ Գիտենք, զերչապէս, որ նա ունեցել է Պոլտում 64—92 թուականների ընթացքում գրուած բանատեղծութիւնների մի ձեռագիր հաւաքածու «Փունչք Արարատեան» խորագրով, որ, պէտք է կարծել, որ, երբ նորա մահից յետոյ նորա ճոխ մատենադարանը մաս-մաս ծախուել է և նորա թղթերն ուղարկուել են նորա եղբօրը Պարիզ, արդ էլ հանգուցեալի միւս թղթերի հետ միասին անցել է նորա, այսինքն եղբօր ձեռքը։

Ֆերայի մեծ հրդեհը, որ, ինչպէս յայտնի է, եղել է 1870 թուին, լափել է հանգուցեալի գրուածներից շատերը թէև մեզ, բացի «Ա.Էպք և Եղերերք» խորագրով աշխարհաբառ բանաստեղծութիւններից, որոնց ալրուելու մասին լիշուում է հանգուցեալի «Ստուերք հայկականք» գրքոյի յառաջաբանում, լականէ անուանէ յայտնի չէ, թէ ուրիշ ինչ գրուածներ են այրուել արդ զարհուրելի հրդեհի ժամանակ, բայց կարծում ենք, որ զորան զոհ գնացած պէտք է լինեն նորա գրքի արդիւնքից և ուրիշ ձեռագրեր և, գուցէ, հէնց վերուիշեալ «Խորհրդածութիւնների և առջերգութիւնների» թարգմանութիւններն էլ։

Առանձին գրքերով Պոլտում Խորէնը հրատարակել է «Քնար Պանդխտին» և «Ստուերք հայկականք» բանաստեղծութիւնների հաւաքածուները։ Թողնելով մի կողմ առաջինը, որ հանգուցեալը հրատարակել է 1868 թուին և նուրիել է երջանկալիշատոկ Գէորգ Դ կաթողիկոսին, որովհետեւ նորա մէջ համարեան թէ նոր բան չկալ, այլ միայն հաւաքուած ու ամփոփուած է նորա-

Միմիթարեան վանքում գրած և Բազմավէպում տպած և Պարիզում գրած ու Մասեաց աղաւնիում հրատարակուած գրաբար բանաստեղծութիւնները, մենք կխօսենք երկրորդի մասին, որ հրատարակուել է 1874 թուին և որ նորա գրուածների մէջ ամենանշանաւորն է «Ստուերք»-ը մի փոքրիկ հատորիկ է. նա պարզւնակում է իւր մէջ ընդամենը միայն 30 հատ բանաստեղծութիւն, որոնք գրքի մէջ բռնում են 164 էջ: Դա այդպէս փոքր չէր լինիլ, եթէ չպատահած լինէր վերոլիշեալ ներայի հրդեհը, որ լափել, ոչնչացրել է գըրուած, տպագրութեան համար արդէն պատրաստուած «Ստուերք»-ի մեծ մասը. ազատուել են միայն այս կամ այն պարբերական թերթում զանազան ժամանակներում պատահաբար տպաւածները և հեղինակի այս ու այն բարեկամի ձեռքին գտնուածները, որոնք և հաւաքուելով միասին և հրատարակուելով, կազմել են ալֆմուալ մեր ձեռքին գտնուած «Ստուերք»-ի հատորիկը: Բանաստեղծութիւնների այդ հաւաքածուն բայց կացած է երկու մասից. առաջին մասում տպագրուած են 13 հատ բանաստեղծութիւն, որոնք մի անունով կոչուում են «Վէպք», երկրորդում—17 հատ, որոնք մի անունով կոչուում են «Եղերերգք»: Առաջին մասի բանաստեղծութիւնները վիպական բնաւորութիւն ու բովանդակութիւն ունեն, երկրորդինը—եղերերգական. այդտեղից կամ գորանից էլ հէնց առաջ են եկեւ գրքի երկու մասի խորագրերը—«Վէպք» և «Եղերերգք»:

Մենք ասացինք, թէ «Ստուերք»-ը Խորէնի ամենանշանաւոր երկն է, կամ, լաւ է ասել, նորա երկերի գլուխ-գործոցն է: Դորա պատճառը մենք տեսնում ենք նորա մէջ արտայալուած զգացմունքի համեմատական խորութեան և նորա ինքնաւրոյնութեան մէջ: Դորա, այդ զգացմունքի խորութիւնն էլ, մեր կարծիքով, մեկնուում է Ստուերքի մէջ ամփոփուած բանաստեղծութիւնների բովանդակութեան հարազատութեամբ և նորա մէջ գործածուած թէև խառնուրդ, բայց և այնպէս աշխարհաբառ լեզուի կիրառութեամբ, որ միջոց է տուել նորան լիակատար կերպով արտայալու իւր մէջ եռ եկած կրակը, սրտի զգացմունքը, հոգու հա-

ռաշանքը, ինչ որ վերաբերում է նորա ինքնուրոյնութեան,—պէտք է նկատել, որ թէկ դա էլ իւր գրութեան ձևով, զգացմունքների արտայայտութեան եղանակով, իւր նիւթի բովանդակութեան զարգացումով և արտայալտուած մտքերի ու գաղափարների տեսակով իսպառ ազատ չէ Լամարտինի և առհասարակ ժամանակակից ֆրանսիական գրականութեան ազգեցութիւնից, բայց նորա մէջ, նախ, աւելի իշխող գեր է կատարում ոռմանտիք զպրոցի ազգեցութիւնն ընդհանրապէս և մասնաւրապէս Հիւգօլի ազգեցութիւնը, քան թէ կեղծ-կէսիքականութիւնը, քան թէ Լամարտինի ժախիծը, մելանխոլիան, կէս-գասական, կէս-ոռմանտիք ուղղութիւնը, երկրորդ, նա աւելի հալի մտածողութեան, հալ կեանքի ծնունդ է, քան թէ նորա նախիկին գրուածներից մէկը: Ստուերքի մէջ չկայ այն կապիօրէն նմանողութիւնը Լամարտինին և Հիւգօլին, որ երեսում է նորա միւս բանաստեղծական գրուածներում, նորա մէջ համեմատաբար աւելի քիչ է աչք ծակում այն ուռածափրուածութիւնը, այն արուեստականութիւնը, որ լատուկ է կեղծ գասական գրուածներին և որ նորա «Պանդիստի քնարի» լատկանիշն է, նորա մէջ չկայ և այն վերացականութիւնը, այն լոկ անհատական, եսասիրական վիշտն ու թափիծը, այն կրօնական-միստիքական մտածողութիւնները, գտառողութիւնները, որ նորա ամբողջ «Վարդենիք»-ի և «Քնար պանդիստին»-ի մի մտասիրնաւորութիւն է կազմում:

Եւ այդ շատ բնական է, շատ հասկանալի է, որովհետեւ մինչ նա իւր «Քնար պանդիստինի»-ի առաջին մասը գրել է Միստարեան վանքում, իսկ երկրորդը—Պարիզում, մինչ նա իւր «Վարդենիք»-ը լորինել է թէռդոսիալում, այսինքն մի միջոց, երբ նա կամուկի հոգեւորական է եղել, երբ նա գտնուել է անմիջապէս Լամարտինի ազգեցութեան ներքոյ և երբ նա գեռ այն քան երիտասարդ է եղեւ, որ նորա մէջ տակաւին նըստած, հանգստացած չեն եղել նորա երիտասարդական կալտիոքը, նա իւր «Ստուերք»-ը, ընդհակառակը, գրել է իւր հասակն առած ժամանակ, երբ նորա բնաւորութեան թէռնութիւնը աեղի էր տուել լրջութեան, երբ

նա ճանապարհորդած լինելով հայաբնակ քաղաքները, երկար ժամանակ ապրած լինելով Պօլսի բազմամբոխ հայութեան մէջ և Պատրիարքարանում գանագան պաշտօններ կատարած լինելով, առիթ էր ունեցել հայ ժողովրդի կարիքներին ու պէտքերին ծանօթանալ, մի խօսքով, երբ նա սկսել էր ապրել հայի իրական և ոչ թէ վերացական կեանքով, իբրև հայ մարդ, իբրև հայ սրտացաւ հոգևորական; Յայտնի է, որ մի հեղինակի գրուածքի վերայ սովորաբար երեսում է նոյն իսկ հեղինակի հասակի, զանազան ժամանակամիջոցներում վարած կեանքի, նորան շրջապատող հասարակութեան վարք ու բարքի ազգեցաւթիւնը:

«Ստուերք»-ի առաջին մասը —վեպերը, որոնց մէջ Խորէնը ներկայացրել է Հայոց հնագոյն և հին պատմութեան հերօսների՝ Հայիի, Արա գեղեցիկի և Նուարդի, Զարմալիի և Շուշանի, Արտաւազդ Բի և մշւսների սիրագործութիւնները, և երկրորդ մասը —Եղերգները, որոնց մէջ նա ներկայացրել է Հայոց կեանքի ներկայ թշուառութիւնները, ընդհանրապէս և համեմատարար այնքան սրտառուչ նկարագիր ունին, որ մի յալտնի չափով կարող են գրաւել, բափշտակել ընթերցողների սիրան ու հոգին, թէև այն էլ պէտք է ասել, որ գոց մէջ, նամանաւանդ և զլխառարապէս վեպերի մէջ կեղծագատկանութեան տարրը գեռ շատ զգալի է; Որ հանգուցեալը կարողացել է այնպիսի գոյներով նկարագրել, այնպիսի խոր զգացմունքներով ներկայացնել հայի թշուառութիւնները, որ նոքա ընթերցողի աչքից ակամալ արտասուրքի ջերմ կաթիւներ են քամում, —այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է, որովհետև հայ ժամանակակից կեանքի այդ թշուառութիւններն այնքան մեծ, այնքան բազմատեսակ և այնքան թախծալից են, որ նոքա իբրև չոր, անմշտ նիւթ էլ արդէն ընդունակ են ամեն մի քար սիրտ ամոռել, ամենքին, տըխուր զգացմունքներով համակել ու ամենքի արտասուրքը շարժել, բայց որ նա կարողացել է չոր պատմական նիւթից մի այնպիսի բան շինել, որ մարդ ոչ միայն առանց ձանձրանալու կարդում է մինչև վերջը, այլ և մինչև անգամ մի յայտնի աստիճանի տպաւորու-

թիւն է ստանում, մինչև իսկ համակւում է վազուց անցած գնացած հայ կեանքի տիուր և ուրախ հանգամանքներով, առասպելաբանական և պատմական հերոսների սխրագործութիններով, այդ արդէն մի այնպիսի աչքի ընկնելու բան է, մի այնպիսի արժանաւորութիւն է, որի վերայ արժէ մատնացոյց անելի

Խորէնը կարողացել է պատմական անձնաւորութիւններին այնպիսի զգեստ հագցնել, նոցա գործողութիւններին այնպիսի ընաւորութիւն տալ, որ նոքաշ՝ հեռանալով պատմութիւնից, մնալով իրքե պատմական անձնաւորութիւն, նոյն ժամանակ համապատասխանում են մեր իդէալներին և համեստութեան, գեղեցկութեան, քաջութեան և առաքինութեան օրինակ են հանդիսանում մեզ համար, Արժէ կարգաչ վերոլիշեալ Հալիք, Արան, Զարմալրը, Արտաւազզը, որոնցից ամեն մէկը մեզ համար մի մի նրատական օրինակ են Հալիք եւ քաջ է եւ ազատասըր, Արան եւ գեղեցիկ է եւ համեստ, Զարմալրը եւ քաջ է և մարդասէլը՝ Նուարդ և Նուշանը և գեղեցիկ, և սիրող, և համեստ եւ համբերող են, մի խօսքով, զոքա Հալիկական առաքինութիւններն են, միայն պատմական սեթևեթներով զարդարուած, պատմական համեմունքով համեմուած։

Եատ սիրուն է «Արա գեղեցիկ և Նուարդ» վէպի մէջ Արալի և Նուարդի գեղեցկութեան նկարագրութիւնը. —

Հանց աղեղ լարած ժուխ լայն լայն լոնքեր։
ճակատուն հովտին կարծես ցանկ պատեր.

Ու գուուզ հոսպալք ոլլելով սե սե՝

Կը ծփան մարմար վրզին ծաղկաձե։

Իսկ երբ բոցափալլ աշքվին եռանդնոտ

Վեր առած հալէր յարփին անազօտ,

Կարծես զէմ ընդգէմ լերկիր և յերկին

Զոլգ մի արևներ իբար պըշնութին։

Սլյն քաջին ուսոց կըոթընած քընքուշ.

Կին մի տեսնըւէր քան շուշանն անուշ.

Խնչպէս ձիւնաթոյր հեզիկ աղաւնի,

Թևերն ամփոփած բոյնին քով թափի.

Արշալոյն երբ գայ այգուց ցօղազարդ՝

Ոչ այնպէս փափկիկ ճակտոն ունի վարդ,
 Ինչպէս նէրա սուրբ ալտերուն վերան՝
 Բոսոր ու ճերմակ վարդեր կը ցոլան։
 Կապուտ աչուլներն՝ են ջինջ աւելի
 Քան թէ այն գարնան մաքուր դէմք երկնի,
 Ո՛չ շըկայ քըրքում մի այնպէս սիրուն՝
 Որ նորա լաղթէ ոսկի մազերուն,
 Զէ, նա մահացու կարծես թէ չէր կին,
 Ալլ երկնարնակ հրեշտակին էր քաջին,
 Որ կնոջ առել գողտրիկ կերպարանք,
 Լոլո տալ աչքերուն, սըրտին՝ լսփոփանք.
 Անուշակ քամին իջաւ մէմըրն ալլ
 Եւ ծածանեցան ծամերն ոսկեփայլ,
 Ու երկու կաթիլ այն ծաւի աչքէն
 Ընկան ինչպէս շիթք ցօղոյ երկընքէն։
 Ինքնատիպ գեղեցիկ է և «Զարմալը և Շուշան»
 վէպի մէջ շուշան՝ ծաղկի անուան ծագումը մեկնարա-
 նող հատուածը.—
 «Կըսեն թէ Հայերն երբ երկրորդ օրին
 Եկան որ իրենց փընտուեն թագուհին,
 Հոն՝ ուր փակեց աչք նազելի Շուշան՝
 Գեղազող միայն մի ծաղիկ գտան.
 Թագուհուոյն ձիւնի պէս դէմքին նման
 Ունէր նա սպիտակ շըզարշ լուսերփեան,
 Եւ տերեւներուն անուշիկ բուրում
 Պըշիսոյին մաքրիկ սըրտին էր բըզիսում։
 Խոկ ճակտին գերեւ մտրդարտի ցօղեր՝
 Անշուշան խեղճ հարսին վերջին արցունքն էր...
 Որով հեղափալ ծաղիկն այն օրէն
 Ըզուշան անուն առաւ դըշխոյէն։
 Հայեր, երբ ճերմակ գալն ծաղիկ տեսնէք,
 Չըքնազ թագուհին ձեր ի միտ բերէք.
 Ու գէթ ձեր աչքէն կաթիլ մ'ընդունին
 Զարմալը ու նորա թշուառ ամուսին։
 Սակայն այդ վէպերի մէջ երբեմն պատահում են
 ալնախսի տեղեր կամ կտորներ, որոնք թէև գեղեցիկ
 արտայալտութիւն ունին, բայց իւրեանց բովանդակու-

թեամբ ու իմաստով ճիշտ չեն, գոնէ, չեն լարմաքուռւմ-չեն համապատասխանում Հայոց պատմութեան ընդհա-նուր ընաւորութեան: «Հայկ» վէպի մէջ, օրինակ, Խո-րենը ճգնում է մեր նախահօր ազատասիրութեան հո-գին ընդհանրացնել բովանդակ Հայութեան յատկանիշ դարձնել, որ չի արդարանում մեր պատմութեան ըն-թացքով ու հանգամանքներով: Հայ ազգն Առաջաւոր-Ասիաի այն փոքրիկ ազգերից մէկն է եղել, որ իւր պատմական կեանքում, ինչպէս լայտնի է, շատ կարճ ժամանակամիջացով միայն լիակատար անկախութիւն է վալելել. նա առհասարակ գտնուել է այս կամ այն մեծ ազգի գերիշխանութեան ներքոյ և վալելել է միայն ներ-քին ընդառանակ ինքնավարութեան իրաւունքներ: Ալդ-տեղ, ուրեմն, ազատասիրութեան մասին իրեւ մի ընդ-հանուր ազգային բնաւորութեան ու յատկանիշի մա-սին խօսք լինել չի կարող: Մեր կարծիքով, մեր պատ-մագիրներից ոչ ոք այնպէս գեղեցիկ ու ճիշտ չի գծագ-րել Հայ ազգի իրեւ մի պատմական տարրի նկարագիրը, ինչպէս Մասկու Խորենացին, որ իւր պատմութեան առ-աջին գրքի երրորդ գլուխ ասում է այդ մասին: «Թէ-պէտ մենք մի փոքր ազգ ենք, թուով շատ նուազ և զօրութեամբ տկար ու շատ անզամ ուրիշ թագաւորու-թեան ձեռքի ընկած, բայց մեր աշխարհում ևս քաջու-թեան շատ գործեր են կատարուած, որոնք արժանի-են գրաւոր լիշտատակի: Այս խօսքերով է գծագրում մեր ծերունի պատմագիրը Հայ ազգի պատմական կա-ցութեան խորհուրդը դեռ այն ժամանակ, երբ Հայ ազգը տակաւին երկու պատմական շրջան էր միայն անցկացրել իւր գլխից: Մեր լետագալ ժամանակների պատմութիւնն աւելի ևս արդարացնում է իւր ազգն ու պատմութիւնը լու ճանաշող հեռատես պատմագը խօսքերը, թէ մենք մի փոքր ազգ ենք, թուով ու զօ-րութեամբ շատ տկար և լաճախ ուրիշ ազգերի ձեռքի տակ ընկած:

Իոյն տեսակ արտարարութեամբ շատ գեղեցիկ, բայց իմաստով ու բովանդակութեամբ մեր պատմու-թեան անհամապատասխան շատ կաորներ պատահում են և «Ստուերք»-ի երկրորդ մասի -եղերգների մէջ:

Առնենք, օրինակի համար, հենց այդ եղերգներից առնալունակիր համարուածները — «Հայ ապրենք» և «Հայ մեռնենք», որոնք իւրեանց հանրահռչակ ծանօթութեամբ, կարելի է ասել, մեր ժողովրդական երգերի կարգն են անցել Խնչ է այդ, — պատմութիւն է, զատագովութիւն է, խբախոյս է, թէ շովինիզմ։ Տարօրինակ է թւում մեզ հանգուցեալ եպիսկոպոսի բերանում այս խօսքերը։

Մեր աշխարհն է սուրբ։ — Մեր հոգուն վըրան,
Սատուած է քալեր, հանելով զԱղամ։
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ ինք։ —
Ըսէք, որ Ազգին չորս Առաքեալներ
Երկնից թագաւորն է զեսպան զրկեր,
Որ թագաւորին հետ թզիժակցեր ինք։ —
Քրիստոսի ունինք անդրանիկ օրհնէնք.
Հաւատոց եղանք միշտ ախոլեան մենք
Հայը զարմտցորդ զերկիր և զերկինք, — և այլն։

Եթէ սա պատմութիւն է, — ուղիղ չէ, որովհետև սորամէջ լալտնուած փաստերը չեն համապատասխանում քննական պատմութեան ճշտութեան, եթէ սա մի ներքողեան, դրուատիք կամ գովասանական հիմն է հայի և նորա հալրենիքին, — չափազանցութիւն է, որովհետեւ թէ հայը և թէ նորա հալրենիքը ոչ այժմ և ոչ իւր պատմական կեանքում այդքան գովարանելու հաւատիքներ չեն ընծալել. եթէ սա խրախոր է, — օգտաւէտ չէ, որովհետև ինչ կ'ընի միայն մեծահնչիւն խօսքերով շփանալով, քանի որ գառն իրականութիւնը բալորպին ուրիշ բան է թելազրում. եթէ, վերջապէս, այս շովինիզմ է, — խապատ տնտեղի ու վնասակար է, որովհետեւ շովինիզմը չի վալելում մինչև անգամ ամենամեծ ազգերին, ուր մնաց մեր պէս մի փոքր ու խեղճ ազգին, որ չունի մեծ ազգերի ոչ նիւթական ու բարոյական ոյժերը և ոչ նոցա կուլտուրան ու քաղաքակրթութիւնը.

Կրկնում ենք, մեզ տարօրինակ է թւում այդ բոլորը հանգուցեալի բերանում, որովհետեւ նա ապրել գործել է մեր օրերաւմ, ուրեմն և, պէտք է հասկա-

նար ազգի դրութիւնը և, փոխանակ ջատագովելու չեղած փառքն ու առաքինութիւնը և դորանով շոյելու նորա ինքնասիրութիւնը, ընդհակառակը, պէտք է զգուշացնէր, արթնացնէր նորան թմբութիւնից, որովհետև նա իրեւ երոպական կրթութիւն ստացած մարդ պէտք է լաւ հասկանար մեր առասպելների յարգը և տեղի ու անտեղի իրբեւ պատմական ճշմարտութիւն չկըկնէր նոցա, վերջապէս, նա իրբեւ խելօք մարդ պիտի իմանար, որ այդպիսի բովանդակութեամբ գրուածներն առաջ են բերում ազգի մէջ կոյլ սնափառութիւն, ինքնախարէութիւն և անցեալ փառքերի ու գափնիների վերայ նստել հանգստանալու հակումն ու տրամադրութիւն։

Յամենայն դէպս «Ստուերք-ի մէջ ամփոփուած վէպերից և եղերգներից մի քանիսն, եթէ ոչ իւրեանց ամբողջութեամբ, գոնէ, շատ հատուածներով, բնական, պարզ, սրտից ըզնած, ներդաշնակ, սրտառուչ բանատեղծութիւններ են, արժանի մեր բանաստեղծական գրականութեան մէջ իւրեանց վայել տեղը բռնելու։ Ափսն միայն, որ ալդ բանաստեղծական կտորների ներդաշնակութիւնը տեղ-տեղ խանգարում է լանգերի արուեստականութիւնից, բռնազրօսիկ լինելուց։ Զարաքաստիկ <Յանգարաններ>, որի վերայ անկասկած հանգուցեալը շատ ժամանակ է կորցրել, ալդանեղ էլ, ինչպէս նորա բոլոր զրաբառ ոտանաւորների վերայ, իւր հետքերն է թողել, իւր ազգեցութիւնն է ունեցել ինչ բան են, օրինակի համար, <Արտաւագդ Բ> վէպի մէջ պատերազմի պատրաստութիւնը նկարագրող տողերը, եթէ ոչ «Յանգարանից» քաղած միայանգ բառերի աններդաշնակ և անիմաստ կուտակումն։—

Դափր անդ ի դրընդիւն,	Աղեղանց ճայթիւն,
Նըժուգից վրնջիւն,	Նետից ճարճատիւն,
Արսորդաց գոշիւն,	Ելուինդ ընդ բուրբիւն,
Բարակաց հաշիւն,	Ալդ լընդ ոստ թընդիւն՝
Երէոց բաշիւն,	Յանտառ,
Զինուց շառաչիւն,	Գըղըդիւն գանգիւն (۲۴)

(24) «Մասիս» լրագրի 1874 թուի նոյեմբերի 7—14 հա-

ԴՐՈՒՅՄ ԹՌ.

Այն ժամանակ, երբ լուս էր տեսնում թէոդոսիայում Խալիբեան դպրոցի տպարանից Խորէնի «Վարդենիք»-ը, Նաբանգեանցը գատապարտուած առանձնութեան, իւր ամենանեղ, ամենազժուար օրերն էր անցկացնում Պետերուրբում: Սակայն ոչ այդ առանձնութիւնը, ոչ էլ այդ դժուար օրերն էին արգելք լինում Հայոց քանքարաւոր հրապարակախօսին հետաքրքրուելու իմանալու, թէ ինչ է կատարւում հայ

մարներում մի գրախօսութիւն կայ տպուած «Ստուերք»-ի մասսին. Մ. Ն. Ն. գրախօսը, նախ, շեշտում է բանաստեղծուաթեան կարուրութիւնը, երկրորդ՝ մի թուուցիկ հայեացք է ձըգում հայկական բանաստեղծութեան վերայ ընդհանրապէս, անգիր կամ գողթան երգերն անուանելով «առնական», իսկ գրաւոր, այսինքն տառերի զիւտից յետոյ եղած բանաստեղծութիւնը — «սրբազն»: Ընդհանրապէս այդ գրախօսութիւնն աւելի ներքողեան է, քան թէ լուրջ քննադատութիւն, որ կարելի է եղբակացնել հնոց այն հանգամանքից, որ գրախօսը Խորէնի «Ստուերք Հայկականքը» համարում է բարոյական յեղափոխումներ անել տուրող, փրկարար ցնցումներ պատճառող և անկշելի օգտակարութիւն ունեցող մի գրոյկ: Խորագոյն բանաստեղծներից գրախօն կարևորութիւն է տալիս Արսէն Բագրատունուն, նորա «Հայկ զիւցազն»-ը զրուատելով ոչ որպէս բանաստեղծութիւն, այլ որպէս բառերի ու ոճերի շտեմարան: Բէշիկթաշեանի բանաստեղծութիւնը նա կոչում է մելամաղձուած և գիտական, իսկ Գուրեանինը — զղային: Մասիսի գրախօսի բոլոր ասածների մէջ եթէ կայ մի ճշմարտութիւն կամ ուղիղ դատողութիւն, — այդ էլ, մեր կարծիքով, նորա Արսէն Բագրատունու «Հայկ զիւցազնի» մասին ասածն է: Մենք էլ կարծում ենք, որ Բագրատունու ոչ միայն «Հայկ զիւցազն» այլ և բոլոր ինքնուրոյն բանաստեղծական գրուածներն աւելի հայկաբանութեան շտեմարան են, քան թէ իսկական բանաստեղծութիւն: Մասիսի այդ գրախօսականի մասին մեր ունեցած տեղեկութիւնը մենք քաղում ենք դարձեալ Ցուսիկ սրբազնի մեղ այդ մասին գըրած նամակից:

մտաւոր աշխարհում, նորա սրատես աչքերը թափանցում, հասնում էին և այդ հետո հիւսիսից ամեն տեղ և ի նկատի առնում, կարգում, քննագատում էին ամեն մի երկ, որ զուրս էր գալիս հայ հեղինակների գրչից: Նալլանդեանցը ստանում էր ամեն լեզուով զրուած, ամեն տեսակ գրքեր, կարգում էր, պարապում էր. լեզուաբանական և պատմագիտական հետազոտութիւններ էր անում, շարադրում էր և այդ միջոցով մի կողմից ստ բաւականութիւն էր տալիս իւր հարցամբ բութեան, միւս կողմից էլ մեղմացնում, անկատելի էր դարձնում իւր միայնութեան տիսւը, երկար օրերը: Պահպանուել, մեր ձեռքն են հսուել հանգուցեալի մի շարք վերին սատիճանի հետաքրքրական նամակները, դրուած ուսւերէն լեզուով և իւր եղբօր միջոցով ուղղուած բժիշկ Անանիա Սուլթանշահին, որոնց մէջ հայ զրականութեան այդ անփոնջ աշխատաւորը հաշիւ է տալիս իւր պարապմունքի, իւր մտածմունքների, իւր այս կամ այն գործի կամ խնդրի մտսին ունեցած հայեաց քնների և կարգացած գրքերի մտսին:

Յէւ ոչ այդ նամակների և ոչ էլ նորա Պետերբուրգից գրուած մեզ յալանի միւս նամակների մէջ մինք չենք պատահում մի ալրակիսի անկեկութեան կամ ակնարկութեան, որից երկեր, թէ սա այդ ժամանակները կարգացել և Խորէնի «Վարդենիք» ը, բայց մենք հստատ կարող ենք ասել, որ Վարդենիքը լուս ընծայւելուց լետով, իսկուն հասել է Պետերբուրդի, և Նալլանդեանցը կարգացել և ուսումնասիրել է նորան Պորան ապացուց կարող է համարուել հանգուցեալի (Աղցմիք²⁵⁾ երկը²⁶), որ զրուած լինելով Վարդենիքի առթիւ և ընծայւած լինելով նորա հեղինակ Խորէն Գալիխայանին, հէնց գոյն այդ ուսումնասիրութեան արդիւնքն է: Որ «Աղցմիք» ը զրուած է Վարդենիքի առթիւ և ընծայւած է Խորէնին, — այդ երեսում է այն չորս տող

²⁵⁾ «Աղցմիք» բառը Հայկակեան բառարանը մեկնում է այսպէս. Աղցմիք, Աղցմիք—եաց, գ. այսինքն Յաղուհացոն մի ասեր: Այն են շարականք ի կարգի հարցիցն աղուհացից՝ յաւել եալը և ալանեալը ի պէտու միջոցի ապայից և այլն»:

ոտանաւոր ընծալականից կամ «Ուղերձից», որ գրուածէ այդ գրուածքի սկզբում, յառաջարանից առաջ.—

«Որում Խորէն հանապազ
Լարակառը և քնարին
Վարդենեաց ոչինչ նիազ
Գողարիկ անդրադարձութիւն»:

Իսկ որ «Աղցմիք»-ը գրուած է Պետերբուրգում, երբ Նալբանդեանց առանձնացած էր այնտեղ,—այդ էլ երեսում է այն հանգամանքից, որ, նախ, Խորէնի Վարդենիքը լուս է ընծալուել 1863 թուին. ուրեմն և, Նալբանդեանցի առանձնացած կամ առանձնութեան մէջ եղած միջցում, երկրորդ, նա Պետերբուրգից գուրս գալուց լետով, իւր հիւանդութեան սաստկանալու պատճառով, բացի նամակներից, այլ ևս ոչինչ չի գրել:

«Աղցմիք»-ը Նալբանդեանցի մինչև վերջին ժամանակները կորած համարուած երկերից մէկն է. դորա մասին մենք մինչև վերջերս, բացի մի քանի հատ ու կտոր տեղեկութիւններից, ոչինչ չգիտէինք, Մենք գիտէինք այն էլ միայն Աղաբոս Աղալեանցի «իմ կեանքի գլխաւոր գէպերը» գրուածքից, որ գուրս եղաւ «Մուրճա ամսագրի 1893 թուականի համարներում, թէ «Աղցմիք»-ը գրաբառ բանաստեղծութիւնների մի հաւաքածու է եղել, որի մէջ նշանաւոր տեղ է բռնելիս եղել «Արկածք Աղամալք» խորագրով քերթուածը, որ և գլխէգլուխ բերան արած, սովորութիւն է ունեցել արսեղ ու այնտեղ արտասանել Ա. Բուգազեանցը: Գիտէինք նոյնպէս, գարձեալ Աղալեանցի նոյն գրուածքից, թէ «Արկածք»-ը հրաշալի գրաբառով է գրուած եղել և թէ նորա մէջ նկարագրուած է եղել բնականի կոխւն անբնականի հետ —Աղամը կուռելիս է եղել հրեշտակի հետ, որ չի թոյլ տայիս եղել նորան սիրելու Եւալին: Հրաշալի է եղել նամանաւանդ սիրահարուած Աղամի և Եւայի նը-կարագրութիւնը:

Սորանից երկու տարի առաջ, 1900 թուին, մեզ լոյզողեց, վերջապէս, մի օրինակ այդ գրուածքից ստանալ մեր Հաշտարխանցի բարեկամ պ. Ակրահէ Պոսլովից, որ իւր հերթով ընդօրինակել է գորան Հաշտար-

խանցի Եազուրեան Տէր Յարութիւն քահանալի ձերբաւմ գտնուած օրինակից. Մեր բարեկամի կարծիքով, տէր-Յարութիւնի ձեռքին եղած «Աղջմիք»-ի օրինակը, նայելով ձեռագրի հանդամանքներին, պէտք է որ հէնց հանգուցեալ նալբանդեանցի խսկական ձեռագիրը լինի, թէև իւր, հեղինակի անունը և ազգանունը գրութեան ժուռականի հետ միասին քերուած, ջնջուած է ձեռագրի վերալից: ⁽²⁶⁾

«Աղջմիք»-ի մեր ընդօրինակութիւնը բաղկացած է երեք մասից՝ վերոյիշեալ համառօտ ստանաւոր «Ուղերձից», մի կարծ յառաջարանից և բուն գրուածքից, «ը իւր հերթով բաղկացած է ⁽¹²⁾ մանր բանաստեղծութիւններից և մի մեծ քերթուածից-պուտմալից: Մանր բանաստեղծութիւնների ցանկը հետևեալն է.

Օ. Առաւոտուց.

Է. Աչ հանից արտաքս.

Բ. Անցը.

Ը. Հիմքէն, ո՛վ կուս.

Գ. Հրեշտակն աղօթից.

Թ. Ալու է հանգիստ իմ.

Դ. Տեղի տան ախրութիւնք.

Ժ. Քերօղն քերթով:

Ե. Օրհնեալ լիցիս, քո՛յը.

Ճ. Ցիշեալ զիս.

Զ. Մողպաշտէն յազէ.

Ժ. Կիկօռիկօօօ

⁽²⁶⁾ Աղջմիքի մեր ընդօրինակութիւնը, բացի Աղջմիքից, ունի իւր մէջ և «Մամիկոնեան Մեծ Վահանի պատասխաններ» և «Ալշենք» Հիւսիս լրագրի գէմ: Տեսրակի առաջին թերթի առաջին երեսի վերայ գրուած է. «Գրուածք (ազգանունը քերած) Ս. Պ. Բուրգը գործ հանգուցեալ Միքայէլ Նալբանդեանցի բանտարկութեան մէջ ընդէմ Վարդենիքի անուամբ զբքոյկին Խորէնի Գալֆայեան Թէոդոսիա: Երկրորդ թերթի առաջին երեսին գրուած է. վերը՝ «Աղջմիք», իսկ տակը՝ Վայէրի հետեւալ խօսքերը. «Nos prêtres ne sont point ce qu'en vain peuple pense. Notre crédulité fait toute leur science». Դոյն թերթի երկրորդ երեսին գրուած է Ֆան-Ֆակ Խուռաօփի (Confession) հետեւալ խօսքերը «Le veux montrer à mes semblables un homme dans toute la vérité de la nature». Երրորդ թերթի առաջին երեսին գրուած է. վերը՝ «Ուղերձ», տակը՝ քառասորդ ընծայականը «Compte rendu» խորագրով: Եւ, վերջապէս, «Առ ընթերցաննելիս» վերնադրով յառաջարանի վերը

Իսկ քերթուածը կրում է «Արկածք նախահօրն» խորագիրը, բաղկացած է 340 տողից և բաժանում է երկու մասի՝ Ա. և Բ.

Դոքա, այդ թէ մանր բանաստեղծութիւնները և թէ քերթուածը բոլորն էլ, բացի մի երկուսից, պատկանում են քնարերգական բանաստեղծութեան այն ճիշդին, որ երգում է երկու սիրող սրտի սիրային յարաբերութիւնը, որ նկարագրում է կանացի գեղեցկութիւնը բնութեան հրաշալիքների հետ միասին։ Սիրահարական մասն այդ գրուածքի մէջ այնքան զօրեղ և աչքի ընկնելու տեղ է բռնում, որ շատ տեղ դա, կարելի է ասել, մօտենում է սիրահարական երգերի էրոտիքական տեսակին։ Թէև այդ գրուածքի ամեն մի կտորից, ամեն մի երգից փշում է այն հոսք, ստացուում է այն համը, որ յատուկ է նալբանդեանցի գրուածներին, թէ և նորա ամեն մի մասի մէջ էլ երեւում է մտքի այն սրութիւնը, այն օգենորութիւնը, այն Համորը, այն ընթերցողի սիրտն իւր հետ կոպելու կաշկանդելու յատկութիւնը, որ նորա գրական մէծ քանքարի յատկանիշն է, թէև, վերջապէս, դա իւր ամբողջութեամբ էլ իրք գրական գործ մի արժանաւոր բան է, բայց դօրա մէջ առանձնապէս արժանի է ուշադրութեան «Արկածք նախահօրն» քերթուածը, որ մի ամփոփ զուտ բանաստեղծական գործ է։ Նալբանդեանցը, ինչպէս յայտնի է, իւր գրական գործունեութեան ընթացքում բոււականաչափ ոստանաւոր բանաստեղծութիւններ է յօրինել, բայց դացա մէջ շատ քչերը կան, որ յաջողել են, որ իսկական բանաստեղծութիւն են։ Այդ նորագիւտ «Արկածք» գալիս է ալժմ աւելացնելու հանգուցեալի բաշողած սակաւաթիւ բանաստեղծութիւնների թիւը մի ընտիր բանաստեղծական կարով, ափսոս միայն, որ դա, գրաբար յեզուով գրուած լինելու պատճառով, ժո-

գրուած է Ժան Ժակ Ռուսոսի Nouv. Heloise-ից առած խօսքերը—«Je ne veux pas passer pour meilleur que je ne suis» և Բեռնանժէի—«Non, mes amis, non, je ne veux rien être de mon berceau près de bénir la paille. En me créant, Dieu m'a dit ne sois rien»:

դովուրդը շի կարող շահուել գորանից:

«Արկածք»-ը, ճիշդ որ, ներկայացնում է մեզ բնականի մաքառումն անընականի հետ, բնական հակումների, զգացումների մրցումը վերացականի, խորհրդաւորի հետ և աւաջինի լաղթանակը վերջինի վերայ: Դոյն իսկ գաղափարը, որ Նալբանդեանցը մանրամասնաբար և ընդարձակօրէն մշակել, զարգացրել ու արտայալտել է Արկածքի մէջ, նա իւր վերայիշեալ մանր բանաստեղծութիւնների մէջ էլ գլխաւոր հիմք և մի էական մօսիւ է գտաձգելլ Ամեն տեղ առաւելութիւն է տրուած բնութեան գեղեցկութեան, սիրող սրտերի միմեանց հպելու ընականութեան, ամեն տեղ զոհ է մատուցուած, զրուատիք է հիւսուած սիրող սրտերի սիրային լարաբերութեան, որ ազբիւր է կենդանութեան, որ մարդկութեան անսպառ և յարատե գոյութեան միակ առհաւատչեան և կեանքի ու կենդանութեան անընդհատ յարատեելու միակ գրաւականն է: Թող լոէ բարոյախօսը, որ կկամենալ իւր բարոյախօսական կեղծ ու պատիր խրատներով պատուար կանգնեցնել մարդկութեան այդ ամենաբնական հակումների դէմ: Թող լոէ «անսէր անկըրօնի», որ ինքը սէր չունենալով, կամենում է, քարոզում է, որ ուրիշները ևս չունենան: Մարդկութեան սէրն Աստուած ինքն է օրհնել և սրբագործել, ստեղծելով նորան այնպէս, ինչպէս որ նա կայ, ուստի և մարդը, որ մի չնչին որդն է Բարձրեալի վեհութեան առաջ, չպիտի ժպրհի արգելք լինելու իւր նմանների մէջ գործող այդ բնական, այդ աստուածադիր օրէնքին:

Այդ հանգամանքի վերայ է ակնարկում Նալբանդեանցը, երբ նա նկարագրում է իւր «Առաւոտուց» բանաստեղծութեան մէջ գեղեցիկ կոլիխն, որ առաւօտեան կանուխ քնից զարթնելով, իջնում է բուրաստանը և թիթեռնիկի նման ծաղկէ ծաղկի թռչելով, ծաղկի է ժողովում, փունջ է կապում, թրջելով իւր փափուկ մատերը վազորդեան ցօղի մէջ.—

<p>Ճիշ գեղեցիկ, Զի ընդառաջ յալգորել Բերի լուշիկ, Եւ զվարդունս համբուրել</p>	<p>Սիրատոչոր Եւ սրտացեալ հրեշտակ, և ի ըստոր Ա.առի կուսին պերճ գիտակ:</p>
---	--

Համբուրք խաղան... Սրբացելոյն
 Եւ ի վանդակս կրծոց Վառեն զճակատ և հնչէ
 Սիրտք թոթուան Եղօքորդւոյն
 Տիւր երտնի արգարոց. Քնար ւազաւնեակն զի՞ մնչէ..
 Վճիտ ի սէր Եւ ի թաւուտս
 Զոր ցանդ և գիր պատուիրէ, Սաղարթախիտս պարտիզկան
 Հրեշտակն մեր Ընդ առաւոտս.
 Սիրէ զկոյսն ի սրտ՛: Կանխեն ամոլք միաբան,
 Եւ ի ծաղկանց «Ո պատմեսցէ
 Համասպրից ժոյը ի թոյը, Զորոց սիրոյն հանեն ձօն»...
 Քնքուշ մատանց — Մի մեղիցէ
 Կազմեալ պսակ բազմարիւր Նոցա՝ անսէրն անկրօն»:
 Ալդ հանգամանքի վերալ է ակնարկում նա, երբ
 իւր միւս «Ենդի տան տիրութիւնք» բանաստեղծու-
 թեան մէջ նկարագրելով երիտասարդի և կոյսի գրկա-
 խառնութիւնը վարդենու մօտ, ցողոս գալարիների մէջ,
 Հիացած աւելացնում է. —

«Քանի՞ վսեմ, զի՞ վայելուշ, մեծ ես, Տէր,
 Սիրոյդ ի շունչ որ զտիեզերս առլցեր.
 Եւ ժայերհիցի սոտքիւտ զնել ի զոծ քոյ
 Որդն չնշին, բանիւ անզուուն բերանոյու:
 Յորդան կարմիր ի շրթանց լարս կուսանին
 Ժպիտ փայլի, յայտս գոհար վարդք վառին,
 Հաւատարիմ մնայ սակայն լուսթեան...
 Ես իմ անդէն. — եթէ ոչ սուրբ բնութեան»:

«Նոյն բնականութեան և բնական օրէնքի լազմու-
 թեան վերալ է, վերջապէս, ակնարկում նա, երբ իւր
 պիկոսիկօն» ոտանաւորի մէջ զաւէշտորէն նկարագրում
 է որձակի և մարիի սիրալին լարաբերութիւնը թուխս
 գալու նպատակով. —

«Կուտ, կուտ, կուտ, կուտ, Սէր եռանգն, լիս բորբոքի,
 կուտ, կուտ»: «Գողացան զծուս,
 Մարին կուտ կուտալ... Ու տայր ինձ որդիս,
 — Ծիփ, ծիփ, ծիփ, ծիփ, Մինչ ես գամ ի թուխս,
 Ծիփծիփեմ նմա... Ցիս, որձակ, քաջ, լիս».
 Մարին գալ և գգուի Ասէ, և կուտկուտալ

Եւ անդէն իսկ գառանար՝ «Կուտ, կուտ, կուտ, կուտ,
Mary, գէթ զերկուս կուղջ»,
Ունիմ ես զձուս, Սարին կուտկուտալ
Իցեն քեզ հերիք ։ Յուռի լիցի նւզին.
Իմ այս երկուորիք, Արբեալ ես ցնաւ:
«Օ, yes, please, very զօնձ» Եւ ի ձայն բարձր ազդոյ
Եւ ճեղն լեալ սորամուտ: Հնչեմ զիմ կիկոնիկօ:

Սակայն, ճիշդ որ, «Արկած ք նախահօն», ինչպէս
ասում է, Ազալեանցը մի սիրուն, մի գրաւիշ բան է—
բովանդակութիւնը հետաքրքրական, գործողութեան տե-
ղի և հանգամանքների պատկերացու մը ճիշտ—նկարա-
գրութիւնը վառ, առաջին մարգու խօսակցութիւնը, զգա-
ցածը, մատածունքը բնական: Նստած է Ազամ կենաց ծառի
տակ, սրավրէներով շըջապատուած, և տիսուր ու տրտում
է նորա երեսը: «Եւ ինչու համար է այս փափկութեան դրախտը,
ինչու ես բոլոր արարածների վերալ տէր և իշխան
կարգուեցայ, ինչ ինչ պէտք են եթերի լուսանորոդ աս-
տղները, ինչու համար են քերովիքների բանակը և երկ-
նալին զօրութիւնները, քանի որ այն փոքրիկ նաւակը,
որ իմ սրախ մայկովին է, անոյշ սիւք չունենալու պատ-
ճառով չի կարող առաջասահել: Ասում է, և նորա աչ-
քերը ցօղում են մարգարիտ, ալդ առաջին արցունքն
էր, որ թափում էր մարդն այս արտածութեան հով-
տում: Եւ սերովիքն որ կանգնած էր նորա մօտ,
իւր թեռով սրբելով նորա աչքերի ցողը և զգու-
ելով ու սաւառնելով նորա չորս կողմը, եղե-
մայ բարբառով խօսում է նախահօր հետ: «Միիթա-
րութիր, տէր Ազամ, ասում է նա, որ քո սրտին չը-
տրուեց այն շարժական սիւքը, որի մասին խօսում ես,
ալդ միայն նորա համար էր, որ եթէ Տէրն այն բոցն ու կրա-
կը Փչէր, լցնէր քո սիրտը, գու ալնուհետեւ իսպառ կկորց-
նէիր հոգուգ անդորրութիւնը. այն ժամանակ գու ուժ
վերալ կթափէիր այն բոցն ու կրակի ալրազ շանթերը և գու
կկարողանալիք արգեօք հանդուրժել, դիմանալ նորա
ցոլմաւնքին, և ովք հոգար, կինամէր քեզ, որն
է այն էակը, որ ընդունակ լինէր ժողովել քո-

կալծակների ամպրոպը, շանթն ու փայլակը։ «Եւ
ինչու ունալն պատճառներ ես առաջ բերում, պա-
տասխանում է Սերովբէին նախահայրը, դու բնաւ
իսկ անզգալ ես համարում մարդուն։ միթէ Աս-
տուծոյ ձեռքով ստեղծուած տիեզերքը, որի մէջ դրուե-
ցալ ես, իմ աչքիս առաջը չէ, միթէ ինքն Եհովան չէ, որ
ամեն օր արշալուսին երթևեկելով ալցելում ու ողջու-
նում է ինձ, և միթէ նա ինձ բաւական չէ։ Ես զար-
մանում եմ քո անհանճար խօսքերիդ վերալ, Սերովբէ։
Քո կարծիքով, մարդու սիրութ դէպի ամեն մի փեմ
բան խպառ զու է. միթէ ես չեմ կարող ալդ սիրով
սիրել Տիրոջը կամ նորա անվեհներ արարածներին, նո-
րա ձեռքի գործերը՝ արևը, լուսինը, աստղները, երե-
կոն, առաւօտը, զով, խաղաղ զիշելները, ցերեկուալ պայ-
ծառ լուսը, չեմ կարող սիրել կենդանիների ուրախ երամ-
ները, սոխակի անոյշ երգը, որով ուրախանում է հա-
մայն ընութիւնը։ Դու մի առաջ տուր ինձ սէր, լցոն-
իմ սրտի ամայութիւնը, յետոյ զու կտեսնես կսայթա-
քի բնաւ մարդու ընութիւնը։ Ես իմ սիրով վայրաքաշ
կրքերի չեմ ծառալեցնիլ. ալդ բանի համար անսուտ
խոսաւումն եմ տայիս։ «Քաւ լիցի, տէր իմ Ազամ,
կրկնում է Սերովբէն, զու բնաւ չպէտք է շնչես այն
բոցեղէն օգը, որին չի կարող դիմանալ մարդը։ Նեղ-
նելով պատասխանում է Ազամ Սերովբէին, և նորա
դէմքի վերալ մի վայրկեան խաղում է գժափիհի ժակտոր։
«Նա, որ ինքը մարդ չէ հողեղէն, առում է նա, ինչ-
պէս կարող է ալդպէս ճանաչել մարդուս ընութիւնը,
որտեղից է Սերովբէին ալդ գիտութիւնը։ Սերովբէն
լօժարութեամբ համբերում էր մարդու թերութիւն-
ներին, որովհետեւ Արարչից պատուէր ունէր նորա կամ-
քին հնազանդելու։ Ալդ պատճառով էլ ամեննեին չվի-
րաւորուելով Ազամի գժափհելուց, սահաննելով, դար-
ձեալ թեարկում է նորա չորս կողմը, ժպտում է և
գգուում է Բալց որովհետեւ Ազամը կատակով չէր, որ
վշաանում էր սէր չունենալուց, ալդ պատճառով էլ
սերովբէն հանգիստ քուն է իջեցնում նորա աչքերին,

և Ադամը զեփիւսի մեզմ հովանուտակ ննջում, քնում
է, իսկ նորա չորս կողմը գրախտը հնչում է սոխակի
քաղցր գալլայլիկով։

Սերովբէն շարժելով թևերը, թռչում, սլանում է
սատղների կաճառների միջից, սլանում է հրեղէն երկ-
նակամարի վերալով և բարձրանում, հասնում է մինչև
Արարչի Աթոռի ասհմանները, ծխում է մարդու արտա-
սունքը ծիրոջ սեղանի վերայ և հրաման է ստանում
տալ մարդուն նորա ցանկացածը։ Վեցթևեանը ծխած
սեղանի վերալից ունելիքով տանում է սիրոյ բոցավառ
կալծակը և իջնելով երկիր, ճենճերում է Ադամի ան-
փորձ սիրան, որ քաղցր քուն էր վայելում տակաւին
կենաց ծառի ստուերի տակի Եւ ալդ սիրոյ բոցավառ
կրտի զօրութիւնն այնքան մեծ, այնքան զօրեղ է լի-
նում, որ նախաստեղծին շրջապատող կենդանիների ե-
րամակները մինչև անգամ միայն տեսնելով ալդ կալծա-
կը, ինքեանք ևս մասնակից են լինում նորան, և զոյգ
զոյգ լինելով, ցրուամ, թագչում են մենաւոր վայրե-
րում։ «Ալժմ շատապիր, ասում է Սերովբէն քնի մէջ
ընկղմուած Ադամին, իւր զօրծը կատարելուց լետոյ, աշ-
խատիր հմտօրէն նաւելու, որովհետեւ տիեզերասաս
հուրն ու բոցը լցրեց քո սրտի տուագասար. տեսնենք,
ալժմ կազմուի քո մակուկիկը»։

Ադամ սէր զգալուց լետոյ, կամենում է ունենալ
և մի ընկեր, և Տէրը ստեղծում է նորա համար կնոջը,
միայն որ նա սիրէ նորան, ալդ կնոջը վերին սիրով,
ինչպէս որ խոստացել էր, և իւր սիրան երկրային մեղկ
ախտին չծառայեցնէ։ Եւ Ադամը զարձեալ կրկնում է
իւր ուխտը՝ սիրել, վերին սիրով միայն սիրել Աստուած
և նորա արարածներին։ Սակայն Սերովբէն, որ գիտէր
մարդուս սրտի կազմուածքը, զարհուրելով նորա տուած
խոստումից, ակնարկում է Ադամին ներումն խնդրելու
իւր տուած երդման համար, բայց նկատելով, որ նա
գժկամակում է, թողնում է, հեաանում է նորանից և
բերում է նորա մօս Եւալին։

Եւ սկսուում է ալնուհետեւ նախահօր մէջ մի զօ-
րեղ մաքառումն իւր տուած խօսքի և մարդկային բնու-
թեան հակումների մէջ։ Լուսեղէն հորսնածուի բերած

Եւան գեղեցիկ էր, իսկ մարդկային բնութիւնը թողլի Հասկանալի է, ուրեմն, թէ այդ մաքառման մէջ, վերջապէս, ով պիտի պարտուէր և ինչը պէտք է լազմահարուէր Առաջին մարդու զօրեղ կամքը խորտակուում է կոսջ գեղեցկութեան հրաշալիքների առաջ, և կատարուում է բնութեան, սիրուուածին պատարագը: Մարդկութիւնն ի գէմս Աղամ.Եւալի արտաքուում է փափկութեան դրախտից և գտատապարտուում է ապրելու վշերի ու տանջանքների աշխարհուում, որտեղ մինչեւ ցայսօր էլ գեռ, թէև Մեսիան արդէն եկել է, Եւան ծնում է ցաւով և Աղամն իւր երեսի քրտինքով փատակուում է իւր աւուր պարէնը:

Գեղեցիկ է նամանաւանդ ալլ քերթուածի այն
կտորը, որի մէջ Հեղինակը նկարագրում է հրեշտակի
երկնքից նախահօրը սիրու կրակն իջեցնելու հանգա-
մանը. —

Քեւապարեալ սերովքէն Եւ բարեխօսոք ի շրմանց,
'նդ աստեղոյ կանառս լանալը Զալս գէթ լսեն, թէ «ատացի»
Եւ ընդ կամարն հրեզէն «Սուրբ, սուրբ, սուրբ ես,
Անցեալ ճեպէր Համբառնալը, Տէր, Որէն,
Մինչ լաթոռոցն ի սահման Լի են երկինք փառօք քովքը,
Ի քերութից պարառեալ, Նուազս յօրինէ Սէրավէն,
Արարքին կալ լանդիման, Եւ մատուցեալ, ունելեօք
Եւ Տէր՝ յԱթոռն վերօրՀնեալ Առնու զկաթակն բոցավառ
Վեցթևանն անդ երկորումք ի սեղանոյն ծխելոյ.
Քօղեալ զգէմս պակուցեալ, Եւ ի յերկիր ի խօնարհ
Զառան՝ ներքին ալլ թեկովք Անդրէն լինի փոլթ ուղեւոյ
Թօկ միջնովքն թոռոցեալ, Ոչինչ զիտէ մերս Աղամ,
Ծխէ զմարդոյն արտասուս Զի ի քուն կայ տակաւին,
Տեառն ի հոտ անուշից, Թող զի թօժափեր ական
Հնչեն երկինք լալելուս Յառաջապարհու կատա-
Համակ զօրութեանց երկնից, ըին.
Եւ հոտոտի Տէր ի խունկ,
Զոր արկանէր սերավքէն.
Բանին ականջք զգալունք Տակաւ զնովաւ կենաց
'նդ երկնից մազթանս համօրէն Տակաւ զնովաւ կենաց
Եւ աշն՝ հաւակ էութեանց Տնչոյն դիւրէր տուրեառ
Ի վայր յերկիր կարկառի սուռելեր,
Եւ սերովքէն հասանէր:

Եւ առ Ադամ մատու-
 ցեալ
 Նստի լահեկէ կուսէ.
 Եւ զարտաշէկն փայլա-
 կեալ
 Ի նա մերձեցուցանէ,
 Ծիսի մարմնոյն փափուկ
 մորթ
 Եւ ճենճերի սիրա ան-
 փորձ,
 Ծառանալ ծուխս ընդ
 ուղղորդ
 Յերկինս ի վեր խոտն
 ընդ բոց:

Որ զԱդամաւն կենդա-
 նեաց
 Ըսդ սոսկ տեսիլ կալ-
 ծականն
 Շրտուցեալ երամակաց,
 Առնուն, ասեն, սիրոյ
 զմասն.
 Եւ զիծեալ զոյգ ի զոյգ
 Ամոլք խուսեն խալտու-
 ցնուլ
 Ի մենաւոր վայրս ան-
 փոյթ
 Առ ինչ, — ալդ չէ ա-
 սացեալ:

Նատ սիրուն է և Ադամ-Եւայի սիրահարութեան և
 բնութեան լաղթութեան նկարացրութիւնը. —

Թե՛ւ ի թե հէգ կուսու- Քիրտն ընդ կուրծս գետո-
 թիւնք ըէնց...
 Սուրան զինս տաղնապաւ — Իսկ Ադամ, — «ինչ ոչ
 Եւ լուր լինի գատակնքք կառէր.
 «Անմեղութիւն, երթ քա- Եր երբեմն զի համբոր
 րեաւ», Կնքէր կուսին ի շրթունս,
 — Իսկ զինչ հարսն, իսկ Մերթ հատկլէր, զի ծփիւր,
 զինչ քոյլ. Ճնշեալզիարդագեղ պտկունս՝
 «Ո՛հ, ցնցէին մկանունք, Ռւսուցելոց ըստ նռանց
 Եւ խլրտէր և զելոյլ Ստեանց, 'ի փալլ 'ի գոյն
 Եւ շողալին վառ աշկունք. ձեան,
 Մերթ ի զիրկս կուսական Կրծովք իւրովք լուսագետաց
 Ճնշէր, ալրէր, մերթ թոռ- Եւ ըարէ երանութեան.
 դոյլ, Զի տարուրելս անդ, մար-
 Մերթ շօշափէր նա զԱ- մաջ
 դամ, Հեշտին՝ անօթն ընտրու-
 Մերթ հիանալը, մերթ ուռ- թեան
 նոյլ. Զգալ... 'և 'ի մեղմ յոյժ ա-
 Եւ թռչէին ի սրտէն ւաղ
 Թառանչք հեշտինք, և հո- Վարդի արհին բալասան...
 սէր Ամէն, եղեւ պատարագո՞ւ

Բնութեան ի հոտ անուշից, Յարդ իսկ ցաւօք ծնանի,
Եւ ամոլք գտան արտաքս Թէև եկեալ Մեսիալ,
Հստ գրգարանն հեշտալից, — Իսկ Ադամ, — «Տակաւ
Յաշխարհ փշոց, ուր Եւայ քրտնի»:

Բայց հատուածներով դժուար է գաղափար տալ
կամ կազմել այդ քերթուածի գեղեցկութեան մասն;
Պէտք է կարդալ դորան ամբողջովին. դա գեղեցիկ է
իւր ամբողջութեամբ:

Մենք, որ այդ քերթուածն իւր ամբողջութեամբ
կարդացինք ոչ թէ միայն երկիցս ու երիցս, այլ և ու-
սումնասիրեցինք դորա ամեն մի տաղը, խոստովանում
ենք որ հոգով և սրտով զգացինք այդ գեղեցկութիւնը:
Դորա հետ միասին մենք զգացինք մեր սրտում և մի
ուրիշ բան, ոչ պակաս քաղցր և գեղեցիկ, քան թէ
այն, որ մարդ զգում է մի նոր զեղարուեստական գրա-
կան երկ կարդալուց. մենք մտարերեցինք ու վերանո-
րոգեցինք մեր սրտում մի հին, անցած գնացած քաղց-
րութիւն, համարձակապէս ասում ենք, մենք ստացանք
այն համն ու հոտը, որ երբեմն ստացել էինք մի ու-
րիշ արդպիսի գրուածքից, աւելի հզօր գրչից արտա-
գրուած, աւելի տաք սրտից բղխած. մենք լիշեցինք
անմահ Միլտոնի «Առունեան Դրախտին»²⁷⁾, Ալոն, Նալ-
բանդեանցի «Արկած ք նախահօրն» նմանում է անգլիա-
ցի մեծ բանաստեղծի զրախտերգակին: Մենք հեռու-
ենք այն մտքից, որ կարծենք, թէ Նալբանդեանցը
գրական փոխարինութիւն է արել, ոչ ամբողջ նիւթը
Ժակուած է ինքնուրան, ինքնատիպ եղանակով, առանց
ժի տող փոխ առնելու, առանց մի որևէ է բանաստեղ-
ծական պատկեր մուրալու նմանողութիւնն ընդհանուր
է. նման է պատմելու ձեւը նկարագրելու եղանակը,
նիւթի մշակութեան հանգամանքը, գաղափարը, նիւթը:

²⁷⁾ Միլտոնի «Առունեան Դրախտին» երկու անգամ է
թարգմանուած Հայերէն—առաջին անգամ արձակ թարգմա-
նութեամբ և հեղինակի մասին կենսագրական տեղեկութեամբ
1824 թուին, երկրորդ անգամ—անյանդ ոստանաւորով 1861
թուին, Հ. Արաքն Կոմիտաս Բագրատունու ձեռքով:

Անկասկած է, որ Նալբանդեանցը կարդացել և ուսումնասիրել է Կորուստ Դրախտին և նորա ազգեցութեան ներքոյ լօրինեւ է իւր քերթուածը²⁸⁾:

Միլտոնի գրուածքը, ի հարկէ, մի մեծ ամբողջութիւն է, որի մէջ հրուալի պարզութեամբ պատմուած է Արարչի սքանչելի ստեղծագործութիւնը — կեանքն ու մահը, լոլոն ու խաւարը, չարն ու բարին, մի խօսքով սկիզբն ու կատարածը իւր բոլոր մանրամանութեամբ, նկարագրուած, լոյտնուած է վիպասանօրէն, վառ պատկերներով ամենամեծ փիլիսոփալական գաղտփարը, մարդու գորութեան խորհուրդը, չարի և բարու մաքառումը և քրկութեան լոյսը։ Նալբանդեանցն ալդ չի տրել և չեր էլ կտրող անել, ալդ վեր էր նորա բանաստեղծական շնորհքից, գորա համար պէտք էր Միլտոնի հսկայական բանաստեղծական ձիրքը, քանչքարը։ Նալբանդեանցը միայն առել է նիւթի մի մասը, մի փոքր կտորը, բայց ամենագլխաւորը, որ ծառալել է իրեւ առաղձ, սաղմ և Միլտոնի համար, որ ալդ սաղմը զարգացնելով, հիւսել է նորա չորս կողմը իւր անմահ վիպասանութիւնը։

Ծննդոց գիրքը պատմում է աշխարհիս և ըոյոր արարածների ստեղծագործութիւնը զրոյցի պարզութեամբ և միամտութեամբ։ նաին միջի ալլոց, պատմում է և մարդու ստեղծագործութեան մասին, իրեւ

²⁸⁾ Միլտոնի Ադամը խօսում է Բափայէլի հետ, Նալբանդեանցինը — Սերովրէի հետ։ Միլտոնի Ադամը սէր է խնդրում ուղղակի Արարչից, Նալբանդեանցինը — Սերովրէի միջնորդութեամբ։ Միլտոնի Ադամը բնութեամբ թոյլ է, ուստի և Բափայէլը Տիրոջ հրամանով խրատում ու համոզում է պինդ կենալ և չենթարկուել չարի փորձութեան, Նալբանդեանցինը կարօտում է Սերովրէի միիթարանքին ու խրատին դգոյլ կենալու սիրոյ հրապոյրից։ Միլտոնի Բափայէլը վեցթևեան է, Նալբանդեանցինը —

Շնչցից կեանն անդ երկոքումբք

Քօղեալ զդէմսն պակուցեալ,

Զոտսն՝ ներքին այլ թեովիք,

Իսկ միջնովքն թռուցեալ և այլն և այլն։

պսակ բոլոր արարածների Երկնքի թագաւորը դնում
նախաստեղծ մարդուն փափկութեան դրախտի մէջ
և տալով նորան օգնական-կին, պատուիրում է տէր լի-
նել համայն արարածների, օգտուել նոցանից և մի-
այն ու միայն զգուշանալ մի բանից չուտել ծառ զի-
տութեան բարույ և չարի պտղից, որ մահ չմտնի մար-
դու կեանքի մէջ, նախաստեղծն իւր բնութեան լատուկ
թուրութեամբ չի կարօգտնում կատարել Արարշի ալդ
պատուէրը, և անմեղութեան կապանքը քակուում,
վարը է ընկնում նորա աչքերից և նա ճանաչում է չարն
ու բարին, որի հսմար և նա արտաքսւում է դրախտից
ու դատապարտում է իւր քրտնքի աշխատանքով ապ-
րելու, տքնելու։ Աչա այն ատագձը, սադմը, որից օգ-
տուել են անգլիացի բանաստեղծը և մեր նալբան-
դեանցը։

Մշշտոնը հաշակերտել է իւր քրիստոնէտական
վիպասանութիւնը, ըստ ամենայնի, հաւատարիմ մնալով
ծննդոց զբքի պատօնութեան և Աստուածաշնչի վերալ կըր-
թուած իւր հայրենուկիցների այն հայեացքներին, որ նորա
կազմել էին ալդ նիւթի մասին Դորանից, ալդ հան-
գամանքից է առաջ եկն այն վերացականութիւնը, որ
երեւում է «կորուսա դրախտին» ի մէջ, այն ալլարանա-
կան բնաւորութիւնը, որ կրում են կամ ունին նորա
հերոսները՝ Ագամը, Եւտոն, Հրեշտակները, սատանաները
և միւսները Դորանից է առաջ եկել և հեղինակի բանաս-
տեղծական թուիչքների այն սահմանափակումը, որ աչքի է
ընկնում ալդ գրուած քում ու զարմացնում նորա բանաս-
տեղծական երեակալութեան լայն թռիչքներին ընտել
ընթերցողներին, մի հանգամանք, որից ազատ են ե-
զել Հոմերոսը և Պանտէն, որոնց զիւցազներգութիւն-
ների իրականութիւնը և ամեն մի սահմանափակումից
ազատ լինելը կազմում է հէնց նոցա ամենամեծ գեղեց-
կութիւնն ու զրաւշականութիւնը Դորա փոխարէն
Սիլտոնի ալդ գրուած քում հզօր է Հովուերգական մասը.
Նուրբ վրձինով քաշուած է գրախտի գեղեցկութեան
պատկերը, հնչիւն տողերով, քաղցր, սիրտ զրաւող լե-
զուով պատմուած է մարդկութեան առաջին զուգի ե-
դեմական սիրու երջանկութիւնը, նարագրուած է նո-

ցաւ անմեղութեան, սրբութեան օրերը նոցա շրջապատող բնութեան հրաշալիքների հետ միասին և նոցա վիշտն ու գառնութիւնը և դրախտից արտաքսուելու հանգամանքները:

Մի կատարեալ հրաշակերտ է նամանաւանդ առաջին երգը,որի մէջ բանաստեղծը նկարագրել է Արարէից պարտուած ու անգնդոց սանդարամետը գահավիժուած «սատանին», որ գոռոզացած ու ամբարտաւանացած իւր դոյն իսկ պարտութեամբ, հաւաքում, կազմում է իւր ամբողջ սատանայական զօրութիւնը և սպառնայիք է կարգում գժոխիքի խորքից երկնքին; Միլտոնի կորուստ դրախտին-ի հէնց ալդ առաջին երգն է իւր մէջ ներկայացրած գիւտականութեան գոռոզ պատկերով և ընաւորութեամբ, որ ծառայել է իրեւ գեմոնականութեան սկզբնական ազբիւր անգլիացի միւս ոչ պակաս նշանաւոր բանասեղծ Բալրոնին և բարոր ոսմանտիքներին ընդհանրապէս Կորուստ գրախտին-ի ամենամեծ խորհուրդը պէտք է որոնել նորա երկնքի և գժոխիքի մաքանան հրաշալի պատկերի մէջ. Միլտոնը կարողացել է ստեղծել սատանայի վեհազոյն պատկերը, որի պատլինելու անպարտքելի և անհօւն ձգուումն ու ցանկութիւնը հասցըրել է նորան մեծագոյն շարութեան-պատամբելու Արարչից և մաքառելու նորա գէմ: ²⁹⁾

Նալբանդեանցը գոյն նիւթից մի մեծ գէալ չի գրել, մի տմբողջ դիւցազներգութիւն չի յօրինել, այլ միայն մի փոքրիկ վէպիկ, մի սիրուն վիպական քերթուած: Նա առաջին զոլքի պատուիրանազանցութիւնն ու սիրային լարաբերութիւնն է նկարագրել, շեշտերով մարդկալին ընաւորութեան թուրութեան, մարդու և կոսջ միմեանց սիրելու ընականութեան վերայ, Եւ ալդ բոլորը-ոչ վերացական, երեւակայական պատկերներով, ինչպէս արել է Միլտոնը, այլ զուտ երկրագին, իրական հանգամանքներով: Նալբանդեանցի Ադամ և Եւան ոչ մի ալլարանութիւն չունեն, նորա մարդ են մարդկալին բոլոր պակասութիւններով ու առաւելութիւններով.

²⁹⁾ Միլտոնի և նորա «կորուստ դրախտին»-ի մասին տես Энциклопедический словарь Брокгауза, томъ XIX.

նոքա ապրում, զգում, և ուզում են միմեանց սիրել, մինչև իսկ նորա սերովքէներն էլ օժտուած են իրականութեան հանգամանքներով։ Այդ կողմից ու տեսակէտից նալլանգեանցն իւր այդ գրուածքով աւելի նմանում է Հոյերոսին, Դանտէին և միւս միջնադարեան դիւցազներգական վէպերի հեղինակներին, քան թէ Միլտոնին։

Որ Ագամն ու Եւան պատժուել են իւրեանց պատուիրանազանցութեան հայար, այդ հասկանալի է, որովհետեւ երկնալին թագաւորը ստեղծելով և ամենամեծ բարիքները վայեւելու տալով տուաջին մարդուն, միայն մի բան էր պտհանջել նորանից, — որ նու չուտէ բարուի և չարի գիտութեան պաղից, իսկ նա չէր կառարել այդ պատուէրը։ Բայց թէ ինչ էր այդ ծառ գիտութեան բարու և չարին, որի պատուզը բարի էր ի կերպուր և հաճոյ աչաց հայերու և զեղեցիկ ի տեսանել, կամ թէ ինչ վնաս կար այն ըանում, որ մարդկանթիւնը ճանաչէր իւր չարն ու բարին ու կարողանար զգուշանալ չարից և միշտ բարի գործել, — դոքա այնպիսի խնդիրներ են, որը լուծելու կամ մեկնելու համար մինչև ցայսօր գիտնականները շատ թանաք են սպառել, շատ գրիչ են կոտրել, բայց տակաւին չեն կարողացել վճռել։

Ս. զիրքն ու եկեղեցին, ասում են աստուածաբանները, ընդունում են կամքի ազատութիւնը, ուրեմն, մարդս ազատ էր, եթէ ուզենար, կարող էր նա չմեղանչել և պատուիրանազանց չգտնուել, և այն ժամանակ չէր վերանալ անմեղութիւնը, սրբութիւնը, չէր առաջ գալ չարի գոյութեան գիտակցութիւնը և մահն էլ չէր մտնիլ մարդկանթեան կեանքի մէջ։ Բարի է, հակաճառում են հակառակորդները, այն ժամանակ թող չստեղծուեր, գոյութիւն չունենար չարը, իսկ եթէ սատանափի գոյութիւնն անհրաժեշտ էր մարդուս փորձելու համար, թող մարդն էլ ստեղծուեր այնպիսի էութեամբ, որ բնութեան թուլութիւն չունենար, որ չմատնուէր, չենթարկուէր փորձանքի։ Եւ յետու, ինչու մի զոյգի պատուիրանազանցութեան համար ամբողջ մարդկանթիւնը պիտի զատապարտուէր մահուան, մի-

թէ ծնողների կատարած լանցանքն անցնում է նոցա սերնդի վերալ և որդիքը պատասխանատու են իւրեանց ծնողների արածների համար, և այլն և այլն: ²⁰⁾

Ոչ ոք սակալն չի վիճում, որ մարդկութեան ար- րուած է հայր ու մայր լինելու յատկութիւնը, որից կտիեալ է ծննդաբերութիւնը և մարդկային ցեղի անե- լութիւնը: «Աճեցէք և բազմացարուք»-ահա այն խօսքե- րը, որով Ստեղծողը մի անգամ ընդ միշտ սրբագործ:

²⁰⁾ Կամքի աղատութեան կամ մարդուս անձնիշխանու- թեան և չարի ու սատանայի մասին շատ հետաքրքրական են նզնիկ կողրացու զատողութիւնները: Մարդուս անձնիշխան լինելու մասին, օրինակի համար, նա մի աել ասում է: Ընա և զմարդոյ յիբաւի, ասեմք, կրել պատուհաս ընդ որոց գոր- ծից քանզի կամաւ երթայ յուսումն այնպիսի իրաց, յորոց յորժամ և կամիցի՝ և մեկնել կարող է: Քանզի և կամելոյն և զմամելոյն ունի իշխանութիւն, զորոյ զնեա երթայ և կարեն զոր ինչ կամիցի առնելու: Սատանայի մասին նա ասում է: «Ճի գոստանայ մեք ոչ յԱստուծոյ սատանայ եղեալ զիտեմք, այլ զսատան անուն՝ վասն խոտորելոյն էառ իւր անուն, քանզի սատանայ յԱրքայեցոց և Ասորոց լեզուէ խոտորեալ մարդ- մանի: այլ զօրութիւն իմն զգայուն լաւութեանց հաստատեցաւ յԱստուծոյ, և ի թշնամութենէ ընդ մարդոյն ունելոյ՝ իւրն կա- մօք եղի բանարկու թողեալ զԱստուծոյ հապատակութիւն՝ սկսաւ անսաստել, և հակառակ կալ Աստուծոյ հրամանացն ուսուցանել մարդկան, և իրբի զապստամք յետո կացեալ թիւ- քեցաւ յԱստուծոյ: Եւ վկայ է բանիս աստուածական բարբառն, որ ապստամք վիշապն էոչ զնա՝ իթէ հրամանաւ սպան զա- պստամք վիշապն: Եւ արդարն իսկ բանն Աստուած սպան զսա- տանայ, այնու դի կրիսելոյն զնա ետ իշխանութիւն: Զարի մասին ընդհանրապէս նա ասում է: «Եւ արդ սկիզբն չարեաց զնախանձն ասեմք, և զնախանձն յառաւել զմարդն պատուե- լոյ, և զշարիսն յանհնազանդութենէն: Զի Աստուած այնպէս առաւել զմարդն պատուեաց, և նորա անսաստեալ՝ զընկէց զպա- տուիրանն: Ուստի զամենայն ինչ որ լինի չար, ոչ ընութեամբ չար զիտեմք, այլ զի առանց կամացն Աստուծոյ զործին իրք ինչ՝ լինին չար: Տես նզնկայ վարդապետի Կողրացոյ «Եղծ աղանդոց հեթանոսացն»:

ման և վաւերացման տնքակտելի կնիք է զլել մարդկարին սիրու և գուզաւորութեան վերաբ Նալբանդեանցը հենց ալդպէս էլ Հասկացել է առաջին զոյգի ստեղծուելու և գոյութեան խորհուրդը և իւր Ազամին գուրս է բերել կատարեալ մարդ, բայց բոլոր մարդկային թուլութիւններով ՝ Նալբանդեանցի Ազամը պատրաստ է և ուխտել է իսկ կատարեալ Ստեղծողի պատուէրը, ուստի և խնդրում է սէր ոչ թէ նորան վալբաքարչ կրքերի ծառալիցնելու համար, այլ նորանով սիրելու Ստեղծողին և նորա արարածները, բայց նո թուլ է իրրե մարդ, ուստի և չի կարողանում չմերձենալ արգելուած ծառին, որի պատուիներն ալնքան ակնահաճոյ էին երեսու ։ Ազամի, իրրե մարդու, այդ թուլութիւնը գիտէ և Նալբանդեանցի սերովէն, որ համոզում է նորան այդ բայց ու կրակը չուզենալ, որովհետեւ նա թուլ է, նա չի կարող զիմանալ սիրոյ կայծակներին, և, որ զիխաւորն, է նա համոզում է նորան չուխտել, երդում շատ, այլ ներումն խնդրել Արարչից... Նալբանդեանցի Ազամը զուրի է երեսու և փրկութեան լոյսից, այն լոյսից, որ իրրե փարոսի առաջնորդող լոյս տնցնում է Միլտոնի ամբողջ գրուածքի միջից և կազգուրիչ ու սփոփիչ տպաւորութիւն է թողնում ընթերցողի վերաբ

Ըստ գրդարանն հեշտալից.

Յաշիարհ փշոց, ուր Եւայ

Ցորդ խոկ ցաւօք ծնանի,

Թէ և եկեալ Միլտոն,

— Իսկ Ազամ. — տակաւ քրտնի։

Ակների է, որ Նալբանդեանցը պատկանել է Հակառակորդների բանակին և աստուածաշնչական նիւթի վերայ նայել է բոլորովին ուրիշ, ներհակ տեսակետից, քան թէ Միլտոնը։

Գլուխ ժ.

Խնչ խորհուրդ ունի «Աղցմիք»-ը և Խնչ կազ Խորէնի «Ալարդեսիք»-ի հետ Աղցմիքը, ինչպէս ասուած է վերոյիշեալ ընծառականի մէջ, «Ալարդեսիքի մի անդրա-

դարձութիւնն է։ Հանգուցեալ նալբանդեանցը կարգալով իւր միախութեան մէջ Խորէնի արդ գրուածքը, արձագանգ է տուել, պատասխաննել է գորան մի ուրիշ գրուածքով, որ, ըստ արտաքին երևոյթին, մի բոլորովին անկախ գրուածք է, բայց, ըստ ներքին բավանդակութեան, մի կծու քննազտութիւն «քերող քերթող» կոչուած Խորէնի գէմ ընդհանրապէս և նորա Վարդենիքի գէմ մասնաւարտապէս։

Յալտնի է, որ նալբանդեանցն ընդհանրապէս չէր համակըում Միսիթարեանց. նա զնահատելով Սերաստացու և նորա աշակերտների հայոց հին գրականութեան և լեզուի մշակութեան մասուցած ծառայութիւնները, նոյն ժամանակ չէր ընդունում նոցա հայերի մէջ եւրոպական լուսաւորութիւն տարածելու, հայերի և եւրոպացուց մէջ միջնորդ լինելու ձգտումներն ու չանքերը. նա ապարդիւն և վնասակար էր համարում նոցա մանկավարժական գործունէութիւնը և ատելութեամբ էր վերաբերում նոցա քարոզութեան կամ առաքելութեան գործին։ Հանգուցեալ հրապարակախոսի կարծիքով, կաթողիկութիւնն իբրև մի առանձին դաւանութիւն, իբրև մի առանձին եկեղեցի խակապէս գոյութիւն էլ չունի. կայ միայն պապական եկեղեցի և պապական դաւանութիւնն, իսկ կաթողիկութիւննը միայն մի դիմակ է, որի տակ գործում է պապականութիւնը։ Դա, պապականութիւնը չի ընդունում ոչ ազգ, ոչ ազգային լեզու և ոչ ազգային պատամութիւն ու նուիրական աւանդութիւններ։ Դա մի ընդարձակ պետութիւն է, որի սահմանները ձգւում, տարածում են ըոլոր աշխարհում, որի գյուխը պապն է, որի հպատակներն ամբողջ մարդկութիւնն է։ Այդ պետութիւնը կրօնական է, բայց կրօնն ալդատեղ միայն ծէս, միայն արտաքին կեղևն է, դա մի զուտ աշխարհական իշխանութիւն է իւր ըոլոր մանրամասնութիւններով, ըոլոր կազմակերպութեամբ. պապն էլ մի հալբատպետ, մի կրօնապետ է, բայց աշխարհական թագաւորների լիակատար իշխանութեամբ և միայն աշխարհական անսահման թագաւորներին յատուկ և վայել սեթևեթներով։ Նալբանդեանցը, որ իւր ալս հայեացքը կաթողիկու-

թեան մասին շատ հմտութեամբ և ընդարձակօրէն զարգացրել է իւր «Մխիթարյան և Մխիթարեանք» գրուածքում, Մխիթարեանց միւս կամուլիկներից չէր ջոկում, նա կարծում էր, որ նոքա իրեւ կամուլիկ ուխտ և միաբանութիւն ուրիշ պէս էլ չեն կարաղ լինել, քան թէ որ են, ուստիև պահանջել նոցանից, որ նոքա լարգեն իւրեանց մայրենի եկեղեցին, որ նոքա հերձուածող չառուանեն իւրեանց արենակից եղալիներին, որ նոքա ծառային ազգի շահերին և նպաստեն բարուապէս և մտաւորապէս նորա վերածնութեան գործին, մի խօսքով, որ նոքա ազգն աւելի սիրեն, քան թէ պապին ու պապականութիւնը, — ալդ մի ապարդիւն քան է: Պապականների համար ամեն մի բան, որ պապական չէ, որ չի ծառայում պապականութեան շահերին, հերձուածողական է, հեռու է հոգու փրկութիւնից: Ամենաշատը, որ կարելի է պահանջել Մխիթարեաններից, ալդ այն է, որ նոքա հաւատարիմ մնան իւրեանց ուխտի հիմնագրի աւանդածին-հայկական ձեռագրերը ժողովել, մաքրել և հրատարակել նոցա, գրաբառ լեզուն զաել եկամուտ ապրից, հայագիտութեամբ պարտապէլ, գրաբառ թարգմանութիւններ անել հայ հնագիտութիւնը մշակել, և ալդ ոչ իրեւ առհաւատչեալ ազգի լառաջադիմութեան ու զարգացման, այլ իրեւ մի զաւու ուսումնական հայերէնասիրական գործ, մի սովորական profession de fois:

Սլավէս վերաբերուելով գէսի կտթուլիկներն ընդհանրապէս և գէսի Մխիթարեանները մասնաւորապէս, Նալբանդեանցը նոյն ժամանակ մի առանձին հակակրածթեամբ էր նախում այն Մխիթարեան կրօնաւորների վերայ, որոնք երբեմն ժողովում էին ուխտը և վերադառնում էին իւրեանց մայրենի եկեղեցու գիրկը, և ալդ ոչ թէ նորա համար, որ ոյդ նա անօգուտ էր համարում, այլ որ նա չէր հաւատում ալդպիսիների անկեղծութեան: Մասնաւորապէս նա չէր սիրում, թշնամական գիրք էր բռնել գէպի այն չորս վարդապետները, որոնք 1853—57 թուականներին, թողին Ս. Ղազարու կղզին, Հրաժարուեցին կամուլիկութիւնից, վերադարձան հայոց եկեղեցու գիրկը և հիմնագիր եղան Պարի-

զի հայկագեան դպրոցին Դոցանից նամանուանդ նա չէր սիրում մէկին, Գարբիել վարդապետ Ալվագեանին, որ իւր նախիշեանի և Բեսոսարաբիոյ թեմի առաջնորդութիւնը հակառակ կաթուղիկոսի ցանկութեան ստանձնելու, Խալիբեան դպրոցի հիմնորկութեան և նախիշեանի եկեղեցական գումարների հաշուետուութեան հանգամանքներով գրգռել էր իւր գէմ նորա ատելութիւնը և մասամբ արդարացրել էր նորա կասկածները: Այդ ատելութիւնը, որ վերջին ժամանակներն աւելի ևս սաստկացել էր նորա մէջ, որովհետեւ նա կասկածում էր, թէ վարդապետի մատը պէտք է եղած լինի և իրան պատահած դէպքի մէջ, անցնում էր և Ալվագեանի միւս ընկերների՝ Ս Թէոդորեանի և Խորէն ու Ամբրոսիոս Գալֆայեանների վերայ, որոնք դեռ ոչ մի այնպիսի աչքի ընկնելու գործ չէին կատարել, որ կարողանալին փարատել այնպիսի մարդու կասկածները, ինչպիսին Նալբանդեանցն էր: Նոքա, ընդհակառակը, իւրեանց մինչև այդ ժամանակներն արածներով աւելի հաստատել էին նորա կարծիքները, թէ վարդապետները վերաբարձել են հայոց եկեղեցու գիրկը հանգիստ ապրելու, բարձ ու պատիւ ստանալու, վալելելու նպատակով: Ս Թէոդորեանը, այդ ընիկ Հայաստանցին, այդ Բաղեշի զաւակը չէր դիմացել Վաղարշապատի շաղերին և մոծակների խալթոցին, չէր կամեցել ստանձնել Արցախի թեմի կառավարութեան դժուար ու պատասխանատու գործը և վերադարձել էր Պարիզ, բռնելով Հայկագեան դպրոցի և Մուռատեան վարժարանի պատմութեան պաշից, կարծես, հայ վարդապետ չլինէր: Ալվագեանն եղբարացել էր աղա Խալիբի հետ և իւր հակաժազովրդական ընծացքով ահագին խռովութիւն էր ձըգել ամբողջ նախիշեանի և Բեսօսարաբիոյ թեմի մէջ, և, վերջապէս, Ամբրոսիոս և Խորէն Գալֆայեանները, ըստ ամենայնի, գործակից էին եղել Ալվագեանին Խալիբեան դպրոցի, Նալբանդեանցի կարծիքով, վատթար կառավարութեան և գաստիարակութեան գործում:

Մասնաւորելով մեր խօսքը Խորէն Գալֆայեանի մասին, մենք պէտք է ասենք, որ նալբանդեանցը շատ լաւ էր ճանաչում նորան: լաւ բալտնի էր նորան այդ

վարդապետի Պարիզում վարած կեանքը, նա լու տեղեակ էր և նորա Թէօգոսիայի կեանքին և Խալիբետն դպրոցում ունեցած գաստիարակչութեան և ուսուցչութեան գործունէութեան հանգամանքներին Խալբան դեանցի սրատես աշքերը վաղուց արգէն նկատել էին այն երկուորութիւնը, որ երկում է նորա անձի մէջ, ուստի և բնական է, որ չէր կարող խուսափել նորա աշքից Վարդենիքը, որ, ինչպէս ասել ենք, ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյն երկուորութեան արտայալութիւնը, դրական մարմնացումը: Գրելով իւր «անդրադարձութիւնը» Խալբանդեանցը նպատակ է գնում իրան մի կողմից երեւան հանելու հալ գրականութեան մէջ երեւցած այդ երկուորութեան հանգամանքը, միւս կողմից էլ մէրկացնելու Խորէնի անձի երկդիմութիւնը, որ նա ամէն միջացներով աշխատում էր ծածկել, դադանի պահել ժողովրդից «Աղջմիք» ինչպէս յալունի է, կոչւում են այն շարտկանները, որոնք սովորաբար չեն երգուում եկեղեցում մեծ պասին: Խալբանդեանցն իւր Աղջմիքով կամենում է ասել, որ Խորէնի Վարդենիքն այն վերին, հոգեսոր սիրոյ իմաստով զրուած տաղերը չեն, ինչպէս որ նա ճգնում է ցոյց տալ, որ նորա տաղերի մէջ գործող «քոյլ և եղալյրն» այն համահարազատ քոյլ և եղալյրը չեն, ինչպէս որ նա աշխատում է ներկայացնել, և, վերջապէս, որ նորա երգերի մէջ մեծ տեղ բանող կրօնական խորհրդածութիւններն ամենելին չեն քօդարկում երգերի իսկական իմաստը, ինչպէս որ նա կամեցել է անել, այլ նոքա զոււա սիրահարական երգեր են, նոքա մի ազցմիք են աշխարհական մտքով, ինչպէս իւր «Աղջմիք» ը:

Հէնց այդ հանգամանքն ապացոյց տալու դիտաւորութեամբ է, որ Խալբանդեանցն իւր բանաստեղծութիւններից մի քանիքի համար ընարել է նոյն՝ խորագրերը, որ մենք տեսնում ենք և Վարդենիքի մէջ և նոցա ալդ նոյնատեսակ խորագիր ունեցող բանաստեղծութիւնների մէջ նոյն պարզ ու ակներև կերպով երկու սիրութեամբ հարաբերութիւնն է նկարագրել, հակառակ Խորէնի նոյն խորագրերով բանաստեղծութիւնների մէջ նոյն բանի քօդարկուած նկարագրութեան-

ալդ նպատակով է հէնց, որ նա իւր բանաստեղծութիւնների մէջ իրը գործող անձն ներկալացնելով «Հրեշտակ» և կոյս, «Հարանքով» և եղբօրորդից, նոյն ժամանակ և վերագրել է նոցա զուտ պոօրեալ մարդկալին, սովորական լատիութիւններ, Հակառակ լորէնի արածին, որ իւր Վարդենիքի մէջ կամեցել է ամեն բան ծածկել, ամեն բան քօղարկել քոլը և եղբայր նուիրական բառերի սրբութեան տակ:

Բացի Խորէնի անձի երկդիմութիւնը և նորա Վարդենիքի երկուորութիւնը ցոյց տալու դիտաւորութիւնից, Նալբանդեանցը նպատակ է ունեցել իւր Աղցմիքով երևան հանելու և այն, որ Խորէնը և բանաստեղծ ու Հայկարան էլ չէ: Նալբանդեանցի կարծիքով, Խորէնի և նորա նմանների բանաստեղծ լինելու ընդունակութիւնն ալնքան է, ոս նորա կարսդ ևն արուեստական կերպով չափածոներ յօրինել, որ, յալոնի բան է, իսկական բանաստեղծութեան հետ ոչ մի կապ չունի, իսկ նոցա գրաբառի գիտութեան աստիճանն այնքան է, որ շատ մեծ բան է, եթէ նորա կարողունան մեր տոաքելանման թարգմանիչների լեզուն հասկանալ, այն ինչ նորա իւրեանց քերթողական արուեստով ձգտում են հասնել Ենքապիքին և Եփփերին, իսկ իւրեանց գրաբառի գիտութեամբ լանգզում են նմաննել մեր բազմերախութարգմանիշներին: Ալդ մի մեծ լանգզնութիւն և ծիծաղի տրժանի լատիութիւն է, որ սեփականացը ել են իրանց Խորէնը և գորա նմանները, որովհետև լայտնի է, որ մի քանի բառ ու առղ գրաբառ «կաղակրիխն կակազելով» զեռ չի կարելի հայկարան կոչուել, ինչպէս որ բազմաթիւ չափածոներ գրելով էլ չի կարելի քերթող համարուել: Խորէնը քերթող չէ իւր գրուածներում, ինչպէս ինքը Նալբանդեանցը քերթող է համարում իրան իւր Աղցմիքի մէջ, Խորէնը հայկարան էլ չէ, ինչպէս որ Նալբանդեանցն իրան հայկարան չի համարում իւր նոյն Աղցմիք գրուածքում:

Ահա ալդ հանգամանիքի վերալ է ակնարկում հանգուցեալ Հրագարակախօսը, երբ իւր Աղցմիքի համառուտ լառաջաբանում ասում է. «Զարս մի և եթ կանինեմք աղաչել, զի մի ոք համարեսցի եթէ և մեք առ

Հայկաբանս կամ առ քերթօղս զանձինս գրիցեմք. քառ լիցի մեզ, Գուգնաքեալ ոք, ալր մի տառապեալ, խոստավնիմք, այլ՝ սպաս արարեալ ճշմարտութեան, ոչ երբէք զանձինս ունիմք առ որ չեմք, և ոչ երբէք: Ընդէ՞ր իսկ բնաւ և մաղթանք. մի որոց աչս ունիցին տեսանելով ոչ զգոլով գուշակիցեն, անդէն իսկ ի վերծանութիւն մատուցեալ: Ծագու արդար իսկ արժանիմիթէ ամենայն որ կաղակրին կակացէ, լիցի ի բարբառ գրդարանին, հայկաբան իցէ, կամ որ չափաւն քերթող, «Եւ Սաւուղ ի մարդարէս», որպէս առեն Գիրք, Քառ, և մի լիցի, ասեմք և կնքեմք, այլ զգիպոլն առանց բնաւ թանկուզանաց, արդիւնաւոր ճշշմարտութեամբ և փորձոյ՝ զպատասխանին ճահեցուցանեմք. ոչ բազում լիցեն, քան եթէ սակաւք, զի առծանր թեթեկութեան անձամբ զանձինս յանդգնեցուցանեն, մինչև, թէ տալր ոք, զբազմերախտ և զառաքելանման մերոց թարգմանչաց զգահուց ըուռն հարկանել: Սակաւք լիցեն առ մեզ, օրէն լիցի հարցանել, որ ի չափս ինչ արաւեստակեալս զհողմս արածեալ միանդամ, զնէքսպիրի կամ զնիլերի լրբին թեկն ածել, որոց և ոչ իսկ համբակացդ՝ անլուալից սոգիւտ թերևս ի ճահ: Եթէ փութացաք ուրեմն քաւել յալդպիսեաց՝ թուի մեզ, թէեւ ոչ իւիք ինչ գրեցաք, Նատ իսկ իցէ մեզ՝ ստուգութեամբ ասեմք, և կարէ շատ, եթէ զանձինս ի նախագրունս անդէ համարձակեցուցուք գիտութեան լեզուիս, զոր լեզինից արդեօք հրաման տալր ուսանել Քաջարանցն Արամ: Թօնզ զքերթողականին վսեմ ճարտարաւթիւն, որով սակաւք լուժ, քան եթէ բազումք, խիլալին ի բնութենէ՝ ստուգալին զոզցես կալծակամբք ջահաւորեալ, ըստ որոց՝ եթէ ալլոցն միայն քերթօղաց—հակալից խելամուտ կարացուք լինել ուրիշ վաստակոց, ալդէն երանելի զմեզ համարիմք»:

Ալդ հանգամանքի վերալ է ակնտրկում նաև, երբ իւր նոյն Աղյմիքի մանր բանաստեղծութիւններից մէկում հեղնօրէն «Փերող-Փերմող» անունն է տալիս Խորէնին, կամենալով գորանով ասել, թէ Խորէնի մէջ ամեն բան արուեստական է ու անբնական: Խորէնը և զորա նմանները, Նալբանդեանցի ասելով, քերթող կամ

բանաստեղծ չեն այն մտքով, ինչպէս մենք ենք հասկանում, այլ քերող են, այսինքն լոկ արհեստաւոր, զրկուած ստեղծագործութեան ընդունակութիւնից, զրկուած իւրեանց սրտի բղխմունքը և զգացմունքի գեղմունքը ընական, անարուեստ կերպով արտայալտելու լատկութիւնից:

Երբոր Նալրանգեանցն իւր այլ Քերողն-Քերթոր բանաստեղծութեան մէջ ասում է, թէ բնութեան մէջ ընձեռած առոր հոտից մաքուր ցորեն ստանալու համար, պէտք է նորան կալսել կալսում և մաքրել թեփից, թէ երթեւեկելու յարմար ճանապարհ պատրաստելու համար, պէտք է առավարները լարդարել, արգելքները հեռացնել և զետերի վերալ կամուրջներ շինել, թէ, վերջապէս, գոհարին շող ու ցոլք տալու համար, պէտք է ճարտարարութեամբ քերել նորան,—այդ բոլորովին համականալի է, օրովհետեւ ընութեան ըսուր տուրքերն ընդհանրապէս կարոտ են մշակութեան, բայց երբ նա զեզեցիկ կոլսին նմանեցնում է մեծագին գոհարի և խորհուրդ է տալիս նորան Քերթող կոչուած Քերտղի մօտ, որ նա քերէ նորան փալն ու զեզեցիս թիւնն աւելացնելու համար, և խորհրդաւոր կետեր է զնում, —զորա մէջ արդէն արտայալտուում է մի ամպիսի կծու հեգնութիւն, որ, բացի նորանից, որ ընորոշում է Խորէնին իրրեւ արհեստաւոր քերթողի և ոչ իսկական բանաստեղծի, այլ և ակնարկում է և նորաաշխարհալին հակումների և փարած կեանքի վերաբ:

Յորեան՝ ատոք ի հասկին, Ո՞չ հոբեշտակն ցցասաց
Մեզ ընձեռէ ընութիւն. Պատկան ալդմ օրինաց,
Այլ ո՞ ի կալ ո՞չ կառու, Զամենալն փակեալ բանալ
Ո՞ զթեփ ոչ ընկենու. Զի որ զկնին նորա գալ՝

Մնան միշտ ընութեան Ելցէ և մոցէ

Տուրք մշակութեան. Եւ ճարակ զտցէ?

Ուզոյ եղեալ այլ ոք այլ, Եւ ահա կոյս հրաշաւոր,
Ընդ բոխասէր առապար. Ճոխ հեշտալեօք բիւրաւոր,
Ո՞չ զատանան ծն ի բաց, Այլ զի գոհար մեծագնոյ
Եւ ուահ հորդեալ դիւրագնաց? Ոչ շողալ թարց քերելու,
Սոսկ ի մարդոյն մուրճ Ածէք առ քերօցն
Ցարդարի կամուրջ:

Անուանեալ քերթող!

Քերի ակնն և թռչին
Բեկորք մանունք ի գետին,
Նարտարին բարախէ սիրտ
Բեկորք փալին ի լակինթ...
Երգի ի քնար
Ի վաղիւ գոհար:

Ո՞րքան ճշմարիտ ու արդարացի է նալբանդեանցի
ալդ կարծիքը Խորէնի անձի վերաբերմամբ և ո՞րքան
ստորդ ու իրաւացի է նորա դատաստանը նորա գրուածք.
Ների մասին ընդհանրապէս և «Վարդենիք»-ի մասին
մասնաւորապէս Որ Խորէնն ունենալով բանաստեղծու-
թեան փոքրիկ կայծ ու շնորհը, այնուամենալինիւ իւր
գաստիսարակութեան շնորհիւ ու կեանքի զանազան հան-
զամանքների աղդեցութեան ներքոյ երբէք չկարողա-
ցաւ խօփակոն բանաստեղծ գառնալ, և որ նա հոգևո-
կական լինելով, հոգեորականի կեանք չվարեց, միշտ
կեղծաւորելով, միշտ իւր աշխարհային հակումները ծած.
կելով հոգեորականութեան դիմակի տակ և ալրախտով
տուած բերելով իւր մէջ մի տեսակ երկդիմութիւն և իւր
գրուածների մէջ երկուորութիւն, - ալդ մի զուտ ճըշ-
մարտութիւն է, որի մասին մենք արդէն իւր տեղում
խօսել ենք, բայց որ նա ալդ բոլորի հետ միասին հայ-
կարան կամ գրաբառագէտ էլ չէ, ալդ միշտ չէ, կամ,
առնուազն, շատ խիստ էլ Խորէնը, ինչպէս ցոյց են
տալիս նորա գրաբառ ինքնուրոյն գրուածները - «Քնար
պանդխտին», «Վարդենիք», նորա գրաբառ թարգմանու-
թիւնները - «Դաշնակները», «Յովհանն Դարդելին», ողբեր-
գութիւնները, լաւ գրաբառագէտ է, օժտուած հայկա-
քանութեան ալն բոլոր առաւելութիւններով, որոնք
բատուկ են ընդհանրապէս բարոր Միթթարեաններին:
Նա, ի հարկէ, Գարբիէլ Ալփազեանը, Արսէն Բագրա-
տունին, Ղեոնդ Ալիշանը, Արսէն Ալտնեանը և միւս
Միթթարեան գրաբառագէտ պարագլուխներից չէ, բայց
նա և գրաբառ. «կաղակրին կակազողներից» էլ չէ,
ինչպէս ասում է նալբանդեանցը: Նա մեր երանելի
թարգմանիչների լեզուն ազատ հասկանում էր, նա
արձակ գրում էր, սահուն, կանոնաւոր, անոլշ ոճով

շարադրում էր, մի լատկութիւն, որ միայն կարսղ են ունենալ լաւ գրաբառագէտները, հայկարանները:

Մենք առհասարակ անսարդարացի և խիստ ենք համարում հանգուցեալ հրապարակախօսի այն խօսքերը, որ նա իւր Աղցմիքի յառաջարանում ուղղում է Խորէնի և Միիթարեանների հասցէին ընդհանրապէս. Շնչ բազումք իցեն, քան եթէ սակաւք, զի առձանը թեթևութեան անձամբ զանձինս լանդգնեցուցան, մինչև, թէ տայլը ոք զբագմերախոտ և զառաքելանման մերոց թարգմանչաց զգահուց բուռն հարկանելոց: Միիթարեանները, ինչպէս լալտնի է, զաեցին, մաքրեցին մեր զասական լեզուն այն բոլոր եկամուտ և օսար տարրից, որ երկար ու ձիգ ժամանակի ընթացքում առատութեամբ սպրդել էին նորա մէջ, սպոզել էին նորան. նոքա ֆլ զարում վերականգնեցին Ե զարի լեզուն և մի տեսակ գրաբառի վերասատեզող հանդիսացան մեր մէջ, ուստի և չպէտք է զարմանալ, եթէ Միիթարեաններից ոմանք գրաբառ շարադրելու ասպարիզում այն աստիճանի վիրատուցութեան հասան, որ մինչև իսկ յաջողեցան Ուկեդարեան լեզուով զրել և նոյն իսկ Ուկեդարեան հեղինակների զափնիներին մրցակից եղան: Պորոն ապացուց կարող են իինել նոցա բազմահատոր ինքնուրուն և թարգմանական գրուածները, սրոնց լեզուի կանոնաւորութիւնը, լսակութիւնը և անուշութիւնն ոչնչով յետ չեն մնում մեր Ուկեդարեան հեղինակների գրուածների լեզուից, չենք խօսում արդէն մեր վեցերորդ ու յաջորդ գարերի հիղինակների մասին, որոնցից նոքա ամեն բանով գերազանցել են:

Եւ լետոյ, ինչ խորհուրդ ունի այն համեմատութիւնը, որ Նալլանգեանցանցն անում է իւր Աղցմիքի և Խորէնի գրուածների մէջ: Ալդ, ի հարկէ, մի կծու հեղնութիւն է, որպէս նո կամենում է ասել, թէ ալոյիսի բանաստեղծութիւններ, որ պարունակում է իւր մէջ Վարդենիքը, ինքն է, կարող է յօրինել, բայց արնուամենալիւ ինքն իրան բանաստեղծ կամ քերթող չի համարում, թէ այնպիսի գրաբառ լեզուով, որով շարադրում է Խորէնը, ինքն էլ կարող է շարադրել, բայց դարձեալ իրան հայկարան չի համարում: Սակայն մենք

կարծում ենք, որ այդ մի մեծ Համեստութիւն է, որ գիտակցաբար կամ անգիտակցաբար գործ է գնում նալ-բանդեանցը և գորանով մասամբ ինքն իրան հակասում է: Աղցմիքի մեծ մասը, ինչպէս արդէն մենք ասացինք, զուտ բանաստեղծութիւն է, ուրեմն, հանգուցեալի խօսքերից գուրս է գալիս, որ և Վարդենիքն եթէ ոչ ամբողջ թեամբ, գոնէ, մասամբ բանաստեղծութիւն է: Ակ և է, եթէ ոչ արտաքին, գոնէ, ներքին հակասութիւնը, որովհետեւ նալբանդեանցն Աղցմիքում ինքն իրան համեստութեամբ բանաստեղծ չի համարում, այն ինչ էսկապէս նա հէնց իւրաց գրուածքում Հանդիսանում է իւրեմք բերթող:

Ալսեղ խօսք միայն կարող է լինել լեզուի, գրա-քառագիտութեան, հայկաբանութեան մասին: Ինչ ա-սել կուզի, որ Աղցմիքի գրաբառն էլ մի կանոնաւոր ու սահուն լեզուն է, ոչ հեռի իսկական հայկաբանութիւնից, բայց արգարութիւնը պահանջում է ասել, որ այդ լեզուն չի կարող հասնել Խորէնի երկերի գրա-բառ լեզուին: Նալբանդեանցի գրաբառը Տէր-Գարբիշի Պատկանեանցի և ընդհանրապէս Հայոց հին փարժա-պետների լեզուն է, իսկ Խորէնինը՝ Մխիթարեանների բոլոր այն բնորոշ տարրերութիւններով և առանձնա-լատկութիւններով, որ կալ Հայոց այդ երկու գրաբա-ռապէտ դասակարգի լեզուների մէջ:

Առարկայի գրականութիւնը

1. Մատենագրութիւնք Մ. Պէշիկթաշլեմնի, Պօլիս, 1870.
2. Ալաֆրանկա, կատակերգ. Հինգ ար. Թէոդորիս, 1862
3. Иллюстрированная история новейшей французской литературы А. Пти-де-Жюльвиля, перевод съ французского подъ редакціей Ю. А. Веселовскаго.
4. История французской литературы XIX вѣкъ Г. Лансона, проф. Ecole Normale въ Парижѣ. Переходъ съ французского подъ редакціей П. О. Морозова.
5. Դաշնակը Լամարթինետ. [Ժարդմանեաց ի չափս հայկականս Խորէն վարդապետ Գալֆայեան, տեսուչ Հայկազեան վարժարանի. Փարիզ, 1859.]
6. Արաքս, 1893.
7. Արշակ Բ., ողբերգութիւն. գրեաց Խորէն վ. Գալֆայեան. Թէոդորիս 1861:
8. Յաւելուած ի պատմութիւն վերադարձի երից վարդապետացս ի ծոց Հայտաստանեաց սուրբ եկեղեցւոյ Փարիզ, 1858:
9. Արշակ Բ., Ժամանականուագ ի չորս հանդէսս. Քերթուած Թովմաս Թէրզեանէ. Կ. Պօլիս, 1871.
10. Արշակ Բ., ողբերգութիւն. Յօրինեաց Էմմանուէլ Եսայեան, Պօլիս, 1870:
11. Պատմութիւն Խալիպեան ուսումնարանին ազգիս Հայոց. Տփիլիս, 1880:
12. Վարդենիք. Տաղերգեաց Խորէն վ Գալֆայեան ի Թէոդորիս, 1863:
13. Քնար պանդխախն. Տաղերգեաց Խորէն եպիսկոպոս Նորպէյեան, Պօլիս, 1868:
14. Միլտոնի Կորուստ Դրախտին. Թարգմ. Հ. Արսէն Կամիտաս Բագրատունի ի Մխիթ. Վենետիկ, 1861:
15. Հոմերի իլիական. Հան ի հայ Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի. Վենետիկ, 1864:
16. Պատմութիւն Հայոց. Աւետիս վարժապետ Բերբերեանի, Պօլիս, 1871:
17. Պատմ. Մուրատեան վարժարանի Ս. Թէոդորեանի:
18. Մշակ լրագիր, 1878,
19. Արձագանք լրագիր, 1893,
20. Մասիս լրագիր, 1881,

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ազգածունը քերած)

Ա. Պ. ԲՈՅԿԻՆ

Դործ հանգուցեալ Միբայել նալբանդեանցի
Բանտարկութեան մէջ,
Ընդէմ Վարդենիք անուամբ զբբցյին
Խորէնի Գալֆայեան
Թէռդոսիայ:

ԱՂՅՄԻՔ

«Je veux montrer à mes semblables un homme dans toute la vérité de la nature».

J. J. Rousseau (Confession).

ՈՒՂԵՐՁ

«Compte rendu!»

Որում Խորէն հանապազ
Լարակառուր և քնարվին
Վարդենեաց ոչինչ նիազ
Գողարիկ անդրաձայնութիւն:

ԱՅԻ ԸՆԹԵՐՑՄՆԵԼԻՄ

«Je ne veux pas passer pour meilleur que
je ne suis».

J. J. Rousseau Nouv. Héloïse

«Non, mes amis, non, je ne veux rien être...
De mon berceau près de benir la péille
En me créant Dieu m'a dit ne sois rien».

Béranger.

Զայս մի և եթէ կանխեմք աղալել, զի մի ոք համարեցի
եթէ և մեք առ հայկարանս կամ առ քերթօղս զանձինս զըի-
ցեաք. քաւ լիցի մեզ: Գուզնաբեայ ոք, այր մի տառապեալ,
խոստովանիմք, այլ՝ սպաս արարեալ ճշմարտութեան, ոչ երբէք
զանձինս ունիմք առ որ չեմք, և ոչ երբէք:

Ընդէ՞ր իսկ բնաւ և մաղթանք՝ մի որոց աչս ունիցին
տեսանելով ոչ զդոյն գուշակիցեն, անդէն իսկ ի վերծանու-
թիւն մատուցեալ Սազու արդար իսկ արժանի. միթէ ամենայն
որ կաղակըլին կակազէ, լիցի ի բարբառ զրդարանին, հայկա-
րան իցէ, կամ որ չափաւն՝ քերթնդ. Ճռ Սաւուդ ի մարզա-
րէս, որպէս ասեն Գիրք:

Քաւ, և մի լիցի, տանիմք և կնքեմք, այլ զդիպողն առանց
բնաւ թանդուզանաց, արդիւնաւոր ճշմարտութեամք և ի փոր-
ձոյ՝ զպատասխանին ճահեցուցանիմք. ոչ բազումք իցեն, քան
եթէ սակաւք, զի առ ծանր թեթևութեան անձամք զանձինս
յանդգնեցուցանեն, մինչե, թէ տայր ոք, զրադմերախտ և զա-
ռաքելանման մերոց թարգմանչաց զգահուց բուռն հարկանել:
Սակաւք իցեն առ մեզ, օրէն լիցի հարցանել, որ ի չափս ինչ
արուեստակեալս զհողմս արածեալ միանդամ, զնեքսպիրի կամ
զնիլիքի լրբին թեկն ածել, որոց և ոչ իսկ համբակացդ ան-
լուայից ստգիւտ թերևս ի հան:

Արտացելոյն
Վառեն զճակաս և հնչէ
Նզորորդուոյն
Քնար, ւ'աղաւնեակն զի մնչէ...
Աւ ի թաւուտս
Սաղարթախիսս պարտիզկան
Ինդ առաւօտս
Կանիսեն ամոլք միաբան՝
«Ո՞ պատմասցէ
Զորոց սիրոյն հանեն ձօն»...
«—Մի մեղիցէ.
Նոցա՝ անսէրն անկրօն».

Բ. ԱՌՅԱՋ

Ինդ ինրինս ալպեան սահեալ
Անցանեմ ի Գագգիս.
Ցրտահար և տուայսեալ
Անփառագեղ՝ զամ, գոնեայ,
Եւ ծխին յատն ինրին
Մերքենայը որ և սուլեն
Աւշիորք խուժին խոնին
Ի կաս կառա, և ձեպեն:
Ի Փարի՛զ, ո՞ր, ի Փարի՛զ,
Ցաղատութեանն յորարան,
Ի սուլը սիրոյ հայրենիս՝
Ռւը պա՛ր յաւերժ և իրախնան,
Ընդ քարչ տանիմ զասկերս իմ՝
Մաղապուր խզեալ զկապանս,
Հանգուցասել յաղբատին
Ի մերայոց օֆիհանս:

Tiens! կացեալ առ դուրս տան
Զայնէ առիս նուիրակ,
Եւ ես, յանդէսս ի մթան,
Կարեմ զուղին խոտորնակ...
«Par ici, monsieur, par ici!...»
(Cinquante six, rue Richelieu)
—Hein! qu'est ce qu'il y a donc?..

Merci!!!

«Ա լա չօքի՛... ս'ի վու պլատ!...»
Այլ ես ի գէն յասպագէն
Վառեալ սիրոյ երկնային
Թափուր զնաղփս առ գնեմ
Լարեալ ինձ և թուխու,
Ի մհնացեալն Գրընել.

Ուր եղբայր ցանդ ինձ մնայր,
Ուր սուրբ էին մռւտ և ել՝
Եւ սէր իսկ ոչ ննանայր:

Գ. ՀՐԵՇՏԱԿՆ ԱՂՕԹԻՑ:

Որ բնաւ ի տաճարս
Ոչ բնակիս ձեռագործ,
Որոյ են երկինք աթոռ
Եւ երկիր կայ ընդ աթուր,
Հաճեցար զանուն Քո
Կոչել ի վերայ մատրան,
Ի վերայ մեր այս տան՝
Յոր բնակին որդիք Քո
Սրբոթեան կանգնեցաւ
Սեղան Տեառնդ ընդ հարաւ,
Որդւոյդ առ յիշատակի
Հաց և զինի Քեզ մատչի.
Ոչ զաս ի հարաւոյ
Ոչ սուրբդ ի Փառան լիռնէ.
Մարգարէն զայս ասէ,
Շարժեալ ի Քումմէ Հոգւոյ:
Կարկեցան և ծանտից
Բերանք, լեզուք թռնալից
Մինչ ընդ որրոյն ներսիսի
Տօնեցար զիրիզորին,
Եւ դաշնակն ¹⁾ հրաշաձայն
Յաներեսոյթս սրովրէից
Օրհներգուաց երգակից
Գտաւ Քեզ յերեքորբեանն,
Հայեաց, Տէր, ի ծառայո,
Եւ մի յիշեր զանուղղայս,
Աջ Քո լիցի ի նոսա
Այլ ի շարէն զիս փրկեա,
Զորդի Քո աղախնոյ
Աւմ քրու հտուր օիրալիր
Եւ զսուրբ խաչ ի կիր
Զնշան Որդւոյ մարգոյ:

¹⁾ Յայսմ և ի տոյն միայն ներեմք մեզ, և այն ոչ ան-խորհրդաբար, որպէս թէ կամեցեալ ասել «քոյդ ցքեղ», կիրա-սութիւն բառիդ ըստ այդմ առման, զոր այլուր մերժեմք իս-պառ, որպէս կամամտածական բռնազրօսութիւն լեզուիս:

Պ. ՏԵՂԻ ՏԱՆ ՑԽՈՌՈՒԹԻՒՆԸՔ

Ընդ վարսագեղ ծառով նստեալ հառաչէր
Են ինչ տակա արևն զգիշեր հալածէր,
Եւ թռչնակաց հոյք համակեալ ի գեղգեղս
Բիւր գայլայիկս յօրինէին քաջնամեղս.
«Եւ զի է քեզ, ասեմ ցկոյն, համակիլ
Յանդ ի թափիծ, և ուստի քեզ վարակիլ
Յախտ անծանօթ, յորմէ կայիր ցարդ անփորձ,
Մի թշնամի Նստուած ի քեզ զայդ երյց»:
Զայս առ կոյսն, և զնորա իրանաւ
Պարապատեալ թաւալիմք առ վարդենեաւ
Ի զալարիս, յոր երկինք զեռ ցողէին.
Եւ ձեռք բաղուսը սրտի կուսին պատահին.
Այլ խուն ի վեր ամբարձեալ անդր զաջ ի խանդ
Զնախաննառ լուծանեմ կուռ զարմանդ,
Եւ անդրանիկ ցոյք նշուլից արհուն
Ի ստեաց կուռին արտափային գոյն ի գոյն:
«Քանի վաեմ, զի վայելուչ, մնծ եւ, Տէր,
Սիրոյդ ի շունչ որ գտիեգերս առլցեր.
Եւ ժապնեցի ստգիւր գնել ի դործ քոյ
Որդնն չնշին, բանիւ անդուռն բերանոյ»:
Յորդան կարմիր ի շրմանց լարս կուսանին.
Ժպիտ փայիլ, յայտս գոհար վարդք վառին,
Հաւատարիմ մնայ ստկայն լուռթեան...
Ես իմ անդէն.—եթէ ոչ սուբբ լնութեան:

Ե. ՕՐՀՆԵԱՆ ՂԻՅԻՍ ՔՈՌՅՐ

Սիրս քո օտար լիցի, ոյլ կոյս,
Ընդ վայրայօն պլրանաց,
Որսց բախեն՝ բաց զքո դուրս,
Մի մերեսոցի ոք ի բաց,
Եւ ընդ յարկաւ քո խորանին
Ասպնջաման թէ գացիս
Սիրատենչակ լքեալ հիգին,
Յաւիտեան օրհնեալ լիցիս:
Թէ ոյը չիցէ զլիսյն տեղի
Եւ դու նմա զքո բարձս...
Թէ կորացեալ զոււխ գգուի...
Զգեալ ի քէն զնոր կեանս,
Տաղաւարիդ Արբահամեան
Ի Մամբրէի կաղնւոյն ցից
Օժտեսցէ միշտ Ամանորայն
Յաւիտեան օրհնեալ լիցիս:

Թէ սիրակէղ հէզ ծարաւոյ
Ընդ ծագ պտղանն ջւր խնդրել
Նահապետին ի Յակոբու
Զքնորոյդ դու տաս ըմպել,
Պրկնավուակ աղբերակիդ
Յանոյշ վիճակն հրճուեսցիս
Եւ մի կացչէ ակնդ վճռ՝
Յաւիտեան օրհնեալ լիցիս:
Մասապերամ հէզ այգորդաց
Եթէ զայզիզ տաս ի զործ,
Եւ վաստակոցն արդեօք քրուանց
Բերես առնուլ զքաջ փորձ...
Միրողապէս թէ ուզդեցցս
Յամբոյց տիգեալ խաւարծիս՝
Բուռն քեզ բուցի միշտ քաջապէս,
Յաւիտեան օրհնեալ լիցիս:
Լիկեալ ումեր վարդից ի հայց,
Դու՛ որպէս մայր գթութեան,
Տաս և զոյզ գթթեալ նուանց,
Եւ մածեալ լեռնակողման
Առաջնորդես այգուոյդ գինւոյն
Ի կենսարաշն խառնելիս՝
Զա՞փ քեզ ի զոդ տացի շարժուն,
Յաւիտեան օրհնեալ լիցիս:

9. ՄՈԴՋԱԾՏԷՆ ՅԱԶԻ

«Celestial Dian, goddesse argentine,
I. will obey thee,
Hakspeare. Pericles, prince of Tyre.
Act v. scene.

«Որոց սիրեն զիս
Անուն ի յերկինս
Ի վեր քան զարե
Գրեսցի ինն
Նա, կոյս սիրասուն
Որ զնէդն անտուն
Զօնեալ յեր ի սէր
Պաշտէր յանձանձէր,
Աւանիկ անա
Ընդ երկինս սիզայ,
Յաստեղացն ի պար
Զանեալ բոցավուն...
—Զինչ անուն նորա, —
Հարցանէ ցնս

Զոնն թակարդեալ.
—Կամ զինչ նորա փայլ,
«Առնաշափ անա
Ի վեր բարձրանայ
Եղերտից սահեալ
Ընդ մէզ ընդ մուայլ,
Աստղիկ վեհափառ,
Արուսեակզ փարմիառ,
Կոչէր առ նախնեօք,
Եւ պաշտէր բագնօք:
Խոկ զքեզ, ով կոյս,
Շուշան դեռաբոյս,
Ի լուսին կարգեմ
Սիրացուցանեմ,

Ընդ Ոսկիամօր
Տիկնոջն երկնաւոր
Պաշտեալ առ նախնիս
Յողջոյն աշխարհիս.
Խնկեմ զանուն քո
Երգեմ զսէր քո
Բամբռան ի լար
Կնտնտցանք
Որմիզդ իսկ յերկինս
Կացցէ ի յակինուս...
Միւյն թէ յազես,

Յոր ցանդ ըդձամ եաշ ...
Էւ չոշափեցա՞ն
Սովոր կուսական,
Միրանէծաղիկը
Լուծան կուսութիւնք.
Մոգպաշտէն վաղիւ
այ զմասենիւ,
Յոր զրէ զկուսին
Անուն ի լուսին:

Ա. ՀԻՄԿԵՆ, ՈՎ. ԿՈՅՑ: ¹⁾

Եւ յԱրուսեկին
Զոր թաւուտք գդուեն
Յախտարծարծ լերին
Ի թաւալոցէն,
Հըեշտակին մատունք
Մահին դիւրաչուրջք,
Ծնդ կմբայն կայտառ
Երթանցն ի ծրաբ:
Ի շրթանց փոքունց
Ի յաւերծհարսանց,
Պարզեալ զիւրարյժ
Մետուն զեղապանծ
Ռւնի գտաճարին
Զմուտ խորանին
Քարող պարծանաց
Կուսից ամօթիւած:
«Հիմէն, ով դու կոյս,
Եւ պահեալ անխախտ
Լեր ինձ կենախուզ
Կամ զկնքեալ դրախտ

Թողացն բանալ
Բարձր ի գլուխ սիդալ
Յանձմատոյցն յալոց
Մտեալ հաւարց:
Յիս, կոյս, յիս ցօղեան
Կուսութիւնս առատ
Նորոյդ Սանիբայ
Զուղիս անարատ,
Լիցի ի թերափ
Իսկ խարամանւոյն՝
Բաժակ մահաթոյն»..
Եւ հնձանահար
Թաթաւեալ զձորձս
Ի բոսոր պայծառ
Տաճարին ի մուտս,
Գայ որովէս փեսայ,
Նազի և ցնծայ,
Իսկ խարամանին».
—Ալլայ ցաւագին:

Թ. ԱՅՍ Է ՀԱՅԳԻՒՍ ԻՄ

Որպէս զգուէ բնութիւն զարհ
Յետ անձրեաց, յետ բբոյն.
Որպէս զարթիու թօշնեալ տերե
Ի ցող զուարթ յետ տապոյն.

¹⁾ Յաւօր սրտի պէտք է տաենք, որ 7 բգ զիսի բնադիրը տպարանում կորած լինելով անկարող ենք տպել: ԽՄԲ.

Ո՞րպէս լերինք, հովիտաք, ծործորք
 Մերկացեալ զձոյլ ստոփն,
 Ընդ շունչ գարնան՝ ո՞րպէս և ձորք
 Գեղեցկանան դալարին:
 Ո՞րպէս ըղձայ այր շինական
 Բիւրաբեղուն լի հնձոց.
 Կամ այգւոյն տէր՝ սիրո ի բերան,
 Ո՞րպէս խաղողոյն կթոց:
 Ո՞րպէս նաւորդ հոգմակծեալ
 Անձկայ հողոյն հաստատուն.
 Ո՞րպէս նմա շող փայլակեալ
 Զօր հատանէ յուսատունն՝¹⁾
 Ո՞րպէս սորուկ թոպեալ ի զան
 Ո՞րպէս պասրի փրկութեան,
 Կամ բռնութեանն զոհ ի կապանս,
 Խապարանին խորտակման:
 Պատիր սօրա են ուրուականք
 Առ անձկութեամբ հրեշտակին.
 Զիք ի բնաւս, չիք օրինակ,
 Որպէս զրկաց նա կուսին
 Զմուռու բուրեն ստեանց պակունք
 Յայն հոտոտի մեր քերուր,
 Ի շաղ կրծոց նորա պասուք՝
 Ո՛չ, բժշկի ի մի ումալ:
 Անդ և թակոյկը հախարակեայ
 Ժմտեալ նմա գոդ ի խինդ,
 Անդ և սոսորդ ոչ ի բացեայ
 Երկի՞նք, արոփէ սիրոն ի թինդ...
 Ի սարաւոյթ փրփրածնին
 Կրկնամանկին ընդ ակօս,
 Զդրանդեաք յաէրծնարսին
 Քերի հրեշտակին փաղլոս...
 Կալեալ զառու կրկին աղբեր՝
 Խան ցօղանար, տայ մզնն,
 Առ սողոսկեալ կռուի ի վեր՝
 Մինչ ի Հայոց կոկւսոն...
 Յաձեղ ծարաւն զջուր խնդրեալ,

1) Կամ առ ոչ գոլոյ ի լիզուիս, կամ առ մերոյ տղիտու-
 թեան՝ զայս բառ ունիմք յանզդիականէն—Lidhthouse լուսա-
 տունն Խոստովանիմք, բառս այս տեսաւ ի կիր արկեալ օյապէս
 լուսաստու աշտարակը, անշուշտ, ստոյգ թարգմանութիւն ի
 զերմանականէն—Leuchthusin. բայց անգդիականին համառօ-
 տութիւն՝ մանաւանդ սիրելի մերոց է ախորժակաց: Եղ ամե-
 նայն ոք զիւր կամս հաճեսցէ:

Եւ ջնոր նմա՝ բնդ եղէ՝ զնն.
Եւ ոռողի այն ինչ հերկեալ
Ընդաստան ընդ երթեեկն . .
Քամեալ զբաժակ սիրահոսան
Իրրե զերկաթի ի մազնիտ՝
Ընդարձացեալ մածնոււ հրեշտակն
«Այս է, գոչ, իմ հանդիսաւ»:

Փ. ՋԵՐՈՂՆ - ՋԵՐԹՈՂ.

Յորեան՝ ատոք ի հասկին,
Մեզ ընձեռէ ընութիւն,
Եց ո ի կալ ոչ կառու,
Ո՞զ զթեփ ոչ ընկինու։
Մնան միշտ բնութեան
Տուրք մշակութեան։
Ուզոյ եղեալ այր ոք այր,
Ընդ բոխասէք առապար
Ո՞չ զսատան օ՞ն ի բաց,
Եւ ռահ հորդեալ դիւրագնաց?
Սոսկ ի մարդոյն մուրճ
Ցարդարի կամուրջ։
Ո՞չ հրեշտակն ցցասաց
Պատկառ այդմ օրինաց,
Զամենայն փակիալ բանայ,
Զի որ զինին նորա դայ
Ելցէ և մացէ
Եւ ձարակ գոցէ?։
Եւ ահա կոյս հրաշաւոր,
Ճոխ հեշտակեօք բիւրաւոր,
Աց զի գոհար մեծագնոյ
Ոչ շողայ թարց քերիլոյ,
Ածէք տո քերօղն
Ընուանեալ քերթող!։

Քերի ակնն և թռչին
Բեկորք մանունք ի գետին,
Հարսարին բարախէ սիրտ
Բեկորք փայլին ի յակինթ...
Երգի ի քնար
Ի վաղիւ գոհար

Փ. ՑԻՇԵԽ ԶԻՄ

Լուսարերին յառաւօտել

Ընդ արշալուրշսն, ո գու կոյս,
 Ընդ արևուն արտափայլել
 Ընդ խրոխս լերանց զագաթունս,
 Իջեալ ի դրախտ ընդ այզս այգոյն
 Թէ զսիրելեաւ փարփցիս,
 Յողջակէզ անդ հանել սիրոյն...
 Մի մոռանար, յիշեա զիս:
 Ի զով խաղաղ երեկոյին
 Թէ բնդ ծառով պարզիցիս,
 Եւ զմայլեալ ի բոյր փարդին
 Յանոյշ ի զիրկ աղլսիցիս,
 Հնչեացին քո հետ պանդխտին
 Մըմենջը ի կոյր լսելիս,
 Յանդրանիկ հունձս այտից վարդին՝
 Մի մոռանար, յիշեա զիս:
 Եթէ ի ստուեր ուրէք յանկեան
 Զեռք հեշտախոյզը դդուեսցին
 Զուլուցդ երկուորիս այժեման,
 Եւ ուլուց եղջիւրք ցցուեն,
 Ի կուսական քո զիրգ ագռու
 Թէ փախարէն ունիցիս
 Տէզ սիրամուխ, դարբնեալ ագռու.
 Մի մոռանար, յիշեա զիս:
 Եթէ սիրոյն հոդմ ուռուցիկ
 Զքեղ արկցէ ի տապաստ
 Եւ նաւուղիդ քաջարաստիկ
 Զեռն ի սամին կայ պատրաստ
 Շնդ կայմին յոխորտ շտինդ ահագին
 Եթէ որցեալ ցնցեսցիս,
 Զաշկունս ի վեր ուզդեալ յերկին՝
 Մի մոռանար, յիշեա զիս:
 Եթէ ի բոց սիրոյ կիսեալ
 Զրոյ կենդանւոյ ի խնդիր
 Առախս, երթաս զոտս ամրարձեալ
 Եւ խոյզ քո ոչ տռափը.
 Զկենսատուն քաջ ընդգրկեալ
 Երթամբք ցնցուղ թէ յազիս,
 Յարտասիազկին ի վետ խաղալ՝
 Ոչ, յիշեա զիս, յիշեա զիս:

Եթէ փութեցաք ուրեմն քաւիլ յայդսիսեաց՝ թուի մեզ,
թէ և ոչ իւկը ինչ զթեցաք:

Նատ իսկ իցէ մեզ, ստուգութեամբ տօնմք, և կարի շատ,
եթէ զանձինս ի նախաղրունս անդ համարձակեցուսցուք գիռ
տութեան լեզուիս, զոր յերկնից արդեօք հրաման տայր ուսա-
նել Քաջարանցն Արամ: Թո՞ղ զքերթողականին վաեմ ճարտառ
րութիւն, որոյ սակաւք յոյժ, քան եթէ բազումք, խիլային ի
բնութենէ՝ աստուածային գոգցես կայծակամբք ջահառեալ,
ըստ որոյ՝ եթէ այլոցն միայն բերթօղաց—հսկայից խելամուռ
կարացուք լինել սիրալի վաստակոց, արդէն երանելի զմեզ
համարիմք:

Ա.

ԱՌԱԽՈՑՈՒՑ

Այգուն այգուն
Ի բուրաստան շոշանաց
Թափեալ գքուն
Կոյսն իջանէ մաքրագղեաց...
Զերթ թիթեռնիկ
Թռուցեալ ծաղկանց ի ծաղկունս
Քաղէ ժնջիկ
Թացեալ ի ցօդ զմատունս
Զի՞ զեղեցիկ,
Զի ընդ առաջ յայգորիկ
Բերի յուշիկ,
Եւ զվարդունս համբուրիկ
Սիրատոչոր
Եւ սրտացեալ հրեշտակ,
Եւ ի բռոսր
Վառի կուսին սկերճ դիտակէ
Համբոյրք խաղան...
Եւ ի վանդակս կրծոց
Սիրտք թռթռան
Բի՞ւր երանի արդարոց
Վճիս ի ոերչ
Զոր ցա՞դ և զիր պատուիրէ.
Հրեշտակն մեր
Սիրէ զկոյսն ի սրտէ:
Եւ ի ծաղկանց
Համասպրամից՝ թոյր ի թոյր,
Քնըուշ մատանց
Կազմեալ պսակ բազմաբոյր.

Մարին գայ և դդուի
Սէր եռանդն յիս բորբոքի:
«Գողացան զձուա,
Ո՛ տայր ինձ որդիս,
Մինչ ես գամ ի թուխս՝
Յիս՝ որձակ քաղ, յիս».
Ասէ և կուտկուտայ
Նւ անդէն իսկ դառանայ:

Մարց, դէթ զերկուս
Ունիմ ես զձուս,
Իցն քեզ չերիք
Իմ այս երկուորիք.
«Օ, yes, please, very good!..
Ես ճեղն լեալ սորամուտ:
Վկուտ, կուտ, կուտ, կուտ, կուդդու։
Մարին կուտկուտայ
— Յուս թի լիցի ուղին
Արրեալ, ես ցնա։
Եւ ի ձայն բարձր ազդոյ
Հնչիմ զիմ կիկօռիկօւ։

ԸՐԿԵԺ. ՆԵԽՈՑՈՐՆ

Ա.

«Yes lovè indelcod is light from heaven:
A spark of that immortal fire
With angels shared, by Alla given,
To light from, carthour, low, desire».

Ryon. The giaour

Եւ ընդ ծառուն կենաց
Ի սրովրէից ամրափակ
Նստէր Աղամ, և դիմաց
Տիսի էր տիսրադիտակ,
Ճն հիմ, ասէ, սուեղծայ
Առ ինչ այս զրախտ փափկութեան
Առ ինչ նանուրց կացուցայ
Էից ի բնաւս տէր, իշխան։
«Եւ զի պիտին ինձ պսակը
Լուսանորոգք եթերին
Քերովրէից յինչ բանակ
Յինչ զօրութիւնք երկնային,
Այն ինչ նաւակ մի փաքրիկ
Որ ի կրծիս մակուկէ,
Առ չունելոյ զանոյչ սիւք
Առազաստել չգօրէ։

Ասաց, և աչք ցօղեցին
 Յականողեաց մարդարիտ,
 Արտասուք էին նախկին՝
 Մարդոյն տիսուր յայս հովիտ.
 Եւ սերովրէն որ հուպ կացը
 Նմա՞ ի թե իւր սրբեալ
 Զցող յաշաց, և գրգայր,
 Եւ զնովաւ սաւաւնեալ,
 Եւ ի բարբառ Սդեմայ
 Ծնդ նախահօրն խօսակցէր
 Այնմ երկինք են վկայ՝
 Սերովրէն ինչ ոչ ստէր:
 «Միսիթարեաց, տէր Ադամ,
 Թէ որտի քում ոչ տուաւ
 Զոր սիւք ասես շարժական
 Զի Տէր զայն քեղ զլացաւ
 Զի թէ ի սիրո քո փէքր
 Զայն շոնչ, այն, բոց հրու,
 Ապա կորուսեալ իսկ էր
 Քո զանդորրութիւն հոգւոյ,
 Եւ յօ նորա թափէիր
 Զկիզելոյ կայծակունս
 Եւ կամ բնաւ ժուժայիր
 Յանձին տանել զցորմունս,
 Եւ ում հոգալ խնամել
 Զքեզ, ընդունակ ո-ք էակն
 Զկայժականցդ ժողովել
 Զամարուու զշանթ և փայտանց
 Եւ զի յումպէտս բազրապայս
 Յօդես, ասէ նախահայրն
 Առ սերովրէն, յանզգայս
 Բնաւ ունիս զու զմորդն:
 Ո՞չ տիեզերք զործ ձեռաց
 Էին հաստեալ յոր եղայ
 Կան առաջի իմ աչաց,
 Ո՞չ ինքնին իսկ լհովայ
 Զօրհանապազ ի զբախստիս
 Այդուն այդուն զգնայ,
 Յողղոյն եկեալ չուառիս,
 Եւ շիցէ ինձ հերիք նաւ:
 Զարմանք ունին զիս ընդ քո
 Անհանձար բանս, սերովրէ.
 Հստ քեզ միթէ սիրո մարդոյ
 Առ վսեմն զօն իցէ:
 Ո՞՛ կարիցեմ ես ի սէր
 զԱստուած սիրել վերհամբար՝,

Կամ զարարածս՝ զանվեհեր.
 Գործս նորա զմատանց.
 Զարե, լւսին և զաստեղս
 Զերեկոյ, զվաղորդայն,
 Զով և խաղաղ զգիշերս
 Զպայծառ լոյս տուռնջեան:
 Զժառ, զբոյս և զտունկ,
 Մաղիկ քերոյչ գեղանի.
 Զվարդ յեռեալ ճոխ ի թուր,
 Շուշան յիւր ոճ զարնայնի:
 Ո՛չ զկենդանեաց խայտ երած
 Ո՛չ սոխակին զերդ անոյշ
 Յոր համօրէն խրախանան
 Բնութիւնք խոշոր և քնքոյչ:
 Տնը նախ զաէր, զարտի
 Լցո՞ իմ զամայութիւն,
 Տեսցիս ուրեմն, սալթաքի
 Բնաւ մարդոյս բնութիւն
 Ո՛չ վայրաբարչ ինչ կրից
 Զսիրտ եղից ի թիրախ,
 Իսկ ընդէր բնաւ ժպտիս,
 Ուխտեմ ևս ո՛չ յուխտ խարդախ:
 «Փարզա՛սո, տէր իմ, քաւ, Ագամ»
 Կրկնէր անզրէն սերովիչն,
 «Մի՛ լիցի քեզ յաւիտեան
 Ընկել զայն օդ բոցելէն,
 Մի՞ լիցի քեզ տուայտի՛
 Կամաւ եղեալ անձնամատն
 Ի բոց հրոյ, և բերի
 Յոր ոչ բնաւ ուժէ մարդն:
 Ընդ հինգն ելանէ Աղամ
 և առ սրովրէն բարրառի
 Ժայիտ ի դէմս առ վայրկեան
 Փայլեալ շողայ դժմի՛
 —Որ ոչ մարդ է հողեղէն
 Զմարդոյն զիմրդ բնութիւն
 Գիտէ այդպէս սերովիչն,
 և ուստի այս զիսութիւն:
 Խռատովանին, ո՛չ սակաւ
 Զարմանք ունին զիս ընդ բանս
 Եւ զի սրովրէ չեմ բնաւ,
 Ներեսցի՞ ոչ գիտել զայս
 Տանէր սրովրէն թերութեան
 Առնն արւոյ կամակար,
 Զի Արարչին էր պատգամ
 Կամաց նորա կալ պատկառ.

Ուստի ոչինչ գժղմնեալ
 Ընդ գժպհիլ Աղամայ
 Թեապարէ սաւառնեալ
 Գարձեալ ժպտի և գրգայ:
 Այլ զի Աղամ ոչ ընդ խաղ
 Վշտանայր ինչ զսիրոյ,
 Ուստի սրովրէն քուն խաղաղ
 Արկ զնովաւ ի վերջոյ,
 Եւ ի սղոխ զեփիւոին
 Թմրի Աղամ և ննջէ,
 Գրախան զնովաւ սոխակին
 Ի գայլայիկս դէթ հնչէ:
 Թեապարեալ սերովրէն
 ՚նդ աստեղց կանառս սլանայր
 Եւ ընդ կամարն հրեղէն
 Անցեալ ճեպէր համբառնայր,
 Մինչ յԱթոռոցն ի սահման
 Ի քերուրից պարառեալ
 Արարյին կալ յանդիման,
 Եւ Տէր՝ յԱթոռուն վերօրհնեալ:
 Վեցթեսանն անդ երկուումրք
 Քողեալ զդէմսն պակուցեալ,
 Զոսոն՝ ներքին այլ թեռլք,
 Խոկ միջնովքն թռուցեալ,
 Միոէ զմարդոյն արտասուս
 Տեառն ի հոտ անուշից,
 Հնչեն երկինք յալելուս
 Համակ զօրութեանց երկնից:
 Եւ հոսոտի Տէր ի խունկ,
 Զոր արկանէր սերովրէն,
 Բանին ականջք զդայոււնք
 ՚նդ երկնից մազթանս համօրէն,
 Եւ աղն՝ հառակ էութեանց,
 Ի վայր յերկիր կարկասի,
 Եւ բարեխոսի ի շրմանց
 Զայս դէթ լսեն, թէ «տացի»:
 Սո՛ւրր, սո՛ւրր, սո՛ւրր ես, Տէր, Որ էն,
 Լի են երկինք փառօք քովք,
 Նուազս յօրինէ սերովրէն,
 Եւ մատուցեալ ունելեօք
 Առնու զկայծակն բոցավառ
 Ի սեղանոյն ծխելոյ,
 Եւ ի յերկիր ի խոնարհ,
 Անդրէն լինի փոյթ ուղւոյ:
 Ոչինչ զիտէ մերս Աղամ
 Զի ի քուն կայ տակաւին

Թաղ զի թօթափել ական
 Յառաջադրեալքս կատարին.
 Տակաւ զնովաւ կենաց ծառ՝
 Արկեալ ի զով զիւր ստուեր,
 Ծնչոյն դիւրէր տուր և առ՝
 Եւ սերովրէն հասանէր:
 Եւ առ Աղամ մատուցեալ
 Նստի յահեկէ կուսէ
 Եւ զարտաշեկն փայլակեալ
 Ի նա մերձեցուցանէ,
 Միխի մարմնոյն փափուկ մորթ
 Եւ ճենճերի սիրտ անփորձ,
 Մառանայ ծուխ ընդ ուզդորդ
 Յերկինս ի վեր խառն ընդ բոց:
 Որ զԱղամաւն կենդանեաց
 Ընդ սոսկ տեսիլ կայծականն
 Նրտուցեալ երամակաց
 Առնուն, ասեն, սիրոյ զմասն,
 Եւ զկծեալ զոյդ ի զոյգ
 Ամոք խուսեն խայտացեալ
 Ի մենաւոր վայրս անքոյթ,
 Առ ինչ,—այդ չէ ասացեալ,
 Յամբովկ հասեալ սերովրէն
 Գործոյն զոր գայր կատարել.
 «Հապա, փութա հմտօրէն
 Ի նուալիւզն լինել,
 Զի զսրտից առագաստ
 Սիրոյն ելից մըրիկ
 Հուր, բոց տիեզերասաստ
 Ապրեսցի քո մակուկիկ:
 Զայս սերովրէն ննջելոյն
 Կուէր այժմիկ Աղամայ
 Այլ նա տակաւ խոր ի քուն
 Եւ ոչ լսէ, ոչ զգայ:

Բ.

. The elements
 To mix 'd in him Nature might standup:
 And smy to all the world: This was a mau:
 lhakspeare. Jul. Caesar. AX. s. 5.

Զի մի լիցի յերկարել
 Մեզ ասս ի բան չափածոյ,
 Եւ զի ընդ վայր դանդաշել,
 Օ՛, ասացուք ի կարծոյ:
 Մարդն, յետ որոյ զգաց սէր,
 Գոյշեաց եթէ մեռանիմ,
 Զի ոչ զոյ ինչ ոք ընկեր,

Աւ Տէր արար նմա կին,
 Խսկ թէ որպէս կամ զիարդ.
 Ո՞չ ուսուցանէ քեզ դիր.
 Թէ չիցէ քո լուհաւ ցարդ՝
 Համար, կամ և բնթերցիր:
 Այլ զի ի սէր զէթ վերին
 Աղամ զնա սիրեսցէ,
 և վայրակնեալ մեղկ աղտին
 Ի կուռ զսիրտ մի տացէ.
 «Ընդէ՛ր բնաւ ինձ պատուէր
 Կրկինի, ասէ նախանայր,
 Զէ իմ ուխտեալ միշտ ի սէր
 Վերին, ամենակատար.
 Սիրել զԱստուած և զոր ինչ
 Ի նորա կալաւ ձեռաց
 Ակիզբն գորոյ, և ոչինչ
 Գտոցի ուխտիս դիմտկաց»:
 Այլ սերովքն, որ գիտէր
 Մարդոյն սրտի զկազմած,
 Եւ ոչ բնաւ վրիպէր
 Բան ի նորա սուր աչաց,
 Ահարեկեալ ընդ երդումնն
 Զոկողանի հարկանէր,
 Եւ առ Ադամ, զներումն
 Խնդրել երգմանցն ակնարկէր.
 «Երթ յասո իմ, սերովքէ
 Եւ զի՞ բնաւ ոչ մեկնիս.
 Բան քո ըստ չափ ելանէ,
 Ոչինչ զգամ, համարիս:
 Միմիմ յիբս ձեր դասուն,
 Լուաւ յինէն ոք բան մի,
 Ընդ բարս ձեր անկայուն
 Ասել ինչ ոչ ունէի:

Այսպէս վերսաստէ Ադամ
 Խոժոռեալ ընդ զուարթունն,
 Եւ յայս անհամբոյր պատզամ
 Դառնայ սրովքն ընդ կըունկն,
 Արտօսը արկնալ և անդէն
 Թռչի ի բաց հեռանայ,
 Իսկ հարսնածուն լուսեղէն
 Ածէ առ Ադամ զիւայր
 Այն ինչ յառեալ Աղամայ
 Ի ճակն ըստ իւրոյ ազգի
 Մղիս ի վեր ամբառնայ
 Սիրախառնիլ և թռչի.
 Խսկ ի տեսիլ հեշտախացն
 Բանդագուշեալ գլխովին,
 Ու Տ. առաջ ու խոտառանո

Ասէ, առ ինչ տուաւ կին:
 Խմ ուխտեալ է չմեղկիւ
 Եւ յայր մնամ անդղորդ,
 Այլ ի սիրոյ վերջուանիւ
 Խոպառ, և կալ անհաղթրդ,
 Յինչ ուրեմն ինձ տուան
 Սէր, կին, առ ինչ Տէր օրհնեաց,
 Յինչ ակնակէ նորա բան,
 Թէ աճեցէք... և լուսաց,
 Ասս զճակատ յօրինեն
 Բնութիւն և հրաման անբուն,
 Ո՞ ելցէ յաղթ ի մարտէն
 Եւ ում տեղի ճակատուն.
 Ե՞ր երբեմն այս խնդիր,
 Բնիր, ասել նաև կնճիռն
 Այլ գիտութիւն լուսակիր
 Բարձ վաղ ուրեմն զկրնիմն:
 Եւ որոց ոչն հաւատան
 Խսկութեան անշուք բանիս,
 Խօթնեմք, զի չեմք զբուժան,
 Աւասիկ զհաւաստիւ:
 Ե՞ր, Էր Ադամ ուխտաւոր,
 Մի զառածիլ մեղկութեամք
 Ուստի ըմպահկեալ յահուր
 Զիախորոխտ ընթագրութեամք
 Զարկուցանէ զանշաղախն
 Ցորսայս անդէն առ ետեզր,
 Եւ ընդ գնեալ շեշտ ընդ ակնն
 Նկրտի կոփել եղջերը:
 Գաջաբար վերելակեալ
 Ցընթադրեալն դրախտանուն
 Ցագչի ոչ թերաքամեալ
 Եւ ընձուին դէմք քաջարւոյն:
 Մեղկութիւն ինչ լցէ այս,
 Կամ վայրահար կիրք պղտոր
 Վայելել զՏեառն ընծայս
 Ցարի սէր սանձակոտոր:
 Ջընութեան ճմիցէ
 Ոք զկզակ ի պախուց
 Կամ զօրութեան դնիցէ
 Նորա գիմակ զիւր թայլ կուրծ:
 Եւ յինչ շարժի ընութիւն,
 Զինչ օրէնք, ով հեղինակ
 Զիցէ ձոյլ յիմարութիւն
 Եառենել նմա հակառակ:
 Որ յաւակնին զբնութեան
 Բոնազրօսել պաշտամունս՝
 Հբեշտակն ասէ բարձր ի ձայն

Զայնալիսին խելտկորոյս
 Այ և մեզ բան ի բերան
 Յամրովկ փութացեալ վիպիս
 Ոճով ասել դամենայն
 Զոր ինչ գիպեալ ամոլից:
 Գառ մի յերկրի՝ հարսն քոյր
 և սրսկապան խորանին
 'Ի պատարուածս, բեկանին
 Յանկարկառելի ցելոյը
 Բոսորակիր և անօթք
 Մանունք, անտեսք, մաղանման,
 Զէ ապաժոյժ այս արդեօք
 Նախկին հեղեալ, սրբական:
 Թե ի թե հէտ կուսութիւնք
 Սուրան դին տագնապաւ
 Եւ լուր լինի դաստակնիք.
 «Անմեղութիւն, երթ բարեաւ».
 — Ի՞սկ զինչ հարսն, իսկ զինչ քոյր.
 «Ո՛հ, ցնցէին մկանունք,
 Եւ խլոտէր և զելոյը
 Եւ շողային վառ աշկունք,
 Մերթ ի գիրկս կուսական
 Ճնշէր, պրկէր, մերթ թուլոյր:
 Մերթ չօշափէր նա զԱղամ,
 Մերթ հինանայր մերթ ուռնոյր,
 Եւ թռչին ի սրտէն
 Թառանք հեշտինք, և հոսէր
 Թիրտն ընդ կուրծս գետօրէն»...
 — Իսկ Ազման. — «Ինչ ոչ կասէր,
 Եր երբեմն զի համբոյր
 Կնքէր կուսին ի շրթունս.
 Մերթ հատկէր, զի ծփիւր,
 Ճնշեալ զվարդադեղ պտկունս»
 Ուռուցելոց ըստ նռանց
 Ստեանց, իփայիգոյն ձեան,
 Կրծովք իւրով լուսազգեաց
 Եւ բարէ երանութեանն
 Զի՞ տարուբերս անդ, մարմաջ
 Հեշտին՝ անօթն ընտրութեան
 Զգայ... և ի մեղմ յոյժ աւաչ
 Վարդի արհին բալթան...
 Ամէն, եղև պատարազ
 Բնութեան ի հոտ անուշից,
 Եւ ամոլք գտան արտաքս
 Բառ գրդարանն հեշտալից,
 Յայխարհ փշոց, ուր նւայ
 Ցարդ իսկ ցաւօք ճնանի,
 Թէ և եկեաւ լրիսիս,

Է.

ՈՉ ՀԱՆԻՑ ԱՐՏԱՔՄ

Ի բուրաստան ծաղկոցիս իջեալ,
Խճձ հանդէպ գայ տիկին զուարթելես,
Բայց թխաթոյը զանձամք ինչ արկեալ
Լողիկ աղնիւ, տխուր յոյժ ՚ի տես:
«Ողջոյն քեզ, քոյր, տիրաւանդ ողջոյն»...
Այլ նա առ այս.—Եւ ո՛ իցես դու:
«Յոյր ՚ի դրախտին երգի վարդենւոյն»
Սոխակին ցանդ մեղեդի աղու»...
Նա դարձեալ, թէ—Ո՛չ զիտեմ զքեզ,
«Ո՛չ զսիրոյ բաջ զերգի՞չ վսեմ».
—Զիմանամ իսկ, այր դու, զոր ասես,
«Եւ ո՛չ ժմտիս—այն, տեսանեմ»...
Յական քթթել նմա վակժոյժ լեալ՝
Բուռն հարկանեմ զխրոխտ բրդանց...
Եւ ՚ի համբոյը վառ վարդիցն եկեալ.
Այլ նա խուսել ճգնի յիմ ձեռաց,
Եւ ընդլեռեալ ամբառնայ զձայն,
Եւ ՚ի դարպաս ձգտեալ պարտիզիս՝
Բայց տուժեցաւ... զի իմ առժամայն
Ցից ընդ ներքին վարեալ ծամելիս...
Զարթուցեալ ՚ի քնոյ
Հրեշտակն զգայ զպատրանս
՚ի տակաւ հոսելոյ
Արոյ ընաւից տայ զկեանս:

